

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF REPUBLIC OF
ARMENIA
INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN

JAHUKYAN READINGS

Collection of scientific papers

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА

ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ

Сборник научных статей

Ереван 2018
Yerevan 2018

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՋԱՐՈՒԿՅԱՆ ԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Գիտական հոդվածների ժողովածու

ԵՐԵՎԱՆ 2018

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.22
Ջ 229

Ժողովածուն հրատարակության է երաշխավորել
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհուրդը:

Խմբագրական խորհուրդ՝

Վ.Լ. Կատվալյան (նախագահ)
Ռ.Մ. Թոխմախյան
Գ.Կ. Խաչատրյան
Վ.Գ. Համբարձումյան
Լ.Շ. Հովհաննիսյան

Լ.Ս. Հովսեփյան
Ա.Ե. Սարգսյան
Ա.Ա. Աբրահամյան
Ն.Գ. Հովհաննիսյան
Գ.Ս. Մխիթարյան

Ջ 229 Ջահուկյանական ընթերցումներ: Գիտական հոդվածների
ժողովածու. – Եր.: Ասողիկ, 2018.– 274 էջ:

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.22

ISBN 978-9939-50-413-1

© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2018

Ամիրխանյան Անժելա (Հայաստան,
ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ)

**ՎԱՅՐԻ ՄՐԳԵՐՈՎ ՈՒ ՀՍՏԱՊՏՈՒՂՆԵՐՈՎ
ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Հայոց ուտեստի համակարգում մրգերն ու հատապտուղները մեծ կիրառություն ունեն: Դրանց թվում ուրույն տեղ են գրավում նաև հավաքչությամբ ձեռք բերված պտուղները (մատուր, տանձ, զկեռ, հոն, մամուլի, բոինչ և այլն), որոնցից պատրաստվող կերակուրներից կանդրադառնանք առավել մեծ տարածում ունեցողների անվանումներին:

Մասրամածուն, գկորմածուն, տրնձրմածուն. Հայ. *մածուն* բառը կազմված է բնիկ հ.-ե. *մած*- արմատից (< *mag «շաղախել, մածուցիկ խմոր շինել») և *-ուն* վերջածանցից¹: *Մած* արմատն ունի «մածուցիկ, թանձր» իմաստները², որոնք տեսնում ենք նաև *թանձրամած, խավարամած* բառերում, իսկ ամենից մեծ տարածում ունեցողը՝ *մածուն*-ը նշանակում է մածված, թանձրացած կաթ, թեև որոշ բարբառներում մածուն է կոչվում նաև չհասունացած ու դեռևս փափուկ ցորենը³:

Հիշյալ իմաստները տեսնում ենք նաև *մասրամածուն, տրնձրմածուն* և *գկորմածուն* կոչվող կերակուրների անվանումներում, որոնք չնայած գրավոր աղբյուրներում քիչ են հանդիպում, սակայն կարելի է ենթադրել, որ հայերենի որոշ բարբառներում գոյություն ունեն հնուց և, ըստ մեր դաշտային նյութերի, մինչ օրս պահպանվել են Լոռու և Տավուշի մարզերում:

¹ **Հր. Աճառեան**, *Հայերէն արմատական բառարան*, հ. 3, Ե., 1926, էջ 228-230: **Գ. Ջահուկյան**, *Հայերէն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 501:

² **Գ. Աւետիքեան, Խ. Միրմէլեան, Մ. Ազգերեան**, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1837, էջ 191: **Մտ. Մալխասեանց**, *Հայերէն բացատրական բառարան*, հ. 3, Ե., 1944, էջ 235:

³ **Գ. Գաբրիէան**, *Հայ բուսաշխարհ*, Երուսաղէմ, 1968, էջ 145:

*Մասրամածունը*⁴ (*մսրամածուն*⁵, *մրսրամածուն*⁶), *գլոսամածունը*⁷ (*գլոնամածուն*⁸, *գլեռամածուն*⁹) և *տրնձրմածունը* (*տնձամածուն*, *տանձի մածուն*)¹⁰ եփում են մասուրի, գլեռի և տանձի պտղահյութով, որ ուտում են հացով՝ ըստ ցանկության քաղցր ավելացնելով: Այս կերակուրները թանձր լինելու շնորհիվ նմանեցվել են մակարդված նյութի և բնորոշվել որպես *մասուրի, գլեռի* և *տանձի մածուն*:

1960-ական թթ., պայմանավորված շաքարի մատչելիությամբ ու պահածոյացման նորագույն մեթոդներով, սննդի համակարգում նշանակալի փոփոխություններ տեղի ունեցան: Ի հայտ եկավ մասրամածունի պատրաստման նոր տարբերակ, ըստ որի այն եփում են շաքարով և ապակե տարաներով *զակատ անում*: Այն աստիճանաբար սկսեցին կիրառել որպես հյութ, որին վերագրվեց արդեն կենցաղից դուրս մղվող *մասրամածուն* ճաշի անվանումը:

Լոռիում և Տավուշում, ըստ պատրաստման եղանակի, այժմ տարբերակում են մասուրի հյութի երկու տեսակ. առաջինը

⁴ Վ. Ղազարյան, *Լոռու գավառի Մոսկորի ազգագրական նյութեր*, ՀԱԻ ԱԲԱ, գ. 92, էջ 244: Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, հ. 2, Ե., 1976, էջ 973: Ա. Ամիրխանյան, *Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ)*, Լոռու մարզ, 2009-2013:

⁵ Ս. Ամատունի, *Հայոց բառ ու բան*, Վաղարշապատ, 1912, էջ 493: Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Դ, Ե., 2007, էջ 85: Ա. Ամիրխանյան, *ԴԱՆ*, Նոր Խաչակապ, 2009:

⁶ Ս. Միրզոյան, *Կողբուկոր-Նոյեմբերյան*, Ե., 2007, էջ 218: Ա. Ամիրխանյան, *ԴԱՆ*, Հաղարծին, 2014:

⁷ Ե. Լալայեան, *Գանձակի գավառ*, Ազգագրական հանդես (այսուհետև՝ ԱՀ), Զ գիրք, Թիֆլիս, 1900, էջ 306:

⁸ Հր. Աճառեան, նշվ. աշխ., հ. 2, էջ 98: *Վարդուտ գավառի բառ ու բանը*, կազմող՝ Կ. Ղահրամանյան, Ե., 2011, էջ 230:

⁹ Հր. Աճառեան, *Հայերեն գաւառական բառարան*, հ. Թ, Էմինեան ազգագրական ժողովածու, Թիֆլիս, 1913, էջ 320:

¹⁰ Ա. Ամիրխանյան, *ԴԱՆ*, 2015: Նյութը գրանցել ենք Վանաձորում բնակվող արծվաշենցիներից:

հիշյալ մասրամածունն է, իսկ մյուսը կոչվում է *շիպովնիկ*¹¹, ուսերեն *ШИПОВНИК* «մասուր» բառից¹¹:

Մասուրապուր. Հայոց պատմաագագազրական որոշ շըր-ջաններում մասրամածունը եփել են նան բրնձով¹² կամ ձա-վարով¹³, ուստի կոչվել է նան մասուրապուր:

Ապուր բառն ունի «ապրելու միջոց, ապրուստ, փրկու-թյուն, կյանք, ուտելիք, ձմեռվա կամ ընդհանրապես ուտելիքի ողջ պաշար» իմաստները¹⁴:

Հայտնի է, որ հատիկավորները՝ ձավարեղենը, ընդեղենը և այլն, կազմելով հայոց սննդի համակարգի հիմքը, դարեր շարու-նակ համարվել են ապրելու հիմնական միջոցը¹⁵: Թերևս այդ է պատճառը, որ դրանք կոչվել են նան *ապուրցու* կամ *ապրցու*¹⁶,

¹¹ **Ա. Ամիրխանյան**, *ԴԱՆ*, Դետ, 2011, Գուգարք, 2012, Վահագնի, Չկալով, 2013: *Շիպովնիկ* պատրաստելու համար մասուրի վրա եռման ջուր են լցնում և մեկ օր թողնում: Հաջորդ օրը քամում են և շաքար ավելացնում:

¹² **Ա. Ամիրխանյան**, *ԴԱՆ*, Հովք, 2014: Հովքի ներկայիս բնակիչները 1988-ից հետո Ադրբեջանից գաղթած փախստականներ են:

¹³ **Ա. Ամիրխանյան**, *ԴԱՆ*, Նոր Խաչակապ, 2009 (Նոր Խաչակապի բնակիչները գաղթել են Ադրբեջանի Դաշքեսանի շրջանի Խաչակապ գյուղից): *ԴԱՆ*, Մյունիքի մարզ, Մավարդ, 2016, Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր, Բարձրունի, 2018:

¹⁴ **Գ. Մրվանձոյանց**, *Երկեր*, հ. 1, Ե., 1978, էջ 566: **Գ. Գեորգեան**, *Չնքուշապատում. քննական պատմություն հայոց Չնքուշի (տեղագրական-պատմական-մշակութային-բանահյուսական-ագագազրական)*, հ. 1, Երուսաղեմ, 1970, էջ 351: **Յ. քին. Սարգիսեան (Ալեոք)**, *Բալու (իր սովորոյթները, կրթական ու իմացական վիճակը եւ բարբառը)*, 1932, Գահիրե, էջ 113: **Ա. Ալայոյաճեան**, *Պատմություն հայ Կեսարիոյ (տեղագրական, պատմական և ագագազրական ուսումնասիրություն)*, հ. Բ, Գահիրե, 1937, էջ 1648: **Ստ. Մալխասեանց**, նշվ. աշխ., հ. 1, էջ 210:

¹⁵ **Գ. Գյոզայան**, *Մուսա լեռան ագագազրությունը*, Ե., 2001, էջ 128: **Յ. Չոլաքեան**, *Քեսապ*, հ. Բ, Հալեպ, 1998, էջ 131:

¹⁶ **Ստ. Մալխասեանց**, նշվ. աշխ., հ. 1, էջ 211: **Վ. Թեմուրճյան**, *Գամիրքի հայերը*, Հայ ագագազրություն և բանահյուսություն (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 1, Ե., 1970, էջ 88: **Յ. քին. Սարգիսեան (Ալեոք)**, նշվ. աշխ., էջ 191: **Կ. Գաբիկեան**, *Բառզիրք սեբաստահայ գաւառայեզուի*, Երուսաղեմ, 1952, էջ 80: **Գ. Գեորգեան**, նշվ. աշխ., էջ 351:

իսկ մատանը, որտեղ պահվում էր մթերքի ողջ պաշարը՝ *սպրցուի տուն*¹⁷:

Սպուր բառը հիմնականում գործածվում է հատիկային ուտեստների անվանումների բառակազմության մեջ. այսպես, չորթանով ու ձավարով, չրերով ու ձավարով, հոնի պտղահյութով և ձավարով կերակուրները համապատասխանաբար կոչվում են *չորթան սպուր*¹⁸, *անուշ սպուր*¹⁹ և *հոնասպուր*²⁰: Քեսապում այն վայրի բույսերը, որոնք գործածում են ձավարեղենով կերակուրներ եփելու համար, կոչվում են *սպուրցու խոտ*, իսկ կերակուրը՝ *խոտասպուր*²¹:

Արդի հայերենում *սպուր* ասելով հասկանում ենք ջրալի կերակուր, սակայն որոշ պատմաագագրական շրջաններում այդպես են կոչվել նաև փլավները (բլդուր-սպուր կամ բրնձե-սպուր նշանակում է բլդուրով կամ բրնձով փլավ)²², որոնք նաև կոչվել են *չոր սպուր*²³:

Մասուրի շորվա, հյունըշորվա. Ճաշերի անունները հաճախ կազմվել են պարսկ. բարբռ. *šorba* բառով, որը հայերենում նշանակում է «սպուր»²⁴, օրինակ, *բանջարի շորվա*²⁵, *կորկոտի շորվա*, *կրթոփշորվա*²⁶ և այլն: Մասուրով (մասրամածունով) ճաշը, եթե եփում էին ոսպով և ծիրանի չրով, կամ էլ՝ արիշտայով, կոչվում էր *մասուրի շորվա*²⁷ (*մրհասրով շորվա*)²⁸: Հաճախ նույն

¹⁷ Նշվ. աշխ., էջ 335:

¹⁸ **Յ. քին. Սարգիսեան (Ալեոթ)**, նշվ. աշխ., 247, 249:

¹⁹ **Վ. Գաբիկեան**, նշվ. աշխ., էջ 79:

²⁰ **Վ. Թեմուրճյան**, նշվ. աշխ., էջ 96:

²¹ **Յ. Չոլաքեան**, նշվ. աշխ., էջ 127-129:

²² **Վ. Թեմուրճյան**, նշվ. աշխ., էջ 94:

²³ **Հր. Աճառեան**, *Հայերէն գաւառական բառարան*, էջ 883:

²⁴ **Մո. Մայիսասեանց**, նշվ. աշխ., հ. 3, էջ 532:

²⁵ **Ս. Միրզոյան**, նշվ. աշխ., էջ 213:

²⁶ **Ա. Ամիրխանյան**, *ԴԱՆ*, Վանաձոր, 2014: Նյութը գրանցել ենք Վանաձորում բնակվող արծվաշենցիներից:

²⁷ **Հ. Հովակիմյան**, *Գողթն գավառի Բիստ գյուղի ազգագրություն*, ՀԱԲ, ԱԲԱ, գործ 71, էջ 6:

ճաշի անվանումը կազմվում էր և՛ «ապուր», և՛ «շորվա» բառերով: Օրինակ, նույն եղանակով՝ ձավարով եփվող մատուրի ապուրը և չիրապուրը համապատասխանաբար կոչվել են *մատուրի շորվա*²⁹ և *չրով շորվա*³⁰ կամ *չիրապուր*³¹, հոնի ճաշը (հոնի թթուն)՝ նաև *հյունըշորվա (հյունի շորվա)*³²:

Մասրաթթու, հոնի թթու, հոնի թթվաջուր, զկուաթթու, չրաթթու, մուշըթթո. Հայոց ուտեստի համակարգում մեծ տարածում ունեն թթվաշ համ ունեցող կերակուրները, որոնց անվանումները հաճախ կազմվում են «թթու» բառով: Օրինակ, պասի հիմնական ճաշը՝ մախտիւր, չափազանց թթու համի համար կոչվում է *օձի թթու*³³, թթու շլորով չիրապուրը՝ *թթու չորպա (շորվա)*³⁴: Հոնի ճաշը հիմնականում կոչվում է *հոնի թթու*³⁵ (*հոնաթթու*³⁶, *հյունի թթու, հյունութթու, հոնի թթվաջուր*³⁷, *հունըթթու*³⁸), *մոշի ճաշը՝ մուշըթթո*³⁹:

²⁸ **Ա. Վարդանյան**, *Ազնաբերդ. նախիջևանահայության վերջին ամրոցը*, Ե., 2000, էջ էջ 29:

²⁹ **Հ. Հովակիմյան**, նույն տեղում:

³⁰ **Ա. Վարդանյան**, նշվ. աշխ., էջ 27:

³¹ **Վ. Թեմուրճյան**, նշվ. աշխ., էջ 96:

³² **Ա. Ամիրխանյան**, *ԴԱՆ*, Վանաձոր, 2017: Նյութը գրանցել ենք Վանաձորում բնակվող արծվաշենցիներից:

³³ **Ե. Լալայեան**, *Նոր-Քայազետի գաւառ*, ԱՀ, XVII գիրք, N 1, Թիֆլիս, 1908, էջ 125:

³⁴ **Գ. Միքայելյան**, *Նոր Քայազետ*, ՀԱԲ, հ. 11, Ե., 1980, էջ 145:

³⁵ **Վ. Թեմուրճյան**, նշվ. աշխ., էջ 94:

³⁶ **Մ. Բարխուտարեանց**, *Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան)*, Թիֆլիս, 1893, էջ 299: **Ե. Բարսյան**, *Լ. Ղարաբաղի ազգագրական նյութեր*, ՀԱԲ ԱԲԱ, գործ 147, էջ 141: **Ի. Չանգլյան**, *Շավշաղիին շրջանի ազգագրական նյութեր*, ՀԱԲ ԱԲԱ, գործ 111, էջ 245/9: **Ն. Ղազարյան**, Գարդման-Փառխոս, ՀԱԲ ԱԲԱ, գործ 5/116, էջ 9: **Ա. Ամիրխանյան**, *ԴԱՆ*, Տավուշի մարզ:

³⁷ **Մ. Վարդանյան**, *Հինավուրց Տանձատափ*, Ե., 2015, էջ 58:

³⁸ **Ա. Ամիրխանյան**, *ԴԱՆ*, Տավուշի մարզ, 2014:

³⁹ *Նշխարներ Արցախի բանահյուսության*, կազմ. Լ. Հարությունյան, Ե., 1991, էջ 338:

⁴⁰ նշվ. աշխ., էջ 347:

Ուշագրավ է, որ թթվաշ համի համար մասրամածունը և զկռամածունը համապատասխանաբար կոչվում են նաև *մասրաթթու*⁴⁰ (*մհասուրթթու*⁴¹, *մրարաթթու*⁴²), *զկռաթթու* (*զկրռթթու*⁴³, *զկրռթթու*⁴⁴, *զկեռթթու*⁴⁵), իսկ տրնձըմածունը՝ *շրաթթու*, քանի որ եփում են վայրի տանձի չրից⁴⁶:

Հարկ է նշել, որ *զկռաթթու* է կոչվում ոչ միայն վերոհիշյալ ճաշը, այլև ձմռան համար թթու դրված զկեռը, որը որոշ շրջաններում բավականին մեծ տարածում է ունեցել, իսկ Լոռիում և Տավուշում կենցաղավարել է մինչև 1960-ական թթ.: Այդ իսկ պատճառով հարկավոր է նույնանուն ճաշը և թթուն տարբերել:

«Ջկռաթթու» բառն ունի նաև որևէ մեկին սաստելու կամ նախատելու իմաստ, որը Տավուշում և Արցախում մինչ օրս գործածվում է⁴⁷: Կարծում ենք, որ բառն այսպիսի իմաստ է ստացել այդ ճաշի թթվաշ համի կամ թթվի ոչ հարգի լինելու պատճառով: Այս մտածողությունը տեսնում ենք նաև վատ, անորակ զինին բնորոշող՝ «ոնց որ զկռաջուր (թթու դրած զկեռի ջուր) լինի» դարձվածում⁴⁸:

Տրնձըխորակ. *Տրնձըմածուն-ի* հոմանիշներից է նաև *տրնձըխորակ*-ը, որը նշանակում է տանձի ճաշ⁴⁹: Այս կազմության մեջ «խորակ» բառը պարսկերեն փոխառություն է (xōrāk,

⁴⁰ Մ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 60:

⁴¹ Նշխարներ Արցախի բանահյուսության, էջ 338:

⁴² Ա. Ամիրխանյան, *ԴԱՆ*, Հովք, 2014:

⁴³ Ե. Բաբայան, նշվ. աշխ., էջ 141: Ա. Ամիրխանյան, *ԴԱՆ*, Հովք, 2014:

⁴⁴ *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. Ա, Ե., 2007, էջ 414:

⁴⁵ Հր. Աճառեան, նշվ. աշխ., էջ 320: Մտ. Մալխասեանց, նշվ. աշխ., հ. 2, էջ 26:

⁴⁶ Մ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 58:

⁴⁷ Հր. Աճառեան, նշվ. աշխ., էջ 320: Մտ. Մալխասեանց, նշվ. աշխ., հ. 2, էջ 26: Ա. Ամիրխանյան, *ԴԱՆ*, Տավուշի մարզ, 2015:

⁴⁸ Հր. Աճառեան, նույն տեղում: Մտ. Մալխասեանց, նշվ. աշխ., հ. 2, էջ 26: ԴԱՆ, Լոռու մարզ:

⁴⁹ Ա. Ամիրխանյան, *ԴԱՆ*, Վանաձոր, 2017: Նյութը գրանցել ենք Վանաձորում բնակվող արծվաշենցիներից:

كاروخ) և նշանակում է «կերակուր, ուտելիք»:⁵⁰ Հայերենի բարբառներում այս բառով կազմված ճաշերի անունները նույնպես մեծ տարածում ունեն, օրինակ, *թանե խորակ*, *լոբու խորակ*⁵¹, *խընձրրիխորակ*⁵² և այլն:

Բավականին ուշագրավ է «բակլախորան» բառի ստուգաբանությունը: Ինչպես հայտնի է, հայոց որոշ պատմաազգագրական շրջաններում Մեծ պասի առաջին օրը կոչվում էր *բակլախորան* (*բայլախորան*)⁵³, քանի որ պարտադիր բակլայով ճաշ էին եփում: Նույնիսկ վանքերում, պասի նախընթաց կիրակի երեկոյան, վերջին ընթրիքից հետո, հանդիսավորությամբ բակլա են լցրել մեծ կաթսայի մեջ և *բակլախորան արել*:

Ստ. Մայխասյանցը, Ն. Աճառյանը և Կ. Գաբիկյանը «բակլախորան» բառի *խոր*- բաղադրիչը կապում են պարսկերեն *xor*- արմատի հետ, որն «ուտել» է նշանակում:⁵⁴ Մ. Օրմանյանը նույնպես «բակլախորան» բառը կապում է բակլա ուտելու հետ: Բակլախորանը կոչվել է նաև *փակ խորան*: Ինչպես նշում է Մ. Օրմանյանը, «ոմանք այս անունով ուզեցին ուղղել Բակլախորան կոչումը, ... սակայն խորանը շաբաթ երեկոյից փակվում է, և կիրակի օրը փակ խորանով է պատարագ մատուցվում»⁵⁵: Այս երևույթը թերևս բացատրվում է այն բանով, որ հոգևորականները, բակլախորանը անվանելով *փակյալ խորան*, իսկ պասի երկրորդ օրը՝ *խորան*, *խորան*, ձգտել են տոնին խիստ քրիստոնեական-եկեղեցական երանգավորում տալ:

⁵⁰ Ստ. Մայխասեանց, նշվ. աշխ., հ. 2, էջ 290:

⁵¹ Ե. Լալայեան, *Բորչալուի գաւառ*, ԱՀ, ութերորդ տարի, X գիրք, Թիֆլիս, 1903, էջ 143, 148:

⁵² Ա. Ամիրխանյան, *ԴԱՆ*, Վանաձոր, 2015: Նյութը գրանցել ենք Վանաձորում բնակվող արծվաշենցիներից:

⁵³ Ե. Շահազիզ, *Նոր Նախիջեւանը եւ նոր-նախիջեւանցիք. Ծէւեր և սովորութիւններ*, ԱՀ, գիրք 9, Թիֆլիս, 1902, էջ 21: Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 104: Ա. Մանուկեան, *Հայ եկեղեցու սոները*, Թեհրան, 1969, էջ 91:

⁵⁴ Հր. Աճառեան, նշվ. աշխ., էջ 167: Ստ. Մայխասեանց, նշվ. աշխ., հ. 1, էջ 348: Կ. Գաբիկեան, նույն տեղում:

⁵⁵ Մ. արք. Օրմանյան, *Ծիսական բառարան*, Ե., 1992, էջ 11, 43:

Եթե ենթադրենք, որ *բակլախորան* բարդության երկրորդ բաղադրիչը սկզբնապես եղել է *խորակ* կամ *խոր*- արմատով և այլ վերջածանցով մեկ այլ բառ, ապա *խորան* անհասկանալի անցումը թերևս կարելի է բացատրել այն հանգամանքով, որ Մեծ պաար եկեղեցական տոն է և դրա հետ կապված խնդրո առարկա բառերն առնչվել է եկեղեցական *խորան* բառերին: Միևնույն ժամանակ հնարավոր է նաև ենթադրել, որ *բակլախորան-ը* –ան վերջածանցով մի հին կազմություն է՝ վերոհիշյալ *խոր*- արմատից և հետագայում պարզապես վերաիմաստավորվել է եկեղեցականների կողմից:

Մասուրի սպաս/պաս, հոնի սպաս, մամխի սպաս. Մասարամծունն ու հոնի թթուն համապատասխանաբար կոչվում են նաև *մասուրի սպաս/պաս*⁵⁶ և *հոնի սպաս*⁵⁷: Հայերենում *սպաս* արմատն ունի «սպասավորություն, ծառայություն, կահ կարասի, եկեղեցական սպասք, կոչունք, հաց և գինի, որ պատարագի ժամանակ օրհնում են, ճաշասեղանի սպասք, կերուխում» և այլ իմաստներ և բազմաթիվ զուգահեռներ ունի միջին իրանական լեզուներում⁵⁸: Հայոց ուտեստի համակարգում այն ձեռք է բերել նաև կերակուրի ընդհանրական իմաստ, ինչի շնորհիվ բազմաթիվ ճաշերի անուններ կազմվել են այդ արմատով՝ *ավլուկի սպաս*⁵⁹, *կաթնուսպաս*⁶⁰, *մամխի սպաս*, *լոբու սպաս*⁶¹, *գրպասպաս*⁶² և

⁵⁶ Վ. Ղազարյան, Վրաստանի Մառնեուլի շրջանի հայկական գյուղերը (այսուհետև՝ Մառնեուլ), ՀԱԻ ԱԲԱ, գործ 92/2, էջ 399: Ա. Ամիրխանյան, *ԴԱՆ*, Մյունիքի մարզ, Սալվարդ, 2015: Արագածոտնի մարզ, Բյուրական, 2018:

⁵⁷ Վ. Ղազարյան, Լոռվա գավառի Օձուն գավառակի Ղաչաղան (Արևածագ), Ծաթեր, Մղարթ և Կարմիր Աղեգի գյուղերի ազգագրությունը, ՀԱԻ ԱԲԱ, գործ 88, էջ 131: Վ. Ղազարյան, *Մառնեուլ*, էջ 399: Ա. Ամիրխանյան, *ԴԱՆ*, Լոռու մարզ, 2009-2014:

⁵⁸ Հր. Աճառեան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 4, Ե., 1926, էջ 261: Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 692:

⁵⁹ Ե. Լալայեան, նշվ. աշխ., էջ 143: Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ե, Ե., 2008, էջ 383: Վ. Մուղևեցյան, *Եկվորներ*, Ե., 1989, էջ 131, 137: Ա. Ամիրխանյան, ԴԱՆ, Վահագնի, Մարց, 2013:

⁶⁰ Ե. Լալայեան, նշվ. աշխ., էջ 148:

այլն: Սակայն *սպաս* ասելով առաջին հերթին հասկանում ենք ձավարով ու թանով եփած ճաշը՝ *թանով սպորը (թանասպուր, թանով սպաս/պաս, թանհատ)*, որը, մեր կարծիքով պայմանավորված է այն հանգամանքով, որ հայոց ուտեստի համակարգում այն ամենից շատ գործածվող, գրեթե ամենօրյա ճաշ էր⁶³, որը ամռանը որպես զովացուցիչ նաև սառը (կոչվում էր պաղթանասպուր⁶⁴), իսկ ձմռանը տաք են կերել: Ըստ Հացունու նախ սեղանին թան՝ ձավարեղենով կամ ընդդեմով ջրալի կերակուր են դրել, որ միջին դարերում և այժմ ապուր է կոչվում⁶⁵: Բացառություն է պատահի շրջանը, չնայած շաբաթական պաս օրերին՝ չորեքշաբթի, ուրբաթ և շաբաթ, կարող են նաև պարզ թանիկ ուտել⁶⁶: Իսկ սուրբծննդյան և Զատիկի ճրագալույցի երեկոյան ճաշի առաջին կերակուրը, որպես պահքը լուծող, ավանդաբար *թանասպուրն* է եղել⁶⁷:

Հոնի փշեջուր, հյունի փթռուկ, մամխի փթռուկ. Հոնի/ֆոնի ճաշը կոչվում է նաև *ֆոնի փշեջուր*⁶⁸, քանի որ այլուր են ավելացնում: Թանձր դարձնելու համար ջրալի ճաշերին այլուրի խյուս

⁶¹ **Ա. Ամիրխանյան**, ԴԱՆ, Լոռու մարզ:

⁶² **Վ. Ավետյան**, *Շնորհ*, Ե., 1998, էջ 391:

⁶³ **Մ. Կ. Միրախբեան**, *Նկարագրական ուղեորություն ի հայասրանի գաւառս Արեւելեան Տաճկաստանի, Տեղագրութիւնք սարէն եւ ձորէն, հնէն եւ նորէն պիտանի գիտնոց*, մասն Գ, Կ. Պոլիս, 1885, էջ 195: **Յ. Մալխասեան**, *Հայ գեղջուկի այբումը*, ԱՀ, հինգերորդ տարի, Զ գիրք, Թիֆլիս, 1900, էջ 195, 199: **Ս. Մովսիսյան (Բենսե)**, *Հարք (Մշո Բուլանըխ)*, ՀԱԲ, հ. 3, Ե., 1972, էջ 36: **Վ. Թեմուրճյան**, նշվ. աշխ., 1970, էջ 95: **Գ. Հալաջյան**, *Դերսիսի հայերի ազգագրությունը*, ՀԱԲ, հ. 5, Ե., 1973, էջ 232, 237: **Յ. քին. Մարգիսեան (Ալեոր)**, նշվ. աշխ., էջ 38, 397: **Գ. Հակոբյան**, *Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը*, Ե., 1974, էջ 167: **Է. Բասբեկյան**, *Բզդիք*, Ե., 2009, էջ 113:

⁶⁴ **Գ. Հալաջյան**, նշվ. աշխ., էջ 238:

⁶⁵ **Վ. Հացունի**, *Ճաշեր եւ խնձոյք հին Հայաստանի մէջ*, Վենետիկ-Ս. Ղազար, 1912, էջ 176-177:

⁶⁶ Նշվ. աշխ., էջ 405:

⁶⁷ **Յ. քին. Մարգիսեան (Ալեոր)**, նշվ. աշխ., էջ 189, 204, 247:

⁶⁸ **Ս. Միրզոյան**, նշվ. աշխ., էջ 216: **Վ. Ավետյան**, նշվ. աշխ., էջ 393: **Ա. Ամիրխանյան**, ԴԱՆ, Լոռու մարզ, 2009-2015:

ավելացնելը հայերենի մի շարք բարբառներում կոչվում է *փուշի* կամ *փոշի տալ*: «Փոշի» կամ «փուշի» նշանակում է նաև այլուր, որ ցանում են խմորի վրա, որ չկպչի, կամ էլ՝ «սպասի այլուր», որ թանձրացնելու նպատակով ավելացնում են ջրալի կերակուրների⁶⁹: Այս եղանակով եփած ճաշերի անվանումները հաճախ կազմվում են «փոշեջուր (փշեջուր)» բառով, օրինակ, *ավելուկի փշեջուր*⁷⁰, *կարտոփի փշեջուր*, *բոնջի փշեջուր*⁷¹, կամ էլ կոչվում են *փոշածներ*⁷²:

Հայոց ուտեստի համակարգում գոյություն ունի փթռուկ (փթրոք) անվանումով ճաշ, որը եփելու համար քիչ ջրով շաղախած այլուրից մանր գնդիկներ են անում («փոլով են անում») և խառնելով լցնում եռացող ջրի մեջ, երբեմն նաև սոխառած են ավելացնում⁷³: Հաճախ վերոհիշյալ այլուրախառն մանր գնդիկները ավելացնում են մի շարք կերակուրների, որի պատճառով դրանց անվանումները կազմվում են «փթռուկ» բառով, օրինակ, *հյունի փթռուկ*⁷⁴, *ավլուկի փթռուկ (ավլուկափթռուկ)*:

Բավականին ուշագրավ են մամուլի ճաշի անվանումները, որոնք կազմվում են վերոհիշյալ գրեթե բոլոր ձևերով: Մամուլի ճաշի հոմանիշներն են՝ *մամլի սպաս*, *մամլի թթու*, *մամլի փթռուկ*, *մամլի փշեջուր*, *մամլի թթվաջուր*⁷⁵ և այլն:

Այսպիսով, Լոռիում և Տավուշում հավաքած ազգագրական դաշտային, ինչպես նաև գրավոր նյութերի վերլուծությունը

⁶⁹ **Հր. Աճառեան**, *Հայերեն գաւառական բարբարան*, էջ 1078: **Հր. Աճառեան**, *Հայերեն արմատական բարբարան*, հ. 4, 1926, էջ 516: **Մ. Ամատունի**, նշվ. աշխ., 656: **Սո. Մալխասեանց**, նշվ. աշխ., հ. 4, էջ 515:

⁷⁰ **Մ. Միրզոյան**, նշվ. աշխ., էջ 213: **Վ. Ավետյան**, նշվ. աշխ., էջ 390:

⁷¹ **Ա. Ամիրխանյան**, ԴԱՆ, Օձուն, Ծաթեր, 2011: Ծնող, 2015:

⁷² **Մ. Ավագյան (Մերինե)**, *Արձակ*, ՀԱԲ, հ. 8, Ե., 1978, էջ 186:

⁷³ **Ե. Լալայեան**, *Գանձակի գավառ*, էջ 306: **Ե. Լալայեան**, *Բորչալուի գաւառ*, էջ 141: **Մ. Ամատունի**, նշվ. աշխ., էջ 651: **Սո. Մալխասեանց**, նշվ. աշխ., էջ 498: **Մ. Միրզոյան**, նշվ. աշխ., էջ 215: **Վ. Ավետյան**, նշվ. աշխ., էջ 392: **Ա. Ամիրխանյան**, ԴԱՆ, Տավուշի մարզ, 2015:

⁷⁴ **Ա. Ամիրխանյան**, ԴԱՆ, Գանձաքար, 2015:

⁷⁵ **Ա. Ամիրխանյան**, ԴԱՆ, Լոռու մարզ, 2009-2013, Տավուշի մարզ, 2014-2015:

ցույց է տալիս, որ վայրի մրգերի և հատապտուղների պտղահյութով կերակուրները եփում են նույն եղանակով, ուստի դրանց անվանումները կազմվում են նույն ձևով: Այդ անվանումները կազմվել են ըստ դրանց համի, տեսքի, պատրաստման եղանակի, ինչպես նաև ընդհանրական «կերակուր» իմաստ ունեցող հայերեն և իրանական ծագման բառերով և այլն, որոնք երբեմն շփոթության տեղիք են տալիս:

AnzhelaAmirkhanyan-Names of meals with wild fruits and berries in Armenian. - Wild fruit and berry meals are peculiar to Armenian cuisine and interestingly they may carry a number of different names even in the same historical-ethnographic region. The fact that they are named differently may depend on the quality of the meal which is needed to be emphasized, namely, its taste, how it looks, preparation method and so on. The names are composed with the help of the fruit name and the word “matsun” meaning thick, solid or the word “tetou” (i.e. “sour”) in Armenian. The names of the meals can also be formed with fruit names added to the generalized terms in Armenian meaning soup as well as with the help of words “shorva” and “khorak” having Iranian origin.

Анжела Амирханян - Наименования блюд с дикими фруктами и ягодами в армянском языке. - Армянской кухне свойственны блюда, приготовленные из диких фруктов и ягод. Интересно, что каждое из них, даже в одном и том же историко-этнографическом регионе имеет несколько названий. Данный факт связан с тем, какое именно качество еды более значимо - вкус, внешний вид, способ приготовления и т. д. Эти названия составлены при помощи наименований плодов и слова “тту”, что в армянском языке значит кислый, или слова “матсун” в значении густой, насыщенный. Названия супов могут быть составлены также присоединением наименований плодов и обобщающего слова “апур” или “спас” в значении суп в целом, а также при помощи слов “шорва” или “хорак” имеющих иранские корни.

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ
ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԴԱՄԱՆՇԱՅԻՆ ԿԱՊԱԿՑԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ**

Լեզվաբանության մեջ տարբերակվում են բառերի և խոսքի մասերի կապակցելիությունն հասկացությունները: Հայ քերականության պատմության մեջ խոսքիմասային կապակցելիության մասին դիտարկումները քիչ են, նշված հարցին առաջին անգամ անդրադարձել է Գ. Ջահուկյանն իր «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները»¹ աշխատության մեջ:

Բառերի կապակցելիության գաղափարից հանգում ենք խոսքիմասային կապակցելիության գաղափարին, որը հարաբերվում է բառի բովանդակության և քերականական իմաստի հետ, քանի որ կապակցելիական հնարավորություններն առավելապես պայմանավորված են կապակցվող միավորների արտահայտած իմաստներով:

Խոսքի մասերի կապակցելիության հնարավորություններով է որոշվում նաև լեզուների տարբերությունները, որոնք լեզվի յուրացման դժվարություններից են: Բառերի կապակցելիական հնարավորությունները պայմանավորված են նաև տվյալ լեզուն կրող ժողովրդի լեզվամտածողությամբ. դա է պատճառը, որ օտար լեզու ուսումնասիրողները, իմանալով բառերի բացատրությունները, երբեմն չեն կարողանում ճիշտ կառուցել խոսքը (բառացի թարգմանություններ են կատարում՝ համադրելով իրենց մայրենի լեզվի հետ):

Ռուս լեզվաբանության մեջ բառերի կապակցելիության հարցին անդրադարձել են Ալ. Պուշկինի անվ. ռուսաց լեզվի ինստիտուտի աշխատակիցները՝ Պ. Դենիսովայի և Վ. Մորկովկինայի խմբագրությամբ՝ գիտական շրջանառության մեջ դնե-

¹ Տե՛ս Գ. Ջահուկյան Գ., *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974, էջ298-301, 303-306, 462-466:

լով «Учебный словарь сочетаемости слов русского языка»² բառարանը, որում ընդգրկված է շուրջ երկու հազար հինգ հարյուր գլխաբառ, վերջիններս արտահայտված են գոյական, ածական և բայ խոսքի մասերով: Նշված բառարանը գերազանցապես նախատեսված է նրանց համար, ովքեր ռուսերենն ուսումնասիրում կամ դասավանդում են որպես օտար լեզու: Բառարանում բառերի կապակցելիությունը ներկայացված է ռուսերենում առավել տարածված կամ էլ սակավադեպ կապակցվող առանձին օրինակների ձևով՝ չառանձնացնելով կապակցվող բառի ո՛չ խոսքիմասային և ո՛չ էլ դասային պատկանելությունը՝ անհրաժեշտության դեպքում բերելով համապատասխան օրինակներ գեղարվեստական գրականությունից:

Մի շարք լեզուներում գոյականները դասակարգվում են ոչ թե ըստ սեռերի կամ շնչավորության, այլև՝ ըստ դասերի: Յուրաքանչյուր դասի մեջ մտնում են տվյալ լեզվի այն գոյականները, որոնք դիտվում են իբրև միատեսակ հատկանիշներ ունեցող առարկաներ³:

Ժամանակակից հայերենին նույնպես հատուկ է դասի քերականական կարգը (քերականական դասը), որն ըստ Գ. Ջահուկյանի⁴ հատուկ է գոյական, ածական, դերանուն, բայ, կապ խոսքի մասերին՝ հանդես գալով գոյականների և դերանունների համար՝ թվի և հոլովի ցուցիչների, իսկ բայերի համար՝ դիմաթվային վերջավորությունների միջոցով:

Հայերենում հատկանիշի վերագրումն առարկային կատարվում է քերականական տարբեր միջոցներով և խոսքի մասերով, այսպես՝ հատկանիշը լինում է փոփոխական, հարաբերականորեն կայուն, թվային, չտարբերակված: Փոփոխական հատկանիշն իր արտահայտության ձևերով կարող է լինել ան-

² Տե՛ս և Институт русского языка им. А.С. Пушкина, *Учебный словарь сочетаемости слов русского языка*, под ред. П. Денисова, В. Морковкина, М., 1978.

³ Տե՛ս և Աղայան Է., *Լեզվաբանության ներածություն*, Ե., 2009, էջ 189:

⁴ Տե՛ս և Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 206-208, 217, 276-279, 306-307, 328:

դեմ և դիմավոր: Եթե դիմավոր հատկանիշն առարկային վերագրվում է համազոր հարաբերությամբ, ապա անդեմ բայերի արտահայտած հատկանիշը վերագրվում է ստորադասական հարաբերությամբ: Հմտ. *Տղան երգում է/երգող տղա:*

Անդեմ եղանակով արտահայտված հատկանիշի կապակցելիական առանձնահատկությունները բացահայտվում են ածականների, թվականների, դերանունների, գոյականների և անդեմ բայերի դասի քերականական կարգի հիման վրա: Հայերենում անվանական բառակապակցությունները հիմնականում ձևավորում են որոշիչ-որոշյալ և հատկացուցիչ-հատկացյալ քերականական զույգերը:

Ժամանակակից գրական հայերենում թվականները ստորադասական հարաբերությամբ կապակցվում են գոյականների հետ, մինչդեռ լեզվի ժողովրդախոսակցական տարբերակում հնարավոր է նրանց կապակցումը նաև բայերի հետ, ինչպես՝ *հազար ասել, յոթ չափել* և այլն:

Խոսքիմասային կապակցելիությունը միանշանակ հանդես չի գալիս, քանի որ հաճախ նույն խոսքի մասի տարբեր տեսակները դրսևորում են կապակցելիական տարբեր հնարավորություններ, այսպես՝ ժամանակակից հայերենում թվականներն առանձնանում են կապակցելիական հետևյալ առանձնահատկություններով.

ա/ բացարձակ թվականները բացարձակ բազմադաս են. նրանց հատուկ է բոլոր դասերի գոյական-որոշյալների հետ կապակցվելը: Օրինակ՝ *երկու ուսանող, երկու տեսր, երկու միտք, երկու շուն* և այլն:

բ/ Դասական թվականները ևս կապակցելիության տեսանկյունից սահմանափակումներ չեն առաջացնում: Օրինակ՝ *երկրորդ մարդը, երկրորդ գիրքը, երկրորդ միտքը, երկրորդ կատուն* և այլն:

Սկատելի է, որ դասական թվականների հետ կապակցվող գոյական-որոշյալները գերազանցապես արտահայտվում են որոշյալ առմամբ:

բ/ Բաշխական թվականները հարաբերական բազմադաս են. կապակցվում են անձնանիշ, իրանիշ թանձրացական և կենդանանիշ գոյական-որոշյալների հետ: Օրինակ՝ *երկուական աշակերտ, երկուական գիրք, երկուական շուն* և այլն:

դ/ Կոտորակային թվականները կապակցվում են *մասը, հատվածը* գոյական-որոշյալների հետ: Օրինակ՝ *պատկերի յոթ ութերորդ հատվածը, քառակուսու երկու երրորդ մասը* և այլն: Երաժշտագիտության մեջ կոտորակային թվականները հարաձանցվում են նաև *-ական* վերջածանցին (բացառությամբ՝ *մեկ քառորդ* արտահայտության)՝ կապակցվելով *նոտա, հաշիվ* իրանիշ գոյական-որոշյալների հետ: Օրինակ՝ *մեկ ութերորդական նոտա, մեկ տասնվեցերորդական նոտա* և այլն:

Դերանուն խոսքի մասի դասի քերականական կարգի առնչությամբ Գ. Ջահուկյանը նշում է. «Դասի քերականական կարգի դրսևորման տեսակետից սուպլետիվ կազմությամբ բնորոշվող առարկայանիշ դերանունները բաժանվում են երկու խմբի՝ անձնանիշ (*ես, դու, ինքը, ով*) և դասային տեսակետից չեզոք (*սա, դա, նա*)⁵»: Գիտնականը փոխադարձ դերանունները ևս համարում է անձնանիշ: Ընդ որում՝ տարբերակման սկզբունքը հետևյալն է. 1) ո՞վ հարցին պատասխանող դերանունները պատկանում են անձնանիշ դասին, իսկ ի՞նչ հարցին պատասխանողները՝ իրանիշ դասին, 2) *նա (նրանք)* ցուցական դերանունները թեև Գ. Ջահուկյանը դիտում է որպես դասային առումով չեզոք, բայց այն հիմնականում անձնանիշ արժեք ունի և հանդես է գալիս որպես երրորդ դեմքի անձնանիշ դերանուն: Երրորդ դեմքի համապատասխան իրանիշ իմաստ արտահայտելու համար *նա*-ն փոխարինվում է *այն* դերանվամբ, երբեմն նաև՝ *սա, դա* դերանուններով, 3) մնացած դերանունների դասային պատկանելությունը որոշվում է կա՛մ նշված ձևաբանական հատկանիշներով (օրինակ՝ *-ննք*-ով ստացականները՝ *մերոնք,*

⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 217:

ձերոնք անձնանիշ արժեք ունեն), կա՛մ *n՝ի*, *ի՛նչ* հարցական դերանուններին պատասխան լինելու հնարավորությամբ⁶:

Գ. Ջահուկյանի բնորոշմամբ՝ ժամանակակից հայերենի դերանվանական որոշիչները հարաբերակից են թվականներին և ածականներին և կարող են բաժանվել «քանակական» և «որակական» տեսակների⁷:

Ասույթում դերանունները հանդես են գալիս որպես անուն խոսքի մասերին փոխարինող խոսքի միավորներ. նրանց մի մասը փոխարինում է գոյական, մյուս մասը՝ ածական, մեկ այլ մասը՝ թվական խոսքի մասերին: Այս է պատճառը, որ քերականական կարգերը դերանունների համար տարբեր կերպ են դրսևորվում, այսպես՝ հոլովման քերականական կարգը հատուկ է ոչ բոլոր դերանուններին, իսկ հոլովվող դերանուններն էլ իրենց հերթին են դրսևորում անմիօրինակություն՝ ենթարկվելով կա՛մ անվանական, կա՛մ դերանվանական հոլովումներին: Նույն կերպ է դրսևորվում նաև թվի քերականական կարգը դերանունների համար: Հարկ է նկատել, որ այս հանգամանքը պայմանավորված է նրանով, թե ո՛ր խոսքի մասի փոխարեն են հանդես գալիս դերանունները, այսպես՝ թվի քերականական կարգը հիմնականում արտահայտվում է գոյականներին փոխարինող դերանունների համար: Օրինակ՝ *ես, դու, նա, ոմանք* և այլն:

Ժամանակակից հայերենում դերանունները և գոյականները հանդես են գալիս համատիպ քերականական կարգերով. գոյականներին հատուկ է թվի, հոլովի, դասի և առկայացման քերականական կարգերը, իսկ դերանուններին հատուկ է թվի, հոլովի, դասի և դեմքի քերականական կարգերը⁸:

Դասանշային կապակցելիության տեսանկյունից ևս դերանվանական որոշիչներն ի հայտ են բերում այն խոսքի

⁶ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, ն. տ.:

⁷ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 301:

⁸ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 292:

մասի կապակցելիական հնարավորությունները, որին փոխարինում են տվյալ խոսքային իրադրության մեջ: Եթե տվյալ խոսքային իրադրության մեջ *այսպիսի* դերանունը կիրառվում է *գեղեցիկ* ածականի փոխարեն, ապա այն ի հայտ է բերում *գեղեցիկ* բառի կապակցելիական հնարավորությունները և քանի որ այն կապակցելիության տեսանկյունից բացարձակ բազմադաս է, ուստի *այսպիսի* դերանունը ևս բացարձակ բազմադաս է: Հմնտ. *գեղեցիկ աղջիկ, գեղեցիկ տուն, գեղեցիկ գաղափար, գեղեցիկ շուն* և *այսպիսի աղջիկ, այսպիսի տուն, այսպիսի գաղափար, այսպիսի շուն*:

Ժամանակակից հայերենի դերանունները դասանշային կապակցելիության տեսանկյունից արտահայտում են անմիօրինակություն, այսպես՝

1/ անձնանիշ գոյական-որոշյալների հետ կապակցվող դերանունն է՝ *ուն, ինչպես՝ ուն Դանիել, ուն տղամարդ* և այլն:

2/ իրանիշ թանձրացական գոյական-որոշյալների հետ կապակցվող դերանունն է՝ *սույն, ինչպես՝ սույն շինությունը, սույն պայմանագիրը* և այլն: Նկատելի է, որ ուղղական հոլովաձևով արտահայտված գոյական-որոշյալները հանդես են գալիս միայն որոշյալ առմամբ:

3/ իրանիշ վերացական գոյական-որոշյալների հետ կապակցվող դերանուններն են՝ *ողջ, ամբողջ, համայն, ամենայն, ինչպես՝ ողջ կարողությունը, ամբողջ էությունը* և այլն:

4/ բացարձակ բազմադաս դերանուններն են՝ *այս, այդ, այն, նույն, միննույն, այսպիսի, այդպիսի, այնպիսի, այսքան, այդքան, այնքան, մյուս, ամեն մի, բոլոր, յուրաքանչյուր, ինչ-որ, ինչ-ինչ, մի քանի, ուրիշ, այլ, այսինչ, այնինչ, որոշ, որևէ, ոչ մի, որ, ինչպիսի, որպիսի, ինչպիսի, որպիսի, ինչքան, որքան, որչափ, ինչչափ, ինչ, որերորդ, քանի, քանիերորդ, ինչպես՝ այս աղջիկը, այս գիրքը, այս միտքը, այս շունը* և այլն:

Ժամանակակից հայերենի դերանունների շարքում չեն առանձնացել միայն կենդանանիշ և հարաբերական բազմադաս գոյական-որոշյալներ առնող դերանուններ:

Դերանվանական որոշիչների առնչությամբ Գ. Ջահուկյանը նշում է. «1. *Ի՞նչ (ինչ), ո՞ր (որ), այս, այդ, այն, նույն, այլ, ուրիշ* դերանվանական որոշիչները անտարբեր են թվի ու դասի կարգերի առնչությամբ և տարբերակված ըստ որոշյալության. *ո՞ր (որ), այս, այդ, այն, նույն* դերանվանական որոշիչները զուգորդվում են միայն որոշյալ, *ի՞նչ (ինչ), այլ, ուրիշ* դերանվանական որոշիչները՝ միայն անորոշ ձևերի հետ:

2. *Բոլոր, (ամբ)ողջ, ամեն, մի* դերանվանական որոշիչները տարբերակված են և՛ ըստ որոշյալության, և՛ ըստ թվանշության, (*ամբ)ողջ*-ը՝ նաև ըստ դասանշության. այս դեպքում՝ ա) *բոլոր*-ը և (*ամբ)ողջ*-ը գործածվում են միայն որոշյալ, *ամեն*-ը և *մի*-ն՝ միայն անորոշ ձևերի հետ. բ) *բոլոր*-ը գործածվում է միայն հոգնակի, մնացածները՝ միայն եզակի ձևերի հետ⁹»:

Ըստ դասի քերականական կարգի՝ հատկանիշ արտահայտող դերանունները հիմնականում բազմադաս են, քանի որ իմաստային չտարբերակվածությունը ենթադրում է անսահմանափակ շարահյուսական կապակցություններ:

Ժամանակակից հայերենի բառապաշարում սակավաթիվ են այն բառերը, որոնք կարող են կապակցվել թե՛ առարկաների, թե՛ հատկանիշ ցույց տվող բառերի հետ՝ ելակետում նախապատվությունը տալով դրանցից որևէ մեկին, օրինակ, հատկանիշի հատկանիշ ցույց տվող դերանունները հնարավորություն ունեն կապակցվելու ոչ միայն բայերի, բայանունաձևականների ու մակբայների հետ, այլև գոյականների հետ: Հմմտ. *այսչափ կարողալ, այսչափ հետաքրքիր, այսչափ արագ*, բայց նաև *այսչափ գիրք*: Այս պարագայում կարևորվում է խոսքիմասային փոխանցումը, սակայն, երբ որևէ բառ այլ խոսքի մասի դաշտ է տեղափոխվում, այնուամենայնիվ, նա զոնե միառժամանակ զուգահեռաբար պահպանում է իր սկզբնական խոսքիմասային հիմնական հատկանիշները:

⁹ Տե՛ս Զահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 299-300:

Avagimyan Arine - Classifying Combinability of Numerals and Pronouns in Modern Armenian Language - The possibilities of classifying combinability of numerals and pronouns are discussed in the article. It is typical of absolute and distributive numerals to combine with counted noun-attributives, but only with those substantive-attributives which mean people, certain material things and animals, while ordinal numerals can combine with substantive-attributives of all classes.

Depending on the grammatical category of the class, the pronouns expressing indication are mainly polycategorical, as being semantically undifferentiated brings to unlimited syntactic combinations.

Авагимян Аринэ - Классифицирующая сочетаемость числительных и местоимений в современном армянском языке - В статье анализируются возможности классифицирующей сочетаемости числительных и местоимений в современном армянском языке. В современном армянском языке абсолютным и распределительным числительным свойственно сочетаться с исчисляемыми субстантивами-определяемыми, причем семантически только с теми субстантивами-определяемыми, которые обозначают лиц, конкретные вещественные предметы и животных, между тем, классические числительные могут сочетаться с субстантивами-определяемыми всех классов.

В зависимости от грамматической категории класса, местоимения, выражающие признак, в основном, поликатегориальные, так как семантическая недифференцированность приводит к бесконечным синтаксическим сочетаниям.

ԽՈՐԽՈՐՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԷՐԻԱԽԻ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ

Շիրակի պատմության և հնագիտության ուսումնասիրության համար համեմատական լեզվաբանության տեսանկյունից կարևոր են նաև բիայնական այն արձանագրությունները, որոնցում հիշատակվում են Էրիախի երկիրը կամ նրա հարեվաններից որևէ մեկը: Հոդվածում ըստ հերթականության, ժամանակագրական կարգով ներկայացված են՝ ա.Արգիշտի I-ի Խորխորյան տարեգրության այն հատվածները, որտեղ արքան խոսում է Էրիախիի կամ նրա հարևանների դեմ կազմակերպած նվաճողական արշավանքների մասին, բ.Արգիշտի I-ի Խորխորյան տարեգրության կրկնօրինակը համարվող Վանի Ս.Սահակ եկեղեցու սեպագիր կոթողը, գ.Կարսի վիլայեթի Հանակ շրջկենտրոնից ոչ հեռու գտնված սեպագիր արձանագրությունը, որը որոշ նմանություններ ունի Խորխորյան տարեգրության, Վանի Ս.Սահակ եկեղեցու սեպագրի և Արգիշտի I-ի թողած Մարիդամիշի արձանագրության հետ, Ռուսա II-ի՝ Թոփրաք-կալեից հայտնաբերված կավե աղյուսակի սեպագիր տեքստի այն հատվածը, որում արքան խոսում է Իշկիգուլու երկրի թագաժառանգ Շագաաշթարայի Մանա երկրի կառավարիչ նշանակելու մասին (իհարկե, խոսքը Մանայի մի փոքր հատվածի մասին է, որը նվաճվել էր Ուրարտուի կողմից)¹:

¹ Թարգմանությունը՝ ըստ Պ. Հովհաննիսյանի, Ա. Մովսիսյանի *Հայ ժողովրդի Պատմության (ՇԺՊ) քրեստոմատիայի*, «Վանի թագավորության սեպագիր աղբյուրները Հայկական լեռնաշխարհի և հարևան պետությունների մասին»> գլխի, Ե., 2007, հ. I, էջ 161-169, 174-181, 183-184, ըստ Ն. Հարությունյանի *Корпус урартских клинообразных надписей*, (КУКН), Ер., 2001, Գ. Մելիքիշվիլիի *Урартские клинообразные надписи* (УКН), М., 1960, Ի. Դյակոնիվի *Ассиро-вавилонские источники по истории Урарту* (АВИИУ), Предисловие, раздел I-III, IV, Вестник Древней истории (ВДИ), 2-3, Москва, 1951, *Урартские письма и документы* (УПД), М.-Л, 1963, Գ. Օերթթելիի *Урартские памятники музея Грузии*, Тбилиси, 1939, М. Salvini, *Corpus dei testi*

Խորհրդայն տարեգրության առաջին պլանակում² Արգիշտին (Ք.ա. 786-764 թթ.) պատմում է, որ այդ տարում երրորդ անգամ զինվորներ գնդելով արշավել է Դիաուեխի ցեղի վրա և հպատակեցրել Դիաուեխի արքային, ապա գրավելով Շերիազի երկիրը՝ քաղաքները այրել, ամրոցները ավերել ու հասել է մինչև Բուրի քաղաքը (5-8 տողեր): Ապա Արգիշտին պատմում է Ջաբախա (I, 9-10 տողեր) և Իգանի (Իյանի) (I, 11-րդ տող) կատարած արշավանքի մասին, որի ընթացքում գրավվում է Ջաբախան, իսկ Մակալթունի քաղաքն անջատվում է Իգանիից: Ս.Հմայակյանը չի բացառում, որ Շիրակ անունը ծագում է վերոհիշյալ Շերիազի (^{KUR} Šeriazī) տեղանունից՝ երկիր, որը տեղադրվում է, ոչ թե Շիրակի դաշտում, այլ Շիրակի հարևանությամբ³: Օ.Խնկիկյանը առաջարկում է Շերիազի տեղանվան հետևյալ ստուգաբանությունը՝ շեր-խունկի ծառ, սև խունկ⁴, ծառի խեժ⁵ և ազի-ազն՝ ազգ, ցեղ, սերունդ, երկիր⁶ բառերից: Ս. Հմայակյանը, Ք.ա. VIII դ. Շիրակի 300 ամբարները (E'. Murele) թալանող, Սարդուրի արքայի անվան հակիրճ տարբերակ է համարում Շարա ձևը⁷: Տեղին է նշել Սարդուրի-Շարա-Շիրակ-Շերիազի հատուկ անունների նմանությունը:

Urartei (CTU I), *volume I*, Le iscrizioni su Pietra e Roccia I testi, Documenta Asiana, VIII, Volume primo, CNR, Istituto di studi Sulle civiltà dell' Egeo e del vicino Oriene, Roma, 2008, *Corpus dei testi Urartei* (CTU IV), *volume IV*, Iscrizioni su Bronzi, Argilla e Altri supporti nuove Iscrizioni su Pietra Paleografia generale, Documenta Asiana, VIII, Volume quarto, CNR, Istituto di studi Sulle civiltà dell' Egeo e del vicino Oriene, Roma, 2012, համահավասքների: **G. Lanfranchi, S. Parpola**, *The correspondence of Sargon II, Part II, Letters from the Northern and Northeastern provinces*, Helsinki university press, 1990.

² **Ի.Ավագյան**, *Պատմական Շիրակը սկզբնաղբյուրներում*, Գյումրի, 2015, էջ 40:

³ **Ս. Հմայակյան**, *Շիրակը սեպագիր աղբյուրներում*, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը (ՇՊՄՄ VII), Գյումրի, 2007, էջ 54:

⁴ **Փարամազ Կ.Տոնկեան**, *Հայոց լեզուի նոր բառարան*, Պեղրուք, 1969, էջ 638:

⁵ **Հ. Աճառյան**, *Հայերենի արմատական բառարան (ՀԱԲ)*, հ. Գ, Ե., 1977, էջ 510:

⁶ **ՀԱԲ**, հ. I, Ե., 1971, էջ 91:

⁷ **Ս. Հմայակյան**, *Ուրարտուի ոսկին*, «Հին Հայաստանի ոսկին (մ.թ.ա. III հազ. - մ.թ. XIV դ.)», Ե., 2007, էջ 159:

Դիաուխի կատարած արշավանքի ուղղությունը ձգվում էր հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք. արշավանքի ընթացքում Արգիշտին առաջին անգամ հայտնվում է Շիրակում: Տարեգրության I սյունակի 11-րդ տողում Արգիշտին նշում է, որ Իգանիի Մակալթունի քաղաքը նվաճելուց հետո եկել է Էրիախի երկրի վրա (KYKH/173-11 2-րդ տող): Նույն հատվածի՝ հաջորդ տարվա արշավանքի նկարագրության մեջ արքան պատմում է Էրիախիի դաշնակից և հարևան Աբիլիանիի, Անիշթեբա, Կուարգանի, Ուլթուգահինի երկրները նվաճելու (17-18 տողեր) մասին: Արշավանքի հաջորդ ուղղությունը այդ նույն տարում դեպի Էթիունի էր, որը Արգիշտին նվաճում է՝ հասնելով Իշկիգուլու երկիրը և Էթիուխի երկրի Ուդուրի ցեղը (21-22): Արշավանքը կատարվելու էր Էթիունիի կազմի մեջ մտնող Էրիախիի համադաշնության տարածքով:

Խորխորյան տարեգրության մեջ Էրիախի երկրի մասին երկրորդ հիշատակությունը, որը նաև իր բովանդակությամբ համընկնում է Մարմաշենի արձանագրությանը, KYKH-173 V սյունակի 41-49 տողերում է: Արքան պատմում է, որ լսելով, թե Էթիունի երկրից եկել և Արդինի (քաղաքի) «Աշտիուզին» հափշտակել են՝/, հենց այդ նույն տարում երրորդ անգամ գորք է գնդել, և ադոթելով Խալդի տիրոջը, Թեյշեբային, Շիվինիին և Բիայնիլի երկրի աստվածներին՝ արշավել. արքայի՝ իշխանական մեծությամբ ադերսանքը վերևում լսում էին աստվածները:

Ըստ Գ.Մելիքիշվիլու կարծիքի՝ խոսքը Էթիունյան ջուկատների կողմից Արդինի-Մուծաձիրից Խալդ աստծո կամ կուռքի հափշտակման մասին է (ուրարտերեն՝ irbilani), ընդ որում ուսումնասիրողը aštiuzi բառի տակ հակված է տեսնել հայկական «աստուած» բառի նախաձևը, սակայն Ն.Հարությունյանը կարծում է, որ խոսքը նույնանուն այլ կենտրոնի մասին է՝ «Էթիունյան Արդինիի», որը գտնվում էր Բիայնիլիի հյուսիսում, որտեղ բռնկված ապստամբությունը ճնշելու պատճառով Ար-

գիշտի թագավորը ստիպված էր արշավանք կազմակերպել⁸, ընդ որում՝ երիցս⁹:

Արգիշտի I-ի՝ Ք.ա. 768թ. արշավանքը մի առանձնահատուկ արշավանք էր՝ ուղղված Հյուսիսարևմտյան համադաշնության դեմ: Արշավանքն ուներ կրոնահոգեբանական շարժառիթներ, որոնք ուսումնասիրելով՝ կարելի է որոշ գաղափար ունենալ համադաշնության կրոնապաշտամունքային պատկերացումների մասին: Իր թագավորության տասներեքերորդ տարում, երբ Արգիշտին գտնվում էր Մանայում, լսում է, որ «Էթիունի երկրից /եկել ու/ տարել են Արդինի քաղաքի Աշտիուզեն», այսինքն՝ Մուծածիր քաղաքի Խալդիի տաճարի արձանիկներից մեկը¹⁰: Նման երևույթ կար խեթական շրջանում, երբ ընդունված է եղել խեթական տերության տարբեր շրջանների բնակավայրերի, լեռների, գետերի, աղբյուրների և այլ աստվածությունների երկրպագման կանոնակարգը: Աստվածության արձանը տաճարի մի հարկաբաժնից (արձանի գտնվելու մշտական վայրից) տեղափոխում էին *huwaši* կոչվող հաստատություն, դնում էին պատվանդանին, կատարում էին մատուցումներ, ապա աստծո արձանը հետ էին տանում: Իրենց աստվածություններով ներկայացված հեռավոր շրջանների և հատկապես խեթական տերությունից դուրս գտնվող երկրների հիշատակությունը ստիպում է Ա.Քոսյանին ենթադրել, որ ծիսական արարողությունները պիտի ընթանային մայրաքաղաք Խաթթուսասի կամ դրա մոտակայքում գտնվող որևէ տաճարում, որտեղ տեղադրված էին համապատասխան աստվածությունների արձանները¹¹: Հնարավոր է, որ տաճարում ոչ բոլոր

⁸ *KYKH/173-V, ծան. 44:*

⁹ *ՀԺՊ քրեատմատիա*, էջ 167:

¹⁰ *Ս.Հմայակյան, Շիրակը Լուշա-Գատարգա-Վիտերուխե դաշնակցության կազմում*, ԵՊՄԾ, Գյումրի, 1994, էջ 22-23:

¹¹ *Ա.Քոսյան, Բաուվայի կրոնական կենտրոնները խեթական դարաշրջանում*, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ (ՄՄԱԵԾ) XXI, Ե., 2002, էջ 315-331:

գրավված երկրների աստվածների կուռքերն են տեղադրված եղել, կուռքի բացակայության դեպքում արարողությունը կազմակերպելու համար այդ արձանները ստիպված էին բերել հեռավոր շրջաններից, ինչպես «Արդինի քաղաքի Աշտիուզեն»։ Կուռքը չվերադարձնելու պատճառով տեղի էր ունեցել կրոնաքաղաքական բնույթ կրող այդ ընդհարումը¹²։ Խեթական այս ավանդույթը համարելով ընդհանրական ողջ տարածաշրջանի համար՝ Ուրարտու, Ասորեստան, Էթիունի, և այսպիսի տաճարներից մեկը համարելով Մուծածիրի Խալդ աստծո տաճարը, որը նաև ասորեստանցիների պաշտամունքային կենտրոններից էր, կարելի է եզրակացնել, որ նախընտրելի է Ռուսա II-ի սեպագիր աղյուսակներից մեկի¹² Ի. Դյակոնովի առաջարկած թարգմանությունը։ Համաձայն դրա «Կիլբանի երկրի մոտ սրբավայրից Ռուսախինիլի էին վերաբնակեցրել Խալդ տիրակալին»¹³։ Արդինի (Մուծածիր) քաղաքի Աշտիուզեն մեծ կրոնապաշտամունքային նշանակություն է ունեցել Հյուսիսարևմտյան համադաշնության մեջ մտած իշխանությունների և երկրների համար։ Եթե արձանը պատկանել է Խալդ աստծուն, նշանակում է՝ ուրարտական և Էթիունյան կրոնապաշտամունքային պատկերացումները այնքան էլ հեռու չեն եղել իրարից։ 47-50 տողերից իմանում ենք, որ արշավելով Էթիունի երկրի վրա՝ նա նվաճել է Էրիախի ցեղի երկիրը և Քաթարգա ցեղի երկիրը, մինչև Իշկիգուլու երկիրը, տղամարդկանց և կանանց արքան քշել է Բիայնիլի։ Այս տողերի և Արգիշտիի՝ Մարմաշենի արձանագրության մանրամասն համեմատումը ցույց է տալիս, որ վերջինս առաջինի կրկնօրինակն է։

Խորհրդյան տարեգրության տեքստի առանձին հատվածների կրկնօրինակ է համարվում Վանի Ս. Սահակ եկեղեցում հայտնաբերված արձանագրությունը КУКН 174 А, В, որն

¹² КУКН/412а.

¹³ И. Дьяконов, *Урартские письма и документы (VII)*, М.-Л., 1963, ссылка28.

արված է երկու քարերի վրա¹⁴: Այս արձանագրության շնորհիվ Վ.Բելլը փորձեց վերականգնել Խորխորյան տարեգրության ամբողջական կառուցվածքը, իսկ Գ.Մելիքիշվիլիին հաջողվեց վերականգնել տարեգրության հիմնական տեքստի վնասված հատվածները և տարեգրության դեպքերը դասավորել ըստ Արգիշտի I-ի կառավարման տարիների: KYKH/174 B1 27-40 տողերում արքան պատմում է, որ Խալդյան զորությամբ հպատակեցրել է Էթիունի երկիրը և նշում է, որ հաղթել է Դիաուխիի արքային երեք տարի անընդմեջ օգնության եկած Լուշա, Քաթարգա երկրներին և Էրիախի ցեղի երկրին, Գուլութախի, Ուիտերուխի երկրներին՝ հասնելով մինչև Աբունի երկիրը:

Ն.Հարությունյանը Խորխորյան տարեգրության կրկնօրինակ է համարում Վանից հայտնի KYKH 175 a, b, երկու մասից բաղկացած, բազալտե քարի վրա արված արձանագրությունը, որը պահվում է Վրաստանի թանգարանում: Արձանագրությունը թերի է, սակայն պահպանված ընդհանուր բովանդակությունից պարզ է դառնում, որ խոսքը Էթիունի խոշոր համադաշնության դեմ տարած հաղթանակի մասին է, որի կազմի մեջ էին մտնում պատմական Շիրակի վարչական մասը կազմող Գուլութախին և Անիշթերգան¹⁵:

Ուշագրավ է Հանակի՝ (Օրթաքենդ) KYKH 174 C թերի տեքստով արձանագրությունը, որը հայտնաբերվել է 1985թ. ներկայիս Կարսի վիլայեթի շրջկենտրոն Հանակից ոչ հեռու՝ Օրթաքենդ գյուղից 2 կմ հեռավորության վրա¹⁶՝ Չլդըր լճից հյուսիս-արևմուտք, Արդահանից՝ հյուսիս-արևելք: Արձանագրությունը շատ ընդհանրություններ ունի Խորխորյան տարեգրության I-ին սյունակի 6-8 տողերի, ինչպես նաև տարեգրության կրկնօրինակը հանդիսացող Վանի Ս. Սահակ եկեղեցու

¹⁴ Տե՛ս **M. Salvini**, *Geschichte und Kultur der Urartäer*, Darmstadt: Wiss. Buchges., 1995, էջ 58.

¹⁵ **KYKH/175 a,b,c**:

¹⁶ Տե՛ս **CTU I, A 8-7**.

արձանագրության՝ 174 B1 1-11 տողերի և Սարիղամիշի արձանագրության որոշ տեղեկությունների հետ (KYKH/176): Կարևոր են Սարիղամիշի արձանագրության հետ կապված տեղեկությունները. Արգիշտին, նախ արշավելով Թարիունի (1-6 տողեր), ենթարկել և հպատակեցրել է այս երկիրը: Արշավանքի ճանապարհը անցել էր խուշանացիների և փայցիների երկրներով և հասել էր Աշկալաշի երկիրը: Հավանաբար այս արշավանքի ընթացքում ամենալուրջ դիմադրությանը Արգիշտին հանդիպել էր Ախուրիանի քաղաքի մարզում (7-8 տողեր), երբ նրան դեմ էր դուրս եկել Դիաուխի ցեղի արքան: 7-րդ տողում հանդիպող ^{URU}A^hurria asuni-ն Արգիշտիի Սարիղամիշի արձանագրության ^{URU}A^huriani-ն է, որը Աշտուխիների ցեղի երկրի կազմում է հանդես գալիս: Արգիշտի արքան զորքը հետ էր շարտել, Կա[...]ունի մարզի քաղաքները ոչնչացրել: Արշավանքի ընթացքում արքան ավերել էր 6 ամրոց և 50 քաղաք: Արձանագրության ուշագրավ հատվածներից է նաև անեծքի բանաձևը (12-13 տողեր).» Ով այս արձանագրությունը ոչնչացնի, թող ոչնչացնեն Խալդին, Կուեռան նրան արևի տակ...»: Ն.Վ. Հարությունյանը անեծքի բանաձևը համարում է իսիստ կրճատված և չի թարգմանում վերջին տողը՝ *mei inaini mei nara auie ilulie*¹⁷: Գլխավոր ընդհարումը տեղի էր ունեցել պատմական Շիրակի վարչական մասը կազմող Աշտուխիների երկրի Ախուրիանի բնակավայրի մոտ, և գերիների մեջ էին նաև այս երկրի բնակիչները: Սարիղամիշի արձանագրության մեջ Արգիշտին ավելի մանրամասն է խոսում Ախուրիանիի ճակատամարտի մասին:

Անեծքի բանաձևում Խալդիի հետ հիշատակված է Կուեռան: Այս հազվադեպ հիշատակությունը վկայում է Հայկական լեռնաշխարհի հյուսիսում՝ Վանանդի և Շիրակի տարածքում, Կուեռա աստծո պաշտամունքի մասին: Հայկական լեռնաշ-

¹⁷ Թեև բանաձևի առանձին բառերի իմաստը պարզ է (*inaini*՝ աստվածային, աստված), Գ. Մելիքիշվիլին նույնպես չի թարգմանում՝ **KYKH/45, հղում 23:**

խարհի արևմուտքում Կուեեայի պաշտամունքի մասին է վկայում Իգոլլուի արձանագրությունում հիշատակված «Կուեեա աստծո Թաշե քաղաքը»¹⁸: Կուեեան Մհերի դրան արձանագրությունում¹⁹ հիշատակված տասնչորսերորդ աստվածությունն է, որը դարձյալ հնդեվրոպական ծագում ունի²⁰: Այս աստվածությունն իր մեջ ներառել է հողի, երկրի, ցամաքի պաշտամունքը: Նրան վերագրվում է նաև վիշապային էություն, նա է պտղաբերության աստվածը, երկրի ընդերքի ջրերի ջրհորների²¹, քաղցրահամ ջրերի տիրակալն ու նրանց պահապանը՝ վիշապի կերպարով: Ըստ Մենուայի արձանագրություններից մեկի՝ Կուեեայի վիշապակերպ պաշտամունքի հետ է կապվում նաև «Էժդահա բուլակին»՝ «Աժդահակի (Աժի-Դա-հակի) աղբյուրը»²²: Այս աղբյուրը առնչվել է Կուեեայի պաշտամունքին, և պատահական չէ, որ այն կրել է Աժդահակ՝ Վիշապ անունը: Գեղամա լեռներում է գտնվում Աժդահակ ամենաբարձր լեռնագագաթը, որի բարձրությունը 3598 մ է: Տարվա մեծ մասը լեռը ձյունածածկ է, լանջերը լերկ են: Գագաթն ունի կոնաձև տեսք, խառնարանի խորությունը 40-50 մ է, որը լցված է ջրով: Լեռան հյուսիսային փեշերից սկիզբ է առնում Գավառագետը²³: Այսպիսի անվանում ունեցող լեռան գոյությունը Էթիունյան համադաշնության մասը հանդիսացող Վեդուրի-Էթիունի ցեղամիության սահմաններում հուշում է, որ Էթիունիի ցեղերն ու երկրները քաջ ծանոթ էին Կուեեա աստծո վիշապային էությանը: Լեռան խառնարանի նկարագրությունը ապացույց է Կուեեայի՝

¹⁸ **KYKH/244-31:**

¹⁹ **KYKH/83-8:**

²⁰ **Ս.Պետրոսյան, Լ.Պետրոսյան, Կարմիրբլուրյան ՉԱՄԱՐ.ՄՄՄ** և *Կուեեա-Կուառ աստվածությունների առնչության մասին*, ՇՊՍԺ VIII, Ե., 2010, էջ 65-71:

²¹ **Ս.Հմայակյան**, Կուեեա-Կուառ աստվածության պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում, *Պատմաբանասիրական հանդես*, 1990, 1, էջ 153-167:

²² **Ս.Հմայակյան**, *Վանի թագավորության պետական կրոնը*, Ե., 1990, էջ 50-51:

²³ **Թ.Հակոբյան, Ստ.Մելիք-Բախշյան, Հ.Բարսեղյան**, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան* (ՀՏԲ), 4 հատորով, հ. 1, Ե., 1986, էջ 54:

վերը նշված բնույթների մասին՝ երկրի աստվածություն, արտեզյան ջրերի աստված: Կուեռայի պաշտամունքը Հայկական լեռնաշխարհի հյուսիսում եղել է ուրարտական տիրապետության այստեղ հաստատվելուց ավելի վաղ, միայն թե ուրարտական դինաստիայի հովանավորող աստված Կուեռայի պաշտամունքը տարբերություններ ուներ էթիունյան Կուառից: Մակայն ուրարտական դարաշրջանում միևնույն ծագման ու բնույթի այս երկու, սակայն զարգացման տարբեր ուղիներ անցած պըտղաբերության, քաղցրահամ ջրերի վիշապաբնույթ Կուեռա և Կուառ աստվածությունները միաձուլվեցին, փոխներգործեցին, հղկվեցին և ստացան նոր շունչ: Կուեռայի հետ է առնչվել Օշականի տաճարի կրակի և ֆալոսների պաշտամունքը²⁴: Կուեռան հնդեվրոպական ծագում է ունեցել և դրանով է պայմանավորված նրա համատարած պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում, որտեղ գոյատևել է մինչև վաղ միջնադար: Էթիունյան համադաշնության մեջ մտնող Էրիախի ցեղամիությունը ընդունած պիտի լիներ Կուառ-Կուեռա աստծո պաշտամունքը և այս աստծուն պիտի պաշտեր իբրև գերագույն աստվածներից մեկը, քանի որ ուրարտական սեպագրերում հիշատակվող երկու տեղանունները, որոնց հետ էր կապվում Կուեռայի անվան ծագումը՝ Quarzani երկիրը և Կուառլինի հովիտը²⁵, (վերջինս հիշատակվում է Ռուսա II-ի՝ Զվարթնոցի արձանագրությունում) գտնվում են. առաջինը՝ Անիշթերգա (Արաքս գետի հյուսիսային ափին՝ Աբեդյանքի և Արաքս ու Ախուրյան գետերի խառնարանի միջև), որը չափազանց մոտ է Էրիախի երկրին, և Ուլտուգա (Արտագ-Մակու) երկրների միջև՝ Արաքս գետի ափին՝ Մասիսի արևելյան և հարավային լանջերի մոտ, երկրորդը՝ Կարմիր բլուրի և Էջմիածնի միջև եղած տարածքում: Շիրակում և հարևան տարածքներում Կուեռայի պաշտամունքի մասին վկայող ամենակարևոր փաստը Հանակի արձանագրության 12-

²⁴ Ս.Հմայակյան, *Վանի թագավորության պետական կրոնը*, էջ 55:

²⁵ KYKH /421-6.

13 տողերն են, որտեղ Արգիշտին գրում է.» (12) Ով այս արձանագրությունը ոչնչացնի, թող ոչնչացնեն Խալդին, Կուեռան, (13) նրան արևի տակ»²⁶: Սա այն եզակի վկայությունն է, որտեղ անեծքի բանաձևում հիշատակվում է Կուեռան: Հետևաբար, այս շրջաններում Կուեռա-Կուառի պաշտամունք է եղել, առավել ևս, որ որոշ ուսումնասիրողներ Կուեռային համարում են Թեյշեբայի որդի և սրանով պայմանավորում Կուառլինի դաշտավայրի անվանումը Կուեռայի անվամբ և նույն տարածքում՝ Կուառլինիում, Թեյշեբաինի կառուցումը՝ ի պատիվ Կուեռայի հոր՝ Թեյշեբա աստծո²⁷: Հովհան Մամիկոնյանը նշում է, որ. «Կուառն կառուցվել է Վիշապ քաղաքի տեղում»²⁸: Անհերքելի մի փաստ, որն ամրապնդվում է նաև Հանակից հայտնի ուրարտական վավերագրով: Ն.Մառը Կուառ քաղաքը նույնացնում է վիշապ քաղաքի հետ²⁹, իսկ Ս.Հմայակյանը Կուառ-Կուեռային համարում է վիշապաբնույթ մի աստվածություն³⁰:

Միջնադարյան նշանավոր փիլիսոփա և պատմիչ Գ. Մագիստրոսը մի լեգենդ է հիշում, համաձայն որի՝ բարի ձուկ Աժդահակը Խոսրովի կնոջը նվիրել էր մի թանկարժեք մարգարիտ³¹: Այս լեգենդը Բ.Պիտրովսկուն հիմք է տալիս վիշապի պաշտամունքը նույնացնել ձկան պաշտամունքի հետ, ձկան պաշտամունքին էլ մերձեցնել օձի պաշտամունքը, որը նույնպես ջրի խորհրդանիշն է համարվում: Ն. Մառը վիշապի «վեշ» կամ «ավշ» բաղադրիչը նույն աստծու հաբեթական հոգնակի

²⁶ КУКН/174 С.

²⁷ Ս.Հմայակյան, *Կուեռա-Կուառ աստվածության պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում*, էջ 167:

²⁸ Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Աշխատասիրությամբ՝ Վ.Հ.Վարդանյանի, *Հայ մատենագիրներ*, Ե., 1989, էջ 47:

²⁹ Ն.Մառ, *Հայկական մշակույթը: Նրա արմատները և նախապատմական կապերը ըստ լեզվագիտության*, Հայաստան, Ե., 1989, էջ 38:

³⁰ Ս.Հմայակյան, *Կուեռա-Կուառ աստվածության պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում*, էջ 153-167:

³¹ Б.Пиотровский, *Виапы, каменные статуи в горах Армении*, Л., 1939, с. 28-29, 38.

ձևն է համարում: Աճառյանը վիշապ բառը բացատրում է որպես «անհեթեթ մեծ օձ, մանավանդ ջրային, կետ անասունը»³² և բխեցնում պահլավերեն *vēšāp բառից: Գրեթե նույն ստուգաբանությունն է տալիս Ջահուկյանը՝ վիշապ-յուշապ, օձ, առասպելական հրեշ³³: Վիշապ՝ օձ և ջուր բառերից ուրեմն «ջրի օձ», եզրակացնում է Վ. Ուրիշյանը³⁴:

Այսպիսով պատմական Շիրակի մասին ուրարտական աղբյուրներից վկայում են 15 արձանագրություններ, որոնցից հինգը բաժին է ընկնում Արգիշտիի Խորխորյան տարեգրությանը և դրա կրկնօրինակներին և պարունակում կարևոր պատմական և լեզվաբանական առնչություններ:

Avagyan Inga - Horohor chronicle about the land of Eriakhi.- In the article the urartu cuneiform writings which contain information about Eriakhi Land and its adjacent territories are presented and studied. In chronological order are presented and studied fragments of Khorkhor chronicle of Argishti I and the chronicle duplicates, two inscriptions from Van and an inscription from Hanak, and also inscriptions from Sarighamish, Spandaryan, Marmashen, bead with an inscription from Van which were left by Argishti I, fragments from Sarduri II chronicle (Hazine-Kapusi), cuneiform writing of Rusa I from Tsovinar settlement and cuneiform tables of Rusa II from Toprakh-Kalais.

Авагян Инга- Хорхорская летопись о стране Эриахи.- В статье представлены и изучены те урартские клинописные тексты, которые содержат информацию о стране Эриахи и сопредельных территорий. В хронологическом порядке представлены и изучены отрывки Хорхорской летописи Аргишти I и дубликаты летописи - две надписи из Вана и надпись из Ханака, а также надписи из Сарыкамьша, Спандаряна, Мармашена, бусина с надписью из Вана, оставленные Аргишти I, отрывки из летописи Сардури II (Хазине-Капуси), клинописный текст Русы I из селения Цовинар и клинописная табличка Русы II из Топрах-кале.

³² ՀԱԲ, հ. 3, Ե. 1979, էջ 341:

³³ Գ. Ջահուկյան, Հայերենի ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 712:

³⁴ Վ. Ուրիշյան, Մեր արմատները նոր լույսի տակ, ԱՄՆ, 1995, էջ 193:

**ՀԱՅ ԱՌԱՋՆԱԲԱՂԱԴՐԻՉՈՎ ՀԱՏՎԱԾԱԿԱՆ
ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՄԸ**

Հայերենի բառակազմության մեջ համեմատաբար նոր իրողություն են հատվածական բաղադրությունները (կազմությունները), որոնց բաղադրիչները «նույնական կամ նույնիմաստ ածականակերտ ածանցներով կազմված և իրար հետ ստորադասության, համադասության կամ փոխադարձության հարաբերությամբ կապակցված բառեր են»¹:

Արևելահայ մամուլի լեզվում նոր տիպի այս կազմություններ սկսել են գործածվել 20-րդ դարի սկզբին: Խոստուն է բնագրային այս օրինակը «... ինչպես սկսվեց և ինչպես շարունակվեց XX դարի այն զարհուրելի չարագործութիւնը, որ արդէն յայտնի է լրագրութեան մէջ **հայ-թուրքական** անունով» («Մըշակ», 12.02. 1905): Փոխադարձության հարաբերություն ցույց տվող առաջին հատվածական բաղադրությունը թերևս հենց **հայ-թուրքական**-ն է:

Հատվածական կազմությունները կարող ենք տարբերակել ըստ կազմիչների (օրինակ՝ սերող հիմքի), բաղադրության տիպի (վերլուծական և համադրական²) և այլն: Մեծաթիվ են **հայ** առաջնաբաղադրիչ ունեցող հատվածականները³: Սրան-

¹ Է. Բ. Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ 239:

² Հմմտ. Դ. Գյուրջիյան, «Հայերեն» նշանակող հայ վերջնաբաղադրիչով բառերի մի խմբի քննություն / «Ձախուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., 2017, էջ 53-67: Քննվում են **Ֆրանսահայ** «ֆրասերեն-հայերեն», **լատինահայ** «լատիներեն-հայերեն» և համանման այլ բառեր, որոնք կրկին հատվածական են, սակայն համադրական տիպի:

³ Դ. Գյուրջիյան, *Հայ առաջնաբաղադրիչով հատվածական բաղադրությունները* / Գիտական հոդվածների ժողովածու (նվիրվում է Գր. Ղափանցյանի ծննդյան 130-ամյակին), Ե., 2017, էջ 57-72:

ցում առաջին՝ ելակետային բաղադրիչը ցույց է տալիս Հայաստանը, հայությունը կամ հայերենը, մյուս եզրում՝ առնչվող երկիրը, նրա ժողովուրդը կամ լեզուն: Այլ կերպ ասած՝ սրանք «հայացք» են Հայաստանից կամ հայկական սփյուռքից, այդ «հայացքի» արդյունք:

Հայ առաջնաբաղադրիչով հատվածականները հայերենի տարբեր բառարաններում արձանագրվեցին իրենց ստեղծումից տասնամյակներ անց: Դրանք բառարաններում ներկայացված են երկու ձևով՝ ա) իբրև անկախ միավորներ՝ գլխաբառի կարգավիճակով (լեզվաբանական բառարաններ՝ բացատրական, ուղղագրական, հաճախականության, գրողի լեզվի, բ) որպես կախյալ միավորներ՝ բաղադրյալ անունների բաղադրիչներ, կազմիչ մասեր (հանրագիտական բառարաններ):

Հատվածական բաղադրություններ առաջին անգամ տեսնում ենք ժամանակակից հայերենի ակադեմիական բացատրական բառարանում⁴. գրանցվել են ընդամենը երեքը՝ **հայ-թուրքական**, **հայ-ռուսական** և **հայ-վրացական**⁵: Բացատրությունները համանման են՝ **հայ-թուրքական** «հայերի և թուրքերի միջև տեղի ունեցող, հայերի և թուրքերի», **հայ-ռուսական** «հայերի և ռուսների, հայերի և ռուսների հարաբերություններին վերաբերող», **հայ-վրացական**-ը՝ նախորդի պես (միայն «ռուսների» փոխարեն «վրացիների»): Այսպես է, քանի որ դրանք բառացանկում իրար հաջորդող նույնակառուցվածք (և նույնարժեք) միավորներ են:

Երեք բաղադրությունների դիմաց էլ նշված է ածականի արժեք, սակայն չկան բնագրային օրինակներ (մի բան, որ այս

⁴ Ստ. Մալխասյանցի բառարանն այդպիսի ոչ մի կազմություն չի արձանագրել՝ դրանք ամենայն հավանականությամբ բառակապակցություններ համարելով (տե՛ս Ստ. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, հ.հ. 1-4, Ե., 1944-1945): Արևմտահայերենի բացատրական բառարաններում ևս **հայ**-ով հատվածականներ չեն զետեղվել:

⁵ Տե՛ս *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, հ. 3, Ե., 1974, էջ 283, 284:

բառարանի համար սկզբունք է ընդունվել), անգամ ինքնահնար բառակապակցություններ չեն տրվել:

Անշուշտ հասկանալի է այս ընտրությունը, սակայն դժվար է հիմնավորել, թե ինչու չկան **հայ-իրանական/ պարսկական, հայ-հունական, հայ-արաբական, հայ-ֆրանսիական** և նման այլ բաղադրություններ, որոնք թե՛ հաճախական են և թե՛ արտացոլում են հայերի ու հարևան, բարեկամ կամ առնչվող ուրիշ ազգերի հետ հայերի ունեցած հարաբերությունները⁶:

Էդ. Աղայանի բառարանում⁷ **հայ**-ով հատվածականների հարցին սկզբունքային լուծվել է տրվել. դրանք գլխաբառ չեն դարձել: Աղայանն առհասարակ ձեռնպահ է մնացել փոխադարձության հարաբերությամբ հատվածականները բառացանկ ներառելուց: Հարկ է ասել, որ այս հետևողականությունն ավելի ընդունելի է, քան եթե բառարանագիրն այդ կազմությունները ներկայացներ կիսատ-պատտ ու անսկզբունքայնորեն, որ կտեսնենք այլ բառարանների պարագայում:

Ուղղագրական ընդհանուր և մասնավոր բառարաններում վերլուծական և համադրական հատվածականների առկայությունը սպասելի է գծիկով կամ միասին գրելու դժվարության պատճառով: Ի տարբերություն բացատրական բառարանների՝ սրանցում հատվածականների ընդգրկումը գործնական ավելի մեծ նշանակություն ունի:

Հովհ. Բարսեղյանի բառարանում⁸ **հայ** առաջնաբաղադրիչով ոչ մի հատվածական չկա⁹, թեև փոխադարձության հա-

⁶ Ի դեպ, այս բառարանում (հ. 4, Ե., 1980, էջ 256) **ռուս** առաջնաբաղադրիչով ավելի շատ՝ հինգ հատվածականներ են արձանագրվել՝ **ռուս-թուրքական, ռուս-հայերեն, ռուս-հայկական, ռուս-պարսկական, ռուս-տաճկական**:

⁷ Տե՛ս Է. Բ. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976:

⁸ Տե՛ս Հ. Խ. Բարսեղյան, *Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան*, Ե., 1973:

⁹ Համեմատության համար ասենք, որ ռուսերենի ուղղագրական ընդհանուր բառարանում ժամանակին արձանագրվել են **ռուս** բաղադրիչով русско-английский, русско-немецкий, русско-турецкий, русско-французский, русско-

րաբերությամբ կապակցված մի շարք հատվածականներ, հավանաբար ռուսական բառարանագրության ազդեցությամբ, բառարանն արձանագրել է (**անգլո-ամերիկյան, անգլո-եգիպտական, անգլո-իրանական, անգլո-չինական, գերմանա-պրուսական, իբերո-կովկասյան, չին-տիբեթական, ֆրանս-պրուսական**ն այլն):

Ուշագրավ է, որ բառարանում գրանցված այս կարգի կազմությունների մեջ չկան երկրորդ եզրում **հայկական / հայերեն** բաղադրիչ ունեցող հատվածականներ (**ռուս-հայկական, ռուս-հայերեն** ն այլն):

Ուղղագրական բառարաններում հետազոտվող միավորների արձանագրումն սկսվել է անցյալ դարի վերջին քառորդում, երբ դպրոցական ուղղագրական բառարանում գրանցվեցին **հայ-խեթական, հայ-պարսկական, հայ-ռուս-լատիներեն** կազմությունները¹⁰: Բաղադրությունների այսօրինակ ընտրությունը քննադատության չի դիմանում, զարմացնում է հատկապես **հայ-խեթական-ի** առկայությունը, երբ չկան, ասենք, **հայ-թուրքական-ը, հայ-ռուսական-ը, հայ-վրացական-ը** կամ **հայ-պարսկական-ը**: Համենայն դեպս արվել է առաջին քայլը. հատվածական բաղադրությունները, այդ թվում՝ նաև եռաբաղադրիչ, դարձել են բառարանային միավորներ:

Ինչպես և սպասելի էր, **հայ** առաջնաբաղադրիչով շատ հատվածականներ կան բառերի և բառակապակցությունների բաղադրիչները անջատ, անանջատ կամ գծիկով գրելուն նվիրված բառարան-տեղեկատուում¹¹: Այստեղ ընդգրկված են՝

ա) երկբաղադրիչներից՝ **հայ-աղբբեջանական / ամերիկյան / արաբական / թուրքական / իրանական / պարսկական /**

японский հատվածականները միայն (տե՛ս Орфографический словарь русского языка, под ред. С. Г. Бархударова, Москва, 1979, էջ 371):

¹⁰ **Ա. Ղարիբյան, Գ. Շեկյան, Դպրոցական ուղղագրական բառարան**, Ե., 1980:

¹¹ **Դ. Գյուրջիյան, Հայերեն բառարան-տեղեկատու. միասին, անջատ կամ գծիկով գրվող բառեր**, 6-րդ հրատ., Ե., 2008:

ռուսական / վրացական / ֆրանսիական, ինչպես նաև հայ-ռուսերեն,

բ) եռաբաղադրիչներից՝ **հայ-ռուս-ադրբեջանական, հայ-ռուս-իրանական, հայ-ռուս-վրացական:**

Առաջին ենթակետում բերված ինը կազմություններից ութը, ի դեպ, **հայ** առաջնաբաղադրիչով ամենահաճախական հատվածականների տասնյակից են: Իսկ այդ տասնյակից դուրս գտնվող **հայ-պարսկական**-ը հայ ժողովրդի հետ դարավոր սերտ առնչություններ ունեցող ժողովրդին և երկրին է վերաբերում, ուստի իրավամբ տեղ է գտել այս բառարանում:

Երկրորդ ենթակետում նշվածներն առաջին անգամ են արձանագրվել բառարաններում, այդ տեսակի ամենահաճախական հատվածականներն են: Դրանց գործածությունը տեսանելի դարձնելու նպատակով փակագծերում տրված է լրացյալի օրինակ՝ **հայ-ռուս-իրանական** (գործընկերություն):

Բառարանագիրը, բնականաբար, կարող էր այս ցանկն առավել ընդգրկուն դարձնել¹², սակայն բառարանի ուսումնական բնույթից ելնելով՝ բավարարվել է ամենատիպական օրինակների ներկայացմամբ:

Հայ սերող հիմքով հատվածականներ ամենից շատ (17 միավոր) արձանագրվել են Մ. Մինասյանի ծավալուն ուղղագրական բառարանում¹³: Դրանք ցույց են տալիս՝

ա) ժողովուրդների և երկրների փոխադարձ հարաբերություններ՝ **հայ-ադրբեջանական / ամերիկեան / ասորական / արաբական / թուրքական / իրանական / իսաղական / հունական / հռոմեական / մոնղոլական / պոնտական / ռուսական / վրացական,**

¹² Ռուսերենի նմանատիպ ծավալուն բառարանում բերված է русско-ружарիչով 56 կազմություն (տե՛ս **В. З. Бучкина, Л. П. Калакуцкая, Слитно или раздельно?**, Москва, 1987, էջ 627-628), թեև դա էլ, հասկանալի է, ամբողջը չէ:

¹³ Տե՛ս **Մ. Մինասեան, Հայերէն աւանդական ուղղագրութեան բառարան**, Ժնև, 2000 (ինքնահրատ, տպվել է ընդամենը 25 օրինակ):

բ) լեզուների զուգադրություն՝ **հայ-անգլերեն / լատիներեն / ռուսերեն, հայ-ռուս-լատիներեն:**

Թեև բառացանկ չեն մտել **հայ-բիզանդական / գերմանական / եգիպտական / լեհական / հնդկական / պարսկական / ֆրանսիական** և հաճախական այլ կազմություններ, այնուամենայնիվ այս բառարանը հատվածականների ընդգրկման տեսանկյունից կարևոր հանգրվան է:

Ուղղագրական-ձևակազմական բավական ընդգրկուն բառարանում¹⁴ արձանագրվել են ընդամենը երեքը՝ **հայ-ամերիկյան, հայ-ռուսական, հայ-ռուսերեն:** Ընտրվել են աշխարհի երկու հզոր պետությունների անուններով բաղադրությունները և հաճախադեպ **հայ-ռուսերեն**-ը: Մակայն ակնհայտ է, որ անտեսվել է նախորդ բառարանների փորձը, և բառացանկում չկան **հայ-թուրքական, հայ-վրացական** և հանրաձանոթ այլ հատվածականներ:

Մեկ այլ ուղղագրական բառարանի¹⁵ միասին, անջատ կամ գծիկով գրվող բառերի ցանկում զետեղվել են **հայ-արաբական / հունական / պարթևական / պարսկական / վրացական** և **հայ-ռուսերեն:** Նախորդ բառարանների համեմատ ավելացել է **հայ-պարթևական**-ը, բառացանկից դուրս են մնացել հաճախական **հայ-թուրքական / ռուսական / ամերիկյան / իրանական** հատվածականները, որ վկայում է, թե բառարանային միավորներն ընտրելիս սկզբունքային մոտեցում չի ցուցաբերվել:

Դպրոցական ուղղագրական նոր բառարաններից մեկը¹⁶ գրանցել է այս կարգի ավելի շատ հատվածականներ՝ **հայ-ամերիկյան / արաբական / թուրքական / ռուսական** և **հայ-ռուսերեն:** Մա մի քայլ առաջ է, սակայն բառացանկից բացակայում

¹⁴ Տե՛ս **Ա. Սուքիասյան, Ք. Սուքիասյան, Սրդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան**, Ե., 2002:

¹⁵ Տե՛ս **Վ. Ա. Մահակյան, Վ. Վ. Մահակյան, Ուղղագրական-բացատրական բառարան** (բառակազմական վերլուծությամբ), Ե., 2002, էջ 58:

¹⁶ Տե՛ս **Ռ. Նազարյան, Ա. Գյոդակյան, Հայերեն ուղղագրական դպրոցական բառարան**, Ե., 2004:

են մինչ այդ բառարանային միավոր դարձած **հայ-վրացական / պարսկական / իրանական / ադրբեջանական** և հաճախական այլ միավորներ, նախորդ բառարանների նյութի համեմատ նորություն չկա:

Ուղղագրական «նոր» հորջորջվող բառարանում¹⁷ արձանագրվել են **հայ-ամերիկյան / արաբական / բասկյան / թուրքական / ռուսական** և **հայ-ռուսերեն**: Բառընտրության սկզբունքը դժվար է կոսահել (թերևս որևէ սկզբունքի բացակայության պատճառով), երբ դուրս են մնացել, օրինակ, հարևան ժողովուրդների՝ պարսիկների, վրացիների հետ ունեցած առնչություններն արտացոլող կազմությունները, և մեջտեղ է բերվել **հայ - բասկյան**-ը (հենց սա էլ օժտվել է **առնչություններ** լրացյալով, մյուսները՝ ոչ):

Հայ առաջնաբաղադրիչով հատվածականներ հանդիպում են բանասիրական ուրիշ բառարաններում ևս: Այսպես:

Հաճախականության բառարանում **հայ**-ով հատվածականներ կան միայն 2-1 հաճախականություն ունեցող բառերի ցանկում՝ **հայ-թուրքական, հայ-վրացական**¹⁸: Ի դեպ, սրանք հաճախական բաղադրությունների եռյակում են (ըստ ԱՐԵ-ՎԱԿ-ի), իսկ եռյակի երկրորդ տեղն զբաղեցնող **հայ-ռուսական**-ը չկա (այն էլ խորհրդային ժամանակներում կազմված բառարանում, երբ ամենուր խոսվում էր հայ-ռուսական եղբայրության մասին):

Պ. Սևակի լեզվի բառարաններից մեկում **հայ-թաթարական**-ը բացատրվել է «հայերի և թաթարների միջև տեղի ունեցող ունեցած», իսկ **հայ-իրանական**-ը և **հայ-ռուսական**-ը համապատասխանաբար «հայկական և իրանական» և «հայկական և ռուսական», բոլորն էլ ածականի արժեքի նշումով¹⁹: Այս-

¹⁷ Տե՛ս Փ. Գ. Մեթիխանյան, *Հայերենի ուղղագրական նոր բառարան*, Ե., 2005:

¹⁸ Տե՛ս Բ. Կ. Ղազարյան, *Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան*, Ե., 1982, էջ 331:

¹⁹ Տե՛ս Արտ. Հ. Պապոյան, *Պարույր Սևակի աշխատությունների և թարգմանությունների բառարան*, Ե., 1986, էջ 290-291:

տեղ **հայ-ռուսերեն**-ը վրիպմամբ համարվել է մակբայ՝ «հայերենից ռուսերեն (երկկեզվյան թարգմանական բառարանի մասին)» բացատրությամբ (բերված է բնագրային այս օրինակը՝ «Հայ-ռուսերեն» բառարանի կարիքն զգում ենք արդեն քանի՜ տասնամյակ»):

Ուշագրավ է **հայա-պարսկա-արաբական** կազմությունը, որը բառարանագիրը օժտել է հարադրության պայմանական նշանով և բացատրել այսպես՝ «իբր՝ հայերենին, պարսկերենին և արաբերենին վերաբերող» (Հայա-պարսկա-արաբական²⁰ այս շիլաշփոթով ստանում են ՌՋԹ տառերը)²¹: Սա մեզ հետաքրքրող կազմությունների մեջ միակն է, որի **հայ** բաղադրիչն **ա** հոդակապով է (հմմտ. **արաբա-խորայելական, իտալա-ֆրանսիական**): Ճիշտ կլիներ բառային այս միավորը համարել նորակազմություն և կիրառել համապատասխան պայմանական նշանը, թեև նկատելի է, որ բառարանում նորակազմ են համարվել միայն համադրական կազմությունները:

Թարգմանական բառարանների հայերեն բառացանկերը **հայ** առաջնաբաղադրիչով հատվածականներ առհասարակ չունեն: Այնինչ որոշ բառարաններում դրանց ներառումն անհրաժեշտություն է: Օրինակ՝ **հայ-ռուսական**-ը և **հայ-ռուսերեն**-ը հայ-ռուսերեն բառարաններում, քանի որ սրանց **հայ** բաղադրիչը տարբեր կերպ է թարգմանվում՝ армяно- և армянско-:

Հայ-ով մի քանի հատվածականներ հանրագիտարանային հոդվածների բաղադրյալ անունների կազմիչներ են դարձել: Հայկական ամենամեծ հանրագիտարանում գործածվել

²⁰ Նույնական է համարում **հայ-պարսիկ-արաբ** վերլուծական կազմությանը (տե՛ս նշվ. բառարանը, էջ 290-291):

²¹ «Հատվածական բարդությունները Պարույր Սևակի ստեղծագործություններում» վերնագրով հոդվածում («Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, հ. 4, էջ 32-37) Վ. Դարբինյանն իրականում քննում է ոչ թե հատվածական բարդությունները, այլ վերլուծական կազմություններն առհասարակ, ինչպես **կահավորված-կարգին-շքեղ** (տուն), **էժան-հարմար** (գին), **դանդաղ-ձանրորեն**, **կեսլի-կեսթափուր** և այլն:

են՝ **հայ-արարական** պայմանագիր 652, **հայ-թուրքական** պատերազմ 1920, **հայ-հունական** դաշինք 450, **հայ-մոնղոլական** դաշինք 1254, **հայ-պոնտական** դաշինք մ.թ.ա. 94, **հայ-ռուսական** դաշնադրության նախագծեր, **հայ-վրացական** միացյալ էսկադրոն²²: Համառոտ հանրագիտարանը նույն կազմն է ներկայացնում՝ զեղչելով միայն **հայ-արարական** պայմանագիր-ը: Մրանք առնվազն մեկ անգամ հանդիպում են հայերենի բանասիրական որևէ բառարանում:

Այսպիսով՝ հայերենի հանրագիտական, բացատրական, ուղղագրական և այլ բառարաններում արձանագրվել են **հայ առաջնաբաղադրիչով շուրջ 30 հատվածականներ**:

Բառարաններում գրանցվել են Հայաստանի Հանրապետության բոլոր հարևան երկրների հիմնական ազգերի անուններից բաղադրված հատվածականները: Ամենից շատ գրանցվել է արևելահայերեն գրավոր խոսքում ամենահաճախական եռյակը՝ **հայ-ռուսական, հայ-թուրքական, հայ-վրացական**, իսկ լեզուներին վերաբերողներից **հայ-ռուսերեն**-ը:

ՀՀ ազգային փոքրամասնությունների անուններից բաղադրված հատվածականներից բառարանային գրանցում չունի **հայ-քրդական**-ը:

Հայաշատ կենսունակ և ազդեցիկ գաղութներ ունեցող (կամ ունեցած) երկրների անուններից բաղադրված մի շարք հատվածականներ հատկապես ճանաչողական առումով ևս ենթակա են բառարանագրման, ինչպես՝ **հայ-լիբանանյան / սիրիական / կիպրական / եգիպտական / հնդկական**: Բառարանագրված հատվածականներն ըստ աշխարհագրական ընդգրկման եվրասիական են, միայն մեկը՝ **հայ-ամերիկյան**-ը՝ «Նոր աշխարհից»: Չկան, սակայն, աֆրիկյան մայրցամաքը ներկայացնող **հայ-եգիպտական / եթովպական**, ամերիկյան **հայ-արգենտինական / բրազիլական / կանադական**-

²² Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 6, Ե., 1980, էջք 154, 162, 196, 197, 202, 203, «Հայկական համառոտ հանրագիտարան» հ. 3, Ե., 1999:

ներից՝ **հայ-գերմանական / բուլղարական / իտալական / բելգիական / ռումինական / հունգարական**, Ասիայից՝ **հայ-չինական / կորեական / Ճապոնական / հրեական / պաղեստինյան / հորդանանյան / իրաքյան** և այլն, նաև **հայ-ավստրալական**-ը: Նշվածների հիմք երկրների հետ Հայաստանը դիվանագիտական հարաբերություններ և այլազան կապեր ունի, մի շարք երկրների և ժողովուրդների հետ առնչությունները բազմադարյա են: Քաղաքական կողմնորոշման և արդի աշխարհի զարգացումների տեսանկյունից կարևորվում է **հայ-եվրոպական**-ը:

Մեր հաշվումներով՝ բառարանային գրանցում չունեն **հայ** բաղադրիչով շուրջ յոթանասուն քիչ թե շատ հաճախական հատվածականներ: Հարց է ծագում. արդյոք բոլոր բաղադրությունները պետք է լինեն բառարաններում: Անշուշտ ո՛չ, դա զուր կծանրաբեռնի բառացանկը նույնանման կառույցներով: Մակայն հայերենի երբևէ ստեղծվելիք էլեկտրոնային համընդհանուր բառաշտեմարանում դրանք պետք է ներկայացված լինեն, քանի որ լեզվական տեղեկությունից զատ պատմական, մշակութային և այլ կարգի հսկայական տեղեկատվության հարդորիչ են: Այդ բառաշտեմարանում հատվածականները պետք է ներկայացվեն իրենց բոլոր տարբերակներով՝ ա) ուղղագրական՝ ավանդական և նոր՝ **հայ-հունական / յունական**, մինևույն ուղղագրության շրջանակում՝ **հայ-նիդեռլանդական / նիդերլանդական**, բ) արևելահայերեն և արևմտահայերեն՝ **հայ-արգենտինական / արժանթինեան**, **հայ-սիրիական / սուրիական**, գ) բառային՝ **հայ-թթվալական / հաբեշական**, **հայ-թուրքական / տաճկական**, դ) բառակազմական՝ **հայ-կիպրական / կիպրոսյան** և այլն:

Հաճախական մի շարք հատվածականներ պետք է տեղ գտնեն նաև հայերենի կապակցելիության բառարանում (տակավին գոյություն չունի): Հետաքրքիր կլինի իմանալ, թե ինչպիսի՛ լրացյալներ են ունենում, դիցուք, **հայ-ֆրանսիական** կամ **հայ-արաբական** հատվածականներն առանձնաբար և համե-

մատույթամբ²³: Սա կարևոր է արտալեզվական (քաղաքական, ընկերային և այլն) իրողությունների բացահայտման տեսանկյունից:

Davit Gyurjinyan – Lexico-graphical processing of the truncated compound formations with the first component հայ (“Armenian”).- The truncated analytical compound formations with the first component հայ were first fixed in the academic explanatory dictionary (1974), though they had already been in use in the beginning of the 20th century. Around thirty truncated analytical compound formations are fixed in monolingual vocabularies of the Eastern Armenian language.

The prospects for including a number of the most commonly used truncated entities in monolingual and bilingual dictionaries are outlined, as well as the need for their most complete representation in the electronic lexicographic resources of the Armenian language.

Давид Гюрджинян – Лексикографическая обработка усеченных сложных образований с первым компонентом հայ (“армяно-”, “армянско-”).- В статье анализируется представление этих образований в толковых, орфографических и других словарях армянского языка.

Усеченные аналитические сложные образования с первым компонентом հայ впервые зафиксированы в академическом толковом словаре (1974), хотя были в употреблении еще с начала XX века. В одноязычные словари восточноармянского языка включены около тридцати усеченных аналитических образований.

Определяются перспективы включения самых употребительных усеченных образований в одноязычные и двуязычные словари, а также необходимость их наиболее полного представления в электронных лексикографических ресурсах армянского языка.

²³ Հպանցիկ անդրադարձել ենք միայն **հայ-վրացական** բաղադրության կապակցելիությանը (**Ռ. Գյուրջինյան, Հայ առաջնաբաղադրիչով հատվածական բաղադրությունները**, էջ 69-70):

**ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅԻ Լ-Ի
ԱՆԿՈՒՄԸ ՇՐՋՈՒՆ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ**
(փորձառական հետազոտություն)

Հնչյունների անկումը կամ կորուստը հնչող խոսքում տարածված երևույթ է: Հնչյունի անկումը, ըստ Լեզվաբանական բառարանի սահմանման, <<հնչյունափոխական այն երևույթն է, երբ հնչյունական շղթայի մեջ մտնող այլ հնչյունների ազդեցությամբ <<....>> կամ այլ՝ առայժմ անհայտ պատճառներով... բառերի որոշ հնչյուններ (հնչույթներ) հնչյունաշղթայից դուրս են ընկնում, այլևս չեն արտասանվում, ինչպես՝ գրաբարի բառավերջի յ-ն ձայնավորից հետո (ծառայ> ծառա, սատանայ>սատանա), արդի հայերենում՝ անկողին> անկողնակալ....>>¹: Քանի որ մեզ հետաքրքրում է բառավերջի հնչյունի անկումը, ապա կխոսենք միայն ապոկոպի ((հուն. ἀποκοπή կրճատում, αποκοπή -«усечение») մասին, որը շատ տարածված է լեզուներում. անգլերենում և ֆրանսերենում բառավերջի շատ հնչյուններ չեն արտասանվում²:

Այսօրվա հնչող խոսակցական լեզվում ևս հանդիպում է հնչյունների անկում, որի օրինակներից մեկը վաղակատարի լ-ի անկումն է շրջուն շարադասության ժամանակ: Այս երևույթը պարզաբանելու համար թերևս հարցին պետք է մոտենալ 2 տեսանկյունից՝ տարածամանակյա՝ բարբառների ազդեցությամբ պայմանավորված, և համաժամանակյա՝ արտասանության թուլացմամբ, որը պայմանավորված է ինչ-ինչ հանգամանքներով:

1. Լեզվաբանական բառարան, Ե., 1975, էջ 188:

2. Նույն տեղում, էջ 287:

Հիմնականում արևմտյան բարբառներում շրջուն շարահասության ժամանակ առկա է վաղակատարի **բ** կամ **լ** վերջավորության անկում:

Գեղցի Համբոյի տունը կրոնիվ էր ընգէ: (Կարնո բարբառ)

Գեղացի Համբոյ տուն կրոնիվ էր հնգէ: (Մարտունու բարբառ)

Գօղցի Համբոյ տուն կրոնիվ էր հընգէ: (Վարդենիսի բարբառ)

Գեղացի Համբոյի տուն կրոնիվ էր յընգի: (Մշո բարբառ)

Կեղացը Համփըյուն դօնը գըռըէվ էյ յընգի: (Զեյթունի բարբառ)

-Ի՞նչ ես բերէ:

-Մաման լավ հաց է թխէ:

(Հմնտ՝ ուղիղ ձևում՝ Քոռացեր/լ եմ):

Հաշվի առնելով բարբառների ազդեցությամբ պայմանավորված **լ**-ի անկումը՝ այնուամենայնիվ համաժամանակյա կտրվածքով պետք է փաստել, որ երևույթը գոյություն ունի ժամանակակից սերնդի խոսակցական լեզվում (սերունդ, որը չի էլ գիտակցում անկման հիմնական պատճառներից մեկը՝ բարբառային ազդեցությունը), և որը պայմանավորված է մի շարք հանգամանքներով նույնպես:

Սույն փորձառական հետազոտության նպատակն է պարզել, թե ինչու է խոսակցական լեզվում վաղակատար դերբայի վերջավորության **լ**-ն շրջուն շարահասության դեպքում անկում ապրել՝ այդուհանդերձ պահպանելով բառի իմաստը: Լեզվական այլ պատճառների հետ միասին պետք է կարևորել նաև հնչյունի ֆիզիկական չափեզրերը, քանի որ վերջին հնչյունի անկումը անպայմանորեն կապված է արտասանության թուլացման հետ, դա էլ ենթադրում է ֆիզիկական չափեզրերի փոփոխություն: Եթե մենք կարողանանք ապացուցել, որ վաղակատարի ներկա և անցյալ ձևերում ուղիղ և շրջուն շարահասության պարագայում **լ**-երը օրինաչափորեն մեծ փոփոխություններ են կրում, ապա կարող ենք ենթադրել, որ պատճառներից մեկը արտասանության թուլացումն է, որը հայտնի փաստ է և ապացուցվում է մեկ անգամ ևս այս իրադրության մեջ: Փորձառական ճանապարհով հետազոտել ենք վաղակա-

տար դերբայի վերջավորության լ-ի ֆիզիկական չափեզրերը՝ ուժգնությունը, հաճախականությունը, տևողությունը, ֆորմանտները և սպեկտրը: Այդ նպատակով ընտրել ենք պատմողական և հարցական բնույթի 20 նախադասություններ՝ վաղակատար ներկայի կամ վաղակատար անցյալի հաստատական և ժխտական բայաձևերով, որոնք դարձրել ենք շրջուն: Փորձել ենք պարզաբանել, թե որն է այն հիմնական պատճառը, որի ժամանակ կատարվել է վաղակատարի լ-ի անկումը շրջուն շարադասության ժամանակ: Արդյո՞ք դա կապված է տրամաբանական շեշտի, հարցական դերանվան կամ այլ պատճառի հետ: Փորձարկման նյութն ընտրելիս, այսինքն՝ նախադասությունները կազմելիս հաղորդավարներին³ ներկայացրել ենք շրջուն շարադասությամբ վաղակատար ներկա և անցյալի ճիշտ, այսինքն՝ լ-ով ձևերը, քանի որ առանց լ-ի ձևերում կունենայինք համեմատության 0 (զրո) եզր: Իսկ այս պարագայում կարող ենք համեմատել լ-ի տվյալները ուղիղ և շրջուն շարադասության ժամանակ:

Հաղորդավարները կարդացել են նախադասությունները, որոնք ձայնագրվել են: Այնուհետև դրանք մտցվել են «Պռաստ»⁴ ծրագրի մեջ, որը ժամանակակից փորձառական հնչյունաբանության մեջ օգտագործվող համակարգչային ծրագիր է և նախատեսված է խոսքի վերլուծության և համադրության համար: Ձայնագրությունները համակարգչային ծրագիր ներմուծելուց հետո կատարվել են նախադասությունների մեջ լ բաղաձայնի ֆիզիկական չափեզրերի տվյալների հաշվարկներ

³ Բոլոր հինգ հաղորդավարներն ունեն բարձրագույն կրթություն, ծնվել և մեծացել են Երևանում, գերազանցորեն կամ լավ տիրապետում են ժամանակակից գրական արևելահայերենին և ժամանակակից խոսակցական լեզվին (խոսում են ոչ միայն գրական, այլև խոսակցական արևելահայերենով):

⁴ «Պռաստ» (Praat, հոլանդերեն՝ խոսք, խոսել) ծրագիրը մշակվել և շարունակում է զարգանալ Ամստերդամի համալսարանի գիտաշխատակիցների՝ Պոլ Բոերսմայի (Paul Boersma) և Դեյվիդ Ուինինկի (David Weenink) կողմից: Ծրագիրը ստեղծվել է 1995թ.:

և մշակումներ: Հնչյունի ֆիզիկական հատկանիշներից ուսումնասիրել ենք ուժգնությունը, հաճախականությունը, տևողությունը, ֆորմանտները և սպեկտրը, քանի որ հնչյունի կորուստը կամ անկումը կապում ենք արտաբերության թուլացման կամ նույնիսկ մինչև զրոյական թուլացման հետ:

Վերլուծվել է ավելի քան 200 [(20 + 20) x 5] միավոր` 20 ուղիղ և 20 շրջուն տարբերակներով նախադասությունները` 5 հաղորդավարների ընթերցմամբ: Քննել ենք վաղակատարի ներկա և անցյալ ձևերը պատմողական և հարցական նախադասություններում, ինչպես նաև էլ շաղկապի, մակբայի կամ եղանակավորող բառի առկայությամբ դեպքերը. դա թերևս համանման երևույթ է և նույնպես տարածված է խոսակցական լեզվում: Հատկապես ուզում եմ նշել, որ շրջուն շարադասության ժամանակ Լ-ի բացակայության բոլոր օրինակները վերցված են կենդանի խոսակցական լեզվից: Օրինակների ուղիղ ձևերը կազմել ենք ինքներս:


Ուսումնասիրությունը կատարելիս նպատակահարմար գտանք դասակարգել Լ-ի անկման դեպքերը` էլնելով նախադասությունների բնույթներից և հատատական կամ ժխտական տեսակներից: Առանձնացրինք դեպքերի 6 տեսակներ:

1. Վաղակատար ներկա/անցյալ պատմողական (հաստատական): Վաղակատար ներկայում կամ անցյալում տեղի է ունենում Լ-ի անկում, երբ ստորոգյալի օժանդակ բայն անցնում է դերբայից առաջ, այսինքն` շրջուն շարադասության ժամանակ: Օրինակ` *Այդ հարցին անդրադարձել ենք: Այդ հարցին շատ ենք անդրադարձել: Երկրաշարժը ունեցել է երկու էպիկենտրոն: Երկրաշարժը երկու էպիկենտրոն է ունեցել:*

Այս պարագայում ակտիվորեն գործում է տրամաբանական շեշտը, որով նախադասության որևէ անդամ հատուկ երանգով և բառային շեշտի առավել ուժգնությամբ է արտասանվում` իմաստային երանգավորում տալով նախադասությանը: Բերված օրինակում **շատ** բառն իր վրա է կրում տրամաբանական շեշտը, տեղի է ունենում ձայնային էներգիայի կուտա-

կում կամ տեղաբաշխում **շատ** բառի վրա, որը պատճառ է դառնում, որ անկումն ավելի կտրուկ լինի տրամաբանական շեշտի և նախադասության ավարտի միջև: Ապացուցենք սա թվերի միջոցով՝ համեմատելով ուժգնության, հաճախականության, տևողության, ֆորմանտների և սպեկտրի տվյալները երկու տարբերակներում:

Անդրադարձել բառի լ-ն շրջուն շարադասությամբ նախադասության մեջ ունի հետևյալ միջինացված պարամետրերը՝ 49.2 դեցիբել, իսկ սովորական շարադասությամբ 55.1 դեցիբել: Լ-ի միջին տևողությունը շրջուն շարադասության ժամանակ 0.03 միլիվայրկյան է, իսկ ոչ շրջունի դեպքում՝ 0.05: Հաճախականության առումով շրջուն շարադասության մեջ լ-ի արտասանության 90 տոկոս դեպքերում գրանցվել են «անորոշ» կոչվող տվյալներ: Մա խոսում է արտասանության թուլացման մասին՝ մինչև նույնիսկ գրոյականի: Այդ գրոյականի ապացույցն այն է, որ լ-ի հաճախականության տվյալները նըշված են ոչ թե թվերով, այլ «չսահմանված, անորոշ» բառով (անգլերենում նշված է՝ undefined):



Անդրադարձել բառի վերջին «ցել» վանկի հնչապատկերը: Լ հնչյունի հաճախականությունը «undefined», այսինքն

«չսահմանված» է: Հնչապատկերի ներքևի զիծն ընդհատվում է 1-ի արտասանության ժամանակ:

2.Վաղակատար ներկա/անցյալ պատմողական (ժխտական):
Այս տիպի ժխտական նախադասություններում տրամաբանական շեշտը փոխանցվում է ժխտական բառին: **Չենք** օժանդակ բայը իր ուժգնությամբ մոտ 12.03 դեցիբելով գերազանցում է հաստատական ձևում գտնվող օժանդակ բայի ուժգնությանը: Տարբերությունն այսքան ցայտուն և ակնհայտ է, քանի որ օժանդակ բայերը սովորաբար չեն շեշտվում հաստատական նախադասությունների մեջ:

Այդ հարցին անդրադարձել ենք բազմիցս: Այդ հարցին շատ չենք անդրադարձել:

3.Վաղակատար ներկա/անցյալ՝ հարցական (հաստատական):
Ամենատարածվածը լինելու առումով հատուկ տեսակ են կազմել վաղակատար ներկայի կամ անցյալի հարցական ձևերը, որտեղ գրանցվել են 1-ի տվյալների առավել մեծ տատանման դեպքեր:

Նրան վաղուց տեսել եմ: Նրան վաղո՞ւց ես տեսել:

4.Վաղակատար ներկա/անցյալ՝ հարցական (ժխտական):
Նրան վաղուց չես տեսել: Նրան վաղո՞ւց չես տեսել:

5.Տրամաբանական շեշտ՝ պայմանավորված հարցական բառով: Որպես առանձին դեպք՝ քննել ենք այն նախադասությունները, որտեղ կան հարցական դերանուններ կամ բառեր, և տրամաբանական շեշտն առավել ուժեղ է արտահայտված, քանի որ այս պարագայում կա երկու գործոն՝ տրամաբանական շեշտ և հարցական հնչերանգ՝ արտահայտված ուժգնությամբ:

Այսօր Աննան եկել է մեր տուն: Ո՞վ ա էսօր եկել մեր տուն: (նախադասությունը վերցված է կենդանի խոսքից):

6. Էլ մակբայ/շաղկապ/եղանակավորող բառ

Խոսակցական լեզվում վաղակատարի 1-ի անկման երեվոյթի նմանությամբ տեղի է ունենում նաև **էլ** շաղկապ/ մակբայ/եղանակավորող բառի 1-ի անկումը:

Միրում եմ քեզ, բայես: Ես էլ քեզ, մամ ջան:

Նրանք էլ պիտի միանան մեզ: Արսենն էլ պիտի գա:

Արտաբերության տեսանկյունից նկատելի է, որ շրջուն շարադասության ժամանակ, մանավանդ հարցական բնույթի նախադասություններում լ-ի արտասանությունը շատ թույլ է, հպումը շատ թեթև, որը նկատելի է նաև լսողական մակարդակում: Այսինքն, եթե հաշվի առնենք, որ հնչյունն արտաբերվում է 3 փուլով՝ մուտք, պահք և ելք, ապա այս պարագայում արտաբերվում է միայն լ-ի առաջին փուլը՝ մուտքը:

Այսպիսով, որպես ամփոփում նշենք, որ ըստ մեր դիտարկումների՝ վաղակատարի լ-ի անկումը պայմանավորված է 2 հանգամանքով՝ 1. պատմական՝ խորքային, որը երևույթը բացատրում է բարբառների ազդեցությամբ, և 2. համաժամանակյա մոտեցմամբ, որը կապված է տրամաբանական շեշտի առավել ուժգին արտասանությամբ, որն իր վրա է կրում հնչերանգի հիմնական ծանրությունը:

Grigoryan Gayane – The fall of the sound "L" of the past participle during the inversion in the spoken language. - The omission or loss of sounds is a common phenomenon. In today's spoken language also, we see a fall of sounds like the omission of the final L in perfect constructions during inverted order. To clarify this phenomenon, we must use both approaches simultaneously – diachronic resulted by the influence of dialects and synchronic resulted by pronunciation reduction conditioned by some circumstances.

Григорян Гаяне - Падение звука «Л» прошедшего причастия во время инверсии в разговорном языке. - Выпадение или утеря звуков в устной (звучащей) речи распространенное явление. В современной устной разговорной речи также происходят выпадения звуков, одним из примеров которого является выпадение конечного - L в причастии прошедшего времени в инверсионных конструкциях. Для объяснения этого явления вопрос следует рассмотреть двояко: с диахронической точки зрения, как обусловленное влиянием диалектов, и синхронически – ослаблением артикуляции вследствие каких-либо причин.

Գրիգորյան Սուսաննա, Պարոնյան Նաիրա
(Հայաստան, ԵՊՀ)

susannagrigoryan@ysu.am, nairaparonyan@ysu.am

ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԵՈՂՈՐՈՍ ՔՈԹԵՆԱՎՈՐԻ ՃԱՌԵՐՈՒՄ

Թեոդորոս Քոթենավորի մասին սակավ են կենսագրական տեղեկությունները: Նա ծնվել է յոթերորդ դարի սկզբին: Թեոդորոսը Կոմիտաս կաթողիկոսի եղբորորդին է և Եզր կաթողիկոսի քեռորդին: Նախնական ուսումը ստացել է հորեղբոր մոտ, իսկ հետո՝ Սյունյաց վարդապետարանում: Ենթադրվում է, որ *Քոթենավոր* անունը ստացել է քրձագգեստ ճգնակյաց լինելու պատճառով: Լինելով Արագածոտնի Ս. Աստվածածին վանքի վանահայրը՝ նա Եզր կաթողիկոսի հետ մասնակցել է վեց հարյուր երեսուներթ թվականի Կարինի ժողովին: Թեոդորոս Քոթենավորի աշակերտներն են եղել Սահակ Չորոփորեցին և Հովհան Օձնեցին:

Թ. Քոթենավորի գրչին են պատկանում երեք ճառեր՝ «Ճառ ընդդեմ Մայրագումացոյն», «Ներբողեան ի Սուրբ Խաչն Աստուածընկալ», «Գովեստ ի սուրբ Աստուածածինն»: Առաջին ճառը գրվել է 630-ական թվականներին: Սուրբ խաչին նվիրված ներբողյանից ազդվել են Սահակ Չորոփորեցին և Անանիա Սանահնեցին:

Սույն հոդվածում անդրադարձել ենք Թեոդորոս Քոթենավորի ճառերում տեղ գտած նորակազմություններին: Առանձնացրել ենք ինը տասնյակից ավելի նոր բառեր՝ ի համեմատություն «Նոր հայկազեան», Առձեռն, Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարանի», Լ. Հովհաննիսյանի «Նոր հայկազեան բառարանում չվկայված բառեր» բառարանների¹:

¹ Գ. Աւետիքեան, Խ. Միսմիլեան, Մ. Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ. 1-2, 1836-1837(այսուհետ՝ ՆՀԲ), Մ. Աւգերեան, Գր. Ճէլալեան,

Ըստ անհրաժեշտության դիմելով հայերենի բառակազմական գործող օրինաչափություններին, օգտագործելով մայրենի լեզվի նրբերանգային բազմաթիվ հնարավորություններն ու իմաստային բազմազանությունը՝ Թեոդորոս Քոթենավորը ստեղծել է նոր բառեր ու արտահայտություններ՝ դրանով իսկ հարստացնելով ոչ միայն իր ճառերի, այլև մեր լեզվի բառային կազմը: Հետևապես նրա ճառերը ոչ միայն դավանաբանական տեսանկյունից են արժեքավոր, այլ նաև բանասիրական: Այս առումով Թ. Քոթենավորի ճառերից քաղված բառերից հեղինակային նորակազմություն ենք համարել բոլոր այն բառերը, որոնք չկան վերոնշյալ բառարաններում: Ներկայացնենք նորաստեղծ բառերից մի քանիսը՝ իրենց բնագրային օրինակներով: Նշենք, որ հիմնականում ընտրել ենք այնպիսի նախադասություններ, որոնց մեջ դրանք մեկից ավելի են:

Ակնաճաճանչ, գոյ./ած. «գոհարափայլ, շողացող». Այսաւր եւ յոքնակայ ճառախումբ գիշերագարդ պարք *ակնաճաճանչ* աստեղաբաշխութեանց մաքրատեսակ վառմամբ փայլածին գալստեամբ որդւոյն Աստուծոյ (1261):

Արտաշարեալ, բ. «դուրս շարել». ...Վասն զի ի քեզ տեսանեմք զԱստուած Բանն մարմնով բաղկացութեամբն գոյացեալ, փոխանակ Իսահակայ *արտաշարեալ* ընդ փայտին ենթադրութեամբ. հնազանդ Հաւր եւ ծառայ *մերատոհմ* կերպի... (1252): Այստեղ ունենք նաև *մերատոհմ* նորակազմ բառը, որը նշանակում է մարդկային սեռը՝ տեսակը: Հավելենք, որ ՆՀԲ-ն ունի *մերատոհմակ* (ած.)= մերասեռ, մերասերական, և բառարանում այն Քոթենավորի ճառից է, այսինքն՝ դարձյալ նրա ստեղծած բառն է:

Առձեռն բառարան հայկազգեսն լեզուի, Վենետիկ, 1865 (այսուհետ՝ ԱԲ), **Ռ. Ղազարեան**, *Գրաբարի բառարան*, Անթիլիաս, 2004 (այսուհետ՝ ԳԲ), **Լ. Հովհաննիսյան**, *Նոր հայկազգեսն բառարանում չվկայված բառեր*, Ե., 2010 (այսուհետ՝ ԶԲ):

Դարայեղափոխություն, գոյ., «դարի փոփոխություն»... Եւ մատռուակեալ ի վեցեակ *դարայեղափոխութեանս* մինչեւ յապառնիս եւթնեկի *աւարտաբերութեան* մտին, *հոգէպարզ* զմայլեցուցանեն զմանկունս առագաստի փեսայացեալ Բանին Աստուծոյ...(1266): Այս նախադասության մեջ երեք նոր բառ է ստեղծել՝ *դարայեղափոխություն*, *աւարտաբերություն*, *հոգէպարզ*: *Աւարտաբերություն* նշանակում է ավարտին հասցնելը, վերջը, *հոգէպարզ*՝ անապակ, մաքուր հոգով:

Բազմահոլովագնաց, ած., «շատ պտույտներով ընթացող»։ Այսաւր *բազմահոլովագնաց* գետոց *յորձաւոր* պտոյտք անարգել զանգրիք *գեղածփեալք* գալստեամբ որդւոյն Աստուծոյ(1261): Այստեղ ևս ունենք երեք նորակազմ բառ՝ *բազմահոլովագնաց*, *յորձաւոր*, *գեղածփեալք*: *Յորձաւոր* նշանակում է հորձանքներ ունեցող, *գեղածփեալք*՝ գեղեցիկ ծփալով:

Բոլորագնդական, ած., «ամբողջական շրջանով» ...Եւ ներբաժանեալ երկուս մանունս *բոլորագնդականաց հրէականակաճառ* ատենին շարաւանդան, եւ մտուր սարապետացն յաւարումն բաժանման շարադասեցաւ(1265): ՆՀԲ-ն ունի *հրէականաճառ* = հրեախումբ: Հեղինակը *հրէական* և *կաճառ* բառերից հողակապի օգնությամբ ստացել է *հրէականակաճառ*: Ի դեպ, Քոթենավորը երկու բառն էլ գործածել է իր ճառերում:

Ղիմամարդ, ած., «հակառակորդ»։ Յայսմ տեղուց ընդգճեալ *ղիմամարդք* ճշմարտութեանն՝ ճառ արկեալ յեղանակեն երկիւղ, ասեն, ոչ է ի *սկզբնեղություն* բնաւորեալ, եւ ոչ է Աստուծոյ գործած, այլ *վերջապարուկ* ներգործեալ յարանայ ախտ(1245): ՆՀԲ-ն ունի *ղիմամարտ*, *ընդղիմամարտ* բառերը: Մեզ թվում է, որ Թ. Քոթենավորը *մարտ* բաղադրիչի փոխարեն մարդ-ն է գործածել: Այստեղ ցանկանում ենք առանձնացնել նաև *վերջապարուկ* (= հետո առաջացած), *սկզբնեղություն* (= բնածին լինելը) բառերը, որոնք ըստ ՆՀԲ-ի՝ Քոթենավորի կողմից են ստեղծվել:

Երկրակայլակ, ած., «երկրային շիթ ունեցող, երկրային շիթով»։ Այսաւր *երկրակայլակ* աղբիւրակունք բերանացեալք

հոսմամբք առատաբերին ի մարգագետինս եւ ի շաւեղս
գալստեամբ որդւոյն Աստուծոյ(1261):

Գեղազանպարեան, ան., «շատ գեղեցիկ պարերով». Այսաւր
ցնծան բերկրական կցրդիւք, եւ **գեղազանպարեան** տօնա-
խմբութեամբ երկնայինք եւ երկրայինք, այսինքն՝ դասք հրեշ-
տակաց եւ կաճառք մարդկան. այսաւր վերահայեաց տեսակ
գուարթերանգ ծաղկօք **երփնագունագարդ** գարունն, **սաղար-
թաճեմափթիթ** բուսովք վայելչացեալք՝ գալստեամբ որդւոյն
Աստուծոյ(1260): Նույն նախադասութեան մեջ ունենք եւ երկու
բառ՝ **երփնագունագարդ**, որը նշանակում է երփներանգ գար-
դարված, գունագարդ, **գուարթերանգ**՝ պայծառ գույն ունեցող:
Բացի սրանցից՝ կա մի չորրորդ բառ, որն ըստ ՆՀԲ-ի՝ Քոթե-
նավորի ստեղծածն է՝ **սաղարթաճեմափթիթ** (= դալարագեղ,
անթառամ):

Համաբոլորահովիտ, ան., «ամբողջ, ամեն ինչ ընդգրկող». Այսաւր
աւետալուր եւ ուրախաբեր ձայն հրեշտակապետին առ
Կոյսն Մարիամ կարապետող վանգիւք տարահնչող ձայնեալ
ընդ **համաբոլորահովիտ** տիեզերս ամենայն...(1258):

Յարդարընկալ, ան., «վայելչություն ընդունող». Արդ որպէս
յարդարընկալ կամացն ինքնատիրութեամբ **արտագանցեաց,
նմանունակ** եւ **մահընկալ** պատուհասի՝ բնաւորականան
գարհուրեցաւ երկիւղիւ(1245): Այս նախադասութեան մեջ եւ
ունենք երեք բառեր, որոնք ըստ ՆՀԲ-ի՝ Քոթենավորի գրչին են
պատկանում՝ **արտագանցել**(=պատվիրանից դուրս գալ), **նմա-
նունակ**(=նման), **մահընկալ**(=մահ ընդունող):

Պառաւամայր, գոյ., «ծեր մայր». Այսաւր եւ Չաքարիայ, թոռն
պառաւամարն Եվայի, եւ անդրանիկն Եղիսաբեթի, մեծ
քահանայական շառաւիղ մակաբայեցւոցն ընծիւղմամբ, երրորդ
տոհմ Ղեւեայ կալով ի **հոսանապտոյտ** պարագայ ջուրսն Յոր-
դանանու մկրտէ՝ զՅիսուս, լինել **համակապսակապատիւ**
Սուրբ Երրորդութեան...(1263): **Պառաւամայր** բառի հետ
ունենք բազմաբաղադրիչ **համակապսակապատիւ** նորակազ-
մութիւնը, որը նշանակում է միևնույն պատվին արժանի,

պատվակից, փառակից: Ունենք նաև *հոսանապտոյտ* բառը, որն ըստ ՆՀԲ –ի՝ Քոթենավորի ստեղծածն է:

Նորակազմ բառերի մեջ ըստ խոսքիմասային պատկանելության գերակշռում են ածականական կազմությունները (թվով 47)՝ *բերկրաճռուողագոչ(1261), բեւեկնակայծակ(1253), եղեմախաղաց(1263), երկնահողովակառոյց (1261), երկրակայլակ(1261), երփնագունագարդ(1260), գանագանաբոյլ(1261), գարմանագեղ(1251), ինքնականայօժար(1259), լուսաջահայեղց (1267), ծիրանաթոր(1267), համակապսակապատիւ/1263, հոգէպարզ(1266), մարտիրոսաչարչար(1259), մեւքակերպ (1267), մկանարարձ(1261), յոքնարինական(1250), յորդորահնար (1267), ներբողածաւալ(1259), շահատեսակասէր(1267), ջրակայտառ (1261), սաւառնաթելարձակ(1261), վերագագաթնակատարահերձ(1261), ցցունագարդ(1265), փայլածին(1261), քրտնաբեր(1256):*

Գոյականները թվաքանակով զիջում են ածականներին (թվով 16 գոյական)՝ *դիմամարդ (1245), դարայեղափոխութիւն (1261), եւթնաձոր (1256), ծովայատակ (1262), հրէականակաճառ (1266), մարմնակարութիւն (1243), չարամերձութիւն (1253), պառաւամայր (1263), վերադասախմբութիւն (1258), քարոզարանութիւն (1266) և այլն: Ունենք տասնինը բայ՝ *աւարտաշինել (1259), լուսաճեմել (1261), յորդաբերել (1264), շտեմարանացեալ (1260), պիտակացեալ (1256), պատուիրանադրել (1244), պատուհասակրել(1243), վայելչաւորեալ(1260), վարայայտնեալ(1261), ցցուարբերել (1261) և այլն:**

Նորակազմ բառերի ստեղծման բառակազմական եղանակները նույնն են՝ բառաբարդում և ածանցում՝ իրենց բազմազան արտահայտություններով: Նույնն են նաև գործառական ավելի մեծ հաճախականությունն դրսևորող բաղադրյալ բառերի տեսակները, որոնք են ածանցավոր բառերը, հոդակապով ու անհոդակապ բարդությունները: Թ. Քոթենավորի նորակազմություններում գործածության որոշ հաճախականությամբ առանձնանում են նաև հոդակապով և անհոդակապ բարդու-

թյունները, ինչպես՝ (բարձր)ա(տեսակ)(1265), (բերկր)ա (ճռուողագոչ) (1261), (դիմ)ա(մարդ)(1245), (եղեմ)ա(խաղաց) (1263), (երկր)ա (կայլակ)(1261), (երփն)ա(գունագարդ) (1260), (զանագան)ա(բոյլ)(1261), (զարման) ա(գեղ)(1251), (ինքնակամ) ա(յօժար)(1259), (լեռն)ա(ստորոտ)(1261), (զուարթ) (երանգ) (1260), (ծիրան)ա(թոր)(1267), (ջր)ա(կայտառ)(1261), (սաւառն)ա (թելարձակ)(1261), (վայելչ)ա(բառ) (1265), (հոգ)է(պարզ)(1266), (ցցուն)ա(զարդ) (1265), (քրտն)ա(բեր)(1256), (գեղեղեջ) (արմատ)(1267), (միշտ)(խողովեան)(1260), (ընծա)(բեր)(1258), (փայլ)ա(ծին)(1261), (յարդար)(ընկալ)(1245), (յոքն)(աւրինական)(1250): Բնականաբար գերակշռում են հողակապով բարդությունները (միայն մեկ օրինակ ունենք, որտեղ հնչյունափոխության հետևանքով –ա - հողակապի փոխարեն -է- է, իսկ *ընծաբեր* բառի առաջին բաղադրիչից հետո բացակայում է ենթադրվող *յ* -ին): Պետք է առանձնահատուկ ձևով նշել Թ. Քոթենավորի ստեղծած եռաբաղադրիչ և նույնիսկ քառաբաղադրիչ կազմությունները, ինչպես՝ (բազմ)ա(հոլով)ա(զնաց) (1261), (զան)ա(զան)ա(բոյլ) (1261), (բերկր)ա(ճռուող)ա(զոչ) (1261), (դար)ա(յեղ)ա(փոխ)(ութին)(1266), (երկն) ա(հոլով)ա(կառոյց) (1261), (ինքն)ա(կամ)ա(յօժար)(1259), (երփն)ա(գուն)ա(զարդ) (1260), (համակ)ա(պսակ)ա(պատիւ)(1263), (լուս)ա(ջահ) ա(յեղց)(1267), (մարտիրոս)ա(չար)(չար)(1259), (ջահ)ա(տես) (ակ)ա(սեր)(1267), (սաւառն)ա(թել)(արձակ) (1261):

Նորակերտ բարդություններից շատերը Թ. Քոթենավորի խոսքում առավելապես մակդրային կիրառություն ունեցող ածականներ են և որպես այդպիսիք՝ աչքի են ընկնում ինքնատիպությամբ և հուզական, զգացական վերաբերմունքի անհատական արտահայտման յուրահատկությամբ:

Նորակերտ ածանցավոր բառերը ևս հիմնականում ընդունելի ձևեր են, համապատասխանում են հայերենի ածանցման օրենքներին ու օրինաչափություններին, ուստի և ոչ միայն ոճավորում են հեղինակի խոսքը, այլև համալրում են մեր լեզվի բառապաշարը: Թ. Քոթենավորը գործառության մեջ է

մտցնում ինչպես նախածանցներ, այնպես էլ վերջածանցներ, որոնցով կազմված նորաբանությունները ոճական մեծ լիցքով են հատկանշվում, և այս կազմություններում մեծանում է ածանցի հատկանշային իմաստը: Քանակով խիստ զիջում են նախածանցավոր նորակազմությունները, որոնցից են **-ան-ը, արտ-ը, գեր-ը, մակ-ը, համ-ը, վեր-ը, տար-ը` *անթանալի*** (1267), *արտակացեալ* (1251), *արտաշարել* (1252), *գերարկեալ* (1254), *մակազարթուցանել*(1264), *համաբոլորահովիտ* (1258), *վերտանել*(1250), *տարասահմանահալած* (1262): Հարկ է նշել, որ *արտակացեալ* և *գերարկեալ* բառերը` բացի նախածանցից, ունեն նաև վերջածանց **-եալ**: Այսինքն` սրանք նաև համա-ծանցավոր բառեր են: Վերջածանցավոր նորակազմ բառերի մեջ առանձնանում են հետևյալ ածանցները` **-ական-** *բերկրասիրական* (1264), *բոլորագնդական* (1265), *յոթնարինական* (1250), **-աւոր-** *յորձաւոր* (1261), *քանկաւոր* (1253), **-եալ-** *արտակացեալ* (1251), *լուսափայլագունեալ* (1260), *շտեմարանացեալ* (1260), *պիտակացեալ* (1256), *վարայայտնեալ* (1261), *վայելչաւորեալ* (1260), **-եան** *-գեղազանպարեան* (1260), *միշտխողովեան* (1260), **-ութիւն** *-դարայեղափոխութիւն* (1266), *մարմնակարութիւն* (1243), *շարահարելութիւն* (1251), *չարամերձութիւն* (1253), *վայելչակամաւորութիւն*(1265):

Այսիպիսով, Թ. Քոթենավորը հայերենի բառազանձը փորձել է համալրել ու հարստացնել նոր ու գեղեցիկ կազմություններով: Նաև այս է պատճառը, որ նրա ճառերն ու ներբողները բանասիրական տեսանկյունից խիստ արժեքավոր են:

Susanna Grigoryan, Naira Paronyan - Neologisms in in Theodor Krtenavor's Tirades .-Theodor Krtenavor had a great role in the literary history of Armenian church. He wrote tirades, odes and theological works. Theodor Krtenavor's tirades and odes are of special interest form the linguistic point of view. These works are unique in their theological, artistic merits; of particular interest are the eulogies entitled - "Praise to St. Cross Begiven by God" and "Praise to St. Astvatsatsin (St. Mariam)".

The given article is devoted to the discussion of more than 92 words which are not present in the voluminous dictionaries of Old Armenian. The author masterly used the whole vocabulary of our language, he also made use of Armenian word-formation regularities creating new words and word-combinations and in such a way that he enriched not only the language of his creations but also our literary language. There are few prefixal - suffixal neologisms which are in general euphonious and are formed according to the the rules and regularities of Armenian word-formation.

Сусанна Григорян, Наира Паронян - Неологизмы в тирадах Теодора Кртенавора.-Теодор Кртенавор развивал широкую летописную деятельность. Он сочинял тирады, оды, богословские труды. Тирады и оды Т. Кртенавора представляют особый интерес в языковом значении. Эти произведения отличаются своими теологическими, художественными достоинствами, особенно тирады “Хвала Святой Богородице” и “Акафист святому кресту богодарящему”.

Представляемая статья посвящена изучению более 92 слов, которые не имеются в больших толковых словарях древнеармянского языка. Автор мастерски использовал весь богатый лексический состав нашего языка, а также, по мере необходимости, словообразовательные возможности армянского языка, создавая новые слова, обогащая самым язык собственный произведений и состав литературного языка. Очень немногочисленны прификсально – суффиксальные неологизмы, которые в основном, благозвучны и образованы соответственно законам и закономерностям словообразовательной традиции армянского языка.

Գրիգորյան Սուսաննա (Հայաստան,
ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ՀՈՄԱՆԻՇՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ
ՏԱԹԵՎԱՑՈՒ «ԳԻՐՔ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆ» ՁՄԵՌԱՆ
ՀԱՏՈՐՈՒՄ

Հայերենն իր գոյության բոլոր շրջաններում և իր բոլոր տարբերակներում լեզվի պատկերավորման միջոցների նախանձելի առատություն է դրսևորել: Սա վերաբերում է նաև միևնույն առարկան, հասկացությունը, երևույթը տարբեր բառերով ներկայացնելու քերականական երևույթին, այն է՝ հոմանիշությանը:

Դիտարկումները ցույց են տալիս, որ հոմանիշությունը մի տեսակ անցումային կամուրջ է դեպի փոխաբերությունը, այսինքն երկու երևույթին տարբեր անվանումներ տալը հնարավորություն է ստեղծում անցնել այսպես կոչված «ներքին» կամ արտաքին կապի դիտարկմանը և նոր անուն տալուն: և պատահական չէ, որ շատ դեպքերում հոմանիշ կողմերից մեկը որպես կայուն բառակապակցություն այնուհետև դառնում է փոխաբերական կառույց կամ կառույցի մաս. ասենք՝ **աչքը կկոցել**, որպես հոմանիշ՝ աչքով տալ, իսկ փոփաբերական իմաստով վերջինս նաև՝ նախանձել. կամ՝ **մտորելու** հոմանիշ՝ **ներքին ձայնս ասում է** կամ՝ սիրտս ասում է, որոնք նաև՝ փոխաբերություններ են.. ձեռքը պարզել, հոմանիշ՝ ձեռք տալ, և ձեռք տալ՝ ձեռնտու լինել՝ փոփաբերական իմաստով:

Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզութեան «Ձմեռան հատոր»-ում¹ ոչ միայն հոմանիշների աչքի ընկնող առատություն կա, այլև սրանց ոճական կիրառությունները բավականին ինքնատիպ են՝ պայմանավորված գրքի քարոզներից բաղկացած և կենդանի ունկնդրին ուղղված լինելու հանգամանքով:

¹ Գ.Տաթևացի, *Գիրք քարոզութեան, Ձմեռան հատոր*, Կ.պոլիս, 1740:

«Գիրք քարոզութեան «Ձմեռան հատոր»-ի հոմանիշ բառերը խմբավորելու դեպքում առաջին խումբը կարելի է անվանել **համագործածական բառերի հոմանիշության խումբ**, երբ համագործածական բառերի շարքում են հոմանիշության երկու կողմն էլ, ինչպես օրինակ՝ **խոնարհութեամբ և հնազանդութեամբ, ջահիւք և լապտերօք, մերկ և բոկ, անհանգիստ և տրուն**:

Հաջորդ խմբում նորակազմ բառերն են հանդես գալիս որպէս հոմանիշության եզր, այսինքն՝ խոսքն ավելի ընդգծելու համար հեղինակը դիմում է նորակազմության՝ այն ավելի տպավորիչ դարձնելու համար: Օրինակ Գողիաթին նկարագրելիս նա **հաղթահասակ** տարածված բառի փոխարեն օգտագործում է **մսաբլուր** նորակամությունը, որն ավելի է ընդգծում Գողիաթի անսովոր հաղթանդամ և հսկա լինելը. «Չորրորդ՝ թագաւորութեան որպէս Դաւթին, որ զօրացեալ յաղթեաց **զմսաբլուրն** Գողիաթն»²:

- դէտ, այսինքն՝ **հայեակ** (բարձր տեղից հսկող մարդ). վերջինս նորակազմություն է:

Գրաբարում ունենք **ճրագալոյց** բառը (ճրագը լուցանել). Տաթևացին որպէս նորակազմություն օգտագործում է **ճրագալոյծ**-ը՝ բերելով իբրև «պահքի երեկոն ճրագով լուծելու» համարժեք. «վասն զի **ճրագով** յերեկոյս **լուծանենք**»³:

Երրորդ խմբում այն հոմանիշներն են, որտեղ եզրերից մեկը փոխառություն է. **անզուման** և անկարծիս պարզևացն, գեղմ և **զգաթ**, ճրագ – **ֆանատ**, դար – հազար ամ, **ալէլու**-օրհնեցէք կամ գովեցէք:

Չորրորդ խումբը, որ առանձնացրել ենք, կապակցական հոմանիշության շարքերն են:

Հոմանիշ բառերի մասին խոսելիս, սովորաբար նկատի են առնվում նույնական կամ մերձավոր իմաստով բառային

² Նույնը, էջ 96:

³ Նույնը, էջ 31:

տարբեր ձևերը. երես-դեմք, ոլորել-պտտել, կոտրել-ջարդել, սպիտակ-ճերմակ և այլն: Սա քերականական բնութագրման առումով հաստատված մոտեցում է, սակայն մեր նյութի շրջանակներում հանդիպել ենք **կապակցական հոմանիշության** բազմաթիվ օրինակների, որտեղ հոմանիշներ են դառնում որոշակի ենթատեքստ ենթադրող բառակապակցությունները, ընդ որում՝ որոշակի իրադրության մեջ: Այսպես՝ Տիրոջ խաչելության ողբերգական դրվագի ինքնատիպ նկարագրությունը «Գիրք քարոզութեան «Ձմեռան հատոր»-ում վերածվել է հոմանիշների յուրօրինակ շարքի, որոնք բոլորը մեկ իմաստային դաշտում են՝ ողբերգության և հուսահատության նկարագրության իմաստով. «Այնպես **սրտաբեկ եղեն. մինչ թողին զնա եւ փախեան. եւ Պետրոս ուրացաւ. եւ Թումաս թերահաւատ եղել. նոյնպէս եւ աստուածածին կոյսն՝ սրով տրտմութեան խոցեցաւ»⁴: Նկարագրության մեջ «սրտաբեկ լինել»-ը, «թողնել-փախնել»-ը, «ուրանալ»-ը; «թերահավատությամբ լցվել»-ը, «իբրև սրով խոցվել»-ը՝ բացարձակ առումով իհարկե, հոմանիշներ չեն, սակայն նկարագրության մեջ համարժեքություն են դրսևորում՝ ունենալով հոմանիշային ընդհանուր համընկնում՝ հուսահատության իմաստով, այսինքն՝**

սրտաբեկ եղեն - հուսահատվեցին

թողին զնա եւ փախեան - հուսահատվեցին և փախան

Պետրոս ուրացաւ - հուսահատվեց և ուրացավ

Թումաս թերահաւատ եղել - հուսահատվեց հավատի մեջ

Աստուածածին կոյսն՝ սրով տրտմութեան խոցեցաւ - հուսահատվեց իբրև մայր:

Այստեղ, ըստ էության գործ ունենք հոմանիշի ծավալային տարբերության հետ, երբ կա իմաստի մասնակի համընկնում, տվյալ դեպքում՝ հուսահատության, այսինքն՝ բովանդակային առումով, եթե երևույթը պատկերացնենք իբրև մի շրջան,

⁴ Նույնը, էջ 82:

ապա շրջանի մակերեսում այս հոմանիշները համարժեք հատվածներով հանդես կգան: Մյուս կողմից, եթե փորձենք «հուսահատություն» բառի հոմանիշները բերել, ապա այդ շարքում անպայման տեղ կգտնեն և՛ «սրտաբեկ լինել»-ը, և՛ «փախչել»-ը, և՛ «ուրանալ»-ը; և՛ «թերահավատությամբ լցվել»-ը, և՛ «իբրև սրով խոցվել»-ը:

Ինչպես հայտնի է, հոմանիշը կարող է իմաստի լրիվ համընկնում դրսևորել (այպես կոչված **նույնանիշ հոմանիշներ**՝ կոտրել-ջարդել) և իմաստի մասնակի համընկնում ունենալ (**համանիշ հոմանիշներ**): **Վերջիններս կարող են դրսևորել իմաստաբանական, գործառնական - ռճական, և կապակցական տարբերություններ:**

Գիրք քարոզութեան «Ձմեռան հատոր»-ում սրանց բոլորի գործածությանն էլ հանդիպում ենք:

Մասնակի համընկնում ունեն, օրինակ՝ **սնուցանել, եւ կաթն ջամբել**, հոմանիշները. առաջինը համագործածական բառերի շարքում է, երկրորդը՝ գրական: Բացի այդ, **սնուցանել** նշանակում է՝ կերակրել ընդհանրապես, իսկ **կաթն ջամբել**՝ կերակրել միայն կաթով, այսինքն առկա է նաև հոմանիշության աստիճանական տարբերություն.

դժուարըմբեր - **անտանելի**. առաջինը համագործածական բառերի շարքում է, երկրորդը՝ գրական,

քարք, այսինքն՝ արքայիկ (օձ),
ոմանց անկումն - **ոմանց** գլորումն (այստեղ **աստիճանական տարբերություն կա. անկումը ընկնելն է, իսկ գլորվելը ընկնել, ապա շարունակել ցած ընկնելը**).

«պարտ է ընդունիլ գՔրիստոս եւ բառնալ ի ձեռս մեր՝ բարի գործովք և ողորմութիւն առնելով.»⁵ **ողորմութիւն առնելը** բարի գործերի մի մասն է.

«հրէայքն ... որք ուրացողք եղեն և աստուածամարտք»⁶. ասաստկական առումով աստուածամարտք, հոմանիշը ավելի է

⁵ Նույնը, էջ 86:

ընդգծում ուրացողք լինելու հետևանքները: Հետևյալ օրինակում հեղինակը ինքն է հուշում հոմանիշության առկայությունը. «**Ձի ուր** երկիւղ տեառնէ, **ա՛նդ է և** պատւիրանաց պահպանութիւն, և հոգւոյ եւ մարմնոյ մաքրութիւն», այսինքն՝ «պատվիրանապահությունը, հոգու և մարմնի մաքրությունը» հոմանիշ են «երկիւղ տեառնէ» բառակապակցությանը:

Բազմաբնույթ շարք է Տիրոջ անվանումների հոմանիշների ցանկը.

Քրիստոս- լուծիչ էր մահու

զտնօրէնութիւն փրկչին

որդի աստծոյ ճշմարիտ.

անդրանիկ ծնունդ

փրկիչ աշխարհի. և արձակիչ կապելոց:

բանն աստուած

որդի Ադամայ.

մարմինն փոքրիկ ի գիրկսն Սիմէօնի

Յիսուս լոյս փառաց աշխարհի

Բան հօր և որդի կուսի:

Խոսելով Հովհաննէս Մկրտչի մասին՝ Տաթևացին նրան անվանում է կապող օղակ Հին և Նոր օրէնքների միջեւ, հնի ավարտ և նորի սկիզբ՝ օգտագործելով՝ **միջնորդ է կապ** հոմանիշները. «Հին օրինացն կատարումն եղեւ, և նորոյս սկիզբն. երկուցն **միջնորդ է կապ** ի միջի կացեալ որպէս արձան.»⁷

Գործառնական-ոճական հոմանիշների փայլուն շարք են Հովհաննէս Մկրտչին տրվող մնացյալ ինքնատիպ բնութագրումները, որ մեր լեզվի ոճական հնարավորությունների յուրօրինակ հատված է.

յառաջընթացն փրկչին. եւ արուսեակն արեգական,

Հօր առաքեալն. եւ Որդւոյ մկրտիչն,

⁶ Նույնը, էջ 82:

⁷ Նույնը, էջ 99:

ձայնն բանին. քարոզողն արքայութեան. եւ աւետաւորն Ադամայ,
բարեկամն փեսային. և ճրագն ի վերայ աշտանակին,
տատրակն անապատի. և գարնանաբեր ծիծեռն,
մեղաւորաց բարի խորհրդակիցն. եւ Հերովդէի յանդիմանի,
հին օրինաց փարատողն. և մարգարէից աւարտողն,
առաքելոց սկսանողն. և ճշմարիտ խոստովանողն,
վկայն արդարութեան. և մարտիրոսն սուրբ,
կարապետն և մկրտիչն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի,
նախընթաց և կարապետ լինի փրկչին,
աւետաւոր գալստեանն Քրիստոսի,
ամլածին և ծերածին գաւակ:

Հատվածն ավարտվում է սրբին ուղղված նախադասությամբ, որտեղ հոմանիշների շարքը շարունակվում է. «Որ եւ ի բոլոր սրտէ՝ արտասուալիբ աչօք՝ ի ծունկս անկեալ հառաչեմք առ քեզ. ո՛վ **միջնորդ շնորհաց եւ լրումն օրինաց, հրեշտակդ ի մարմնի եւ ձայնդ յանապատի. սերովբէ հողեղէն և մարմնաւոր քերովբէ**»⁸. միջնորդ շնորհաց, լրումն օրինաց, հրեշտակդ ի մարմնի, ձայնդ յանապատի: Վերջինս ավելի հայտնի է «**ձայն բարբառի յանապատի**» բառակապակցությամբ:

Ինչպէս տեսնում ենք, շարքն ամբողջությամբ աստվածաշնչյան պատումների, գեղարվեստական և հոետորական խոսքի համադրությամբ է կառուցված, այսինքն գործ ունենք գործառնական-ոճական տարբերություններ ներկայացնող հոմանիշների հետ:

Աստիճանական տարբերությամբ են բնութագրվում **ձայն ածէ և աղաղակէ** հոմանիշները, որտեղ երկրորդ եզրը բնութագրվում է ուժգնության ավելի բարձր աստիճանով. «Նախ զի տատրակն երկար **ձայն ածէ և աղաղակէ**»⁹:

⁸ Նույնը, էջ 108:

⁹ Նույնը, էջ 91:

Ունենք հոմանիշների տասնյակ հետաքրքիր այլ օրինակներ և կիրառություններ.

աստուած եւ արարիչ երկնի եւ երկրի. **ոչ բաժանելով՝ ոչ երկատելով.** այլ մի եւ անբաժանելի,

«մտւրն անբանից կերակրոյ է տեղի»¹⁰.

«նոյնպէս եւ **խոնարհութեամբ և հնազանդութեամբ** պարտ է ընդունիլ զՔրիստոս:»¹¹.

«եղին ծերք եւ տղայք **վառեալ ջահիւք և լապտերօք**»¹².

«նոյնպէս կոյսն աղբիւր էր սրբութեան. և սրբիչ եղեւ ամէն աղտեղութեանց մարդկան»¹³.

«յորդ անձրև, գոր տարափ կոչի»¹⁴.

«որ որքան ի գատէ ի փեսայէն Քրիստոսէ, **տրտմութեամբ պահօք և աղօթիւք** կեայ մինչեւ յերկինս հասցէ առ փեսայն իւր»¹⁵.

«զի տատրակն մենակ թոչի և **յանքոյթ** (հանդարտ, անխռով, աչքից հեռու) **տեղիս եւ յանապատ** և ի մայրիս բնակի: Տուցանէ զառաքինի ճգնաւորսն. և որք մենացեալք են, և յանապատ և ի մայրիս»¹⁶.

«նոյնպէս և Քրիստոս տայ քրիստոնէից կերակուր **ջօր.** (դառը, թթու) այսինքն, **զնեղութիւն աշխարհիս և զաշխատութիւնս**»¹⁷.

«այսպէս եւ գործնական առաքինութիւնքն՝ ընդ բազումս լինի. **սիրել զընկերս. ողորմիլ աղքատաց. մխիթարել զտրտումս բազումս**»¹⁸.

¹⁰ Նույնը, էջ 45:

¹¹ Նույնը, էջ 86:

¹² Նույնը, էջ 86:

¹³ Նույնը, էջ 89:

¹⁴ Նույնը, էջ 18:

¹⁵ Նույնը, էջ 91:

¹⁶ Նույնը:

¹⁷ Նույնը, էջ 92:

¹⁸ Նույնը:

«Հինգերորդ՝ նշանակել զի հրեայքն անպտուղ և թափուր էին ի բարեաց գործոց»¹⁹.

«Յամօթ այնոցիկ՝ որք ոչ գործեն զբարիս. ո՛չ պահեն և ո՛չ աղօթեն, թե չունիմք մեղք զոր ապաշխարեմք»²⁰.

«զի առանց յարկի էր և ծածկութի: ԺԵ՝ զի անհանդերձ, մերկ և բոկ շրջէր: ... անհանգիստ և տքուն լինէր»²¹.

«բարբառն միեւնոյն բան է. որ ի սրտին էր անմարմին՝ և լեզւան եղեւ բարբառ և լսելի մեզ. նոյնպէս»²².

Susanna Grigoryan- The use of stylistic synonyms of the “Winter tome” of the “Preaches book” Grigor Tatevatsi.-Gregor Tatevatsi in the “Winter tome” ' he “Preaches book” is used synonyms as a way of interpreting words and phrases, or as an explanation for a reciprocal word, or that is very popular in this work in the broad sense of the synonym, that is, in a specific context, synonyms become completely different semantic phrases, but they are connected by a specific contextual meaning.

Сусанна Григорян – Употребление стилистических синонимов в "Зимнем томе" "Книги проповедей" Григора Татеваци.- Григор Татеваци в "Зимнем томе" "Книги проповедей" синонимы в основном употребляет либо как способ толкования слов и словосочетаний, либо как объяснение взаимозаимственного слова, либо что очень распространено в этом труде - в широком смысле синонима, то есть в конкретном контексте синонимами становятся совершенно разные смысловые словосочетания, однако их соединяет конкретный контекстный смысл.

¹⁹ Նույնը, էջ 95:

²⁰ Նույնը:

²¹ Նույնը, էջ 102:

²² Նույնը, էջ 103:

**ԵՐԿԻՆՔ ԵՎ ԵՐԿԻՐ ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՇՈՒՐՋ**

Դիցարանությունից՝ ստուգարանություն

Հին ու նոր ժողովուրդների դիցարանական պատկերացումներում երկինքն անանգրային նշանակություն ունի: Այն վերին աշխարհի բացարձակ խորհրդանիշն է եւ հակադրվում է ստորին աշխարհին՝ երկրին: Որպես անհասանելի, հեռավոր ու վերին մի կերտվածքի՝ երկնքին հնուց ի վեր վերագրվել է աստվածային էություն¹:

Երկնային գերագույն աստվածը հեթանոս ժողովուրդների հավատալիքներում միաժամանակ համարվում էր երկինքն ու երկիրը ստեղծողը: Նախաքրիստոնեական Հայաստանում նա կոչվում էր «արարիչ երկնի եւ երկրի»², ընդ որում այս պատկերացումը հայ ժողովրդական գրույցներում հարատեւում էր մինչեւ 19-ից 20-րդ դարեր (տե՛ս, օրինակ, Ալաշկերտում³): Այդպիսով, երկինքն ու երկիրը դիտվում էին որպես տիեզերքի մեկ ամբողջություն, որը հետագայում կիսվել է երկու մասի: Հատկանշական է, որ հինարեւելյան տարբեր մշակույթներում (շումերական, փյունիկյան, հնդկական, եւն) երկինք-երկիր ամբողջությունը բնորոշվում էր մեկ բառով⁴:

¹ Н.В. Брагинская, Небо // Мифы народов мира. энциклопедия (главный редактор С.А. Токарев), 1-2, т. II, Москва, 1992, с. 206-207.

² Ազգաթանգեղայ պատմութիւն հայոց (քննական բնագիրը՝ Գ. Տեր-Մկրտչյանի եւ Ս. Կանայանի, աշխարհաբարը եւ ծանոթագրությունները՝ Ա. Տեր-Ղեւոնդյանի), Երեւան, 1983, էջ 46, § 68:

³ Գ. Նժդեհեան, Պատաւաշունչ. երկինքն ու երկիրը // Ազգագրական հանդէս, 7-րդ տարի, IX գիրք (№ 9), Թիֆլիս, 1902, էջ 263, 265:

⁴ В.В. Иванов, Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Ва(х)агну

Ըստ հայոց նոր հավատալիքների՝ հնում երկինքն ու երկիրը իրար շատ մոտ գտնվելիս են եղել, սակայն մի կնոջ գործած մեղքի պատճառով երկինքը հեռացել է երկրից⁵: Այստեղ տեսնում ենք մեկ ամբողջի երկփեղկման հին առասպելությոթի ուշ ժողովրդական արձագանքն ու վերախմաստավորումը: Հանելուկներում երկինքն ու երկիրը նկարագրվում են իբրև իրար փակող երկու սինի (Լոռի) կամ միմյանց համագոր երկու կարպետ/սավան (Խարբերդ)⁶: Սա նույնպես ցույց է տալիս միասնական երեւույթի երկվությունը, որն, ի դեպ, արտահայտվում է նաև երկինք-երկիր հակադրագույզի յուրաքանչյուր անդամին վերագրվող առանձին սեռով: Ընդհանրապես, երկիր-երկինք ամուսնական գույգում առավել հաճախ կինը երկիրն է, իսկ ամուսինը՝ երկինքը⁷:

Ստուգաբանական դեգերումներ

Միջնադարում հայ նշանավոր իմաստասեր Հովհաննես Երզնկացին *երկինք* եւ *երկիր* բառերը ստուգաբանում էր *երկու* արմատով՝ գրելով. «զի երկինքն երկու իրք է՝ հուր եւ օդ, եւ երկիրս երկու իրս է՝ հող եւ ջուր»⁸: Երզնկացին, ակնհայտորեն, գտնվում էր տիեզերքի չորս տարրերի մասին ուսմունքի ազդեցության տակ (հուր, օդ, հող, ջուր), որը հստակ արտացոլված է նաև նրա երաժշտագիտական վերլուծություններում: Երզն-

// Պատմա-բանասիրական հանդես, 1983, № 4, էջ 34: Ուշագրավ է, որ Շատախի բարբառում *երկիր-երկինք* կապակցությունը նշանակել է «ամեն մարդ, բոլորը» [Հ.Յ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Երևան, 1973, հ. 2, էջ 64], ինչն ըստ էության ցուցում է «աշխարհ» ընդհանրական նշանակության վրա:

⁵ Ե. Լալայեան, Գանձակի գաւառ // Ազգագրական հանդէս, 5-րդ տարի, Զ գիրք (№ 6), Թիֆլիս, 1900, էջ 344:

⁶ Ս.Բ. Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, էջ 3, № 7-8:

⁷ Н.В. Брагинская 1992, с. 207.

⁸ Հ.Յ. Աճառեան, 1973, հ. 2, էջ 62:

կացու ստուգաբանությանն է հետեւում մեկ այլ միջնադարյան նշանավոր իմաստասեր Գրիգոր Տաթևացին:

Նոր ժամանակներում ֆրանսիացի հնդեվրոպաբան Անտուան Մէյէն գտնում էր, որ հայ. *երկհնք* եւ *երկհր* բառերում առկա է միեւնույն՝ *երկ(ու)* թվականի *երկհ-* տարբերակը, ըստ որում առաջին դեպքում բառն, ըստ նրա, ածանցվել է արական սեռի ցուցիչ հանդիսացող *-ի-* հիմքով, իսկ երկրորդ դեպքում՝ իգական սեռի ցուցիչ հանդիսացող *-ա-* հիմքով (հմմտ. գործիական հոլովում՝ *երկր-աւ*)⁹: Այս *երկհ-* տարբերակը նա տեսնում էր որոշ բարդ բառերում, ինչպէս՝ *երկէամ* «երկաւյա(կ)», *երկէան* «կասկած, երկբայություն»¹⁰:

Շարունակելով Ա. Մէյէի վարկածը՝ իտալացի լեզվաբան-արեւելագետ Վիտտորե Պիզանին եւ, վերջինիս հետեւելով, ռուս լեզվաբան-հնդեվրոպագետ Վյաչեսլավ Իվանովը ենթադրում էին, որ հայ *երկհնք* եւ *երկհր* հակադրագույզը կազմվել է նույն *երկու* բառի *երկհ-* տարբերակով, որի առաջին անդամին, սակայն, ըստ նրանց, կցվել է ներգործական (արական) նշանակություն ունեցող *-ն* վերջածանցը, իսկ երկրորդ անդամին՝ կրավորական (իգական) նշանակություն ունեցող *-ր* վերջածանցը¹¹: Այս տեսակետն ընդունում էր նաեւ Վ. Տոպոր-

⁹ A. Meillet, Arménien *erkin* et *erkir* // Mélanges Émil Boisacq, vol. 1 (tome V de l'Annuaire de l'Institut de philologie et d'histoire orientales et slaves de l'Université libre de Bruxelles), Bruxelles, Secrétariat de l'Institut, 1937, p. 1-2.

¹⁰ A. Meillet, Etymologies arméniennes // Mémoires de la Société Linguistique de Paris, vol. 11, 1900, p. 394.

¹¹ V. Pisani, Uxor. Ricerche di morfologia indo-europea // Miscellanea Giovanni Galbiati, vol. III, Milano, 1951, p. 3-6; В. Пизани В., Общее и индоевропейское языкознание, Москва, 1956, с. 155; В.В. Иванов, Заметки по сравнительно-исторической индоевропейской поэтике // To Honor Roman Jakobson. Essays on the Occasion of his Seventieth Birthday, 11 October 1966, The Hague - Paris, 1967, p. 981-984; В.В. Иванов, Использование для этимологических исследований сочетаний одно-

վր¹², մինչդեռ Յ. Քնոբլոխը փորձում էր *երկ-* (< **erdwi-*) արմատը կապել ավեստերեն *arədvī* բառի հետ (հմմտ. *Arədvī Sūra Anāhita* դիցուհու անունը)¹³, ինչը, սակայն, հիմնականում չեն ընդունում մյուս հետազոտողները:

Ստուգաբանության արդի վիճակը

Ինչ վերաբերում է Վ. Պիզանիի ենթադրությանը, ապա այն հիմնված է տարբեր հնդեվրոպական լեզուներում առկա տվյալների համեմատության վրա, բայց նրա բերած օրինակներում չկա գոնե մեկ լեզու (մեռած կամ կենդանի), որում միաժամանակ ներկա լինեն համապատասխան վերջածանցների արական եւ իգական ցուցիչները: Միակը հայերենն է, որում դրանք ենթադրաբար գոյատեւում են կողք-կողքի՝ «երկինք-երկիր» հակադրագույզի անվանումների մեջ: Այդուհանդերձ, հայերենում այլ օրինակների բացակայությունը կասկածելի է դարձնում *-(h)ն* եւ *-(h)ր* վերջածանցներին սեռի իմաստ վերագրելը եւ ուստի նաեւ՝ դրանից բխեցվող մնացյալ տեսությունը: Կարծում ենք, որ նշված ածանցներն այլ նշանակություն կարող էին ունենալ վաղնջահայերենում: Սակայն, նախքան

коренных слов в поэзии на древних индоевропейских языках // Этимология - 1967, Москва, 1969, с. 47-49; В.В. Иванов, Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Ва(х)агну // Պատմա-բանասիրական հանդես, 1983, № 4, էջ 34-35; В.В. Иванов, К семантической типологии производных числительного «два» // Сокровенные смыслы: Слово. Текст. Культура. Сборник статей в честь Н.Д. Арутюновой, Москва, 2004, с. 106-107.

¹² В.Н. Топоров, Об отражении одного индоевропейского мифа в древнеармянской традиции // Պատմա-բանասիրական հանդես, 1977, № 3, էջ 103:

¹³ J. Knobloch, Zu armenisch *erkin* «Himmel», *erkir* «Erde» // Հանդես ամսօրեայ, ՀԵ տարի, 1961, թիւ 10-12 (Հոկտեմբեր-Դեկտեմբեր), էջ 543-544:

սրան անդրադառնալը, քննենք *երկինք* եւ *երկիր* բառերի արմատը:

Նշենք, որ խնդրո առարկա բառերը ցարդ չունեն վստահելի ստուգաբանություն, որն ընդունված կլիներ լեզվաբանների մեծ մասի կողմից: Հայերենի ստուգաբանական բառարաններն ընդհանուր հայտարարի չեն եկել այս հարցի շուրջ: Հ. Հյուբշմանը հավանական չի համարում նախկինում առաջադրված երկու վարկածները¹⁴: Նմանապես նաեւ Հ. Աճառյանը, բերելով իրեն հայտնի բոլոր ստուգաբանական փորձերը, չի ընդունում դրանցից որեւէ մեկը եւ բառը թողնում է առանց ստուգաբանության¹⁵: Գ. Ջահուկյանը մատնանշում է հնդեվրոպական (հ.-ե.) մի ստուգաբանություն (տե՛ս վարը), բայց անմիջապես ավելացնում է, որ կան հնչյունական դժվարություններ, որոնք բացատրելու համար հավանական է համարում *երկիր* բառի հետ համաբանությունը¹⁶: Հ. Մարտիրոսյանի բառարանում *երկին*- եւ *երկիր* արմատներն ընդգրկված չեն՝ ակնհայտորեն վստահելի հ.-ե. ստուգաբանության բացակայության պատճառով¹⁷:

Դեռեւս 19-րդ դարակեսին՝ գերմանացի արեւելագետ Պոլ դը Լագարդը հայ. *երկին*- բառը փորձում էր կապել լիտվերեն *Perkúnas* ամպրոպային աստծո անվան եւ դրա այլ հ.-ե. գուգահեռների հետ¹⁸, ինչը, սակայն, չընդունվեց Հայնրիխ Հյուբշմանի կողմից՝ իմաստային տարբերության պատճառով¹⁹: 20-րդ դարակեսին Հ. Էսապայանն առաջարկում էր *երկին*- բառի

¹⁴ H. Hübschmann, Armenische Grammatik, Leipzig, 1897, S. 445, § 138.

¹⁵ Հ.Յ. Աճառեան 1973, հ. 2, էջ 62:

¹⁶ Գ.Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 227:

¹⁷ H.K. Martirosyan H.K, Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon. Leiden Indo-European Etymological Dictionary Series edited by A. Lubotsky, vol. 8, Leiden-Boston, 2010.

¹⁸ P. de Lagarde, Zur Urgeschichte der Armenier, Berlin, 1854, S. 794.

¹⁹ H. Hübschmann 1897, S. 445, § 138.

արմատը կապել հ.-ե. **dei-* «փայլել, ցոլալ» նախաձեւի **d̥uin-*? տարբերակի հետ²⁰: Այս ստուգաբանությունը հետագայում որդեգրեցին Է. Աղայանը եւ Գ. Ջահուկյանը. վերջինս, սակայն, այն համարում էր կասկածելի (էջ 161, 274)²¹: Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշեցինք, Գ. Ջահուկյանն այս ստուգաբանությունն ի վերջո բերում է իր Ստուգաբանական բառարանում:

Առաջարկվող ստուգաբանություն

19-րդ դարավերջին առաջ է քաշվել մեկ այլ հետաքրքրական վարկած, որն, ըստ երեւույթին, կարող է հաստատվել նաեւ նոր լեզվաբանական վերլուծություններով: Այս վարկածի համաձայն՝ հայ. *երկին*- բառի արմատը (**երկ-*) համեմատվում է կելտական նույնահունչ մի զուգահեռի հետ, որը համընկնում է նաեւ իր իմաստով: Այսպես, գերմանացի հնդեվրոպաբան Աուգուստ Ֆիքի կարծիքով՝ հայ. *երկին*- եւ իռլանդերեն *erc* հոմանիշները կարող էին ծագել հ.-ե. **erko-* (*erká* ?) նախաձեւից²²: Վարկածը չեն ընդունում ո՛չ Հ. Հյուբշմանը, ո՛չ էլ Հ. Աճառյանը՝ թերեւս հնչյունաբանական պատճառներով²³:

Մինչդեռ հաշվի առնելով հայերենի պատմական հնչյունաբանության օրինաչափությունները՝ *երկինք* բառի *երկ-* արմատը միանգամայն կարող էր ծագել հ.-ե. *(*y*)*erk^w-o-* կամ **hierk^w-o-* նախաձեւից: Ինչպես փորձել ենք ցույց տալ մեր

²⁰ Հ.Պ. Էսապալեան, Երկինք // Հանդես ամսօրեայ, ԾԶ տարի, 1942, թիւ 7-12 (Յուլիս-Ռեկտեմբեր), էջ 201-202:

²¹ Է.Բ. Աղայան, Բառաբանական եւ ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974, էջ 65-67; Գ.Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 84, 117:

²² A. Fick, Vergleichendes Wörterbuch der indogermanischen Sprachen, 2 Theil, Göttingen, 1894, S. 40.

²³ H. Hübschmann 1897, S. 445, § 138; Հ.Յ. Աճառեան 1973, հ. 2, էջ 62: Ի դեպ, Է. Սակաեւն, իր հերթին, հին իռլանդերեն *erc* «երկինք» բառը բխեցնում էր ոչ թե հ.-ե. **erk^w*- «փայլել, ցոլալ», այլ **perk^w*- «հարկանել» նախաձեւից [Э.А. Макаев, Армяно-кельтские изоглоссы // Кельты и кельтские языки, Москва, 1974, с. 56-57]:

վերջին հոդվածներից մեկում, հ.-ե. այս նախաձեռն, որը պետք է նշանակեր ոչ թե «փայլել, ցուլալ», այլ «արարել» կամ պարզապես «ստեղծված, արարված», ուներ երկու տարբերակ՝ նախաձայն շրթնային կիսաձայնով եւ այսպես կոչված «կոկորդային» նախահավելված հնչյունով: Վերջին տարբերակից (**h1erk^w-o-*) հայերենում օրինաչափորեն պետք է զարգանար *երգ/երկ* տարբերակային զույգը՝ ձայնեղ եւ խուլ վերջահար բաղաձայներով: Այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել հայերենում հնուց ի վեր գործող *զ/կ* ետնալեզվային պայթականների հերթագայությունը, որն, ըստ երևույթին, եղել է բարբառային հնչյունաբանական հնագույն տարբերակային դրսևորումներից մեկը մեր լեզվում²⁴:

Ստացվում է, որ *երկինք*-ը բառի *երկ*- արմատը նույնանում է հայ. *երկ* (-ոյ) «գործ», «գործ աշխատալից», «ջանք, աշխատասիրություն», «վաստակ, արդյունք աշխատության» արմատին: Վաղնջահայերենում *երկ-ին*- կազմությունը, փաստորեն, պետք է նշանակեր «արարված, ստեղծված մի բան»: Այստեղ գործածված *-ին* վերջածանցը ծագում է հ.-ե. **-(e)no-* կամ **-(i)no-* ձևից, որը հ.-ե. նախալեզվում կազմել է ածականներ ու բայանուններ: Գ. Ջահուկյանը ենթադրում է, որ վաղնջահայերենում այն պահպանել է իր գործածությունը²⁵, եւ ուստի զարմանալի չէ, որ *երկ-ին* ածանցավոր կազմության մեջ բառացիորեն տեսնում ենք բայանուն, որը հետագայում վերածվել է գոյականի՝ նախնական նշանակության մթազմամբ: Արդի լեզվում այս վերջածանցով ունենք թե՛ ածականներ՝ վերին,

²⁴ Տ.Ս. Դալալյան, Հայերեն *երկ* եւ *երգ* արմատների ստուգաբանության շուրջ // «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., 2017, էջ 97-98:

²⁵ Գ.Բ. Ջահուկյան 1987, էջ 234; Գ.Բ. Ջահուկյան, Հին հայերենի վերջածանցների ծագումը // *Պատմա-բանասիրական հանդես*, 1994, № 1-2 (139-140) էջ 66; Գ.Բ. Ջահուկյան 2010, էջ 807:

ստորին, միջին, մթին, թե՛ գոյականներ՝ ամուսին, դարբին, կաղին, եւն:

Նույն *երկ-* արմատից *-իր* վերջածանցով պետք է կազմված լիներ նաեւ դիցաբանական հակադրագույզի մյուս անդամի անվանումը՝ *երկիր* բառը, որը նույնպէս նախնաբար բայանվան իմաստ կրելով՝ «արարված, ստեղծված» նշանակությամբ, հետագայում վերածվել է գոյականի²⁶: Այս *-իր* ածանցը ծագում է հ.-ե. *-(e-)ro- կամ *(i)ro- ձեւից, որը, դարձյալ ըստ Գ. Ջահուկյանի, հ.-ե. նախալեզվում կազմում էր ածականներ, որոնք մասամբ գոյականացել են: Նույն վերջածանցն է ենթադրվում նաեւ հին հայերենի դասական թվականների (երկիր-, երիր-, չորիր-) *-որոր* եւ *-երորդ* ածանցների մեջ²⁷:

Եզրահանգումներ եւ վերլուծություն

Եթէ ե՛ւ *երկին-*, ե՛ւ *երկիր* գոյականները նախապէս իբրեւ բայանուններ պիտի նշանակէին «արարված, ստեղծված», ի՞նչն է այդ պարագային նրանցում առկա վերջածանցների տարբերությունը, որով պայմանավորված պիտի լիներ նաեւ այդ բայանունների նրբերանգային առանձնահատկությունը: Այս հարցի պատասխանը փնտրելիս՝ գայթակղիչ է դիտարկել հայերենի դասական թվականների կազմության մեջ՝ նշված վերջածանցների դերակատարումը:

Այսպէս, *առաջ* բառին կցվելով՝ *-ին* վերջածանցը կազմում է «մեկ» քանակական թվականի դասական տարբերակը,

²⁶ Գ. Ջահուկյանը *երկիր* բառի համար վերականգնում էր *er-tu- նախաձեւը՝ գերմանական եւ կելտական համապատասխան աճականներով ձեւերի հիման վրա: Ըստ նրա՝ անհավանական են Ա. Մէյեի (*երկ-ար*) եւ Է.Ադայանի [*dh_uer-] առաջարկած ստուգաբանությունները՝ առաջինը ըստ իմաստի, երկրորդը՝ հնչյունապէս [Գ.Բ. Ջահուկյան 1987, էջ 166]:

²⁷ G.R. Solta, Zum armenischen Ordinalsuffix **ord** // Հանդէս ամսօրեայ, Ղ տարի, 1960, թիւ 1-12 (Յունուար-Դեկտեմբեր), S. 291-292; Գ.Բ. Ջահուկյան 1987, էջ 234-235; Գ.Բ. Ջահուկյան 1994, էջ 66; Գ.Բ. Ջահուկյան 2010, էջ 807:

իսկ *-իր* վերջածանցն, ինչպես տեսանք, կազմում է մեկից բարձր քանակական թվականների դասական տարբերակները (անշուշտ, *-որդ* վերջածանցի հետ համատեղ): Կարելի է արդյոք եզրակացնել, որ *երկին*- բառի մեջ *-ին* ածանցը *երկ*- արմատին հաղորդում է առաջնայնության կամ միակության գաղափար, մինչդեռ *-իր* ածանցն ասես «երկրորդված» լինելու գաղափարն է փոխանցում *երկիր*-ին: Առհասարակ, *-ր*- մասնիկը հոգնակիության, հավաքականության իմաստ ունի՝ ի տարբերություն եզակիության ցուցիչ *-ն*- մասնիկի:

Կարծես թե այս մեկնաբանությունը ներդաշնակորեն շաղկապվում է նաև դիցաբանական մտածողությանը. հնավանդ առասպելներում, որպես կանոն, նախ արարվում է երկինքը, որից հետո է միայն երկրորդաբար առաջանում երկիրը: Բացի այդ, *երկիր* բառի մեջ հավաքականության ցուցիչ վերջածանցի առկայությունը հուշում է «Երկիր, որի վրա կան շատ երկրներ» բանաձևի մասին²⁸, մինչդեռ երկինը (ո՛չ երկինքը...) միակն է եւ բոլոր կողմերից տեսանելի:

Վերի լեզվաբանական եւ առասպելաբանական վերլուծությունը կարող է հաստատվել նաև տեքստաբանական-բանագիտական տվյալներով: Ընդամին, բազմաթիվ արխաիկ ավանդույթներում տիեզերաստեղծման երեք բաղադրիչները, ըստ աստիճանակարգման կարեւորության, ունեն հետեւյալ հերթականությունը՝ առաջինն է, երկիրը՝ երկրորդը, իսկ ստորերկրայքը՝ երրորդը: Ըստ որում, նշված կառուցվածքն առկա է ոչ միայն բուն արարչագործական տեքստերում, այլև ուշ բանահյուսական ստեղծագործությունների մեջ, ինչպես, օրինակ, վաղնջական հավատալիքների կնիքը պահող ժողովրդական հանելուկներում²⁹:

²⁸ Պատահական չէ, որ նույն *-իր* վերջածանցը գործածական է տեղանուններում, ինչպես՝ Արմաւ-իր (**Ար[ա]մայ-իր* > *Ար[ա]մաւ-իր*), *Տաշ-իր*, եւն:

²⁹ Տե՛ս В.Н. Топоров 1977, с. 102.

Dalalyan Tork -On the Etymology of Arm. *erkin-(k')* 'sky' and *erkir* 'earth'. – After a thorough discussion of the previous etymological attempts of the two words in binary opposition *erkin-k'* (երկինք) 'sky' and *erkir* (երկիր) 'earth', a new etymology is proposed for them. Both words contain the same Indo-European root: **h₁erk^w-*, which should have meant 'to create'. The difference between their connotational meanings is expressed through appropriate suffixes, the first (*-in* < I.-E. **-(i)no-*) could have contained the idea of primacy and uniqueness (singularity), whereas the second one (*-ir* < I.-E. **-(i)ro-*) has had the sense of being subordinate or of collectivity (plurality). Accordingly, both Arm. *erk-in-k'* and Arm. *erk-ir* should have literally meant 'created'. This linguistic analysis seems to be asserted also by the mythological and folkloristic-textual data.

Далалян Торк – К этимологии арм. *erkin-(k')* 'небо' и *erkir* 'земля'. – После детального обсуждения предыдущих попыток этимологизации членов бинарной оппозиции *erkin-k'* (երկինք) 'небо' и *erkir* (երկիր) 'земля' в статье выдвигается новая этимология этих слов. В обоих присутствует тот же индоевропейский корень **h₁erk^w-*, который, видимо, означал «творить, сотворять». Разница смыслового оттенка между членами данной пары выражается посредством соответственных суффиксов, первый из которых (*-in* < и.-е. **-(i)no-*) мог обозначать первостепенность (первозданность) и единственность, в то время как второй (*-ir* < и.-е. **-(i)ro-*) имеет значение вторичности и выражает собирательный (множественный) смысл. Таким образом, и арм. *erk-in-k'*, и арм. *erk-ir* дословно должны были означать «сотворенный». Данный лингвистический анализ, кажется, подтверждается также мифологическими и фольклорно-текстологическими данными.

**ՆՈՐԱՀԱՅՑ ԳՐԱԲԱՐՅԱՆ ԲԱՌԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՆՅՈՒՍԱՑՈՒ
«ՏԵՍՈՒԹԻՒՆ Ի ՄԱՐԴՈՅՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ» ԵՐԿԻ ՀԱՅԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ**

Հայ և ընդհանրական քրիստոնեական եկեղեցու նշանավոր սուրբ, կաթոլիկ եկեղեցու կողմից տիեզերական վարդապետ՝ doctor ecclesiae, հռչակված Գրիգոր Նյուսացու «Տեսություն ի մարդոյն կազմութիւն (Յաղագս կազմութեան մարդոյ)» երկը գրվել է 379 թ. հին հունարեն, հայերեն թարգմանվել մոտավորապես 717 թ. Կոստանդնուպոլսում Ստեփանոս Սյունեցու և Դավիթ Հյուպատոսի կողմից: Այս աշխատությունը հայ հին թարգմանական գրականության երկրորդ շրջանի գլուխգործոցներից է համարվում: Հայոց գրերի գյուտից հետո անմիջապես ծնունդ առած «թարգմանչաց շարժումը» երկու հզորագույն փուլեր է ունեցել: Ա շրջանն ընդգրկում է 5-րդ դարի կեսը, Բ շրջանն ուղղակի առնչվում է հունարան դպրոցի գործունեության հետ՝ 5-րդ դարի վերջից մինչև 8-րդ դար ներառյալ:

Թարգմանիչ բնորոշումը միջնադարյան հայ իրականության մեջ տիտղոս է եղել, պատվանուն, որին արժանացել են Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի 100-ից ավելի աշակերտները և ապա՝ աշակերտաց աշակերտները կամ «կրտսեր թարգմանիչները»: Այս շարքին հավաստյալ կարող ենք դասել նաև քերականագետ, բանաստեղծ, երաժիշտ, հայ եկեղեցու մեծահամբավ գործիչ Ստեփանոս Սյունեցուն և Դավիթ Հյուպատոսին, վերջինս բյուզանդական արքունիքում բարձր պաշտոն կրող (կայսերական սեղանապետ) իշխաններից էր՝ հայտնի իր գիտական գործունեությամբ:

Ընդգծենք նաև, որ «թարգմանիչ» բառը հին շրջանում նշանակում էր ոչ միայն մի լեզվից մյուսին փոխադրող, այլև Սուրբ գրքի դավանաբան մեկնիչ և իմաստասեր, թարգ-

մանիչներն իրենց ժամանակի ամենակրթված և լուսավորյալ անձինք էին, ուստի թարգմանչաց այս շարժման ներկայացուցիչների գործերը հարուստ էին նորակազմ բառերով, դարձվածքներով, գիտաբառերով ու ոճերով, որոնք գրաբարը դարձրին վերժամանակյա գիտական, մշակութային հզոր լեզու, հավասարազոր հունարենին և ասորերենին:

Հայ թարգմանական գրականության հատկապես Բ շրջանի լեզուն բազմաթիվ նորահայտ բառիմաստային, բառակազմական և ոճական իրողություններ է պարունակում, գանձեր, որոնց ուսումնասիրությունը հույժ արդիական է և կարևոր հայոց լեզվի պատմության, պատմական բառագիտության և եզրաբանության հետագա զարգացման համար: Ինչպես վկայում է հունաբան հայերենի հմուտ ուսումնասիրող Գ. Մուրադյանը. «Բացի մասնագիտական տերմիններից հունաբան դպրոցը ստեղծել է առհասարակ վերացական բառապաշար, և դրա շնորհիվ է, որ հայերենն այսօր ունակ է արտահայտելու ցանկացած ժամանակակից հասկացություն»¹:

Մեր այս ուսումնասիրության ընթացքում 2008 թ. Մայր աթոռ սուրբ Էջմիածնի կողմից լույս ընծայած Ս. Գրիգոր Նյուսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն (Յաղագս կազմութեան մարդոյ)» հայերեն թարգմանության քննական բնագրից (աշխատասիրությամբ Ստելլա Վարդանյանի) դուրս ենք գրել 29 բառային միավոր, որոնք վկայված չեն գրաբարի բառարաններում՝ ՆՀԲ, «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարան» և Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր», ինչպես նաև առանձնացրել ենք 83 բառ, որոնք ՆՀԲ-ում տրված են միայն Գր. Նյուսացի նշումով:

Հունաբան դպրոցի մայրամուտին կատարված հիշյալ թարգմանության բառապաշարը պատկերավոր է, հոմանիշ-

¹ Գ. Մուրադյան, *Հունաբանությունները դասական հայերենում*, Ե., 2010, էջ 15:

ներով և բազմիմաստ դարձվածային միավորներով հարուստ, այստեղ արդեն չկան հայերենի համար խիստ անսովոր, արհեստական բառեր, նորակազմ կամ նորահայտ բառերն ավելի շուտ հայկաբան են, քան հունաբան:

Նորահայտ բառերի իմաստային բովանդակության բացահայտմանը զուգահեռ՝ այդ նորաբանությունները վերլուծել ենք ըստ խոսքիմասային պատկանելության և բառակազմության: Ակներն է, որ հետդասական գրաբարի բառաստեղծման ներուժը հատկապես գիտության ոլորտում թե՛ ածանցման, թե՛ բառաբարդման միջոցներով իսկապես հզոր էր՝ անկախ ժողովրդախոսակցական գրաբարի անկման իրողությունից:

Քննենք այս աշխատության մեջ տեղ գտած նորակազմությունները՝ բաժանելով դրանք երկու խմբի. ա) նորահայտ բառեր, որոնք վկայված չեն ո՛չ ՆՀԲ-ում, ո՛չ Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան. ՆՀԲ-ում չվկայված բառեր»² բառարանում, և բ) նորակազմ բառեր, որոնք վկայված են վերոնշյալ բառարաններում, բայց դրանց համար որպես աղբյուր է ծառայել միայն Նյուսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» երկը:

Ուշադրության են արժանի նաև այն բառերը, որոնք թեն նոր չեն, սակայն մեր ուսումնասիրության առարկա աշխատության մեջ կիրառված են նոր իմաստներով, այսինքն՝ Նյուսացու այս երկի թարգմանիչները գրաբարյան բառերի իմաստային դաշտը հարստացրել են նոր նշանակություններով՝ հիմնականում տերմինային: Այս տիպի բառերից առանձնացնենք *ախտաժետը* (էջ 74), որը ՆՀԲ-ում բացատրվում է որպես «ախտացեալ, ցաւագար, հիւանդ»³: Ապա նշվում է նրա երկրորդ իմաստը՝ «վարակեալ ի կիրս ախտաւորս», իբրև իմաստային այս կիրառության օրինակ բերվում է Գ. Նյուսացու երկի թարգմա-

² Լ. Հովհաննիսյան, *Գրաբարի բառարան, ՆՀԲ-ում չվկայված բառեր*, Ե., 2010:

³ Տե՛ս <http://www.nayiri.com/imaginedictionaryBrowser.jsp?dictionaryId=26>

նության հետևյալ հատվածը. «Զախտաժէտ ցանկուին նախատելով. Նիւս. կազմ»⁴:

Բառակազմական տեսանկյունից Նյուսացու երկի թարգմանության մեջ կիրառված նոր բառերի զգալի մասը –ուրիւն ածանցով կազմված վերացական գոյականներ են՝ *առաջախնամութիւն* (էջ 48), *հակառակափակութիւն* (էջ 148), *յաւելագործութիւն* (էջ 135), *պատճառագիտութիւն* (էջ 99), *վայրահայեցութիւն* (էջ 202), *տնկաւորութիւն* (էջ 194), *քաջահաւասարութիւն* (էջ 135) և այլք: Հաճախադէպ են նաև –գոյն մասնիկով կազմված գերադրականների բավական յուրօրինակ կիրառությունները, որոնց հիմքում և՛ որակական, և՛ հարաբերական ածականներ են՝ *ակնյայտնագոյն* (էջ 172), *անբանաւորագոյն* (էջ 104), *բժշկականագոյն* (էջ 197), *դալնկագոյն* (էջ 90), *չափատրագոյն* (էջ 208): Անցյալ դերբայի –եալ ածանցով բազմաթիվ նորահայտ կազմություններ կան ածականի արժեքով՝ *աւրիւնադրեալ* (էջ 114), *երկոսեալ* (էջ 47), *կարաւտացեալ* (էջ 66), *նախավատակեալ* (էջ 98), նաև նորակազմ բայեր՝ *անխաղաղանալ* (էջ 99), *անապարագրել* (էջ 194): Վկայված են նաև –ելի/ալի ածանցներով նորագյուտ ածականներ, ինչպէս՝ *ախտանալի* (էջ 118), *ակնունելի* (էջ 125), *տրտմեցուցանելի* (էջ 108) և այլք: Նորաբանությունների մեջ զգալի թիվ են կազմում նաև ինքնատիպ բարդությունները և բարդաձանցավոր բառերը՝ առ+աջ-ով բաղադրված ձևեր՝ *առաջակարկառ* (էջ 76), *առաջակամ* (էջ 202), *առաջախնամութիւն* (էջ 48), ինչպէս նաև՝ *յաւէտաշարժ* (էջ 47), *յոքնատեսակ* (էջ 107), *փողոջաձևաբար* (էջ 209), *վայրահայեցութիւն* (էջ 202):

Նորահայտ բառերը խոսքիմասային լայն ընդգրկում ունեն՝ գոյական, ածական, բայ և մակբայ: Ստեղծվել են հետաքրքիր կազմություններ նախդիրների, նախաձանցների, վերջաձանցների և արմատների համադրմամբ:

⁴Անդ:

Մեր քննած բառացանկում առավել մեծաթիվ են այն նորակազմությունները, որոնք գրաբարի բառարաններում առկա են, բայց տրված են միայն Գր. Նյուսացու «Տեսություն ի մարդոյն կազմութիւն» երկի հղումով, այսինքն՝ տվյալ երկի թարգմանիչների բառաստեղծական շնորհի արգասիքն են: Հետազոտենք այդ բառերը՝ դասակարգելով ըստ խոսքիմասային պատկանելության.

Գոյական - աղաւաղութիւն (էջ 66), ամենախահութիւն (էջ 52), անդրաբերութիւն (էջ 89), արմանագործութիւն (էջ 168), արինագործութիւն (էջ 209), արտաքսաձայնութիւն (էջ 70), զատութիւն (էջ 164), ընդդիմաբախութիւն (էջ 200), խաղճախուղճ (էջ 78), կողկողիթ (էջ 102), ճանապարհերթութիւն (էջ 169), մանկակերութիւն (էջ 166), նախաճառութիւն (էջ 174), նաւակայք (էջ 49), սկզբնատպաւորութիւն (էջ 58), ստուարամասնութիւն (էջ 105), վերագնացութիւն (էջ 101), փոթութիւն (էջ 205), քարադրաւ (էջ 215):

Ածական – ախտաժեւ (էջ 74), ախտաւորագոյն (էջ 186), աղանդական (էջ 119), անխառնակ (էջ 178), անկամաւոր (էջ 206), աննիւթաւոր (էջ 160), անսխալագոյն (էջ 211), աստուածագոյն (էջ 107), արագամալ (էջ 68), արինուտային (էջ 209), բազմախաղալի (էջ 202), բազմաձեւ (էջ 100), բազմամաղձ (էջ 109), բազմացիր (էջ 210), գնդատեսիլ (էջ 148), գոչաւորագոյն (էջ 78), գործաւորագոյն (էջ 192), դիրադաւ (էջ 66), երեւութուտ (էջ 102), ընդդիմաբախ (էջ 200), թանձրամասնագոյն (էջ 72), խաղճնելի (էջ 102), խորխաւոր (էջ 181), խռուական (էջ 195), հրաւորագոյն (էջ 88), հեշտատեսիլ (էջ 141), հրուտ (էջ 203), մաղձատար (էջ 90), մեկնակատեսիլ (էջ 145), մերժական (էջ 206), մշտնջենաւորագոյն (էջ 145), մտաբախ (էջ 89), յարգագոյն (էջ 114), յաւետակից (էջ 163), նեղափողոց (էջ 82), շատամարմին (էջ 66), ջերմաւոր (էջ 192), սկզբնականագոյն (էջ 210), տղայագոյն (էջ 217), ուղղագնաց (էջ 130), փողաձեւ (էջ 78), փոքրավայելուչ (էջ 175):

Մակբայ – ամուսնաբար (էջ 127), անբաւապատիկ (էջ 148), անպնդաբար (էջ 105), բազմամասնապէս (էջ 83), դիպաւոր

րապէս (էջ 46), ծարաւաբար (էջ 108), կարգապէս (էջ 148), կոնաձեւապէս (էջ 148), համապատուապէս (էջ 91), հովտաբար (էջ 78), միջակաբար (էջ 72), չափաբար (էջ 100):

Բայ. դերբայ – բազմաշարադրեալ (էջ 85), բաղանուանել (իմ) (էջ 124), երաժշտագործել (էջ 81), խառնամառնեալ (էջ 105), մակաւասարել (իմ) (էջ 163):

Վերոնշյալ բառացանկից ակնհայտ է, որ նորաստեղծ բառերի ճնշող մեծամասնությունը ածականներն են, այնուհետև՝ գոյականներ, բայեր, դերբայներ: Գոյականները հիմնականում ստեղծվել են -ութիւն ածանցի միջոցով: Ածականները կազմվել են -ական,-ային,-գոյն վերջածանցներով, ան- նախածանցով, հաճախադեպ են նաև կազմությամբ բարդ ածականները: Ածականի արժեք ունեն -եալ վերջավորությամբ դերբայական կազմությունները: Մակբայները ստեղծվել են -պէս,-բար,-պատիկ ածանցներով միջոցով: Այս և վերոհիշյալ բառերի զգալի մասը կիրառական է ցայսօր գիտական, գեղարվեստական լեզվում:

Այս բառերի մեջ կան նաև հունարան կազմություններ՝ հունարենի նմանողությամբ կազմված բառեր: Այդպիսիք են՝ *հակառակափակություն (էջ 148), պատճառագիտություն (էջ 99), նախաճառություն (էջ 174), ընդդիմաբախություն (էջ 200), բաղանուանիմ (էջ 124), արտաքսաձայնություն (էջ 70)* և այլք:

Լ. Հովհաննիսյանը այս տիպի կազմությունների վերաբերյալ հետաքրքիր դիտարկում է կատարում՝ նշելով, որ հայ թարգմանիչը երբեմն հունարեն պարզ բառի կամ բառակապակցության փոխարեն բարդ կամ բարդածանցավոր բառ է կազմում. «Թարգմանչի որդեգրած բառաստեղծման այս միջոցը նոյնպէս պէտք է համարել յունարանութեան դրսևորումներից մէկը. աւելի ճիշտ՝ դարի երկրորդ կեսի թարգմանչական մի խմբի որդեգրած սկզբունք, որը բնաւ լեզուն խաթարելու, արհեստականութեամբ հեղեղելու միտում չունէր, այլ պարզապէս լեզուամշակութային մի ուղղություն էր՝ հայերէնին աւելի գրական երանգ տալու, գրաւոր եւ բանաւոր խօսքի միջեւ ոճական,

բառօգտագործման եւ այլ բնոյթի տարբերակումների միտումով»⁵:

Հունաբանություն համարվող այս կառույցները Լ. Հովհաննիսյանը բաժանում է երկու խմբի՝ կազմություններ, որոնք դուրս են մղվել լեզվից և լայն կիրառություն չեն ստացել, և նորակազմություններ, որոնք ազատորեն գործածվում են հայերենում և նույնիսկ չի զգացվում դրանց՝ հունական կազմություններից պատճենված լինելը: Նյուսացու մեր ուսումնասիրած երկի թարգմանիչները բազմահմուտ էին, նրանք միայն խիստ անհրաժեշտության դեպքում էին հունական կազմությունները ուղղակի պատճենում, ընդ որում բառի կազմի մեջ մտնող բաղադրիչներից դուրսին հասկացվում է նրա նոր նշանակությունը:

Նյուսացու երկի նոր բառերի և իմաստային կիրառությունների վերաբեյալ վկայություններ կան Գ. Մուրադյանի «Հունաբանությունները դասական հայերենում»⁶ արժեքավոր աշխատության մեջ: Հետևելով տեսական գրականության մեջ ընդունված սկզբունքներին՝ նա առանձնացնում է հունարենից պատճենված բարդությունների երկու հիմնական տիպ. ա) «բառակազմական պատճենումներ» (словообразовательные кальки) և բ) «իմաստային-բառակազմական պատճենումներ» (семантические-словообразовательные кальки): Իմաստային թափանցիկության կամ թարգմանող լեզվում յուրացվելու տեսանկյունից բարդություններ պարունակում են հատկապես երկրորդ խմբի պատճենումները. «Կան բառեր, որոնք արտաքուստ թվում են բառակազմական պատճենումներ, բայց դրանց իմաստն առանց հունարեն սկզբնագրին դիմելու անհասկանալի է մնում, քանի որ նոր բառի բաղադրիչներից մեկը հունա-

⁵Լ. Յովհաննիսյան, Հայ թարգմանական գրականության բառապաշարը (Ե դար), Վիեննա-Երեւան, 2009, էջ 223-224:

⁶Գ. Մուրադյան, Հունաբանությունները դասական հայերենում, Ե., 2010:

րեն բառի ազդեցությամբ օժտվում է նոր իմաստային երանգով»⁷:

Այսպիսի իմաստային-բառկազմական պատճենումները Գ. Մուրադյանը համարում է բարդ նորակազմություններ, որոնց բաղադրիչներից մեկը կամ ամբողջ բառը հունարեն սկզբնօրինակի նմանողությամբ, նոր իմաստով է օժտվում: Նյուսացու երկում հանդիպող այսպիսի մի քանի բառ է առանձնացնում, ինչպես օրինակ՝ *ամբոխաբեր* (էջ 217.6) - «մայրուղի, բառացի՝ ժողովուրդ տեղափոխող», *մարմնավաճառ* (էջ 216. 8) - «մսավաճառ», *քաջահանդէպ* (էջ 213)- «դիպուկ» և այլք:

Գ. Մուրադյանն առանձնացնում է հայ հին թարգմանական գրականության բառապաշարը հարստացնող նորաբանությունների ևս մի կարևոր խումբ, որտեղ ընդգրկված բառերը հայերենի բառակազմական կաղապարների տեսանկյունից նորարարական են, այսինքն՝ հայերեն են մուտք գործել զուտ հունարենից կատարվող թարգմանությունների միջոցով: Այդպիսիք են հատկապես հայերենում խոսքիմասային տարածություն ունեցող ածականներից կազմված մակբայները՝ մակբայակերտ *բար,պէս*, ավելի հազվադեպ՝ *-արէն,-ակի* վերջածանցներով՝ *անարժանապէս* (էջ 231), *անսրբապէս* (էջ 234), *բազմամասնաբար* (էջ 196. 9), *յոզնարինակապէս* (էջ 196. 9), *գեղեցկապէս* (էջ 192) և այլն: Պետք է նշել, որ հայերենում այս բառերի ուղիղ ձևերը հանգիստ կարող են կիրառվել և՛ իբրև ածական, և՛ իբրև մակբայ՝ առանց հավելյալ ածանցների, սակայն թարգմանիչները մակբայակերտ ածանցների շնորհիվ ոչ միայն նոր կազմություններ են ստեղծել, այլև խոսքի մեջ առավել հստակ են դարձրել դրանց պարագայական կիրառությունները: Հայերենին ոչ հատուկ հունարան նոր կառույցներ են նաև ժխտական մասնկիով և *-ի* վերջածանցով բայածականները, ինչպես՝ *աներևելի* (էջ 216), *անգարհուրելի* (էջ 213), *անփոխադրելի* (էջ 189):

⁷Գ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 61:

Հավարտ անվարան արձանագրենք, որ հունաբան համարվող այս նորակազմություններն ակնհայտ փոքր թիվ են կազմում Նյուսացու երկի գրաբար թարգմանության բառապաշարում, ակներև է, որ Նյուսացու «Տեսություն ի մարդոյն կազմութիւն (Յադագս կազմութեան մարդոյ)» երկի բազմաշնորհ թարգմանիչները նախապատվություն են տվել հայերենի բառակազմական օրինաչափությունների համաձայն կազմվող բառերին, հունարեն հասկացությունները և եզրույթները թարգմանել են հայերեն նորաստեղծ համարժեքներով և ոչ թե տարատեսակ բարդընկալելի պատճենումներով, մի հանգամանք որը վկայում է «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» երկի որակյալ հայկաբան բնույթի մասին:

Աշխատանքի վերջում համախումբ ներկայացնենք «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» թարգմանական երկում կիրառված նորահայտ կազմություններն ըստ այբբենական կարգի՝ իրենց բառային նշանակություններով՝ ակնկալելով, որ այս բառերը նոր կիրառություններ ձեռք կբերեն 21-րդ դարում:

Նորագյուտ բառեր

1. **Ախտանալի** (էջ 118) - հիվանդաբեր
2. **Ակնյայտնագոյն** (էջ 172) – հույժ ակնհայտ
3. **Ակնունելի** (էջ 125) – սպասելի, ակնկալելի
4. **Անբանաւորագոյն** (էջ 104) – անմտագոյն, խոսելու շնորհից իսպառ գուրկ
5. **Անխաղաղանալ** (էջ 99) – տագնապել, խաղաղությունը կորցնել
6. **Անպարագրել** (էջ 194) – անսահմանությունը սահմանափակել, ընդգրկել
7. **Առաջախնամութիւն** (էջ 48) - նախախնամություն
8. **Առաջակամ** (էջ 202) – առաջին, անդրանիկ
9. **Առաջակարկառ** (էջ 76) – դեպի առաջ պարգած, մեկնած
10. **Արինադրեալ** (էջ 114) - սահմանված
11. **Բժշկականագոյն** (էջ 197) – բժշկական, բուժիչ

12. **Դալնկագոյն** (էջ 90) – դալուկ, սփրթնած
13. **Երկոսեալ** (էջ 47) – երկուսն էլ միասին վերցված
14. **Ընդմտեալ** (էջ 175)– միջամուխ, խորամուխ եղած
15. **(Ի) բաց ընկենլի** (էջ 175) - դէն նետելի, անպիտան
16. **Կարատացեալ** (էջ 66) – կարիքավոր, ինչ-որ բանի կարոտ
17. **Հակառակափակութիւն** (էջ 148) – դիմադրություն, ընդդիմություն
18. **Յաւելագործութիւն** (էջ 135) – լրացուցիչ աշխատանք, հավելյալ ջանք
19. **Յաւտաշարժ** (էջ 47) – մշտաշարժ
20. **Յոքնատեսակ** (էջ 107) – բազմատեսակ
21. **Նախավաստակեալ** (էջ 98) – սկզբնապես, ի վերուստ տրված,
22. **Չափատրագոյն** (էջ 208) – չափասահմանված, նախատեսված չափով
23. **Պատճառագիտութիւն** (էջ 99) – պատճառների իմացություն, խորագիտություն
24. **Վայրահայեցութիւն** (էջ 202) – ներքև նայելը, ստորանկում
25. **Տնկաւորութիւն** (էջ 194) - սերմանում
26. **Տրտմեցուցանելի** (էջ 108) – տրտմություն, տխրություն պատճառող
27. **Ուժգնական** (էջ 207) – ուժգին, հուժկու
28. **Փողողոշաձեւաբար** (էջ 209) – հյուսքերի ձևով, միահյուսված
29. **Քաջահաւասար** (էջ 135) – լիովին հաւասար, նույնարժէք

Dilbaryan Narine – Newly discovered words of the Old Armenian language in the Armenian translation work Gregory of Nyssa "On the Making of Man".- St. Gregory of Nyssa, the father, the teacher - doctor ecclesiae of the Armenian and general

Christian church, wrote his famous work "On the Dispensation of Man" in 379 in the ancient Greek language, in Old Armenian this work was translated presumably 719 in Constantinople by Stepanos Syunetsi and David Yupatos. In this study we wrote out 29 new lexical units that are not fixed in the dictionaries of the Old Armenian language, as well as identified 83 neologisms that are witnessed in the New Haykazyan dictionary only with the note of Gr of Nyssa. The vocabulary of this work, which was translated at the end of the philhellenist school, is very imaginative, rich in synonymous constructions, philosophical and anatomical terms, many of which belong to the pen of translators. We uncovered the semantic field of newly-discovered words, studied their construction, proving that the post-classical grabar had a large word-building potential.

Дилбарян Нарине – Нововыявленные слова древнеармянского языка в армянском переводе труда Григория Нисского «Об устройении человека». – Святитель, отец и учитель - doctor ecclesiae армянской и общехристианской церкви Григорий Нисский свой известный труд «Об устройении человека» написал в 379 г. на древнегреческом языке, на древнеармянский язык это произведение было переведено предположительно 719 г. в Константинополе Степаносом Сюнеци и Давидом Юпатосом. В данном исследовании мы выписали 29 нововыявленных лексических единиц, которые не зафиксированы в словарях древнеармянского языка, так же выделили 83 неологизма, которые засвидетельствованы в Новоайказянском словаре только с отметкой Гр.Нисский. Лексика этого произведения, которое было переведено на закате грекофильской школы, очень образна, богата синонимичными конструкциями, философскими и анатомическими терминами, многие из которых принадлежат перу переводчиков.

Զարգայան Հովհաննես (Հայաստան, «Տաթև» ԳԿՀ)

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Թարգմանությունն բառը (translation, перевод) ունի մի քանի իմաստ: Դրանցից մեկն այն է, երբ նշանային համակարգով չձևավորված տեղեկույթը (կամ հույզը, ապրումը, զգացմունքը) արտահայտվում, հաղորդվում է տվյալ ընկալողի համար մատչելի որևէ նշանային համակարգով (օրինակ՝ դիմախաղով, շարժումների, բառերի կամ արվեստի լեզվով):

Երկրորդն այն է, երբ նշանային մի համակարգով արտահայտված տեղեկույթը փոխարկվում է նշանային մի այլ համակարգի:

Երրորդը նախորդի մի մասնավոր դեպքն է, երբ մարդկային մի լեզվով (կամ նրա մի տարբերակով) արտահայտված տեղեկույթը վերարտադրվում է մարդկային մեկ այլ լեզվով (կամ նրա մի տարբերակով): Սա կոչենք լեզվական թարգմանություն:

Ներկայումս ամենից տարածվածն է լեզվական թարգմանության այն ըմբռնումը, որը վերաբերում է գեղարվեստական, գիտական կամ այլաբնույթ խոսքի բանավոր կամ գրավոր, համաժամանակյա կամ տարժամանակյա բովանդակային, ոճական և կառուցվածքային փոխարկմանը տարբեր լեզուների միջև: Սա կոչենք միջլեզվական թարգմանություն¹: Դա միջլեզվական հաղորդակցումն է, որը տարալեզու անձանց կամ հանրությունների միջև լեզվական անջրպետի հաղթահարման միջոց է:

Մասնավորապես գեղարվեստական թարգմանությունը համարվում է ստեղծագործության մի ձև, երբ մի լեզվով ստեղծված երկի հասկացութային բովանդակությունը (այլև կառուց-

¹ Շարժանկարի թարգմանությունը կոչվում է կրկնօրինակում:

վածքն ու պատկերային համակարգը) համարժեքորեն արտահայտվում է մեկ այլ լեզվով²:

Թարգմանությունը կարող է լինել նաև նույն լեզվի սահմաններում՝ բարբառից գրական լեզու, հին տարբերակներից նորը, գրական լեզվի մի ճյուղից մյուսը: Սա կոչենք ներլեզվական թարգմանություն: Թե՛ միջլեզվական, թե՛ ներլեզվական թարգմանության գլխավոր նպատակը տվյալ խոսքը լիարժեք հասկանալի և ընկալելի դարձնելն է այն անձի կամ հանրության համար, ում հասցեագրված է: Այստեղ ծագում է թարգմանության և բնագրի համազորության ու համարժեքության չափի խնդիրը: Բնագրի ու թարգմանության հասցեատերերը, որպես կանոն, նույնը չեն լինում: Նրանք այս կամ այն չափով կարող են տարբեր լինել իրենց մշակույթով, ըմբռնումներով, կարողություններով, պահանջներով: Թարգմանությունը հասցեատիրոջ վրա բնօրինակին համազոր ներգործելու համար պետք է համապատասխանեցված լինի պատմական ու մշակութային տվյալ իրավիճակին, հասցեատիրոջ կարողություններին ու պահանջներին: Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է լինում տարբեր փոփոխությունների ենթարկել տվյալ խոսքը բնօրինակի համեմատությամբ՝ այս կամ այն չափով զանց առնելով կառուցվածքային, ոճական, անգամ բովանդակային համարժեքությունը: Հետևաբար առաջանում են անհամարժեք թարգմանության տարատեսակներ:

1. Փոխադրություն, երբ փոխվում է բնագրի ոչ միայն լեզուն, այլև ոճը, խոսքային ու մշակութային միջավայրը, մասամբ՝ բովանդակությունը և կառուցվածքը, արվում են կրճատումներ ու հավելումներ³:

2. Հարմարեցում, երբ տվյալ գրվածքը (տեքստը) կառուցվածքով, ծավալով և հատկապես լեզվի բարդության

² Տե՛ս Է. Ջրբաշյան, Հ. Մախչանյան, *Գրականագիտական բառարան*, Ե., 1980, էջ 124-125:

³ Տե՛ս նույն տեղում՝ էջ 125:

աստիճանով փոփոխության է ենթարկվում ըստ հասցեատիրոջ հնարավորությունների և պահանջների⁴:

3. Վերապատում, երբ կատարվում է գրական երկի ժանրային փոփոխություն՝ չափածո երկի արձակ վերաշարադրում, պատմողական երկի թատերական բեմադրություն, բանահյուսական ստեղծագործության գրական մշակում և այլն:

4. Գրական երկի էկրանավորում՝ կինոբեմադրություն:

5. Մեկնություն, երբ տվյալ գրվածքի ասեղիքը տվյալ հասցեատիրոջ ըմբռնումներին հասանելի դարձնելու համար հավելվում են անհրաժեշտ բացատրություններ, մեկնաբանություններ:

Ցանկացած լեզվական հանրություն բազմաշերտ է: Ամեն շերտ ունի իր ընկալումներն ու պահանջները: Համապատասխանաբար պետք է տարբեր լինեն նրանց հասցեագրված թարգմանությունները: Մի շերտին բավարարում է համարժեք թարգմանությունը, մի այլ շերտի՝ հարմարեցումը, երրորդին՝ վերապատումը և այլն: Ահա թե ինչու նույն բնօրինակը կարող է ունենալ մեկից ավելի թարգմանություններ, որոնք տարբերվեն իրենց հասցեատիրոջով, գործաբանական մոտեցմամբ, նպատակադրումով և մեկնաբանությամբ:

Թարգմանության ցանկացած դրսևորման դեպքում բնագիրը վերջին հաշվով մնում է անխաթար և զանգվածների մատչելի: Թարգմանությունը հուշարձանի վերակառուցում չէ, որ բնօրինակի անվերադարձ կորստի կամ անվերականգնելի խաթարման վտանգ չի նի: Թարգմանությունը բնագրին զուգահեռ ստեղծված մի նոր տարբերակ է, որ ունենում է իր ինքնուրույն կյանքը: Ավելին, հաջող թարգմանությունը երկարացնում է բնագրի կյանքը, ընդլայնում նրա ճանաչման ոլորտը, նպաստում հանրամատչելիությանը: Դա վերաբերում է ոչ միայն միջլեզվական, այլև ներլեզվական թարգմանու-

⁴ Стé u **Комиссаров В. Н.**, *Современное переводоведение*, М., изд. «ЭТС» 2002, էջ 138-140:

թյանը՝ վերջինիս բոլոր տարատեսակներով հանդերձ: Թարգմանության բոլոր տեսակների հիմնական նպատակը բնագրի գաղափարների ու հռչակի տարածումն է. որքան շատ ու բազմատեսակ թարգմանություն, այնքան մեծ տարածում:

Թարգմանության իրականացումը մեծ մասամբ պայմանավորված է պահանջարկի առկայությամբ: Երբեմն էլ թարգմանության համար լինում է պատվեր՝ անկախ պահանջարկից: Հաճախ թարգմանությունը՝ որպես առաջարկ, կարող է ինքը առաջ բերել պահանջարկ: Այդպիսի դեր կարող են կատարել լեզվական կամ բովանդակային հնացածության պատճառով մոռացված երկերի արդիականացված հարմարեցումները: Այսպես, տարբեր բարբառներով պատմված ու գրանցված ժողովրդական բանահյուսական երկերի՝ գրական լեզվով վերամշակումները, որպես կանոն, անհայտությունից դուրս են բերում բազմաթիվ արժեքավոր ստեղծագործություններ⁵, դրանց նկատմամբ ձևավորվում է որոշակի պահանջարկ, դրանք թարգմանվում են տարբեր լեզուներով և լայն տարածում ստանում: Նույնը կարող է լինել լեզվով հնացած ու մոռացված դասական երկերի պարագայում:

Վերջին տարիներին բանավեճեր են բռնկվում ներլեզվական թարգմանության որոշ տարատեսակների նպատակահարմարության շուրջը: Դա նշանակում է, որ կա համապատասխան պահանջարկ, բայց դրա սպասարկմանը խոչընդոտում են ինչ-ինչ կարծրատիպեր:

⁵ Օրինակ՝ Հ. Թումանյանի, Ա. Բսահակյանի, Ղ. Աղայանի, Ս. Ջորյանի և այլոց մշակած ժողովրդական հեքիաթները, որոնք հրապարակվում են որպես նրանց հեղինակային երկեր, Ա. Նազիկյանի, Ա. Ղազիյանի, Ս. Քոչարյանի մշակումները, որոնք հրապարակվում են որպես ժողովրդական հեքիաթներ (քանի որ կառուցվածքային ու բովանդակային փոփոխություններն աննշան են), Ս. Հարությունյանի մշակած առասպելները, Ա. Մարգարյան մշակած առակները, Ն. Թովմասյանի մշակած առածները, Ա. Ղանալանյանի մասամբ մշակած ավանդությունները և այլն:

Հայ դասական գրականության մի կարևոր մասը արդի գրական արևելահայերենով չէ, այլ գրաբար է, միջին հայերեն, արևմտահայերեն, տարբեր բարբառներով, բարբառախառն գրականով կամ պարզապես հնացած աշխարհաբարով: Դրանք այս կամ այն չափով անմատչելի են այսօրվա հայաստանցի ընթերցող զանգվածներին: Հետևաբար մեր դասական արժեքներն ընթերցողին կարելի է վերադարձնել միայն լեզվական խոչընդոտի վերացումով, այսինքն՝ արդի գրական արևելահայերենի վերածելով:

Ներկայումս անառարկելի է, որ անհրաժեշտ է թարգմանել գրաբարով կամ Նոր Նախջևանի բարբառով գրված երկերը (Գրիգոր Նարեկացի, Ռ. Պատկանյան և այլն): Մյուս դեպքերում կա՛մ առարկություններն են շատ, կա՛մ պարզապես համապատասխան թարգմանությամբ զբաղվող չկա:

Դրա հետևանքով մեր դասական գրականության բազմաթիվ արժեքավոր ստեղծագործություններ փոշոտված մնում են հնադարաններում՝ այլևս չծառայելով մեր ազգին: Անհեթեթ իրողություն է այն, որ օտար ժողովուրդների դասական երկերը տարիքային տարբեր խմբերի համար հարմարեցված տարբերակներով թարգմանվում են հայերեն ու վաճառվում մեր գրատներում⁶, իսկ հայ դասականների երկերի նմանատիպ հարմարեցումներ կա՛մ չկան, կա՛մ հալածվում են իբրև «փորձանք, խայտառակություն, չարիք, վանդալիզմ»:⁷

⁶ Օրինակ՝ մինչև 12 տարեկանների համար՝ Ռ. Մթիվենսոնի «Գանձերի կրողին», Վ. Շեքսպիրի «Մակբեթ», «Ռոմեո և Ջուլիետ», «Փոթորիկ», «Ամռան գիշերվա երազ», Լ. Ֆրենք Բաուսի «Օզի կախարհը», Լ. Մեյ Էլքոթի «Փոքրիկ տիկիններ», Յ. Սպայրիի «Հայդի» ստեղծագործությունների համառոտ և նկարագրող վերապատումները, Չ. Դիքենսի «Օլիվեր Թվիսթ», Ջ. Լոնդոնի «Սպիտակ ժանիքը», Լ. Քերոլի «Ալիսը հրաշքների աշխարհում», Կ. Կոլոդիի «Պինոկիո» երկերի սեղմված տարբերակները:

⁷ Տե՛ս, օրինակ, <https://www.akumb.am/showthread.php/31417-Սեղմավեպ>, <http://www.aravot.am / 2009/07/03/361428/>:

Երկրորդ անհեթեթությունն այն է, որ, օրինակ, Նահապետ Քուչակի, Խ. Աբովյանի, Գ. Սունդուկյանի երկերը ներկայումս ռուսալեզու հայերին շատ ավելի մատչելի ու հասկանալի են, քան հայալեզու հայերին: Մեր գրականագետները, իբր ձրգտելով ընթերցողին հաղորդակից դարձնելու բնագրի լեզվառճական առանձնահատկություններին ու բներանգին (կոլորիտին)՝ նրան ընդհանրապես վանում ենք հայ դասական գրականությունից:

Ժամանակի ընթացքում լեզվով, ոճով, այլև ճաշակով հնացած գրական երկը որպես պատմական արժեք է ընկալում գրականագետը: Բայց շարքային ընթերցողն ուզում է կարդալ այն, ինչ իրեն մատչելի է, հասկանալի, ընկալելի: Որևէ ստեղծագործության՝ պատմական արժեք լինելը նրա համար փաստարկ չէ: Այդ նույն փաստարկով պետք չէ տանջել նաև դպրոցականին: Դա հակասում է մանկավարժության սկզբունքներին: Դպրոցականը մասնագետ չէ, ոչ էլ մասնագիտական բուհի ուսանող: Նա կարող է ընկալել այն, ինչ իրեն մատչելի է, հետաքրքիր ու դուրեկան: Ուրեմն եթե ինչ-որ բան ուզում ենք մատուցել դպրոցականին կամ շարքային ընթերցողին, ապա նախ պետք է նրա ընկալումներին, հետաքրքրություններին ու ճաշակին հարմարեցնենք: Մանկավարժական նպատակներով կարելի է մասամբ զոհաբերել երկի լեզվական, երբեմն նաև ոճական առանձնահատկությունները՝ փրկելու և տեղ հասցնելու համար բովանդակությունը:

Այսօր թարգմանում ենք Նարեկացի, քանի որ դրա բնագիրը ժամանակակից միջին ընթերցողին հասկանալի է 10%-ով: Նահապետ Քուչակը հասկանալի է 50%-ով, իսկ Աբովյանը՝ 70%-ով: Բայց 30% անհասկանալիությունը բավարար է ցանկացած ոչ մասնագետ ընթերցողի վանելու համար:

Ահա թե ինչու, օրինակ, «Վերք Հայաստանի»-ի բնագիրը լիարժեք ընկալելի և գրավիչ է արևելահայ ընթերցողի հագիվ մեկ հինգհարյուրերորդի համար (0,2 %), արևմտահայերեն երկերը՝ մեկ հարյուրերորդի (1 %), Բաֆֆին, Մուրացանը, Շիր-

վանգադեն, Նար-Դոսը՝ մեկ հիսուներորդի (5 %), Դեմիրճյանը, Թոթովենցը՝ մեկ տասներորդի (10 %) համար: Հասարակության մյուս շերտերը այդ արժեքներին անհաղորդ չթողնելու համար պետք է դրանք մատուցել այլ՝ ավելի մատչելի ու գրավիչ ձևերով՝ հարմարեցված, վերապատմված, կրճատված, թարմացված, լեզուն արդիականացված, էկրանացված (այդ թվում՝ մուլտիպլիկացիոն ու անիմացիոն) տարբերակներով: Այդպիսով ոչ միայն կհանրայնացվեն դասական հեղինակների գաղափարները, այլև հետաքրքրություն կառաջանա դրանց բնօրինակի նկատմամբ: Օրինակ՝ հայերեն թարգմանված են ու միաժամանակ վաճառքում կան Յ. Սպայրիի հանրահայտ «Հայդի» վեպի թե՛ ամբողջական, թե՛ համառոտ վերապատմված տարբերակները, և վերջինիս ընթերցողների մեծ մասը ձեռք է բերում նաև ամբողջական տարբերակը՝ վերընթերցման համար: Նույնը Շեքսպիրի, Դիքենսի ու այլ հեղինակների դեպքում:

Ընթերցողները տարբերվում են նաև իրենց հետաքրքրություններով: Օրինակ «Վերք Հայաստանի»-ն ունանց կհետաքրքրի իր արկածային դիպաշարով, մյուսներին՝ իր պատմահայրենասիրական գաղափարախոսությամբ, այլոց՝ իր կենցաղագրությամբ: Հետևաբար իմաստ ունի այդ վեպը տարբեր ձևերով հարմարեցնելու մերթ առաջին, մերթ երկրորդ, մերթ երրորդ տիպի ընթերցողի համար՝ ամեն անգամ շեշտը դնելով տվյալ հասցեատիրոջ հետաքրքրության վրա:

Թարգմանությունը ոչ միայն ազգամիջյան շփման ու մշակույթների փոխհարստացման միջոց է, այլև մշակութային, քաղաքական ու կրոնական անարյուն պատերազմի գործիք: Ծավալապաշտ ազգերն ու կայսերապաշտ երկրները իրենց հավակնությունների թիրախ դարձրած ազգերին ու երկրներին առանց արյունահեղության իրենց ենթարկելու, նվաճելու և վերջին հաշվով կուլ տալու լավագույն միջոց են դիտում մշակութային ներխուժումն ու ձուլումը: Այդ նպատակով ոչ միայն բացահայտ ու գաղտնի խրախուսվում են որոշ կարգի թարգմանություններ, իրականացվում են դրամաշնորհային

ծրագրեր, այլն անվճար տարածվում են պատրաստի թարգմանություններ: Հիշենք աղանդավորական գրականության տարածումը ամենատարբեր լեզուներով: Հիշենք ծավալապաշտ երկրների եթերային քարոզչությունը թիրախ երկրների լեզուներով:

Հայաստանում օրենքը պահանջում է, որ օտարալեզու կինոնկարները եթեր հեռարձակվեն հայերեն կրկնօրինակմամբ կամ համաժամանակյա թարգմանությամբ: Դա հայկական մշակույթը և հատկապես հայոց լեզուն պաշտպանելու նպատակ ունի: Բայց առանց համապարփակ մշակութային քաղաքականության և համապատասխան օրենսդրության՝ նշված պահանջը հաճախ տալիս է հակառակ արդյունք: Թարգմանությունը դառնում է օտարոտի մշակույթների, վտանգավոր գաղափարների, բռնության, անբարոյականության ու այլասերման քարոզչության գործիք: Չթարգմանված ֆիլմը ոչ բոլորին է մատչելի: Մինչդեռ թարգմանվածի դեմ լեզվական խոչընդոտ չկա:

Օտար մշակույթի ներխուժումը իր հետ բերում է նաև օտար բարքեր, մտածելակերպ, հոգեբանություն՝ վտանգելով տվյալ ժողովրդի ազգային կերպը: Հետևաբար խիստ կարևոր խնդիր է թարգմանության գաղափարախոսություն և համապատասխան քաղաքականություն ունենալը: Անհրաժեշտ են հրատակ սկզբունքներ և չափանիշեր, թե ինչը պետք է կամ կարելի է թարգմանել:

Այսօր մի շարք երկրներ, ժողովուրդներ ու կազմակերպություններ զբաղված են համակարգչային ինքնաշխատ (ավտոմատ) թարգմանիչների ստեղծմամբ: Արդեն կան որոշակի հաջողություններ: Սակայն դեռ պարզ չէ, թե դրանց զանգվածային կիրառումը ինչ բացասական հետևանքներով է հղի:

Թարգմանչական գործունեության ֆինանսավորման ներկայիս համակարգի համաշարում ամեն մի թարգմանություն պատվիրվում և կատարվում է՝ որոշակի շահերից ելնելով, որոնք ոչ միշտ են բացահայտ և անկեղծ:

Նախկինում, երբ թարգմանությունը քչերի մենաշնորհն էր, նրանք կարողանում էին որոշ քաղաքականություն կիրառել: Օրինակ՝ 19-րդ դարում Մխիթարյան միաբանները եվրոպական գրականությունը հայերեն թարգմանելիս խուսափում էին գաղափարապես վտանգավոր թվացող երկերից, բարոյագիտական նպատակներով որոշ կրճատումներ էին անում թարգմանվող երկերում: Խորհրդային տարիներին արևմտյան ֆիլմերի կրկնօրինակված տարբերակներում կրճատվում էին երոտիկ հատվածները, իսկ բռնություն քարոզող, պոռոն և սարսափ ֆիլմերն ընդհանրապես չէին թարգմանվում և արգելված էին: Այդ նույն քաղաքականությունն այժմ որոշ չափով վարում են մի շարք իրենց հարգող երկրներ (Կանադա, Գերմանիա, Իրան, Թուրքիա և այլն): Մինչդեռ Հայաստանի պես անփորձ և պաշտպանվելու բավարար գորություն չունեցող երկրները դառնում են մշակութային օտար հարձակումների զոհ և անգամ իրենց սուղ ազգային պաշարները վատնում են թշնամու ջրադացին ջուր լցնելու համար:

Մենք՝ հայերս, թարգմանական առաջին լուրջ շարժումն ու դպրոցը ստեղծել ենք դեռևս 5-րդ դարում: Այդ շարժումն ուներ իր գաղափարախոսությունն ու քաղաքականությունը, որոնք խստորեն ազգանպաստ էին: Այժմ, սակայն, թարգմանության ծավալներով ու դրանց բովանդակության վերահսկումով շատ ենք հետ մնացել մի շարք ժողովուրդներից: Ուստի անհրաժեշտ է մշակել թարգմանական նոր հայեցակարգ ու պետական ծրագիր:

Փաստելով թարգմանական արդի քաղաքականության անհրաժեշտությունը՝ նշենք մի քանի կարևոր պահանջներ և ուղենիշեր:

1. Թարգմանական քաղաքականությունը պետք է համահունչ և փոխկապակցված լինի լեզվական ու մշակութային քաղաքականության հետ:

2. Թարգմանել պետք է այն ամենը, ինչ թույլատրելի է մշակութային քաղաքականության տեսակետից:

3. Խրախուսելի են թարգմանության բոլոր տարատեսակները (ներառյալ՝ հարմարեցումը, փոխադրությունը, վերապատումը, մեկնությունը)՝ կախված թարգմանության նպատակից և հասցեատիրոջից:

4. Թարգմանել պետք է բնագրից և միայն դրա անհնարիության դեպքում՝ միջնորդ լեզվից:

5. Ցանկացած գրվածք պետք է թարգմանել հետևողականորեն: Տառադարձել կարելի է միայն հատկանունները և տարաշխարհիկ անվանումները:

6. Անհրաժեշտ է մշակել թարգմանության բարեխղճության որոշման չափանիշեր և դրանց կիրառման ու վերահսկման մեխանիզմներ:

7. Օտար լեզուներից հայերեն առաջնահերթ թարգմանության ենթակա են՝

- գեղարվեստական բարձր արժեք և ուսուցողական ու դաստիարակչական դրական նշանակություն ունեցող ստեղծագործությունները,

- համաշխարհային դասականների և արդի առաջատար գրողների երկերը, եթե չեն հակասում նախորդ ենթակետի պահանջներին,

- հայ իրականությանը դրականորեն առնչվող բարձրարժեք երկերը,

- գիտական արժեք ունեցող ու ճշմարտացի տեղեկատվական և ուսումնական գրականությունը, հանրագիտարանային նյութերը:

8. Հայերենից օտար լեզուներ առաջնահերթ թարգմանության ենթակա են՝

- հայ իրականությունը դրականորեն ներկայացնող գեղարվեստական բարձրարժեք երկերը,

- Հայաստանին, հայոց պատմությանը, լեզվին, մշակույթին վերաբերող գիտական, ուսումնական ու տեղեկատվական գրականությունը,

• քաղաքական, քաղաքակրթական ու մշակութային պատերազմներին դիմակայող ու հակակշռող քարոզչական ու ոչ քարոզչական տարաբնույթ գրվածքները:

9. Հայերենից օտար լեզուներ թարգմանությունները անհրաժեշտ է իրականացնել ծրագրված՝ օգտագործելով նաև դրամաշնորհային եղանակը:

10. Պետք է խրախուսել ներլեզվական թարգմանությունները՝ բոլոր տարատեսակներով հանդերձ (հարմարեցում, սեղմում, վերապատում և այլն):

Zakaryan Hovhannes – Translation and Translation Policy. – The word *translation* (перевод, թարգմանություն) has several meanings. Currently, the most common is the notion of language translation, which refers to oral or written, synchronic or diachronic content, stylistic and structural transfer of a fiction, scientific or other type of speech (text) between different languages. However, translation is also possible within the same language: from a dialect to a literary language, from an older version of the language to a modern one, from one branch of the literary language to another. In a broad sense, adaptation, interpretation, arrangement, genre transformation, screening of literary works are also translations.

Translation is not only a means of interethnic contacts and mutual enrichment of cultures, but also an instrument of cultural and political war. Therefore, it is very important to have a translation ideology and an appropriate policy. Clear principles and criteria are needed for what is necessary or permissible to translate.

Закарян Оганес – Перевод и переводческая политика. – Слово *перевод* (translation, թարգմանություն) имеет несколько значений. В настоящее время наиболее распространено то понимание языкового перевода, которое относится к устному или письменному, синхронному или диахронному содержательному, стилевому и структурному переносу художественной, научной или иного вида речи (текста) между различными языками. Однако перевод возможен также в пределах одного языка: с диалекта на литературный язык, с древнего варианта языка на современный, с

одной ветви литературного языка на другую. В широком смысле переводом являются также адаптация, интерпретация, переложение, жанровая трансформация, экранизация литературного произведения.

Перевод - не только средство межнациональных контактов и взаимообогащения культур, но и инструмент культурной и политической войны. Следовательно очень важно иметь переводческую идеологию и соответствующую политику. Необходимы четкие принципы и критерии того, что нужно или допустимо перевести.

**ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑՈՒ «ԳԻՐՔ ՊԱՀՈՑ»-Ի ՀԱՅԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Նորաբանություններն այն բառերն ու դարձվածքներն են, որոնք ստեղծվում կամ փոխառվում են նոր հասկացություններ արտահայտելու համար: Նորամուտ այս բառերն արտացոլում են քաղաքական, հասարակական և մշակութային կյանքում տեղի ունեցող փոփոխությունները: Դրանց միջոցով ընդլայնվում են բառակազմության հնարավորությունները և ստեղծվում են բառակազմական նոր միջոցներ ու եղանակներ, լեզվառճական նոր դրսևորումներ:

Հասարակական նոր հարաբերությունների, գիտատեխնիկական զարգացման ու հասկացությունների բառային նոր անվանումները պատճառ են դառնում լեզվի բառային կազմի փոփոխության, այն է՝ նոր բառերի ավելացում, հնացած բառերի կորուստ, որոշ քանակով բառերի իմաստային փոփոխություն: Դեռևս ընդհանրացում չստացած նոր բառերի գործածումը կոչվում է նորաբանություն (նեոլոգիզմ), որով համալրվում և հարստանում է լեզվի բառապաշարը¹:

Հայերենի նորաբանությունների կազմը համալրվել է նաև թարգմանական գրականության շնորհիվ: Դեռևս հինգերորդ դարում՝ հատկապես Թարգմանչաց շարժման Ա (V դ. առաջին կես) և Բ շրջաններում (V-VIII դ. սկիզբ), հունարենից և ասորերենից թարգմանվել են դավանաբանական, իմաստասիրական, քերականական, ճարտասանական և այլ կարգի աշխատություններ, որոնց շնորհիվ ստեղծվել են բազմաթիվ նոր բառեր ու տերմիններ, դարձվածային նոր միավորներ: «Գիրք պահոց»-ի խրատներն ու ճառերը ևս հայերեն թարգմանվել են

¹ Է. Բ.Աղայան, *Լեզվաբանության հիմունքներ*, Ե., 1978, էջ 387:

այդ շարժման Ա և Բ շրջաններում: Ժողովածուն, որ հայտնի է նաև «Վասն Պահոց», «Պահոց», «Յաղագս ճգնաւորաց» խորագրերով, ենթադրվում է, որ խմբագրվել է 650-660 թթ., իսկ նրա որոշ բնագրեր, կրելով խմբագրական միջամտություններ, հեռացել են իրենց նախնական վիճակից և օտար բնագրի տպավորություն են թողնում: Այն պահոց է կոչվել ըստ «Յաղագս պահոց» ճառի²: Երկը աստվածաբանության սիրված ձեռնարկներից է, ճգնակեցական բնույթի այնպիսի ժողովածու, որը մեծ ազդեցություն է ունեցել V-XIII դդ. հայոց ինքնուրույն գրականության ձևավորման ասպարեզում:

Ժողովածուի որոշ թղթեր և ճառեր միայն հայերեն թարգմանությամբ են պահպանվել: Ինչպես արձանագրում է Լ. Հովհաննիսյանը «Հայ թարգմանական գրականութեան բառապաշարը» աշխատության մեջ. «Հայ թարգմանական գրականութիւնը արժեւորում է այն հանգամանքով, որ շատ գործերի յունարէն, ասորերէն բնագրերը չկան, եւ համաշխարհային գիտական մտքի համար յաճախ հայերէն թարգմանութիւնը առաջին բնագրի դեր է կատարում»³:

Բարսեղ Կեսարացին (329-379) IV դարի հայտնի երեք կապաղովկիացիներից մեկն է՝ Գրիգոր Նյուսացի, Գրիգոր Նազիանզացի և Բարսեղ Կեսարացի: Նա եղել է Կեսարիա քաղաքի արքեպիսկոպոս (370 թ-ից), աստվածաբան, աստվածաբանական հմուտ ճարտասան, եկեղեցական գործիչ, գրող և հեղինակ է մեկնությունների, դավանաբանական գործերի, ճառերի, ներբողների, քարոզների, զրույցների, շուրջ 360 և ավելի նամակների: Ուշագրավ է վանականների համար գրված վարքագրական կանոնադրությունը, որն ընդունվել է նաև հայոց եկեղեցու կողմից: Այնպես, ինչպես Կապաղովկիայում, հայոց

² Ս. Բարսեղ Կեսարացի, *Գիրք Պահոց, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին*, 2008, էջ 12:

³ Լ. Յովհաննիսեան, *Հայ թարգմանական գրականութեան բառապաշարը*, Ե., 2007 թ., էջ 10:

կաթողիկոս Ներսես Մեծը 4-րդ դարում Հայաստանում մըտցնում է նույն այդ կանոնադրությունը, ըստ որի՝ վանականները ոչ միայն ֆիզիկապես, այլև մտավոր աշխատանքով պետք է զբաղվեին, ուստի Ներսես Մեծի հիմնած այդ վանքերը դառնում են դպրոցներ⁴, որտեղ սովորում էին հունարեն, ասորերեն և թարգմանվում բարոյախրատական ճառեր, սրբախոսական երկեր, հայրաբանական աշխատություններ, պատմագրություններ, գրվում ինքնուրույն գրքեր: IV դարի նշանավոր ճարտասան Լիբանիոսի բնութագրմամբ «նա Հռոմեոս է, Պլատոն է, Արիստոտել է, որն ամեն ինչ գիտի», քանի որ «յոժ գիտնական էր, հանճարեղ և համեղաբան»⁵:

Բարսեղ Կեսարացին իր կապադովկյան գործունեության տարիներին, ըստ վկայությունների, եղել է հայոց լեռնաշխարհում՝ մասնավորապես Փոքր Հայքում, անդրադարձել է ամենատարբեր հոգևոր խնդիրներին՝ տեղում քննելով այս կամ այն հարցը: Նա մտահոգված է եղել Մեծ ու Փոքր Հայքում սոցիալական, մշակութային, իրավական, քաղաքական և հատկապես եկեղեցական հարաբերություններին առնչվող խնդիրների լուծմամբ⁶:

Կան տարբեր տեսակետներ ժողովածուի թարգմանության բնույթի, ժամանակի և թարգմանիչների ինքնության վերաբերյալ: Գ. Զարբհանայանի համոզմամբ, Բարսեղ Կեսարացու գործերի զգալի մասը, թարգմանվել են «յոսկեղէն դարու մեր մատենագրութեան, և այլք կրտսերագոյնք ժամանակաւ»: Մեկ այլ տեղեկության համաձայն՝ «Կասն Պահոց» երկը թարգմանել է մի կրոնավոր՝ Ստեփանոս անունով: Հայ մատենագրության մեջ, սակայն, Ստեփանոս անվամբ շատ մատենագիրներ են եղել, որոնք զբաղվել են նաև թարգմանչական

⁴ Տե՛ս Մ. Աբեղյան, *Երկեր*, հ. Գ., Ե., 1968, էջ 100:

⁵ Գ. Մուրադյան, *Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ*, Ե., 1976, էջ 59:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 120:

գործունեությամբ: Իսկ թե որ դարի թարգմանիչ է Բարսեղ Կեսարացու սույն երկի թարգմանիչ Ստեփանուսը, ենթադրվում է, որ նա VIII դարի մատենագիր Ստեփանոս Սյունեցին է, որն ուսումնառության նպատակով եղել է Հռոմում, Աթենքում և այլուր, տիրապետել է հունարենին և լատիներենին և Աթենքում եղած ժամանակ կատարել թարգմանություններ⁷:

Ըստ ՆՀ բառարանագիրների՝ Բարսեղ Կեսարացու ճաները «...են թարգմանութիւնք նախնեաց ի ք դարու. Բայց կան և ի նոսա ինչ ինչ թարգմանեալ ի զ և ի է դարու տարապայման հելլենաբանութեամբ. զոր յայտ առնեն վկայութիւնքն յառաջ բերեալք ըստ բառից»⁸:

Վիեննայի Մխիթարյանների համոզմամբ հինգերորդ դարի առաջին կեսի մատենագրական գրականության լեզուն իր ոճով, բառապաշարով, մասամբ նաև քերականորեն տարբերվում է այդ դարի երկրորդ կեսի լեզվից: Ըստ այդմ՝ այն բաժանվեց «ոսկեդարյանի» և «հետոսկեդարյանի»: Հետագայում «հետոսկեդարյան» շրջանից առանձնացվում է հունաբան թարգմանությունների շրջանը, որին նախորդած թարգմանությունները որակվեցին որպես «նախահունաբան» թարգմանություններ: Գ. Մուրադյանը բերելով Գ. Լաֆոնտենի և Բ Կուլիի դիտարկումները՝ նշում է, որ թարգմանական գրականության դասական և հունաբան շրջանների միջև եղել է մի միջանկյալ փուլ, որի ընթացքում կատարված թարգմանությունների լեզուն բնութագրվում է հատկապես շարահյուսական հունաբանություններով: Բառապատճենման սկզբունքը դեռևս տարածված չէր, արհեստական քերականական ձևերն ու նախածանցավոր բառերի պատճենումների եզակի նմուշներ են արձանագրված: Այս դիտարկումները հիմնավորում է թարգմանական գրականության հունաբանությունների փաստացի բնագրային օրինակներով՝ արձանագրելով նաև Բարսեղ Կեսարացու երկերի

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 178-181:

⁸ ՆՀԲ, Առաջաբան, էջ 10:

հայերեն թարգմանություններից քաղած նմուշներ: Գ. Մուրադյանի բնութագրմամբ այդ բառերն իրենց կառուցվածքով և իմաստով հունարան են՝ *առզնեմ* «ավելացնել», *բաղկացումն*, *յարացոյց* «օրինակ», *ղիւրադարձ*, *ղիւրակոչելի*, *բազմապատիւն* և այլն: Միաժամանակ նշում է, որ հունարեն բնագրերից թարգմանված երկերում բառակերտումները կատարվել են հունարեն համարժեքների հետևողությամբ՝ բառակազմական և իմաստային պատճենման ճանապարհով⁹:

Բարսեղ Կեսարացու երկի հայերեն թարգմանությունը նպաստել է ոչ միայն ժողովրդոց ավանդությունների, կրոնական բարեպաշտության, կրոնական նոր գաղափարախոսության տարածմանը, այլև հայերենի բառապաշարի զարգացմանն ու հարստացմանը՝ նոր բառեր, արտահայտություններ, դարձվածքներ, որոնք լայնորեն պետք է տարածվեին հետագա ստեղծագործություններում: Թարգմանված ծիսամատյանները, բարոյախոսական ճառերը, խրատներն ու եկեղեցական կանոնները, որոնք նախևառաջ քրիստոնեական հավատքի սկզբունքներն էին տարածում, հայերենը հարստացրին նոր հասկացություններով, նորահայտ բառերի նոր կաղապարատիպերով: Գրքի թարգմանության միջոցով առաջացած նորաբանություններն ունեն իրենց գործածության յուրահատկությունները ժամանակագրական տեսակետից: Այսօր այդ բառերի զգալի մասը հայերենի մեկուսացած շերտին պատկանող տարրեր են և արտացոլում են տվյալ ժամանակաշրջանի լեզվի զարգացման աստիճանը: Որոշ բառեր էլ անցել են հետագա զարգացման և գործածության հաճախականության երկարատև ճանապարհ, որոնցից են օրինակ՝ *հարահոսել*, *սիրտը պղտորել*, *տխուր լինել* և այլն :

Բարսեղ Կեսարացու «Գիրք պահոց»-ի հայերեն թարգմանության բնագրից քաղված նորաբանությունները բաժանել ենք

⁹ Գ. Մուրադյան, *Հունարանությունները դասական հայերենում*, Ե., 2010, էջ 22-63:

երկու խմբի՝ ա) նորաբանություններ, որոնք վկայված չեն ՆՀԲ-ում և Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան. ՆՀԲ-ում չվկայված բառեր» բառարանում, և բ) նշված բառարաններում վկայված նորաբանություններ, որոնց համար որպես սկզբնաղբյուր է ծառայել միայն Բարսեղ Կեսարացու սույն ժողովածուն:

2008 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից հրատարակված Բարսեղ Կեսարացու «Գիրք պահոց» ժողովածուի հայերեն թարգմանության բնագրից քաղել ենք 30 բառ, որոնք վկայված չեն գրաբարի բառարաններում՝ ՆՀԲ, «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր», Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարան»: Դուրս ենք գրել նաև շուրջ 65 բառ, որոնք ՆՀԲ-ում հղված են միայն Բարսեղ Կեսարացուն:

«Գիրք պահոց»-ում գործածված նորաբանություններն, ըստ կազմության, հիմնականում ածանցավոր, բարդ և բարդ ածանցավոր բառեր են, որոնց մեջ իրենց թվաքանակով գերակշռում են հոդակապավոր իսկական բարդությունները: Դրանցից են՝ *արծաթասանձ, դժոխսպահ, նեխավայր, հանդերձակապուտ, ծայրատունկ, ընչաժողով, ծանրապատիւ* և այլն: Անհամեմատ փոքր կշիռ ունեն գոյականակերտ ածանցներով կազմված այն բարդությունները, որոնց բաղադրիչները բառարանային առանձին, անկախ միավորներ չեն, բայց ունակ են այդպիսին դառնալու: Օրինակ՝ *դժոխանաւարկութիւն* բառի *դժոխանաւ* անգործածական բաղադրիչը կարող է և անկախ կիրառվել:

Իրենց յուրօրինակ կառուցատիպով և գործածության հաճախականությամբ առանձնանում են հատկապես երկհիմք և վերջաձանցավոր ածականները: Խիստ սակավաթիվ են նախաձանցավոր կազմությունները: Ամենաաճախված նորաբանությունների շարքում առանձնանում են *-գոյն* վերջաձանցով կազմված ածականների համեմատության բաղադրատական աստիճանը մատնանշող օրինակները և այս կառուցատիպով կազմված հարադրավոր բայերը՝ *անդադարագոյն, արժանահա-*

ւատարմագոյն, զուարճագոյն, մեծաձայնագոյն, բարենշանագոյն, անաշխատասիրագոյն, արժանահաւատարմագոյն, զովագոյն, քաղցրագոյն, անբանագոյն լինել (իմ), անզգամագոյն գոլ, մաքրագոյն լինել (իմ) և այլն:

Խոսքը առավել ազդու և պատկերավոր է դառնում – *էլի* ով վերջացող և դրանց նախածանցավոր կազմութիւնների գործածութեան շնորհիվ: Այդպիսի օրինակներից են՝ *անպատատելի, անխոհելի դանդաղելի, թշնամանելի, դժոխսաձեռնարկելի, բազմատենչալի* և այլն:

Վկայված բազմաթիվ նորահայտ և նորակազմ բառերը համալրվում են ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ հարադրավոր բայերով, որոնք հիմնականում կազմված են *գոլ, լինել (իմ), տալ* անկանոն բայերով՝ *բարգաւաճ լինել (իմ), տխուր լինել, բժշկեալ լինել (իմ), երասանակազանց լինել (իմ), դժոխեքասանակ լինել (իմ), ատելի գոլ, անբանագոյն լինել (իմ), աշակերտ գոլ, ախտակից գոլ, յեշտութիւն տալ* և այլն:

Այժմ բերենք բնագրային օրինակներ, որտեղ հստակ երևում են այդ բառերի արտահայտած իմաստային և ոճական նրբերանգները՝ Քանգի երկնայնումն... *չարամերձեալ* յերկինս համբարձաւ (282, ԺԸ Ի Օնունդ Փրկչին), Կամ եթէ՝ զգեցեալն մերկացուցանելով որ՝ *հանդերձակապո՞ւտ* անուանեսցի (146, Զ, Քակեցից զիմ շտեմարանս), Քանգի եւ կարկուտ ի վայր բեկաներ... եւ ջուր *յարահոսելով* յամպոց հեղեղեալ, անպիտան ցուցաներ զպտուղսն (143, Զ, Քակեցից զիմ շտեմարանս), Եթէ բարկացար՝ հաստատես զթշնամանս. Վասնզի զի՞նչ քան զբարկութիւնն *անզգամագոյն գոլ* (185,Թ, ԶԲարկացողաց), ...Եւ առաւել շնորհ երեւի *չտալ հեշտութիւն* որովայնի (55, Յաղագս պահոց), Որպէս ջրով փայլեալ *մաքրագոյն լինի* (65, Յաղագս պահոց), Մեզ քան զամենայն փող մեծաձայնագոյն եւ գործի երաժշտական *բարենշանագոյն* (54, Յաղագս պահոց) և այլն:

Պղտորել զսիրտ դարձվածքը ստեղծվել է պղտորել զլեզուս, պղտորել զլսելիս, պղտորել զմիտս (Եղիշէ), պղտորել զխորհուրդս (Փարպեցի), զիրաւունս, աշխարհն (Բուզանդ) հա-

մաբանությամբ՝ Որ *գսիրտսն պղտորեն* զմարդկայինս (58, Յադագս պահոց), ինչպես նաև *դժոխսապահ* բառի համաբանությամբ էլ հետագայում ստեղծվել է *դրախտապան* բարդությունը: *Դրախտ*-ով կազմությունները առավել ակտիվանում են հետագա դարերում՝ ստեղծելով փիլիսոփայական հակադրություններ գիտական-գեղարվեստական լեզվում:

Ժողովածուի հայերեն թարգմանության նորահայտ բառերը, որոնք վկայված չեն գրաբարի բառարաններում, իրենց կազմությամբ նույնպես բարդ և բարդ ածանցավոր բառեր, ի մասնավորի՝ հարադիր բայեր են: Դրանք են՝ *ագահասիրտ, անաշխատասիրագոյն, անաշխատասէր, արտաճանապարհ, անկատարաբար, աննենգաբար, այլայլուստ, դիրակապուստ, դանդաղելի, դիրապատելի, անխոհելի, զովագոյն, թշնամանելի, չարամերձեալ, վարկանելի, յարահոսել, բժշկեալ լինել (իս), մաքրագոյն լինել (իս), զանգիտեալ լինել (իս), տնակից ունել, վայելչական գոլ, ատելի գոլ* և այլն:

Ըստ խոսքիմասային պատկանելության՝ նշյալ նորաբանությունները հիմնականում ածականներ և գոյականներ են, որոնք դասակարգել ենք հետևյալ կերպ՝ հիմք ունենալով դրանց գործածության հաճախականությունը.

ա) Ածականներ՝ *անաշխատասէր, անաշխատասիրագոյն, գինեկէզ, զուարճագոյն, մեծաձայանգոյն, բարենշանագոյն, քաջողջ, ծայրագեղծ, ագահասիրտ, անաւթաբեր, արծաթասանձ, ագահաձեռն, բացաճաճանչ, սովահեղձոյց, դիրակոչելի, ներչարչարելի, անպատառելի, դիրակոռուելի, ...*

բ) Գոյականներ՝ *անարտաճանապարհ, բարեժամանություն, փափկակերութիւն, գլխածանրութիւն, դժոխանաւարկութիւն, անպնդակազմութիւն, ծայրատունկ, ընչաժողով, նեխավայր...*

գ) Հարադրավոր բայեր և դերբայներ՝ *բժշկեալ լինել (իս), թխազգեստ լինել (իս), ներչարչարելի գոլ, յարահոսել, սովահեղձուցանել, անմտադրեալ, չարամերձեալ, ընդդիմաբախեալ...*

դ) Մակբայներ՝ *անկատարաբար, աննենգաբար, կարճատատարաբար, անմխիթարապէս, հրէապէս...*

Ինչպէս վերը նշեցինք, մեծ թիվ են կազմում բարդ և բարդ ածանցավոր կազմութունները: Այդ բառերի պատճենումները, որպէս կանոն, հիմնականում հարմարեցվել են հունարենի բառակազմությանը, օրինակ՝ *δանրապատիւ* – βαρυτιμος = βαρυσ «ծանր» + τιμη, τιμος «պատիւ», *գլխածանրութիւն* – καρηβαρια-καρη «գլուխ» + βαρος «ծանրութիւն» և այլն: Նկատելի է նաև, որ այդ թարգմանութունների որոշ ձևեր չեն արտացոլում հունարեն համատիպ բառերի կառուցվածքը: Այսպէս, մեր կողմից քաղված օրինակներում հանդիպում են այնպիսի բնօրինակներ, որոնց բաղադրիչների հայերեն համարժեքները հունարեն սկզբնագրի սոսկ վերարտադրությունը կամ նյութական թարգմանությունը չեն: Թարգմանիչները հաճախ դիմել են հայերենին բնորոշ քերականական այլ ձևերի: Օրինակ՝ *Անպնդակազմութիւն* բառը βλακεια, μαλακια «թուլություն, մեղկություն, տկարություն» հունարենից թարգմանվող բառի հոմանիշն է՝ *ծայրատունկ* բառի երկրորդ բաղադրիչը *ծառ* բառի հոմանիշն է՝ ακροδρυα = ακρον «ծայր» + δρυα «ծառ», հունարեն *ζηπεδων* բառը, որ նշանակում է «նեխ, նեխություն», թարգմանվել է *նեխավայր* բառով: Իսկ *δυσ* նախածանցով սկսվող բառերի կիսապատճենումներում *δυσ*-ը փոխարինվել է հայերեն *դժոխ* բառով, որից ունենք՝ *դժոխանաւարկութիւն, դժոխապահ, դժոխաձեռնարկելի* և այլն: Հայերենի պատմական զարգացման ընթացքում այս բառերը դարձել են հնաբոյր, աստիճանաբար դուրս են մղվել գործածությունից և, հակառակը, կան, որ կենդանացել, ձեռք են բերել նոր իմաստներ կամ դրանց համաբանությամբ առաջացել են նորերը, որոնք ամրագրվել և համագործածական են դարձել հետագա դարերում:

Այսպիսով, Բարսեղ Կեսարացու «Գիրք պահոց» ժողովածուի հայերեն թարգմանության նորաբանություններն ու նորահայտ բառերը նոր որակ են կազմում հայերենի բառապաշարում: Դրանք իրենց գործածության յուրահատկությամբ բար-

ձր ոճի և ճարտասանական բնույթի բառեր են, որոնց զգալի մասը հայերենի մեկուսացած շերտին պատկանող բառազանձեր են և արտացոլում են տվյալ ժամանակաշրջանի (V-VIII դդ.) լեզվի պատմական զարգացման աստիճանը: Որոշ բառեր էլ անցել հետագա զարգացման և դեռ կունենան գործածության հաճախականության երկարատև ճանապարհ, ինչպիսիք են օրինակ՝ *դժխանաւ*, *դժխանաւարկելի*, *ընչածողով* կազմությունները, որոնց կարելի է կենդանություն տալ և շրջանառության մեջ դնել որպէս նորօրյա հեղափոխական իրադարձություններին համահունչ բառեր: Արդի հայերենի բացատրական բառարանում արձանագրված *դժխաձայն*, *դժխակուլ*, *դժխակեզ*, *դժխանվեր*, *դժխամեքենա* և այլն բառերի ցանկին առաջարկում ենք հավելել վերոնշյալ *դժխանաւ* (Շատերը հայտնվել էին միևնույն *դժխանաւովում*, որն ուր որ է պիտի խորտակվեր, Ա. Խ.), *դժխանաւարկելի* և այլ նմանատիպ բառեր, որոնք ժամանակակից բառարաններում տեղ չեն գտել: Ակնհայտ է, որ հայ թարգմանիչները հայերենի համար ստեղծել են բառակերտումների ձևուն մի համակարգ, որի արգասիքը Բարսեղ Կեսարացու ճառերի ու խրատների հայերեն թարգմանության նորակազմ բառերն են, որոնք հարըստացրել և այսօր էլ հարստացնում են հայերենի նույնքան հարուստ բառապաշարը:

Alvard Khachatryan - Neologisms in the armenian translation "Book of lent" Vasil of Kesaria.- The Armenian translation "Book of lent" of Vasil of Kesaria has a very rich and imaginative vocabulary. In the Armenian translation of this book, the newly formed words or neologisms in construction and semantics are especially original. In this study, we have divided these newly formed lexical units into two groups. The first ones are those that are examined in the dictionaries of the Old Armenian language, only with the note of Vasily of Caesarea, and the latter ones are not mentioned in the dictionaries. In these newly formed lexical units the majority are complex derivatives and complex words, which we characterized morphologically. Of these, many are

now archaisms, but some have become part of the modern Armenian language, enriching Armenian scientific and terminological vocabulary.

Алвард Хачатрян - Неологизмы в армянском переводе «Книга о посте» Василия Кесарийского.- Богата и многослойна лексика армянского перевода „Книга о посте,, Василия Кесарийского. В армянском переводе этой книги особенно своеобразны новообразованные слова или неологизмы по конструкции и семантике. В данном исследовании мы эти новообразованные лексические единицы разделили на две группы. Первые - это те, которые освидетельствованы в словарях древнеармянского языка, только с пометкой Василий Кесарийский, а вторые те, которые не упомянуты в словарях. В этих новообразованных лексических единицах большинство - сложнопроизводные и сложные слова, которые мы охарактеризовали морфологически. Из них многие сейчас являются архаизмами, но некоторые вошли в состав современного армянского языка, обогатив армянскую научную и терминологическую лексику.

**ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԸՆԿԱԼՄԱՆ
ԲԱՌԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐ ՀԱՄՇԵՆԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ**

Հնագույն ժամանակներից ի վեր Համշենում ապրում էին հայեր, և 8-9-րդ դդ. Համշենը մի փոքրիկ հայկական իշխանություն էր, որը հիմնել էին Շապուռի Ամասունին և նրա որդի Համամ իշխանը: 1915 թ. ինչպես որ Արևմտյան Հայաստանի մյուս հատվածները, Համշենը ևս փորձությունների ենթարկվեց: Հազարավոր համշենցիներ ստվար զանգվածներով թողեցին հայրենի բնօրրանը և գաղթեցին Կովկաս՝ հաստատվելով Սև ծովի կովկասյան առափնյա շրջաններում:

Համշենահայերենը այն սակավաթիվ բարբառային միավորներից է, որի կրողները, փրկվելով Եղեռնից և այլ տարածքներում ապաստան գտնելով, կարողացել են պահպանել իրենց մայրենի բարբառը, որ առ այսօր շարունակում է գործառել իբրև կենդանի և գործուն հաղորդակցման միջոց: Համշենի բարբառը, ինչպես գիտենք, որպես հաղորդակցման միջոց է ծառայում նաև ներկայիս Թուրքիայի Խոփայի և Ռիզեի շրջաններում ապրող կրոնափոխ համշենահայերի համար:

Ինչպես ընդհանրապես լեզվի, այնպես էլ որևէ բարբառի բառապաշարը անընդհատ զարգանում, հարստանում և կատարելագործվում է, և նրան բնորոշ են պատմական զարգացման տևական գործընթացի բոլոր իրողությունները՝ իրենց հակասականությամբ, շեղումներով, զուգահեռություններով, հնի ու նորի, իր դարն ապրածի և զարգացողի տարրերի առկայությամբ ու դրանց ներքին պայքարով¹:

Համշենի բարբառը ներկայանում է հարուստ ու բազմաշերտ բառապաշարով: Սույն հոդվածի շրջանակներում

¹ Է.Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ 109:

անդրադարձել ենք Համշենի բարբառում առկա՝ իրականության ընկալման բարբառային յուրահատուկ որոշ դրսևորումներին:

1. Ասած-ասած ընուշ: Ինչպես գիտենք, *բամբասանք* բառի հիմքում ընկած է գրաբարյան *բալ* (ասել, խոսել) ասացական բայի թեք՝ հարացուցային ձևերից մեկը: *Բալ* բայի ներկա ժամանակի եզակի թվի խոնարհման ձևերն են *բամ*՝ ասում եմ, *բաս*՝ ասում ես, *բայ*՝ ասում է: Եվ ահա այս բայի ներկա ժամանակի առաջին և երկրորդ դեմքերի բայաձևերին կցվել է *անք* վերջածանցը, և ստացել ենք *բամբասանք* բառանունը: Նույն տրամաբանությամբ էլ *բամբասանք* հասկացությունը արևմտահայերենում արտահայտվում է *ասել* բայի խոնարհված ձևերով, որոնք կազմում են կրկնավոր բարդություն՝ *ըսի-ըսալ*: Բարբառային հայերենում *բամբասանք* հասկացությունը արտահայտված է նաև *ասել* բայի երկու ժամանակներից բաղադրված այլ բայաձևերով՝ *ասեկոսե*-ի (ասե+կու+ասե) մի քանի հնչատարբերակներով՝ *ասակուսե*, *ասեկոսե*՝ Երևան, *կասե-կուսե*՝ Նոր Նախիջևան, *ասակոսե*՝ Թիֆլիս, նաև *ասուաս*՝ Երևան³:

Հետաքրքրական է, որ նույն հասկացության իմաստը Համշենի բարբառում արտահայտվում է և՛ *ասագասա* (այսինքն՝ *ասեկոսե*) բառանունով, և՛ հարակատար դերբայի *ասած-ասած* ձևից առաջացած կրկնավոր բարդությամբ:

ՀԲԱ ծրագրով հավաքած նյութերում Համշենում *բամբասել* հասկացության դիմաց արձանագրված են *մեզին վրբեն խօսուշ*, *ասեկոս ընուշ* (Հայսը դալեճը վրբըն *խօսեր գու*), *խօս-խօրատա ընուշ* (Ախճըկօնը վրբըն *խօս-խօրատա ըղվաձ աս*) հարադրությունները, ինչպես նաև շատ ուշագրավ *ասած-*

² Ռ.Սաքալետոյան, *Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան*, Ե., 2011, էջ 107:

³ Հ.Աճառյան, *Հայերեն գալառական բառարան* (այսուհետ՝ ՀԳԲ), Թիֆլիս, 1913, էջ 138:

ասած ընուշ հարադրավոր բայանունը, որն արձանագրված է Համշենի Ունիեի Բալլուղ գյուղի (Հայսը դալէճը *ասած-ասած գրնէր*), Ճանիկի (Աբխազիայի Օեբելդա գ.) խոսվածքներում: Իսկ Սամսոնի մի խոսվածքում վկայված է *ասած ընուշ* հարադրությունը նույն իմաստով (Հայսը դալէճ վրրըն *ասած գրնէր*): Ակնհայտ է, որ դիտարկված բարբառային բոլոր բառանունների դեպքում գործ ունենք բայի հարացուցային ձևերի քարացման, իմաստների մթագնման երևույթի հետ:

2. Վանձնատ՝ վոզնադ-մաճնատ: Ըստ Հ.Աճառյանի՝ *վանձնատը* մի տեսակ պանիր է: Այս բառանունը առկա է հայերենի բարբառներում (*վազնատ՝* Ղրբ. (Գնձ.), Կարին, *վանձնատ՝* Խոտրջուր): Ղարաբաղի բարբառի Գանձակի և Կարնո Ջավախքի խոսվածքներում և Խոտրջուրում *վանձնատ*-ը անյուղ և անորակ պանիրն է, որ պատրաստվում է մեկ անգամ քամված շիճուկի պանրանյութից: Կարնո բարբառի Ջավախքի խոսվածքներում այն նաև դալից՝ խեժից, պատրաստված պանիրն է⁴: *Վանձնատ* բառանունը *վոզնադ* հնչաձևով գործածական է եղել Տրապիզոնում՝ թել պանիր, կաթնաշոռ նշանակությամբ⁵: Հ.Աճառյանը, վկայակոչելով Բյուրակնում առկա *մաճնատ* (1900, 325 բ) բառը, համարում է, որ *վանձնատը մաճուն+հատ* բառերից բաղադրված բառանուն է, որը մի շարք հնչյունափոխություններից հետո ստացել է *վազնատ* հնչաձևը: Ըստ գիտնականի՝ նախ *մաճնատ* բառում *ն*-ն կրկնուելով նախորդ վանկում դարձել է *մանձնատ*, այնուհետև *մ-ն* հնչյունների տարնմանությամբ *մ>վ՝ վանձնատ*, իսկ *նձ-ն* էլ բաղաձայնից առաջ փոխվել է *զ*-ի, որի արդյունքում էլ ունենք *վազնատ* բառը⁶: Ի դեպ, Բ.Թոռլաքյանը արձանագրել է նաև

⁴ Հայոց լեզվի բարբառային բառարան (այսուհետ՝ ՀԼԲԲ), հ. 2, Ե., 2010, էջ 9:

⁵ Մ.Վարդանյան, *Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը*, Ե., 2009, էջ 318, ՀԼԲԲ, հ. 2, էջ 9:

⁶ Հ.Աճառյան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետ՝ ՀԱԲ), հ. 4, Ե., 1979, էջ 305:

սիրվոզնաստ բառանունը, որը, ըստ նրա, կաթնաշոռը, ժածիկն է՝ սերի հետ խառնված (*սէր+վոզնաստ*)⁷:

3. **Մռայլ**: Պոկոռնին *մատախուղը մռայլ* բառի հետ դնում է **mer-սևացնել, մթին գույն, բիծ* արմատի տակ, ինչը, սակայն, Գ.Ջահուկյանը քիչ հավանական է համարում: Նա ենթադրում է կա՛մ երկու արմատների (**mer՝ առկայծել* և **mer՝ սևացնել, մթին գույն*) սկզբնական կապ, կա՛մ նրանց բաղաբկում (կոնտամինացիա) հայերենում: Գ.Ջահուկյանը հնդեվրոպական բառերից ֆիզիկական աշխարհ իմաստային թեմատիկ խմբում ներառել է նաև *մռայլ* բառանունը՝ «մութ, խավար» իմաստով⁸: Հայերենի բարբառներում այս բառանունը հետաքրքիր զարգացումներ է ունեցել, օրինակ՝ Լոռիում *մլար* հնչաձևով «աչքի մշուշ», Ակնում *մլար*՝ «մթություն (հատկապես գինի խմելուց աչքը պատած մութը)», Խոտրջուրում *մռայլ*՝ «մատախուղ» իմաստներով է գործածվում⁹: Ուշագրավ են նաև Համշենում գործառող *մռայլ* բառի *մըռնյլ* կամ *մըրնյլ* բառազուգաբանությունները, որոնք *ամպ* հասկացության նշանակելիներ են (*Մըրնյլնին* կոտլօսօն գու, *Մըրնյլը* փատտաձ ունի, *Մըրնյլնուն* օր աշիս, վըրայեգ ընօղ չնն)¹⁰: *Մըրնյլ* բառի բարբառային ամպ, մատախուղ նշանակությունները խորհելու տեղիք են տալիս, որ *մատախուղ* և *մռայլ* բառերը առնչակից են, ինչպես որ հիշատակված է ՆՀԲ-ում¹¹ և վկայել է Պոկոռնին՝ *մատախուղ*-ը *մռայլ*-ի հետ դնելով «սևացնել, մթին գույն, բիծ» արմատի տակ, չնայած որ Գ.Ջահուկյանը դա քիչ հավանական է համարում¹²:

⁷ Բ.Թոռլաքյան, *Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության*, Ե., 1986, էջ 233:

⁸ Գ.Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն*: Նախագրային ժամանակաշրջան (այսուհետ՝ ՀԼՊ: ՆԺ), Ե., 1987, էջ 181, 207:

⁹ Հ.Աճառյան, ՀԱԲ, հ. 3, էջ 365:

¹⁰ Տե՛ս տեսր հ. 336, 94, 252, 52, 187:

¹¹ *Նոր բարգիրք հայկազեան լեզուի*, հ. 2, Ե., 1981, էջ 301:

¹² Գ.Ջահուկյան, ՀԼՊ. ՆԺ, էջ 181:

Ինչպես հայտնի է, բարբառային հայերենում շատ հաճախ բառանունները բառիմաստային հետաքրքիր զարգացումներ են ապրում: Ըստ Է. Աղայանի՝ բառի փոխաբերական և փոխանվանական գործածությունները առաջ են բերում բառիմաստի զանազան փոփոխություններ, որոնք ժամանակի ընթացքում ամրանում են բառին խոսքից դուրս՝ դառնալով բառի «սեփական» իմաստները¹³: Համշենի բարբառը հարուստ է բառիմաստային ճյուղավորումներով՝ բառի բուն իմաստից բավականաչափ հեռացած բառային դրսևորումներով:

4. **Թոք**: Գրաբարյան մատենագրության մեջ վկայված է *թոք* բառանունը՝ սպունգ նշանակությամբ, և, ըստ Հ.Աճառյանի, մեջը փուչ լինելու պատճառով է այդպես կոչվել¹⁴: Սակայն, ինչպես գիտենք, արդի հայերենում *թոք* բառանունը մարդու և ողնաշարավոր կենդանիների շնչառության գործարանն է, որը գտնվում է կրծքի խոռոչում: Գ.Ջահուկյանը հայերենի արևելակովկասյան փոխառությունները ըստ իմաստային խմբերի բաշխելիս մարմնի մասեր իմաստային խմբում ընդգրկում է նաև *թոք* բառանունը¹⁵: Հետաքրքրական է, որ հինհայերենյան *թոք* բառանունը Համշենի բարբառում դրսևորված է *հազ* նշանակությամբ, և բարբառին բնորոշ հնչյունափոխությամբ *թոքը* դարձել է *թէք* կամ *թէկ* (Բուլիզին *թէկը* պրոնսձ ուներ՝ Աղջկա հազը բռնել էր): Ի դեպ, բարբառում գործածվում է նաև *թոք* արմատից ձևավորված *թոքալ* բայանունը՝ *թօքուշ*, *թօկուշ*՝ «հազալ» իմաստով (*Թօկածի՛ր տան՝ հազացի՛ր*, *Թօկա՛ս կու տան՝ հազու՛մ ես*): Փաստենք, որ *թոքալ*-ը՝ «հազալ» նշանակությամբ, գործածվել է նաև այլ բարբառներում (Սեբաստիա, Խոտրջուր, Վան, Մոկս): Վանում վերոնշյալ բառանունը վկայված է նաև

¹³ Է.Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ 73:

¹⁴ Հ.Աճառյան, ՀԱԲ, հ. 2, Ե., 1973, էջ 212, *Քննություն Համշենի բարբառի*, Ե., 1947, էջ 230:

¹⁵ Գ.Ջահուկյան, ՀԼՊ. ՆԺ, էջ 609-610:

թօնքալ հնչատարբերակով որպես «հնալ» հասկացության նշանակելի¹⁶:

5. Այգ: Ագաթանգեղոսի, Բուզանդի, Շիրակացու և այլոց երկերում վկայված է *այգ* բառանունը՝ *առավոտ* իմաստով: Ըստ Հ.Աճառյանի՝ *այգ* արմատական ձևը գավառականներում պահված չէ, սակայն *այգ* առաջնային բաղադրիչով բառանուններ առկա են բարբառներում, որոնցից են *էզլաց, այգողք, էգուց, էզվան* բառերը¹⁷: Գրական հայերենում հաճախ գործածվող *այգ* բառանունը ևս առօրյա-խոսակցական լեզվում, ինչպես գիտենք, գործածական չէ: Համշենի բարբառը այս դեպքում ևս առանձնանում է աշխարհաճանաչողության իր յուրահատուկ ընկալմամբ: Նախ բարբառում առկա է *այգ* արմատական բառանունը՝ *սկըն* հնչատարբերակով հենց «*այգ՝ առավոտ*» իմաստով (Հիվօնդը հրնճակ *սկըն* քուն ըղավ հեճ, սն *սկըն* շաղ ցույդ էր): Հարկ է նշել, որ մեր բարբառախոսների վկայությամբ՝ Բալլուղ գյուղի խոսվածքում բառիմաստային ճյուղավորմամբ *սկըն*-ը ձեռք է բերել «*քիչ առաջ*» նշանակությունը (*սկընը* ընու մասին խօսայկը գու՝ քիչ առաջ նրա մասին էինք խոսում: *սկընը* հուզա էր՝ քիչ առաջ այստեղ էր): Ըստ Հ.Աճառյանի՝ *սկընը այգուն* (առավոտուն) բառի բարբառային տարբերակն է: *Այգ* բառանունը Համշենի բարբառում դրսևորված է նաև *սկվօն, սկվընսի, սկվընծու, սկընս* բառաձևերով: Ի դեպ, նշված բառանունները բառիմաստային տարբերություններ են դրսևորում: Օրինակ՝ ճանիկի մի խոսվածքում վկայված է *սկընս* բառանունը «*այսօր*» նշանակությամբ: Փաստենք, որ Համշենի բարբառին բնորոշ է ցուցական հոդի գործածությունը, ինչպես օրինակ, Կիշէյս շաղ վըրայեգ սրնավ (Այս գիշեր շատ անձրև եկավ): Նույն կերպ էլ՝ *սկընս* շաղ ցույդ էր,

¹⁶ ՀԼԲԲ, հ. Բ, Ե., 2002, էջ 132:

¹⁷ Հ.Աճառյան, ՀԱԲ, հ. 1, Ե., 1971, էջ 165:

որում, սակայն, *u* ցուցական հոդով *անկրն* բառանունը քերականական քարացած բառաձև է և բառիմաստային ճյուղավորումով ձեռք է բերել «այսօր» նշանակությունը (*անկրնս անկվրնծու* քիչ մնլ վըրայեգ անրավ): Իսկ անկվօն *անկվրնսի, անկվրնծու* բառերը հիմնականում *առավոտյան* հասկացության նշանակելիներ են: Խ.Թահմազը Ջենիգի բարբառի բառարանում ևս փաստում է, որ *անկրն*-ը առավոտն է, իսկ *անկվրնս*-և, *անկվրնծու*-ն՝ առավոտյան նշանակություն ունեն¹⁸: Մեր կարծիքով՝ Համշենի բարբառի *այգ* բառի *անկվօն* (*անկվօն* վըրայեգ ընօղ ան՝ առավոտյան անձրև է գալու), ինչպես նաև Կարինում առկա *էքվան* («վաղը» նշանակությամբ) բառաձևերը *այգ* բառի սեռական *վա* հոլովակերտով առաջացած բառանուններ են՝ իհարկե, արևմտահայերենին բնորոշ *ն* հոդով: Այդ են վկայում Համշենի բարբառում ժամանականիշ որոշ բառերի օրինակները (օր>օրվօն, կիշեր>կիշերվօն):

Մեր կարծիքով՝ Համշենի որոշ խոսվածքներում դրսևորված *անկվրնսի, անկվրնծու* բառերը ևս, ըստ երևույթին, *անկրն* բառանվան հոլովական քարացած բառաձևեր են, որոնք անկախ գործածություն են ձեռք բերել՝ ստանալով «առավոտյան» նշանակությունը (Էկուծ *անկվրնսի* կու կօմ: *անկվրնծուի* քօմին բաղ էր): Այդ վարկածը ամրապնդվում է ՀԲԱ ծրագրով հավաքած նյութերում առկա Համշենի բարբառի հետևյալ օրինակները՝ *իրիգվրնծու, իրիգվրնծուի, սըրվօնծու* (ժամանակվա), *ցօրեգվրնծու, ցօրեգվրնսի, իրիգվրնսի, անկվրնսի*, որոնցում, ինչպես նկատելի է, ժամանականիշ բառերի սեռական հոլովաձևերում գործածական են *վրնսի, վրնծու, վօնծու, վրնծուի* հոլովակերտները: Ի դեպ, բառարաններից մեկում վկայված է նաև *անկրնսի իրգուն* (առավոտից իրիկուն) բառակապակցությունը¹⁹:

¹⁸ Խ.Թահմազ, *Ջենիգի բարբառի բառարան*, Սոչի, 2014, էջ 7:

¹⁹ Խ.Թահմազ, *Ջենիգի բարբառի բառարան*, Սոչի, 2014, էջ 7:

Բարբառում առկա են նաև *այգ* արմատից բաղադրված *այզլաց* բառանվան հնչատարբերակները՝ *ակլաց*, *աքլաց*, *էքլաց* մեռելի քելեխ նշանակությամբ²⁰: Բարբառային հայերենում գրեթե նույն նշանակությամբ ունենք *այգողք* բառանունը, որը բազմաթիվ հետաքրքրական բարբառային հնչատարբերակներով է դրսևորված՝ *իքնահող*, *իքնավըէղ*, *քնահող*, և անգամ *այք* արմատական ձևով (Նախիջևանի Ազնաբերդ գ.) և այլն: Կարելի է ասել, որ նույն լեզվամտածողությամբ էլ Համշենում ձևավորվել է *ակլաց* (այգ+լաց) բառանունը: Ի դեպ, Այնթապի թրքախոս հայերը ևս գործածում են այս բառանունը *էքլաս* հնչատարբերակով, որ նշանակում է չարչարման գիշեր²¹: Վերը հիշատակված գրեթե բոլոր բառերում *այ* երկհնչյունը դարձել է *ւյ* (այ>ւյ, այգ՝ *ւյկըն*): Հետաքրքրական է, որ այս ամենի կողքին բարբառում ունենք այգ+ուց>էգուց (այ>է)՝ *էկուծ* հնչաձևով բառանունը՝ արդեն «վաղը» նշանակությամբ (Էկուծ *ւյկըն* հայսնիկ գա, Ընիշտէն (փեսան) *էկուծ* էգոջ *ւյ*: *էկուծ* չւն միգնլ օրը հնյս կուկա: *էկուծ* ւնկվընծու յէս կու կուս):

6. Վրա. Այս բառանունը գրաբարյան մատենագրության մեջ վկայված չէ: Լեզվի պատմական զարգացման ընթացքում որոշ բառեր կարող են դուրս գալ գործածությունից և չփոխանցվել հետագա փուլերին, սակայն կարող են գործառական ակտիվություն ունենալ և կիրառվել բարբառային հայերենում: Այսպիսի օրինակ է *վրա* բառանունը, որը Գ.Ջահուկյանը բարբառային հնարանություն է համարում. «Վրա՝ «անձրև» (Տր.)- ավ. vār «անձրև» (հ.-ե. ayer «ջուր, անձրև, գետ»)»²²: Հ.Աճառյանը Գավառական բառարանում արձանագրել է *անձրև* հասկացությունը *վրայ*, *վըրայէկ* (ըստ գիտնականի՝ *վրայէկը* «հասարակ թեթև անձրևն է, ավելի սաստիկը կկոչվի թաթալ») բառանունով՝ վկայված Համշենում և Տրապիզոնում,

²⁰ **Խ.Թահմազ.** Նույն տեղում, էջ 6, **Հ.Աճառյան,** ՀԱԲ, հ.1, էջ 165: ,

²¹ **Հ.Աճառյան,** ՀԱԲ, հ.1, էջ 165:

²² **Գ.Ջահուկյան,** *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 328:

ինչպես նաև դրանից բաղադրված *վրրայ անել*՝ անձրևել (*Վրայ* ըրաւ թըջուեցա) բայանունը²³: Փաստենք, որ ՀԲԱ ծրագրով հավաքված Համշենի մի քանի խոսվածքում (տե՛ս տետրեր հ. 94, 336, 52, 187, 39, 252) վկայված է Գ.Ջահուկյանի հիշատակած *վրրա* բառանունը: Հարկ է նշել, որ վերջինս Համշենի միայն մի խոսվածքում է *վրրա* հնչածևով հիշատակված (տետր հ. 94, Համշենի Օրդուի խոսվածք), այնինչ մեծ մասում *վրրա* բառանունը արձանագրված է *վրրայեկ*, *վրրեգ*, *վրրայիգ*, *վրրյեգ*, *վրրայիգ* (*Վրրայեգը* գրդռեծավ: Տուսը *վրրայեգ* գրնս: *Վրրայեգին* դագ թատվեծա (թըջվեցի) հնչատարբերակներով:

Լեզվի պատմական զարգացման ընթացքում բառերը հաճախ ենթարկվում են կառուցվածքային փոփոխությունների, որի պատճառը շատ հաճախ բառիմաստի մթագնումն է: Մեր կարծիքով՝ Համշենի բարբառում առկա *վրրայեգ* բառանվան մեջ նույն կերպ մթագնել է *վրա* բառի անձրև իմաստը, և այն պատկերավոր լեզվամտածողությամբ ընկալվել է որպես *վրա+եկ* (այսինքն՝ *վրան եկող*) արմատների համադրումից առաջացած բառանուն: Ուշագրավ օրինակներ են վկայված նաև ՀԼԲԲ-ում. *Վրրահկուտ*, որ Համշենում նշանակում է անձրևից թըջված (*Վրրահկուտ* հավլընին փոխից), *վրրահիկ*՝ Վանում է գործածվել՝ նշանակելով դրսի դռան վերևի մասում դրված փոքր ծածկ, որ պաշտպանում է դուռը անձրևից, ձյունից²⁴: Մեր համոզմամբ՝ հիշյալ բառանունները աղերսվում են *վրրա*՝ անձրև իմաստով բարբառային հնաբանությամբ:

Բարբառային հայերենում բառային հետաքրքիր գույզաբանություններ է ի հայտ բերում *արև եղանակին բարակ անձրև* հասկացությունը: Այն Համշենի բարբառում ևս դրսևորված է ուշագրավ բառանուններով: Նախ ունենք վկայված *վրրայեգ* բառանունով ձևավորված *սուղ վրրայեգ*, *այճօն վրրայեգ* (արջի անձրև), *սաղօնի վրրայեգ* (սատանայի անձրև. Սաղօնի

²³ Հ.Աճառյան, ՀԳԲ, էջ 1005-1006:

²⁴ ՀԼԲԲ, հ., Զ, Ե., 2010, էջ 102:

վըրայէկը գարայ չի դալ որնչպսրուտինը) բառանունները (տե՛ս տետր 52, 252, 336): Կան բարբառներ, որոնցում հիշյալ հասկացությունը դրսևորված է *գայլ* բաղադրիչով *գելացկնուկ*, *գհլու հարսանիք* բառանուններով, այնինչ Համշենի բարբառում *արև եղանակին բարակ անձրև* հասկացությունը արտահայտված է *արջ (այջ)*, *շնագայլ (ղյափօն)* բաղադրիչներով ձևավորված՝ *այջօն* (նան՝ այճօն) *բար* (արջի պար), իսկ մահմեդականացած համշենահայերի խոսքում՝ *ղյափօն հայսնիք* (շնագայլի, չախկալի հարսանիք) բառանուններով: Վերջիններիս խոսվածքում վկայված է նաև *ւօլա չախ* (գոլ անձրև) բառանունը, որը գրեթե հոմանիշ է բարբառային արևանձրև բառանվանը:

Այսպիսով՝ քննելով իրականության յուրահատուկ ընկալման բառային դրսևորումները Համշենի բարբառում՝ կարող ենք եզրակացնել, որ Մեծ եղեռնից հետո համշենահայերը, ապրելով մեկուսացած և կղզիացած, չշփվելով հայախոս այլ բնակավայրերի բնակիչների հետ, անաղարտորեն պահպանել են իրենց մայրենի բարբառը, որն իր պատկերավոր լեզվամտածողությամբ, աշխահընկալմամբ հստակորեն առանձնանում է ինչպես արևելյան, այնպես էլ արևմտյան այլ բարբառներից: Հիշյալ բարբառում գործածվում են բառեր, բառակապակցություններ, դարձվածքներ, որոնք բարբառային հայերենում եզակի դրսևորումներ են:

Khachatryan Hasmik - Lexical manifestations of unique perception of reality in the dialect of Hamshen.- The article mentions several lexical manifestations of unique perception of reality in the rich and multi-layered lexicon of the dialect of Hamshen. Through reinterpretation, the word [*mrayl*] ([*meral*]) has acquire the meaning of “*cloud*,” the word [*tok*] ([*tek*]) - the meaning of “*cough*”, [*ayg*] ([*aken*]) – “*morning*”, but also “*today, not long ago*.” The following words in the dialect have also been discussed: [*vera*] – “*rain*” (this is considered a dialectal archaism) [*vandznat*] ([*madzun+hat*]) – “*cheese, cottage cheese*,” [*asats-asats enush*] – “*gossip*.”

Хачатрян Асмик - Лексемы в диалекте Амшена, выражающие своеобразное восприятие действительности. -Из всего богатого и многослойного словарного запаса диалекта Амшена в данной статье мы обратились к некоторым лексемам, выражающим своеобразное восприятие действительности. В результате переосмысления в амшенском диалекте слово *ւնշլլ* (мрайл - мрачный) приобрело значения *ւնւլ* (амп - небо, облако), *թըրր* (*թէլ*) (thokh, thэк - легкие), *հազ* (*հаз* - кашель), *ալբ* (*°լրն*) (айг - заря, начало, рассвет). Исследованы также словоформы *վրրի* (*вра* - дождь /считается архаизмом/), *վանձնատ* (вандзнат - сыр в виде спагетти, творог), *շիւճ-շիւճ ընտլ* (*асац-асац ынуш* - сплетни).

Կատվայան Վիկտոր (Հայաստան,
ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

Հայ բարբառագիտության մեջ Երևանի խոսվածքը առանձին ուսումնասիրության չի ենթարկվել: Սովորաբար Երևանը հիշատակվել է իբրև Արարատյան բարբառի ընդգրկման տարածք, կամ էլ գործածվել է Երևանի բարբառ բնորոշումը՝ այդպիսով իբրև Արարատյան բարբառի կենտրոն մատնանշելով Երևանը¹:

Բնականաբար, Արարատյան բարբառի վերաբերյալ եղած ընդհանուր դիտարկումները վերաբերում են նաև Երևանի խոսվածքին: Ք.Պատկանյանը Արարատյան բարբառը համարել է առավել մաքուր պահպանված բարբառներից մեկը²: Ըստ Հ.Աճառյանի՝ «Երևանի բարբառը շատ մաքուր և գրական լեզուին խիստ մոտիկ բարբառ մ'է և եթէ ի նկատի ունենանք միայն Ում ճիւղին բարբառները, ամենէն մաքուրն է: Եւ ահա իր այս մաքրութեան և իր ընդարձակ ծաւալին համար է որ ծայայած է իբրև հիմ՝ ռուսահայ գրական լեզուին՝ կազմութեան

¹ Ըստ Ս.Բաղդասարյան-Թափալցյանի՝ Արարատյան բարբառը տարածական ամենամեծ ընդգրկումն ունեցող հայերեն բարբառն է: Նրա ենթաբարբառներն ու խոսվածքները տարածված են Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի բազմաթիվ շրջաններում, գյուղերում (տե՛ս **Ս.Բաղդասարյան-Թափալցյան, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում**, Ե., 1973, էջ 5): Այդ փաստը արձանագրել են նաև Հր. Աճառյանը (տե՛ս **Հ.Աճառյան, Հայ բարբառագիտություն**, Մ.-Ն., 1911, էջ 37) և Ա.Ղարիբյանը (տե՛ս **Ա.Ղարիբյան, Հայ բարբառագիտություն**, Ե., 1953, էջ 219): Բարբառիս ավելի սահմանափակ տարածում էր վերագրում Ք.Պատկանյանը՝ նշելով, որ այն տարածված է Երևանում, նրա շրջակայքում, Աշտարակում, Վաղարշապատում և այլ գյուղերում (տե՛ս **К.Патканов, Исследование о диалектах армянского языка**, СПб., 1869, էջ 25):

² Տե՛ս **К.Патканов**, նշվ. աշխ., էջ 25:

համար»³: Իբրև բարբառի հիմնական կենտրոններ հայագետը նշում է Երևանը, Նորքը, Քանաքեռը, Էջմիածինը, Օշականը և Աշտարակը⁴: Նաև նկատում է, որ այս բարբառը «ձայնախոսական տեսակետով շատ հավատարիմ է հին հայերենին»⁵: Մ.Աբեղյանի կարծիքով՝ «հնչյունների կողմից, գրաբարի նկատմամբ, մեր բարբառների մեջ ամենից քիչ է փոփոխության ենթարկվել գրական լեզվի մայր՝ Այրարատյան բարբառը: Այստեղ բառերը մեծ մասամբ պահում են հին գրական լեզվի կերպարանքը...: Բայց որ գլխավորն է՝ Արարատյան բարբառի մեջ հնչյունները թվով ավելի փոքր են. ձայնավորներն, օրինակ, միայն վեց են..., որոնք բոլորն էլ կան բոլոր բարբառների ու հին գրական լեզվի մեջ»⁶: Ա.Ղարիբջանը Արարատյան բարբառի հետքեր է տեսնում «հին գրականության, հին աղբյուրների մեջ սկսած 5-րդ դարից»⁷: Լեզվաբանը նկատում է, որ Արարատյան բարբառը իր ընդգրկման նախնական տարածքներում բնակչության տեղաշարժերի ու գաղթերի հետևանքով հաճախ ընդմիջվում է այլ բարբառներով, և Լոռին է միակ վայրը, որտեղ Արարատյան բարբառը կազմում է ճնշող մեծամասնություն⁸: Ա.Ղարիբջանը գրում է, որ բարբառի մաքուր խոսվածքներ կարելի է գտնել Փարպի գյուղում, Հոկտեմբերյանի շրջանի (ներկայում՝ Արմավիրի տարածաշրջանի) գյուղերում⁹: Նա Արարատյան բարբառն ընդգրկում է քառաստիճան բաղաձայնական համակարգ ունեցող բարբառների խմբում¹⁰: Ըստ բազմահատկանիշ դասակարգման՝ Արարատյան բարբառը ընդգրկված է արևելյան խմբակցության Արարատյան կամ հյուսիսարևելյան բար-

³ **Հ.Աճառյան**, նշվ. աշխ., էջ 38:

⁴ Տե՛ս նշվ. աշխ., էջ 329:

⁵ Նշվ. աշխ., էջ 330:

⁶ **Մ.Աբեղյան**, *Երկեր*, հ. Զ, Ե., 1974, էջ 53-54:

⁷ Տե՛ս **Ա.Ղարիբջան**, նշվ. աշխ., էջ 218:

⁸ Տե՛ս նշվ. աշխ., էջ 219:

⁹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 220:

¹⁰ Տե՛ս, նշվ. աշխ., էջ 60:

բառախմբում Ջուղայի, Բայազետի, Աստրախանի և Արդվին-Թբիլիսիի բարբառների հետ¹¹: Գ.Ջահուկյանը Արարատյան բարբառը ներկայացրել է հետևյալ տարածքներով՝ Աշտարակ, Երևան, Քանաքեռ, Էջմիածին, Կողբ, Աստապատ, Ղալաչա, Գյառգյառ¹²:

Ժամանակին Հ.Աճառյանը նշել է, որ թեև Արարատյան բարբառով կան բազմաթիվ գրվածքներ, սակայն այն դեռևս ուսումնասիրված չէ¹³: Բարբառը ընդհանուր գծերով ներկայացված է Ա.Ղարիբյանի «Հայ բարբառագիտություն»¹⁴, Ա.Գրիգորյանի «Հայ բարբառագիտության դասընթաց»¹⁵ աշխատություններում: Բարբառի առանձին խոսվածքների ուսումնասիրությամբ զբաղվել են Մ.Ասատրյանը¹⁶, Ս.Բաղդասարյան-Թափալցյանը¹⁷:

Թերևս Արարատյան բարբառի ամբողջական ուսումնասիրության առաջին փորձն է Ռ.Մարկոսյանի «Արարատյան բարբառ» աշխատությունը¹⁸: Սակայն այստեղ ևս Երևանի խոսվածքին առանձնապես էական անդրադարձ չի

¹¹ Տե՛ս Գ.Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 135:

¹² Տե՛ս նույն տեղում:

¹³ Տե՛ս Հ.Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, մաս 2, էջ 330:

¹⁴ Տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 218-229:

¹⁵ Տե՛ս Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 205-232:

¹⁶ Մ.Ասատրյան, *Լոռու խոսվածքը*, Ե., 1968:

¹⁷ Ս.Բաղդասարյան-Թափալցյան, *Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում*, Ե., 1973: Ըստ բարբառագետի՝ Արարատյան բարբառի ճյուղավորումները բաժանվում են երկու խմբի. ա) այլ բարբառների ազդեցություններից անհամեմատ զերծ մնացած խոսվածքներ (Երևան, Աստապատ, Լոռի), բ) Բայազետի (Հոկտեմբերյան, Կոտայք), Ղարաբաղի (Իջևան, Շամշադին, Դիլիջան, Ղարաբաղին սահմանակից տարածքներ) բարբառներից ազդեցություն կրած խոսվածքներ (տե՛ս նշվ. աշխ., էջ 20-21):

¹⁸ Ռ.Մարկոսյան, *Արարատյան բարբառ*, Ե., 390 էջ: Ռ.Մարկոսյանը, իր կողմից համարյա ճշգրիտ համարված վիճակագրության համաձայն, նշում է, որ Արարատյան բարբառով խոսում են 162 գյուղում և 5 քաղաքում՝ ավելի քան 275 հազար հայ (տե՛ս նշվ. աշխ., էջ 46):

կատարվում: Ըստ հեղինակի՝ նույնիսկ Երևանի արվարձաններում՝ Նորքում¹⁹, Առինջում, Քանաքեռում և Ջրվեժում գտնում ենք մաքուր արտահայտված Արարատյան բարբառի խոսվածքներ: Սակայն Երևանի խոսվածքը, գրական լեզվի ուժեղ ազդեցությամբ, գրեթե դադարել է գործածությունից²⁰: Ռ.Մարկոսյանի հավաստմամբ՝ սերնդեսերունդ ավանդվել է, որ Քանաքեռի, Նորքի և մեկ-երկու այլ բնակավայրերի հիմնական բնակչությունը ապրում է իր բնօրրանում. այդ խոսվածքները բոլոր հիմնական հատկանիշներով նման են միմյանց, ինչպես նաև՝ Աշտարակի ու Օշականի խոսվածքներին²¹:

Ինչ խոսք, ներկայում դժվար է խոսել Երևանի՝ իբրև կենդանի գործառող բարբառային միավորի մասին: Երևանի խոսվածքի վրա ազդող բազմաթիվ իրողություններ, ինչպիսիք են գրական հայերենի գործուն ազդեցությունը, խոսակցական-քաղաքային լեզվավիճակի հետ ձուլումը, կրթամշակութային գործոնների առատությունը, բնակավայրի ընդարձակությունը, տարբեր բարբառներ կրողների ներհոսքը և հաղորդակցման յուրահատկությունները, բազմաբնակարան շենքերի կառուցմամբ՝ բնակչության ներքին ակտիվ տեղաշարժերը և խառը խոսքային իրավիճակների ձևավորումն ու այլ հանգամանքներ²², պատճառ են դարձել բարբառային այդ միավորի՝ խոսակցա-

¹⁹ Նորքի խոսվածքի հնչյունական համակարգին և բառապաշարի որոշ շերտերի անդրադարձել է Հ.Մեսրոպյանը (տե՛ս **Հ.Մեսրոպյան, Երևանի բարբառի ընդհանուր բնութագիրը**, <http://aybuben.com/st19>):

²⁰ Տե՛ս **Ռ.Մարկոսյան**, նշվ. աշխ., էջ 47:

²¹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 41:

²² Այս մասին Հ.Զաքարյանը գրել է. «բաժանումն ըստ թաղամասերի այժմ աննշան չափեր է ընդունել և, համապատասխանաբար, թույլ է արտացոլվում լեզվում. մասնավորապես պետք է նշել այս երևույթի կապը վերջին ժամանակներու կատարվող մշակութային, տնտեսական տեղաշարժերի, բնակարանային զանգվածային շինարարության, քաղաքի հատակագծի փոփոխությունների, վերակառուցման, բարեկարգման, ներգաղթի ու ներհոսի հաշ-

կան լեզվի հետ ձուլման և վերացման: Այժմ Երևանի խոսվածքի մասին կարելի է դատողություններ անել՝ հիմք ունենալով նախկինում արված դիտարկումները, բարբառագետների՝ նախորդ դարի վերջին քառորդում համապատասխան ծրագրով արձանագրած իրողությունները:

Այս աշխատանքում նպատակ ունենք Երևանի խոսվածքի²³ հատկանիշները վեր հանել ներկայիս Երևանի տարածքում ընդգրկված այլ խոսվածքների հետ համեմատությամբ, կատարել դիտարկումներ խոսվածքի և խոսակցական լեզվի փոխհարաբերությունների վերաբերյալ: Ուսումնասիրության ոլորտում են Երևանի կենտրոնի, Նորքի և Քանաքեռի խոսվածքների հնչյունաբերականական իրողությունները, նյութը քաղել ենք այդ թաղամասերի խոսվածքների՝ ՀՖԱ ծրագրով լրացված տետրերից²⁴, օգտագործել ենք բարբառագիտական գրականության մեջ եղած տեղեկությունները:

վին ազգաբնակչության արագ աճի հետ» (տե՛ս *Ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն*, Ե., 1981, էջ 137):

²³ Նկատի ունենք Երևան քաղաքի կենտրոնի խոսվածքը:

²⁴ Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով (Ե., 1977, 141 էջ) լրացված թիվ 23 տետրը ներկայացնում է Երևանի կենտրոնի խոսվածքի հատկանիշները: Այն լրացրել է 1978թ., Հ.Մուրադյանը: Բարբառակիրը լեզվի ինստիտուտի աշխատակից, բ.գ.դ. Գասպար Գասպարյանն է՝ ծնված 1901թ.: Տետրի սկզբում Հ.Մուրադյանը նշում է, որ Երևանի բարբառը այժմ հաղորդակցման միջոց չէ, և այսօր դժվար, նույնիսկ անհնար է գտնել մի երևանցի, որ ազատ խոսեր իր բարբառով: Նշում է, որ հին երևանցիների վկայությամբ՝ հնում քաղաքը լեզվական տեսակետից միատարր չի եղել, իրենց խոսվածքային առանձնահատկություններով առանձնացել են Շհար (քաղաքի կենտրոնում), Կոնդ և Նորք թաղամասերը: Նյութը վստահելի է, բարբառակիրն ունի իր բարբառի լիարժեք իմացություն: Թիվ 230 տետրը ներկայացնում է ժամանակին Կոտայքի շրջանի գյուղ համարվող Քանաքեռի խոսվածքը: Տետրը լրացրել է 1983թ. Մ.Միքայելյանը: Բարբառակիր Պողոս Հարությունյանը ծնվել է 1891թ.: Մ.Միքայելյանը նշում է, որ խոսվածքը կարելի է արդեն գրեթե մեռած համարել: Ըստ նրա՝ խոսվածքը երկբարբառներ և քմային ձայնավորներ չունի, քերականությունը շատ նման է գրական արևելահայերենին: Թիվ 79 տետրը ներկայացնում է Նորքի խոսվածքը: Տետրը լրացրել է 1980թ. Ջ.Բառնասյանը: Բարբառակիրը՝ բնիկ նորբեցի Լիպարիս

Երևանի խոսվածքի հատկանիշները բերված են Գ. Ջահուկյանի՝ բարբառների բազմահատկանիշ դասակարգման աղյուսակներում²⁵: Ըստ այդմ՝ Երևանի խոսվածքին բնորոշ են 33 հատկանիշներ, որոնցից 6-ը՝ մասամբ: Գ.Ջահուկյանի բերած տվյալների հիման վրա մեր կատարած հաշվումներով՝ Արարատյան բարբառի մյուս խոսվածքներից Երևանի խոսվածքն ունի տարբերությունների հետևյալ ցուցիչները. Երևան և Քանաքեռ՝ 3,5 միավոր, Երևան և Էջմիածին՝ 4 միավոր, Երևան և Աշտարակ՝ 4,5 միավոր, Երևան և Կողբ՝ 7,5 միավոր, Երևան և Աստապատ՝ 13,5 միավոր, Երևան և Գյառքյառ՝ 14 միավոր, Երևան և Ղալաչա՝ 14,5 միավոր: Ընդ որում՝ Երևանի և Քանաքեռի տարբերությունները, որ Գ.Ջահուկյանը արձանագրել է միայն բաղաձայնական համակարգում, հետևյալներն են. Երևանը բառասկզբում ունի շնչեղ ձայնեղներ, իսկ Քանաքեռը դրանց դիմաց՝ խուլեր, ի տարբերություն Երևանի՝ Քանաքեռին հատուկ է *ւ*-ի առնմանական փոփոխությունը *ն*, *ը*, *ռ* ձայնորդներից առաջ, ի տարբերություն Քանաքեռի՝ Երևանում *ը*-ն երբեմն քմայնանում է: Ինչևէ, հիշյալ 33 հատկանիշների մեծ մասով կենտրոնի խոսվածքը ընդհանրություններ է հանդես բերում Քանաքեռի և Նորքի խոսվածքների հետ: Ընդհանուր հնչյունական հատկանիշներ են բառամիջում ու բառավերջում ձայնեղ պայթականների ու հպաշփականների դիմաց շնչեղ խուլերի առկայությունը, նույն այդ դիրքերում խուլերի դիմաց հաճախ ձայնեղների առկայությունը, նախաբաղաձայնական դիրքում հպաշփականների դիմաց շփականների դրսևորումը, բառասկզբի *հօ*-ի դիմաց *ջօ*-ի առկայությունը, *խ*-ի դիմաց տարնմա-

Դիլանյանը, ծնվել է 1914թ.: Ջ.Բառնասյանը նշում է, որ մինչև 20-րդ դարի 30-ական թթ. Նորքը Երևանից դուրս առանձին գյուղ է եղել, ունեցել է իր գյուղխորհուրդը և քաղաքի շրհարի հետ կապված է եղել նեղլիկ ու դժվարանցանելի արահետով: Ըստ տետրը լրացնողի՝ Նորքի խոսվածքն ու բանահյուսությունը բավականին տարբեր են քաղաքի խոսվածքից ու բանահյուսությունից:

²⁵ Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 58, 77, 95, 115:

նական *հ*-ի գործածությունը, միջձայնավորային *ս*-ի դիմաց *հ*-ի հանդես գալը (տեհա), շեշտակիր *այ*-ի դիմաց *է* ձայնավորի, *ոյ* և *իւ* երկբարբառների դիմաց *ի* ձայնավորի դրսևորումները, միավանկ բառերի սկզբնային *է*-ից առաջ *յ*-ի և *ռ*-ից առաջ շրթնային տարրի հավելում, բառասկզբում ձայնավորից առաջ *հ*-ի անկանոն և թույլ հավելում (հալիվօր, հրնգեր, հառփել, հուլունք), *ը* ձայնավորի վերջնականկային շեշտակրությունը (էթը՛մ), *ը*-ով չվերջացող բառերի նախավերջականկային շեշտակրությունը՝ նախորդ ձայնավորի թուլացմամբ (սըվօրել, կըրկատան, խըրօվել): Քերականական ընդհանուր հատկանիշներ են (*ի/եր* – ով հոգնակիի՝ Ի հոլովման ենթարկվելը, բացառականի *ց*-ով և ներգոյականի *ուս*-ով կազմությունները, ցուցական դերանունների թեք հոլովաձևերում և հոգնակի ուղղականում հավելական *տ, ղ* – ի առկայությունը, անձի և իրի առումների տարբերակումը, *ուս* (*ըս*) – ով անկատար դերբայի առկայությունը, *գալ, լալ, տալ* բայերի դեպքում այդ դերբայի *լիս*-ով կազմությունը, օժանդակ բայի եզակի 3-րդ դեմքի *ա*-ով ձևի գործածությունը, նույն այդ բայի անցյալ անկատարի երկձայնավոր ձևերի մեջ *է*-ի սղումը և այլն:

Սակավ դեպքերում համեմատվող երեք խոսվածքները ըստ Ջահուկյանի ընտրած հատկանիշների հանդես են բերում տարբերություններ: Այսպես, կենտրոնի խոսվածքին բնորոշ է բառասկզբում շնչեղ ձայնեղ պայթականների և հպաշփականների առկայությունը²⁶: Մինչդեռ Քանաքեռի և Նորքի խոսվածքներում բառասկզբում ձայնեղ պայթականների ու հպաշփականների դիմաց առկա են խուլեր²⁷: Կենտրոնից բացի՝ Տ -

²⁶ Ռ.Մարկոսյանը նշում է, որ շնչեղ ձայնեղները հարազատ են բարբառի խոսվածքների գերակշիռ մասին (տե՛ս Ռ.Մարկոսյան, նշվ. աշխ., էջ 49): Ա.Ղարիբջյանը Արարատյան բարբառն ընդգրկում է քառաստիճան բաղաձայնական համակարգ ունեցող բարբառների խմբում (տե՛ս Ա.Ղարիբջյան, նշվ. աշխ., էջ 60):

²⁷ Այս հատկանիշը բնորոշ է նաև այլ, օրինակ՝ Արմավիրի ու Արգավանդի խոսվածքները (տե՛ս Մ.Բաղդասարյան-Թափալցյան, նշվ. աշխ., էջ 17):

ի քմայնացածություն արձանագրվել է նաև Նորքի խոսվածքում, բայց միայն *բերան* բառի ձևերում՝ *պէյնէր, պէյնից, պէյնօվ*: Ժխտական ձևերի հետադաս գործածություն (մասնակի) նկատվում է միայն կենտրոնի խոսվածքում՝ *սիրըմ չէմ, գ՛րբէլ չի*²⁸:

Գ.Ջահուկյանի աղյուսակներում չընդգրկված, բայց դիտարկվող բարբառային տարածքում դրսևորվող այլ հատկանիշների մեծ մասը նույնպես ընդհանուր է երեք խոսվածքներին: Այդպիսիք են հետևյալները. բառասկզբի ձայնավորի սղում *ղ,ր-ից առաջ* (ղուղ, դօրթ, ըրէխա, ըղուղ, ըդօրթ, ըրօրէլ), օտար բառերի սկզբում *ղ-ի* արտասանություն (ղագ, դայիմ), մի շարք բառերի սկզբում *գ-ի* կամ *կ-ի* դիմաց *ք* (քըշէքք, քըթնէլ, քըշէր, քըթալ), բառավերջի *ա>է* հնչյունափոխություն *ք-ից առաջ* (ճամփէք), Ո ներքին հոլովման դրսևորում նաև այլ բառերի դեպքում (հընգօր, անօր), բառավերջում որոշ հնչյունների անկում (չէմ տալի, յէս էմ սիրէ, խըմի՛, պահի՛), սովորական շարադասության դեպքում *չէ-ի* դիմաց *չի* (քընած չի), բայական չ ածանցի բացակայություն (փախնէլ, թըռնէլ):

Համեմատվող խոսվածքներում տարբեր դրսևորում ունեն մի շարք հատկանիշներ: Այսպես, բազմավանկ բառերի թէքման դեպքում բառավերջի *ու>վ* անցում նկատվել է միայն կենտրոնի և Քանաքեռի խոսվածքներում (փէսացվի, հարսնացվի), կենտրոնի և Քանաքեռի խոսվածքներում դիտարկվել է բացառական, գործիական և ներգոյական հոլովների հողառություն (գ՛էլիցը, հօրօվը, գ՛էղըմը), իսկ Նորքի խոսվածքում՝ միայն ներգոյականի հողառություն, *ւի՛* արգելականի հոգնակիի ձև արձանագրվել է կենտրոնում (միք) և Քանաքեռում

²⁸ Նկատենք, որ կենտրոնի կամ Քանաքեռի խոսվածքներին Ջահուկյանի վերագրած որոշ հատկանիշներ (ոչ բառասկզբի շնչեղ խուլերի ապաշրնչեղության առկայություն, քմայնացած ետնալեզվայինների առկայություն ոչ փոխառյալ բառերում, *ւ-ի* առնմանական փոփոխություն *ն, ր, ռ* ձայնորդներից առաջ) բարբառագետները ծրագիրը լրացնելիս երեք խոսվածքներից որևէ մեկում չեն արձանագրել:

(մէք), հատուկ տեղանունների Ա հոլովում արձանագրվել է կենտրոնում (Ուշագնա) և Նորքում (Նորքա), Քանաքեռում և Նորքում արձանագրվել են *կաղնէլ, նէքսէվ* ձևերը, կենտրոնում՝ *կայնէլ, նէքս* ձևերը և այլն: Միայն Քանաքեռի խոսվածքում դիտարկվել է ն-ով ավարտվող բազմավանկ բառերի հոգնակիի կազմություն *էր* մասնիկով՝ *ամանէր, պէրանէր, կացինէր, հարեվանէր*: Միայն Նորքի խոսվածքին բնորոշ հատկանիշներ են ըղձական անցյալի ձևերում *ի* բաղադրիչի բացակայությունը՝ *կառթայ, կառթայր, կառթար, կառթայնք, կառթայք, կառթայն, կըրէլ, կըրէյր, կըրէր, կըրէյնք, կըրէք, կըրէն*, անցյալ կատարյալի եզակի թվի առաջին դեմքում *ւ*-ի դրսևորումը՝ *խըմհւմ, մընացիւմ, հասամ*:

Դիտարկվող երեք խոսվածքները զանազանություններ հանդես են բերում Գ.Ջահուկյանի աղյուսակներում ընդգրկված և մեր դիտարկած 12 հատկանիշների շրջանակում: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ իրար ավելի մոտ են կենտրոնի և Քանաքեռի խոսվածքները՝ տարբերությունների 5,5 միավորով: Կենտրոնը և Նորքը ունեն 8,5 միավոր տարբերություններ, Քանաքեռը և Նորքը՝ 7 միավոր տարբերություններ:

Հետաքրքրական է դիտարկել, թե խոսակցական հայերենին Երևանի խոսվածքի բարբառային որ հատկանիշներն են փոխանցվել, մանավանդ որ, ինչպես նկատել է Է.Աղայանը, «Արևելյան հատվածի համար ժողովրդախոսակցական լեզուն կարելի է համարել արարատյան բարբառի ու դրա խոսվածքների ընդհանրությունը ներկայացնող խոսակցական ընդհանուր լեզուն»²⁹: Նախ նկատելի է, որ դիտարկվող երեք խոսվածքներում դրսևորման տարբերություններ ունեցող ոչ մի հատկանիշ խոսակցական հայերենին չի անցել (այդ հատկանիշներն են՝ բառակազմում շնչեղ ձայնեղ պայթականների և հպաշփականների առկայություն, բառակազմում նախնական ձայնեղ պայթականների ու հպաշփականների դիմաց խուլերի

²⁹ Է. Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ 110:

առկայություն, *բ*-ի քմայնացածություն, ժխտական ձևերի հետադաս գործածություն, բազմավանկ բառերի թեքման դեպքում բառավերջի *ու>ւ* անցում, բացառական, գործիական և ներգոյական հոլովների հոդառություն, *ւի*՝ արգելականի հոգնակիի ձև, հատուկ տեղանունների Ա հոլովում, *կաղնէլ, նէքսէլ* ձևեր, *ն*-ով ավարտվող բազմավանկ բառերի հոգնակիի կազմություն *էր* մասնիկով, ըղձական անցյալի ձևերում *ի* բաղադրիչի բացակայություն, անցյալ կատարյալի եզակի թվի առաջին դեմքում *ւ*-ի առկայություն): Խոսակցական հայերենին խորթ են նաև բարբառային հայերենում քիչ տարածված, բայց դիտարկվող երեք խոսվածքներում էլ դրսևորվող այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ բառասկզբում *հօ*-ի դիմաց *ջօ*-ի առկայություն (40)³⁰, *իւ*-ի դիմաց տարնմանական *հ*-ի գործածություն (36,5), միջձայնավորային *ս*-ի դիմաց *հ*-ի դրսևորում (42), *ոյ* և *իւ* ըկբարբառների դիմաց *ի* հնչյունի առկայություն (համապատասխանաբար՝ 14 և 30), *ը* ձայնավորի վերջնականակային շեշտակրություն (49), *ը* - ով չվերջացող բառերի նախավերջավանկային շեշտակրություն (նախորդ ձայնավորի թուլացմամբ) (36,5), ինչպես նաև մեր կողմից դիտարկված այդ կարգի այլ հատկանիշներ, ինչպես՝ բառասկզբի ձայնավորի սղում *դ,բ*-ից առաջ, Ո ներքին հոլովման գործառության ընդլայնում և այլն: Խոսակցական հայերենում դրսևորվում են դիտարկվող երեք խոսվածքներին բնորոշ այն հատկանիշները, որոնք բարբառային հայերենում կամ բարբառների արևելյան խմբակցությունում ունեն լայն տարածում կամ ցայտուն տարբերություններ չեն հանդես բերում գրական լեզվից և շատ դեպքերում պայմանավորված են նաև արտասանական նպատակահարմարությամբ: Նման հատկանիշներից են՝ բառամիջում ու բառավերջում ձայնեղ պայթականների ու հպաշփականների դիմաց շնչեղ խուլերի առկայություն (98),

³⁰ Փակագծերում բերվում են բարբառախոս տարածքներում հատկանիշների տարածվածության ցուցանիշները ըստ Գ.Զահուկյանի տվյալների:

հիշյալ դիրքերում նույն կարգի խուլերի դիմաց հաճախ ձայնեղների առկայություն (78,5), շեշտակիր *այ*-ի դիմաց *է* ձայնավորի դրսևորում (82,5), միավանկ բառերի սկզբնային *ե*-ից առաջ *յ*-ի և *ռ*-ից առաջ շրթնային տարրի հավելում (90,5), *(ն)եր* – ով հոգնակիի Ի հոլովում (43)³¹, բացառականի *ց*-ով կազմությունը (50), ներգոյականի *ուս*-ով կազմությունը (45), անձի և իրի առումների տարբերակում (60), *ուս* (ըմ)-ով անկատար դերբայի գործածություն (33,5), միայն *գալ*, *լալ*, *տալ* բայերի դեպքում *լիս*-ով անկատարի գործածություն (35), օժանդակ բայի եզակի 3-րդ դեմքի *ա*-ով ձևի գործածություն (49,5), օտար բառերի սկզբում *ղ*-ի առկայություն, բառավերջի *ա>է* հնչյունափոխություն *ք*-ից առաջ, բառավերջում մի շարք բաղաձայնների անկում, սովորական շարադասության դեպքում *չէ*-ի դիմաց *չի* ձևի գործածություն, բայական *չ* ածանցի բացակայություն և այլն:

Ընդհանուր առմամբ, թերևս պետք է ընդունել, որ Երևանի խոսվածքը (ինչպես նաև Քանաքեռի և Նորքի խոսվածքները), հիմք դառնալով խոսակցական հայերենի համար, տարրալուծվել է նրա մեջ: Խոսվածքից խոսակցական հայերենին են անցել առավել տարածված կամ հիմնականում արևելյան բարբառներին հատուկ և գրական լեզվին խստորեն չհակադրվող հատկանիշները: Միաժամանակ, խոսակցական հայերենն ունի իր սեփական հատկանիշները, գործառության ու զարգացման յուրահատկությունները, և իհարկե այստեղ կան իրողություններ, որոնք բարբառային ծագում չունեն կամ Երևանի խոսվածքի հատկանիշը չեն³²:

³¹ Այս և հետագա մյուս հատկանիշները լայն տարածում ունեն բարբառների արևելյան խմբակցությունում:

³² Այդպիսիք են, օրինակ, *ղ,տ,թ* պայթականների քմայնացումը /մածյան, կոլեկծիվ, արցոք, ռաձյո/, պատճառական բայերի անցյալ կատարյալում հավելական հիմքակազմիչ գործածությունը /մտեցրեցի/, որոշ բառերի Ու հոլովմամբ ձևերը /տղու, էրէխու, պապու, տատու, իշու/ և այլն: Այս մասին

Viktor Katvalyan-On the Speech of Yerevan.-Today's Yerevan speech can be judged about based on previous observations and dialectal realities recorded by the dialectologists within a proper project in the last quarter of the previous century. It can be stated that the speech of Yerevan, becoming the basis for the spoken Armenian language, dissolved in it. The spoken Armenian language inherited the most common features of the speech of Yerevan or the characteristics that are mainly peculiar to eastern dialects but not severely incompatible with the literary language. The same assumption is true about the speeches of Kanaker and Nork that are not much different from the speech of the center of Yerevan.

Виктор Катвалян - О говоре Еревана .- В наши дни о говоре Еревана можно судить, опираясь на предыдущие наблюдения, и по диалектным реалиям, зафиксированным диалектологами в рамках соответствующего проекта в последней четверти прошлого века. Можно сказать, что говор Еревана, став основой для разговорного армянского языка, растворился в нем. Разговорный армянский язык унаследовал более общие черты или особенности говора Еревана, которые сильно не отличаются от литературного языка и характерны главным образом для восточных диалектов,. Такое же предположение верно и в отношении говоров Канакера и Норка, которые не сильно отличаются от говора центра Еревана.

ՆՈՐ ԲԱՌԵՐԻ ՄԵՔԵՆԱԿԱՆ ՈՐՈՆՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Արդի հայ բառարանագրության առջև դրված խնդիրներից հարկ է էապես կարևորել ինչպես հայերենի բառապաշարի համաժամանակյա և տարաժամանակյա ուսումնասիրությունը, բառերի իմաստային և հասկացական կողմերի բացահայտումն ու քննությունը, այնպես էլ լեզվի բառապաշարի համակարգչային շտեմարաններ, տվյալների հենքեր ստեղծելու և դրանք նորաբանություններով, նոր բառերով մեքենական եղանակով հարստացնելու հարցերը:

Ինչպես հայտնի է, նորաբանությունները բառային այն միավորներն են, այն նոր բառերը, արտահայտությունները և իմաստները, որոնք լեզվի տվյալ փուլում գիտակցվում են իբրև նոր իրողություններ, դեռևս չեն մտել գործուն բառապաշարի մեջ, չունեն ընդհանուր տարածում, լայն և հաճախական կիրառություն, իսկ առանձին դեպքերում նույնիսկ չեն արձանագրվել տվյալ լեզվի համապատասխան բառարաններում¹:

Հատկապես վերջին տասնամյակներում հայ լեզվաբանության մեջ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել նորաբանությունների և նոր բառերի տարբերակման խնդրին, դրանց իմաստային քննությանը, բառակազմական կաղապարների վերլուծությանը: Առավելապես կարևորվել է նաև նորաբանությունների բառարանների ստեղծումը, որը պայմանավորված է հայերենի բառապաշարի արդի վիճակն արտացալող բացատրական բառարանի բացակայությամբ, քանի որ համեմատաբար վերջին շրջանում ստեղծված բացատրական բառարաններից ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմած «Ժամանակակից հայերենի բացատրական բառա-

¹ Տե՛ս **Լ. Եզեկյան**, *Հայոց լեզվի ռճագիտություն*, Ե., 2007, էջ 132:

րանի» (1969-1980), Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» (1976), Հ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական բառարանի» (1973) լույսընծայումից անցել է մի քանի տասնամյակ: Այդ ընթացքում լեզվի բառապաշարը կրել է նկատելի փոփոխություններ. մի կողմից՝ դուրս են մնացել բազմաթիվ հնաբանություններ, սակավ գործածական բառեր, մյուս կողմից՝ բառապաշարը համալրվել է հսկայական թվով նորաբանություններով, որոնցից շատերը տարիների ընթացքում լայնորեն գործածվել են և համալրել հայերենի բառապաշարի հարուստ բառազանձը:

Վերոնշյալ բացատրական բառարանները չեն ներառում լեզվում հաճախադեպ կիրառություն ունեցող բոլոր նորակազմությունները, ուստի ժամանակ առ ժամանակ հրատարակվում են նորաբանությունների բառարաններ: Մինչև օրս ստեղծված նորաբանությունների բառարաններից կարող ենք առանձնացնել Ֆ. Խլղաթյանի «Բառարան-տեղեկատուն (նոր բառեր և իմաստներ)» (1982), որն ընդգրկում է 70-80-ական թթ. ժամանակակից հայերենում ստեղծված (մասամբ նաև նախորդ բառարաններից դուրս մնացած) և այդ տարիների պարբերական մամուլում գործածված բառերը: Բառարանից դուրս են մնացել նորագույն գեղարվեստական գրականության մեջ գործածված, սակայն լայն կիրառություն չունեցող հեղինակային նորակազմությունները. լեզվաբանի գլխավոր նպատակը եղել է հաճախակի գործածվող բառերը ներկայացնելը: Հաջորդը Փ. Մեյթիխանյանի «Նոր բառերի բացատրական բառարան» է, որը պարունակում է վերջին տարիներին մամուլում և գեղարվեստական գրականության մեջ գործածված շուրջ 3000 նոր բառեր ու տերմիններ²:

Նորաբանությունների բառարանների թվում առանձնանում է Ս. Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարանը» (2002): Ունենալով շուրջ 30 տարվա ժամանա-

² Ս. Էլոյան, *Արդի հայերենի նորաբանությունների բառարան*, Ե., 2002, էջ 7:

կահատվածում հայ մամուլի և գեղարվեստական գրականության մեջ գործածված նորաբանությունների հարուստ բառաքանակ լեզվաբանն իր բառարանում ընդգրկել է բառագիտական տեսակետից բոլոր տիպի նորաբանությունները՝ նորակազմ բառերը, տերմինները (ինչպես փոխառյալ, այնպես էլ սեփական բառակազմական կաղապարներով կազմված), իմաստային նորաբանությունները (արդեն եղած բառերի նոր ստացած իմաստները), նոր դարձվածքները, կայուն և ազատ բառակապակցությունները, հապավումները (ոչ զուտ տառային), առանձնահատուկ արտահայտությունները, ինչպես նաև անհատական-ոճական նորաբանություններն իրենց դիպվածական և հեղինակային տեսակներով³:

Վերոնշյալ բառարանների համեմատությամբ իրենց ընդգրկած բառապաշարի ծավալով և բազմազանությամբ, պարբերաբար հրատարակվելու շնորհիվ առավել մեծաթիվ բառաքանակ ներկայացնելու հնարավորությամբ շահեկանորեն տարբերվում են ԳԱԱ Հ. Աճառյանի լեզվի ինստիտուտում պարբերաբար հրատարակվող «Նոր բառերի» պրակները: Պրակներում ներկայացված են համացանցից, մամուլից, գիտական և գեղարվեստական գրականությունից, հետուստատեսությունից, գովազդային հոլովակներից ու ցուցանակներից քաղված մեծաթիվ բառեր, որոնք վկայված չեն եղած բացատրական և նորաբանությունների բառարաններում: Պրակների հեղինակները նպատակ ունեն հավաքված հազարավոր նորակազմություններից, որոշակի սկզբունքով բառընտրություն կատարելով, կազմել «Նոր բառերի ընդարձակ բառարան», որում կարտացոլվեն XXI դարասկզբի հայերենի բառապաշարում տեղի ունեցած տեղաշարժերը⁴:

³ Տե՛ս նշվ. աշխ., էջ 6:

⁴ Ա. Գալստյան, Գ. Հովսեփյան, Ա. Մահակյան, Լ. Մահինյան, *Նոր բառեր. Ա պրակ*, Ե., 2015, էջ 4:

Մեծապես կարևորելով այս և հետագա շրջանում նորաբանությունների ու նոր բառերի համակողմանի քննությունն ու համապատասխան բառարանների ստեղծումը, կարծում ենք՝ արդի հայ բառարանագրության առաջնային խնդիրը ոչ թե նորաբանությունների, այլ հայերենի նորագույն բացատրական բառարանի ստեղծումն է: Տրամաբանական չէ քառորդ դար առաջ ստեղծված և լայն գործածություն ունեցող բառերը նորաբանություն համարել միայն այն պատճառով, որ դրանք վկայված չեն կես դար առաջ ստեղծված բացատրական բառարաններում: Նորագույն բացատրական բառարանի նպատակը պետք է լինի բառապաշարի համաժամանակյա վիճակի արտացոլումը, հետևաբար հայերենի հիմնական բառաֆոնդին պատկանող բառերին զուգահեռ վերջին տասնամյակներում ստեղծված հազարավոր բառերը կներկայացվեն ոչ թե որպես նորաբանություն, այլ հայերենի բառապաշարի մաս: Համակարգչային բառարանագրության զարգացման այս շրջանում միայն նորագույն բացատրական տպագիր բառարանն այլևս բավական չէ. ինչպես հայտնի է, համակարգչային տեխնիկան լեզվաբան-բառարանագիրներին առաջարկում է բառապաշարի մշակման և ներկայացման առավել լայն հնարավորություններ: Ուստի պետք է կարևորել բացատրական բառարանի հիման վրա հայերենի բառապաշարի լիակատար համակարգչային շտեմարան ստեղծելու հանգամանքը: Չխոսելով համակարգչային շտեմարանի՝ տպագիր բառարանի համեմատությամբ ունեցած նկատելի տարբերությունների մասին, նշենք միայն, որ այն հնարավոր կլինի շարունակ հարստացնել-համալրել նոր բառերով ու նորաբանություններով՝ առանց ժամանակային որևէ սահմանափակման: Ուստի հարկ կլինի նաև վերանայել նորաբանությունների ավանդական ըմբռնման հարցը, քանի որ նորաբանություն են համարվում բառարաններում դեռևս չընդգրկված բառերը, իսկ շտեմարանում կարելի է դրանք ավելացնել ցանկացած պահի: Ակնհայտ է, որ համակարգչային շտեմարանը կարող է լիովին արտացոլել

բառապաշարի արդի վիճակը ցանկացած ժամանակահատվածի հարաբերությամբ՝ ի տարբերություն տպագիր բառարանի, որի հրատարակումից անցնում են տասնամյակներ, և առաջանում է զգալի անջրպետ տվյալ փուլում լեզվի բառապաշարի և տպագիր բառարանում ներկայացված բառապաշարի միջև: Ավելին՝ շտեմարանն առավել լիակատար կլինի, եթե ներկայացնի ոչ միայն գրական արևելահայերենի, այլև արևմտահայերենի բառապաշարը: Պետք է մեծապես կարևորել արևելահայերեն-արևմտահայերեն առցանց բառարան ստեղծելու հանգամանքը՝ գրական հայերենի այս երկու ճյուղերի մերձեցման ուղիների որոնման համատեքստում:

Պակաս կարևոր չէ նաև նորաբանությունների բառարանները հարստացնելու, տեքստերում գործածված նորակազմությունների որոնման գործընթացն առավելագույն չափով մեքենայացնելու խնդիրը:

Հարկ է նկատել, որ վերջին տասնամյակներում ստեղծված նոր բառերի և նորաբանությունների իրական թիվն անհամեմատ ավելի մեծ է, եթե այն համեմատենք նորաբանությունների բոլոր բառարաններում ընդգրկված բառաքանակի հետ: Ուստի բովանդակային առումով առկա նորաբանությունների բառարանների հիմնական թերությունն այն է, որ դրանցում ներկայացված են լեզվում ստեղծված մեծաթիվ նորաբանությունների միայն փոքր մասը: Ոչ համաչափ են ընտրված նաև այն տպագիր և էլեկտրոնային աղբյուրները, որոնցից քաղվում են նորաբանությունները:

Նորաբանությունների բառարանները չեն արտացոլում նորաբանությունների ստեղծման ընդհանուր պատկերը, հիմնական օրինաչափությունները, քանի որ առանց տեխնիկական որևէ օժանդակության՝ անհնար է առանձնացել տեքստերում գործածված բոլոր նորաբանությունները: Հետևաբար հատկապես հիմա լեզվաբանների կողմից նորաբանությունների որոնման, քարտագրման ավանդական եղանակն այլևս չի կարող

համարվել նորաբանությունների բառարանների կազմման հուսալի ճանապարհ:

Եթե նախկինում տեքստի հանրային տարածման միակ եղանակը դրա տպագրությունն էր, այժմ համացանցի ընձեռած լայն հնարավորությունների շնորհիվ նկատելիորեն հեշտացել է էլեկտրոնային տեքստերի կազմումը և դրանց հրապարակումը համացանցում: Ասվածի լավագույն ապացույցը հարյուրավոր հայալեզու կայքերի առկայությունն է: Նույնիսկ վերջին շրջանում ստեղծված նորաբանությունների բառարանների հիմքում առավելապես տպագիր աղբյուրներն են, ընդ որում՝ նորաբանությունները քաղված են հիմնականում գեղարվեստական գրականությունից, գրականագիտական, լեզվաբանական ուսումնասիրություններից, ամսագրերից («Անդին», «Աստղիկ», «Արտասահմանյան գրականություն», «Գարուն», «Լրաբեր հասարակական գիտությունների», «Նորք», «Պատմաբանասիրական հանդես») և լրագրերից («Ագրոլրատու», «Ազգ», «Գրական թերթ», «Երևանի համալսարան» ամսաթերթ, «Իրատես», «Հայաստանի Հանրապետություն», «Հրապարակ»)⁵: Մինչդեռ համացանցային ամենահայտի և տարածված լրատվական ու մեդիա կայքերը բացակայում են բառարանների օգտագործված գրականության ցանկերից: Կարծում ենք՝ նորաբանությունների որոնումը պետք է սկսել հենց այդ կայքերում եղած էլեկտրոնային տեքստերից, քանի որ դրանցում նույնիսկ օրվա կտրվածքով կարելի է գտնել լայն և հաճախակի կիրառություն ունեցող մեծաթիվ նորաբանություններ՝ ի տարբերություն գեղարվեստական գրականության մեջ սակավ գործածություն ունեցող հեղինակային նորակազմությունների:

Հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում տեղի են ունենում արմատական վերափոխումներ, որոնք էլ իրենց հերթին հանգեցրել են մեծ թվով նորաբանությունների ստեղծմանը: Այնուամենայնիվ, դրանցից նույնիսկ հաճախա-

⁵Տե՛ս նշվ. աշխ., էջ 151-155:

դեպ գործածվողները բացակայում են նորաբանությունների բառարաններից: Օրինակ՝ *վերջին շրջանում էլեկտրոնային տարբեր համակարգերում լայնորեն օգտագործվում են այնպիսի վճարամիջոցներ, ինչպիսիք են կրիպտոարժույթները: 2013 թվականից բիթքոյինը* դարձավ ամբողջ աշխարհում շրջանառվող ամենատարածված **կրիպտոարժույթը**: Կան **կրիպտոծառայություններ** մատուցող բազմաթիվ ընկերություններ: **Կրիպտոարժույթ** ստանալու ողջ գործընթացը կոչվում է **մայնինգ**, այն մասնագիտացված համակարգիչները, որոնք ապահովում են **բիթքոյինների** ցանցի անվտանգությունը, հաստատում են վճարումները և թողարկում թվային նոր դրամներ, անվանվում են **մայներ**: **Բիթքոյինով** կատարվող գործարքները գրանցելու եւ հաստատելու համար գործածվող թվային տեխնոլոգիան կոչվում է **բլոկչեյն** (բլոկների շղթա): **Մայներ, մայնինգ, բլոկչեյն** օտարաբանությունները հայերեն համարժեքներով փոխարինելու խնդիր կա, իսկ **կրիպտոարժույթ, կրիպտովայրուտա, կրիպտոարժութային, կրիպտոծառայություն, կրիպտանվտանգություն, կրիպտովիրուս** բառերը, որոնք էլեկտրոնային մամուլում ունեն լայն և հաճախադեպ կիրառություն, նորաբանությունների բառարաններում ընդգրկված չեն: Վերոնշյալ մասնավոր օրինակներն ընդգծում են էլեկտրոնային տեքստերից նորաբանությունների և նոր բառերի որոնումն առավելագույն չափով լիակատար դարձնելու և մեքենայացնելու կարևորությունը: Դրա միակ եղանակը հայերենի *մոնիտորային կորպուսի* ստեղծումն է: Ընդհանուր առմամբ՝ կորպուսները հսկայական նշանակություն ունեն լեզվական փաստերի քննության համար, քանի որ պարունակում են տասնյակ հազարավոր տեքստեր: Այս դեպքում մոնիտորային կորպուսը ոչ միայն հնարավոր կդարձնի կատարել արդի հայերենի լեզվական բոլոր իրողությունների համակողմանի ուսումնասիրություն տեքստային մեծաթիվ օրինակներով, այլև էապես կոյուրացնի բառարանագրական աշխատանքները: Համացանցային զանազան աղբյուրներից մեքենական եղանակով

հարստացվող տեքստային հենքի անկայությունը հնարավոր կդարձնի հստակ տեսնել արդի հայերենի բառապաշարում տեղի ունեցող փոփոխությունները, քննել նորաստեղծ բառերը, դրանց իմաստային փոփոխությունները, ճշտել գործածության ոլորտները: Ավելորդ է նշել, թե որքան կմեծանա մոնիտորային կորպուսի կարևորությունը, եթե այն դառնա զուգադրական կորպուս՝ էլեկտրոնային աղբյուրներից համարվելով ոչ միայն արևելահայերեն, այլև արևմտահայերեն տեքստերով:

Այսպիսով՝ բառապաշարի համակարգչային շտեմարանի և համացանցային տարբեր աղբյուրներից մեքենական եղանակով ինքնահամարվող տեքստային հենքի հիման վրա ստեղծված նոր բառերի մեքենական որոնման համակարգի ստեղծումն արմատապես կփոխի բառարանագրական աշխատանքների բնույթը, ընդգրկման ծավալը և զարգացման հեռանկարները:

Frida Hakobyan - The problems of the automatic search of new words. - In the last decades linguists have paid a special attention to the creation of dictionaries of neologisms. It is conditioned by the lack of a dictionary reflecting the current state of the Armenian vocabulary. Nevertheless, the current dictionaries of neologisms do not reflect the general picture of neologisms because without any technical assistance it is impossible to get all neologisms used in texts. As a solution to the problem, it is suggested to create a lexical database and a monitor corpus enriched with a variety of web sources.

Фрида Акопян - Проблемы автоматического поиска новых слов. - В последние десятилетия лингвисты уделяют особое внимание созданию словарей неологизмов. Текущие словари неологизмов не отражают общую картину неологизмов, потому что без какой-либо технической помощи невозможно получить все неологизмы, используемые в текстах. В качестве решения проблемы рекомендуется создать лексическую базу данных и корпус, обогащенный различными веб-источниками.

**ՀԱՅԵՐԵՆԻ ՆԱԽԱԳՐԱՅԻՆ ՁԵՎԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ
ՄԵԹՈԴԻԿԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ**

Համեմատական լեզվաբանության սկզբնավորումից ի վեր առաջնային խնդիրներից է եղել ցեղակից լեզուներում պահպանված ձևերի հիման վրա հիմք-լեզվի (= նախալեզվի) ելակետային միավորի հաստատումը, ընդ որում նրանց ցեղակցության աստիճանի պարզաբանման միտումով: Այն առավելապես ունեցել է ցեղակից լեզուների կրող ժողովուրդների թե՛ անցյալի և թե՛ տվյալ ժամանակաշրջանի, այսպես կոչված, «պատմության փիլիսոփայության» (Ֆ. Շլեգել, Յ. Գ. Հերդեր) վերհանման նպատակ:

Ռ. Ռասկի աշխատությունները չունեցան այն լայն տարածումը, որ եղավ գերմանացի համեմատաբանների դեպքում (Ֆ. Բոպ. Ա. Շլայխեր և այլք), որովհետև դանիերեն գրված նրա աշխատություններում վերականգնելի ձևերի նշանակումներն այլ էին, քան գերմանականի դեպքում էր, որ ավելի ընդունելի եղավ իր ժամանակի, ինչպես նաև հետագայի համար: Վերականգնվող ձևերի նշանակումները սովորաբար արվում են լատինական («միջազգային») տառադարձությամբ՝ հազեցած լրացուցիչ տարբերիչ (դիակրիտիկ) նշաններով:

Հնդեվրոպական լեզուների նշանակումները գնալով տարբեր տեսք են ստացել հնից նորը տրամաբանությամբ: Մակայն այստեղ կան զգալի դժվարություններ՝ կապված նշանակման այն տարբերության հետ, որ գալիս է լեզվաբանական առանձին դպրոցների ավանդույթից:

Նախագրային ձևերի մեթոդիկային է վերաբերում ոչ միայն հնդեվրոպականի ներսում, այլև հնդեվրոպականի և այլ խմբի («լեզվաընտանիքի») դեպքում գործադրվող նշանակումների հարցում: Այսպես, հայ. բոյս- (բուս-անիս < բոյ-ս) «աճել,

վերընձյուղվել, բուսնել») (բառ)արմատի համար հնդեվրոպականի ներսում կատարվող համեմատությունների դեպքում ավանդաբար վերականգնվում է *bhou-ko- (հուն. φυτόν «բույս, բողբոջ. զավակ, սերունդ», ռուս. билье «բույս»), իսկ միջընտանիքային զուգաբանությանների համար՝ bheuH «աճել, լինել» նախաձև. նոստր. buHi «աճել, ծագել» (ուրալ. руге «ծառ», այլթ. бүү «լինել»)¹:

Եվ առհասարակ հնդեվրոպական ցեղակից լեզուների նախագրային ընդհանուր վիճակ ներկայացնող ձևերի նշանակման մեթոդիկայի առումով կարևոր է նաև լուծել նրանց հնչյունական արտացոլման ճշգրտության հարցը:

Հիշյալ տիպի լեզուների համեմատական ուսումնասիրության պատմությունը ցույց է տալիս, որ տարբեր ժամանակներում, նույնիսկ նույն ժամանակի մեջ գիտական առանձին դպրոցների ներկայացուցիչների, այլև նրանց հետևորդների կողմից հանդես են բերվել բավականին տարբեր մոտեցումներ: Գիտության այսօրվա մակարդակից ելնելով կարելի է առանձնացնել երկու մոտեցում՝ ավանդական և ժամանակակից, հաշվի առնելով նաև լեզվաբանական դպրոցների դավանած տարբերությունները:

Հայերենի տվյալների ուսումնասիրության բնագավառում առաջին մոտեցմանը հարում է Հ. Աճառյանը, որին հետևում են Է. Աղայանը, Գ. Ջահուկյանը և ուրիշներ, թեև վերջինս ի հայտ է բերում ակնհայտ կատարելագործում (առավել ճշգրտություն, նոր նշանակումներ և այլն): Խորհրդային տարիների ականավոր լեզվաբաններից հատկապես երկուսի՝ Թ. Գամկրելիձեի և Վյաչ. Իվանովի աշխատություններում առաջ է քաշվում նշանակման նոր մոտեցում, ընդ որում ոչ միայն հնչյունական նոր որակի միավորների (հնչատարրերի) հստակ առանձնաց-

¹ Sté u B. M. Иллич-Свитыч, *Опыт сравнения ностратических языков*, М., 1971, էջ 184-185: Հմնտ. Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 72: Նույնի Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 135):

ման, այլ ն ան դրանց հնչույթաբանական նոր արժևորման տեսանկյունից: Այդ մոտեցմանն այս կամ այն չափով հետևում են հետագա շատ ուսումնասիրողներ, թեև լինում են նաև ավանդականի շարունակողներ, ինչպես նաև այն, որ այլ երկրների հետազոտողներ այս հարցում մնում են հետևորդ իրենց իսկ դպրոցի ունեցած (ստեղծած) ավանդույթի (դրանց այստեղ մամբաման չենք անդրադառնում բուն թեմայից չհեռանալու բերումով):²

Մեթոդիկայի առումով նպատակային է այն հարցը, թե հնդեվրոպական նախալեզվի տեսքով վերականգնված ինչպիսի ձևերից են ժառանգվել հայերեն նախագրային ձևերը, որոնք ավելի ուշ գրի են առնված նոր տիպի («մեսրոպյան») գրանշաններով արտահայտվող հայերենում (հին գրականում՝ գրաբարում):

Ստորև ընդամենը մեկուկես տասնյակ տարբեր կարգի օրինակների հիման վրա անդրադառնում ենք այդ երկու մոտեցումների մեթոդիկային (ռեպերտուարի ձևով), որն, ինչ խոսք, անհրաժեշտ է նկատի ունենալ այդ բնագավառում ձեռնարկվող հետագա աշխատանքների ժամանակ: Դրանք երկու կարգի են՝ միայն Աճառյանի և Ջահուկյանի վերականգնումներով, այլև դրանց հետ նաև Գամկրելիձեի և Իվանովի կողմից վերանայված նախալեզվյան ձևեր, որոնցից էլ, բնականաբար, ծագում են հայերեն ձևերը: Ստորև բերվող օրինակների դեպքում, բացի առաջինից, հնչյունական-նշանակումային տարբերությունները չենք մատնանշում:

1. *Աղբեր (աղբիր)*. ձայնավոր *e –ի և *t ձայնորդի ստորին աստիճանի նշանակման տարբերություն.

²Տե՛ս Վ. Համբարձումյան, *Հայերենի բառաբնական և ստուգաբանական ուսումնասիրություններ*, Ե., 2012: Վ. **Hambardzumyan**, *Armenian and Indo-European: Essays on Comparative Lexicology of the Armenian Language (Comparative-typological Variativity)*, Yerevan, 2014:

ա. հե. *bhreyr (ըստ Աճառյանի, հ. 1, էջ 125-126), որը, կարելի է ասել, ամբողջովին, Վալդե-Պոկոռնու բառարանի (1927-1931 թթ.) նշանակումն է (այդպես նաև մյուս դեպքերում):

բ. հե. *bhrēyr [*bh(ē)reu-] (ըստ Ջահուկյանի, ՀԼՊ, 1987, էջ 116), ըստ վերջինիս՝ հայերենը զուգահեռներ ունի բալթյան-սլավոնական լեզուներում, փոյուգերենում, վենետերենում, իտալյան և կելտական լեզուներում:

2. *Բալ*«մեզ, մշուշ».

ա. հե. *bhəl- (ըստ Աճառյանի, հ. 1, էջ 383).

բ. հե. *bhəli- [*bhəl-] (ըստ Ջահուկյանի, ՀԼՊ, 1987, էջ 57, 115), վերջինս նախորդից ոչ այնքան տարբեր. հայերենը զուգահեռներ ունի բալթյան լեզուներում, նաև հունարենում և իլիրերենում:

3. *Բալ*«խոսել. ասել».

ա. հե. *bhā-«խոսել» (ըստ Աճառյանի, հ. 1, էջ 383-387).

բ. հե. *bhā-«բան, բայ, բամ» (ըստ Ջահուկյանի՝ ՀԼՊ, էջ 56, 115), ընդ որում՝ բամ (<*bhāmi), բայ (>բայի. հե. *bhā-ti-s), բան (<*bhā-ni-s) [*bhā-]. հայերենը զուգահեռ ունի միայն հունարենում:

4. *Գետ*, -ոյ «գետ. ջուր».

ա. հե. *vedo- «ջուր. գետ» (ըստ Աճառյանի, հ. 1, էջ 537-538).

բ. հե. aǵed- (*ǵed-) (ըստ Ջահուկյանի, ՀԼՊ, 1987, էջ 50, 114). հայերենը զուգահեռներ ունի զգալի թվով ցեղակից լեզուներում՝ իրանական լեզուներ, թոխարերեն, խեթերեն, փոյուգերեն, հունարեն (?), ալբաներեն:

5. *Գեր* «վեր, ավելի. բարձր».

ա. հե. *ǵer-«բարձրանալ» (ըստ Աճառյանի, հ. 1, էջ 539-540).

բ. հե. *ǵer- [*ǵer-] (ըստ Ջահուկյանի՝ ՀԼՊ, էջ 156). Հայերենը զուգահեռներ ունի զգալի թվով լեզուներում, սակայն երկու կարգի առանձնակիության՝ 1. իրանական և թոխարա-

կան, բալթյան և սլավոնական լեզուներ, հունարեն, կելտական և գերմանական լեզուներ («ոչ այնքան բացահայտ, կազմությամբ մասնակրորեն համընկնող և իմաստով զգալիորեն շեղվող զուգահեռներ»՝ ±-ով, ն. տ., էջ 110), 2. փոյուգերեն, ալբաներեն, իտալյան լեզուներ («հայերենին զուգահեռ բառամիավորի բացակայությունը կենդանի ներկայացուցիչներ ունեցող լեզվախմբերում բոլոր դեպքերում բերվում է – -ով [իմա՝ մինուսով. Վ. Հ.]»):

6. *Գէջ*, - *ոյ* խոնավություն, թացություն».

ա. հե. *g²hoidh-io- (ըստ Աճառյանի, հ. 1, էջ 550-551).

բ. հե. *g²heid_o-? [*g²heid(h)-?] (ըստ Ջահուկյանի՝ ՀԼՊ, 1987, էջ 128), որ զուգահեռ ունի միայն սլավոնական լեզուներում:

7. *Գէտ* «գիտակ. գիտուն».

ա. հե. *veid // *woid (ըստ Աճառյանի, հ. 1, էջ 551-553).

բ. հե. *uoid[*u(e)idi] (ըստ Ջահուկյանի՝ ՀԼՊ, 1987, էջ 155), որ զուգահեռներ ունի մի շարք լեզուներում՝ իրանական, բալթյան-սլավոնական, հունարեն, ինչպես նաև գերմանական, իտալական և կելտական:

8. *Եղբայր*, -*աւր* «եղբայր».

ա. հե. *bhrátēr (ըստ Աճառյանի, հ. 2, էջ 15-16).

բ. հե. *bhrāter [*bhrāter] (ըստ Ջահուկյանի՝ ՀԼՊ, 1987, էջ), որ զուգահեռներ ունի գրեթե բոլոր խմբերի լեզուներում (բացառությամբ՝ ալբաներենի, պյուն-հարցականով՝ խեթերենի).

գ. հե. *b^[h]raHt^[h]er «եղբայր», «*Ես*-ի սերնդի արական արենակից հարազատ» (ըստ Դ.-Մ., 1984, էջ 754), որ զուգահեռներ ունի ցեղակից մի շարք լեզուներում՝ հին հնդկերեն. թոխարական, իրանական, կելտական և սլավոնական լեզուներ, ինչպես նաև հունարեն, գոթերեն, հին վերին գերմաներեն, հին անգլերեն և այլն:

9. *Մունգ(ք) // ծունկ(ն)*«(տաքի) ծունկ».*հայերենում հայտնի է այդ և ծունր ձևերով գ(կ) // ր տարբերակումով.*

ա. հե. *g'onwi (*gōnwi) (ըստ Աճառյանի, հ. 2, էջ 472-473. հմմտ. *ծունր* «ծունկ, ծունր».

բ. հե. *g'on-g- (*g'ōnɣi-i) [*g'enu-](ըստ Ջահուկյանի, ՀԼՊ, 1987, էջ 125), որ զուգահեռներ ունի իրանական լեզուներում (հարցականով) և հունարենում. հմմտ. *ծունր* «ծունկ, ծունր».

գ. հայ. *ծունր* «ծունկ, ծունր» <հե.*k'enu- «ծունկ»(ըստ Դ.-ԻՅ., 1984, էջ 78, 73), որ զուգահեռներ ունի իւթերենում, քոխարական լեզուներում, հին հնդկերենում, հունարենում, լատիներենում գոթերենում, հին բարձր գերմաներենում, հին անգլերենում և այլն:

10. *Կարկուտ* «կարկուտ».

ա. հե. *g²ag²rōdo- (<*g²rōd-)(> *կակրուտ > կարկուտ) (ըստ Աճառյանի, հ. 2 էջ 555-556).

բ. հե. *gə-grōdo[*grōd-] (ըստ Ջահուկյանի՝ ՀԼՊ, 1987, էջ), որ զուգահեռներ ունի բալթյան-սլավոնական և իտալյան լեզուներում.

գ. հե. *k'en-ā (= **g^uenā) (ըստ Դ.-ԻՅ., 1984, էջ 42. կրկնակի աստղանիշով՝ ավանդական վերականգնումը), որ զուգահեռներ ունի լատիներենում, հին սլավոներենում և այլն. գտնում են նաև, որ ըստ Մեյեի՝ հայ. ձևը արդյունք է արմատի վերակրկնության (ռեդուբլիկացիա):

11. *Կին* «կին».

ա. հե. *g^wen (*g^wēn-)// կան-(այբ)<հե. *g^wո (ըստ Աճառյանի, հ. 2, էջ 588-590).

բ. հե. *g^uenā [*g^uenā] // կան-(այբ)<հե. *g^uenai(ըստ Ջահուկյանի, ՀԼՊ, 1987, էջ 129), որ զուգահեռներ ունի հունարենում, սլավոնական և բալթյան լեզուներում, թրակերենում, կելտական և գերմանական լեզուներում.

գ. հե. *k'oen-«կին. մեկի կինը» (ըստ Դ.-ԻՅ., 1984. էջ 758), որ բազմաթիվ գուգահեռներ ունի ցեղակից լեզուներում՝ թոխարական, հին հնդկերեն, ավեստերեն, պարսկերեն, հունարեն (հոմերոսյան), գոթերեն, հին վերին գերմաներեն, հին անգլերեն, հին իռլանդերեն, ալբաներեն, պրուսերեն, հին սլավոներեն և այլն:

12. *Ունկն* «ականջ».

ա. հե. *ōsn- // *usn- [< հե. *aus, us, ōus, ōs և այլն, ընդհանուր՝ հե. *au«լսել»]«լսելիք(?)» (ըստ Աճառյանի, հ. 3, էջ 603-604).

բ. հե. *us-on-ko-m [*ōus-, *us-](ըստ Ջահուկյանի՝ ՀԼՊ, 1987, էջ 142), որ մոտակագուգահեռ ունի միայն հունարենում.

գ. հե. *o(H)us- (ըստ Դ.-ԻՅ., 1984, 78), որ զգալի թվով գուգահեռներ են բերվում ցեղակից լեզուներից՝ ավեստերեն, հունարեն (դորիական), ալբաներեն, լատիներեն, հին իռլանդերեն, հին վերին գերմաներեն, հին սլավոներեն, հին անգլերեն և այլն:

13. *Սկեսուր* «ամուսնումայր».

ա. հե. *sʷek'ru-(իգ. ձև) «ամուսնումայր». (ըստ Աճառյանի, հ. 4, էջ 228).

բ. հե. *k'ʷek'urā(<*sʷek'urā)[*sʷek'ru-]«սկեսուր»(ըստ Ջահուկյանի՝ ՀԼՊ, 1987, էջ 152), որ գուգահեռ ունի միայն իրանական լեզուներում.

գ. հե. *s'ock^[h]ruH- (ըստ Դ.-ԻՅ., 1984, էջ 760), որ լայն գուգահեռներ ունի ցեղակից լեզուներում՝ հին հնդկերեն, հունարեն (հոմերոսյան), լատիներեն, գոթերեն, հին վերին գերմաներեն, հին անգլերեն, սլավոնական լեզուներ և այլն:

14. *Սկեսրայր* «ամուսնու հայր».

ա. հե. *sʷék'uro-(ար. ձև) «ամուսնուհայր». (ըստ Աճառյանի, հ. 4, էջ 228).

բ. հե. *k' uək' urā (<*suek' urā) [*suek' ru-] «սկեսայր»] (ըստ Ջահուկյանի՝ ՀԼՊ, էջ 152), որ գուգահեռ ունիմիայն հունարենում և իրանական լեզուներում.

գ. հե. *s'°ek^[h]uro- (տարնմանությամբ՝ *s'°ek^[h]ru-ro- ձևից. ըստ Դ.-ԻՅ., 1984, էջ 760), որ կարևոր գուգահեռներ ունի միջարք լեզուներում՝ հին հնդկերեն, ավեստերեն, հունարեն, լատիներեն, գոթերեն, հին վերին գերմաներեն, սլավոնական լեզուներ և այլն:

15. *Sայգր // տազր* «ամուսնու եղբայր».

ա. հե. *daivér «ամուսնու եղբայր» (ըստ Աճառյանի, հ. 4, էջ 356).

բ. հե. *dāiüēr (նույնը) (ըստ Ջահուկյանի՝ ՀԼՊ, 1987, էջ 117, էջ 167-ում՝ *dāiüér), որ գուգահեռներ ունի մի շարք լեզուներում՝ հունարեն, բալթյան-սլավոնական լեզուներ, հունարեն, այլև իտալյան և կելտական լեզուներ (± -ով).

գ. հե. *t'aəu^or «ամուսնու եղբայր» (ըստ Դ.-ԻՅ., 1984, էջ 760), որ հատկանշական գուգահեռներ ունի ցեղակից լեզուներում՝ հին հնդկերեն, հունարեն, լատիներեն, հին վերին գերմաներեն, հին անգլերեն, հին սլավոներեն և այլն:

16. *Քոյր* «քույր».

ա. հե. *süésōr (նույնը) (ըստ Աճառյանի, հ. 4, էջ 586).

բ. հե. **süésōr- [*süzsōr-] (նույնը) (ըստ Ջահուկյանի՝ ՀԼՊ, 1987, էջ 152), որ գուգահեռներ ունի ոչ միայն հունարենում, իրանական, իտալյան և կելտական լեզուներում, այլև բալթյան-սլավոնական լեզուներում, ավրաներենում և իլիրերենում (վերջիններս «ոչ այնքան բացահայտ, կազմությամբ մասնակրորեն համընկնող և իմաստով զգալիորեն շեղվող գուգահեռներ» ± ով, ն. տ., էջ 110).

գ. հե. *s'°esor «քույր», «Ես-ի սերնդի մեծ ընտանիքի անդամ՝ կին» (*s'°e- «քո». հմմտ. *քո-յր*) (ըստ Դ.-ԻՅ., 1984, էջ 764, նաև 760 և այլն), որ գուգահեռներ ունի ցեղակից մի շարք լեզուներում՝ թոխարական, հինսլավոնական լեզուներ, հին հընդ-

կերեն, ավեստերեն, հունարեն, լատիներեն, հին իռլանդերեն, հին վերին գերմաներեն, անգլերեն և այլն:

Այսպիսով, հայերենի համեմատական ուսումնասիրության նոր փուլում կարևոր է ուշադրության կենտրոնում ունենալ վերականգնվող բաղադրիչների (առաջին հերթին՝ հնչունական մակարդակի միավորների) նշանակումը՝ ճիշտ կողմնորոշվել ավանդականի և նորի հարցում, մանավանդ այդ առումով նորագույն տեսությունների հարցադրումների մեջ:

Hambardzumyan Vazgen - On Some Issues about the Methodology of Nomination of Armenian Preliterary Forms. - The comparative study of the languages of the Indo-European type shows that at different times, even at the same time, quite different approaches were made by representatives of separate scientific schools, but also their followers.

Depending on the current level of science, two approaches can be distinguished: traditional and modern, taking into account the difference in linguistic schools.

To follow the latter is a prerequisite for modern sophistication.

Амбарцумян Вазген - О некоторых проблемах методологии назначения армянских предлитературных форм. - Сравнительное изучение языков индоевропейского типа показывает, что в разное время, даже в то же время, совершенно разные подходы были популярны среди представителей отдельных научных школ, а также их последователей.

В зависимости от современного уровня науки можно выделить два подхода: традиционный и современный, с учетом различия в лингвистических школах.

Последующее наблюдение является обязательным условием для новейших исследований.

Համբարձումյան Վազգեն (Հայաստան,
ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

**ՀՈԼՈՎՈՒՄ. ՀՈԼՈՎ ԵՎ ՀՈԼՈՎԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ (ՀՈԼՈՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ-ԿԱՐԳԱՅԻՆ
ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ)**

Հոլովումը բառի, ամենից առաջ անվան, իբրև բուն խոսքի մասային միավորի, հնարավոր ձևաբանական փոփոխությունների ամբողջությունն է, որ ունի համակարգային կազմակերպվածություն՝ լեզվի մակարդակում, իսկ խոսքի մեջ այն հանդես է գալիս մանրամասնությամբ՝ յուրաքանչյուր դեպքում համակարգից բխող կառուցվածքի մեկ ձևով (միավորով):

Հոլովումը անունների կամ որպես այդպիսին դիտվող միավորների թեքման՝ ձևաբանական փոփոխության ընդհանրացումն է, իսկ հոլովը՝ նրա առանձնացումը: Առաջինը հաղորդակցական էություն է, երկրորդը՝ առանձնակի մի դրսևորում, նույնպիսի երևույթ:

Լեզու և խոսք հակադրության մեջ այս դեպքում ևս առկայանում է համակարգ և կառուցվածք առնչությունը, այսինքն՝ հաղորդակցման ընթացքում համակարգային իրակություններն անընդհատ վերածվում են կառուցվածքայինի, այլ կերպ ասած՝ հոլովական ձևը դառնում է շարահյուսական իմաստի արտահայտիչ, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ խոսքի ինքնօրինակ կազմակերպում («քերականություն»): Լեզուներում այս երևույթը իրականանում է տարբեր միջոցներով և եղանակներով, քանի որ դրանք (լեզուները) տարբեր պայմանների (մտածողություն, հոգեբանություն, սովորություն և այլն) արգասիք են:

Եթե լեզուն համակարգ է (որ կասկած չի հարուցում), իսկ խոսքը՝ կառուցվածք (բնականաբար՝ նույնպես), ապա հոլովումը, իր հերթին, համակարգային է, այսինքն՝ նույնպիսի բնույթ ունի: Ավելին, այն, առանձին վերցված, հարաբերա-

կանորեն ինքնուրույն համակարգ է: Հոլովումն, իբրև յուրօրինակ համակարգ, իր հերթին, ունի ենթահարակարգեր, որոնք էլ, տվյալ դեպքում, մեր ուշադրության առարկան են:

Լեզուների վերաբերյալ առաջ եկած քերականական միտքը դրսևորվել է հիմնականում երկու՝ ժամանակային (խորնոլոգիական) և տարածքային (ռեգիոնալ) հատկանիշով: Դրանք միմյանցից լիովին տարբեր են, լեզվամշակույթի առումով դրանք, կարելի է ասել, լիովին տարբեր դրսևորումներ:

Ռ. Կիպլինգն ասում է՝ «Արևելքը՝ արևելք, և արևմուտքը՝ արևմուտք, - նրանք երբեք իրար չեն հանդիպում»։ սա տարածքի առումով, իսկ ժամանակի առումով, ասենք՝ «Հին ժամանակը՝ հին, և նոր ժամանակը՝ նրան, - նրանք երբեք իրար չեն առնչվում»: Ըստ այսմ՝ ունենք երկու, այսպես կոչվող, մինչ-հունահռոմեական և հունահռոմեական քերականական մտքի ավանդույթ:

Երկրորդը գիտությանը վաղուց հայտնի է, տարբեր լեզուների քերականությունները, տվյալ դեպքում՝ հոլովման համակարգի մեջ, ի սկզբանե մշակված է մինչև իսկ գործնական-ուսուցողական (դպրոցական) մակարդակի: Այնինչ առաջինը, որին տեղեկանում ենք ինչպես մեռած լեզուների (հմմտ. իտալուական և այլն), այնպես էլ մեր էրայից առաջ հայտնի լեզուների (հմմտ. սանսկրիտ և այլն), այս հարցում ներկայացնում են բոլորովին այլ համակարգ:

Իսկ ընդհանուր մտածողության առումով, ինչ խոսք, կա լրիվ համընկում, այսինքն՝ հիմքում եղած ընդհանրությունը (կամ նույնությունը) ձևակերպման մեջ մասնակիություն է (կամ առանձնակիություն), փաստ, որն ոչ այլ ինչ է, եթե ոչ տվյալ դեպքում նույնպես խորքայինի (իմա՝ «ունակություն»․ competence) և մակերեսայինի (իմա՝ «ներկայացում»․ performance) զուգակցություն. ավելի պարզ ասած՝ գործ ունենք լեզվական-մտածողական (հաղորդակցման) կոմպենտատիվ և պերֆորմատիվ առնչության (փոխադարձության) հետ:

Ուղղականը հոլով չէ, այլ գոյականի (= գոյի՝ առարկայի) անվանում, որ յուրահատուկ կառուցվածքի լեզուներում հակադրվում է ոչ ուղիղ (թեք) հոլովներին, այսինքն՝ սեռական հոլովից են սկսում մյուս հոլովների «քերականական պաշտոնները»: Հմմտ.

Անորոշ [գրո (Ø)]

Որոշյալ [ոչ-գրո՝ թեքույթ]

- 1. սկզբնային՝ => սեռական / բացառական
- 2. ավարտային՝ <= տրական / ներգոյական
- 3. ներառումային՝ ☞ գործիական

Ըստ այդմ՝ սեռական, բացառական հոլովներն ունեն անջատման, էլման (սկզբնային՝ սկիզբ առնելու, սկսվելու) իմաստ. այս հիմունքով նրանց մասնավոր իմաստները (1. «սերում. ծագում և այլն», 2. «բացառում, հեռացում և այլն») մոտենում են, կարելի է ասել՝ ընդհանրանում:

Մեկնաբանենք այս հարաբերակցությունը:

ա. Ուղղականն ըստ ձևի և իմաստի՝ չնշույթավորված հոլով է. արդի հայերենում *գրո (Ø) / եր-, -ներ* հակադրությունը ոչ թե հոլովման, այլ թվի մակարդակի հարաբերություն է: Այս հոլովը թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվում, ի հակադրություն մյուս հոլովների, դուրս է մնում հոլովական (ձևաբանական) հարաբերակցությունից, որովհետև այն անորոշ նշանակման հոլով է: Մյուս լեզուներում հարաբերակցությունը այլ է:

բ. Մյուս հոլովներն ըստ ձևի և իմաստի՝ նշույթավորված հոլովներ են. արդի հայերենում հանդես են գալիս եզակի/հոգնակի թվի հակադրության մեջ:

Գրաբարի, այսպես կոչված, խառը հոլովումն այլ բան չէ, քան (եզակի/հոգնակի հակադրության մեջ) միմյանցին տարբեր համակարգերի (կամ ենթահամակարգեր), որ լավագույնս հիմնավորվում է մի կողմից՝ ասորերենից կատարված («մաքուր»

ի հոլովում. հմմտ. *շղթայ – շղթայի, շղթայից, կաթսայ – կաթսայի, կաթսայից* և այլն), իսկ մյուս կողմից՝ իրանական լեզուներից կատարված («խառն» *ի-ա* հոլովում. հմմտ. *աշակերտ – աշակերտի, աշակերտաց, աշխարհ – աշխարհի, աշխարհաց* և այլն) փոխառությունների ինչ-ինչ ներդրումով: Այս հարցը հին հայերենի հոլովման համակարգի առումով դեռևս չպարզաբանված կամ, ավելի ճիշտ, լուծում չստացած իրողություն է:

Գրական աշխարհաբարում ևս ունենք «խառը հոլովում», որ հետևանք է մի կողմից՝ գրաբարյան համակարգի մի առանձնահատկության պահպանման (հմմտ. *տուն – տան, շարժում – շարժման* և այլն), իսկ մյուս կողմից՝ ընդհանուր օրինաչափության տարածման (հմմտ. *տուն – տների, շարժում – շարժումների* և այլն), արդյունքում ունենում ենք «խառն»՝ *ա* ներքին և *ի* արտաքին հոլովման համատեղում, որն արդյուն է տարբեր համակարգերի բաղադրիչ ենթահամակարգերի համատեղում: Բերված օրինակներում ունենք, այսպես կոչված, *ա-ի* (*տուն – տան- տների* և այլն), *ան-ի* (*շարժում- շարժման- շարժումների* և այլն) հոլովումներ:

Այնուհետև, այս հարցին անդրադառնանք մեկ այլ՝ կարգային (կատեգորիական) բաշխման տեսնկյունից (որի դեպքում վերը տրված իմացաբանական-ճանաչողական ինչ-ինչ բնութագրումների կրկնությունն անխուսափելի է): Այսպես, հոլովման մեջ ևս կարգային բաշխվածությունը լինում է երկու տեսակ՝ պայմանական առումով, իմացական-տրամաբանական և լեզվական-քերականական: Խոսքի մեջ բառերի թեքումը կոչվում է ձևաբանական փոփոխություն: Հին հույները, օրինակ, քերականական փոփոխություն պարունակող հիմնական թեքումները՝ հոլովումը և խոնարհումը անվանում էին մեկ ընդհանուր տերմինով՝ «անկում» (*պտումա. հուն. πτῶμα*): Այնինչ, նոր քերականություններում այդ ընդհանուր երևույթը բաժանված է երկուսի՝ հոլովում և խոնարհում, որոնք լայն իմաս-

տով նույն բանն են նշանակում՝ «պտույտ, ոլորում, իջեցում և այլն»:

Գոյություն ունի բառի երկու վիճակ՝ խոսքի մեջ և խոսքից դուրս: Խոսքից դուրս բառն այլ բան չէ, քան բառարանային միավոր, իսկ խոսքի մեջ այն հաղորդակցական միավոր է, ունի նույնպիսի նշանակություն, գտնվում է որոշակի հարաբերության մեջ:

Անուն նշանակող բառերը հոլովվում են (այլ կերպ են «պտտվում, ոլորվում և այլն»), այսինքն՝ ենթարկվում են ձևաբանական փոփոխության՝ արտահայտելու իրականությունը նշանակող հարաբերություններ, ինչպես՝ սերում, անջատում, միացում, տեղակայում, ինքնակայում և այլն: Սրանք քերականության մեջ կոչվում են քերականական հարաբերություններ: Բառարանային միավորները վերածվում են խոսքային միավորների՝ նշանակելու նման հարաբերությունները:

Բառերը հանդես են գալիս ոչ միայն թեք, այլև ուղիղ ձևերով: Դա վերաբերում է հատկապես բային և գոյականին: Քերականության մեջ գոյականի ամեն մի ձևափոխություն կոչվում է հոլով, իսկ հնարավոր փոփոխությունների համակարգված ամբողջությունը՝ հոլովում:

Հայերենը աշխարհի այն լեզուներից է, որ ունի հոլովման համակարգ, այսինքն՝ խոսքի իրականացումը կատարում է գոյականի ձևաբանական փոփոխությունների միջոցով: Վերջինիս պատմությունը ցույց է տալիս, որ գոյականի (ածականի, թվականի և դերանվան, ինչպես նաև գոյականաբար գործածվող մյուս բառերի) ձևաբանական փոփոխությունը եղել է նրա հիմնական հատկանիշը՝ անկախ այն բանից, որ եղել են թեքման բնույթի հետ կապված որոշ զարգացումներ, ասենք՝ բուն թեքականությունից անցում բուն կցականության և այլն, բուն համադրականությունից անցում մասամբ նաև անջատականության և այլն: Փոփոխվել են նաև բառի ուղիղ ձևերից թեք ձևերի սերմանն այս կամ այն կերպ օժանդակող միջոցները՝

հոլովիչներ, վերջավորություններ, ուղեկցող միջոցներ՝ հոդեր և այլն:

Հոլովական ձևերը հանդես են գալիս որոշակի առնչությամբ, կազմում են յուրահատուկ կառուցվածք: Լեզվում ձևաբանական յուրաքանչյուր միավոր մյուսի նկատմամբ գտնվում է հարացուցային (պարադիգմատիկ) հարաբերության մեջ, իսկ խոսքի ընթացքում առանձնակիորեն դառնում է շարակարգային (սինտագմատիկ) հարաբերության մասնակից:

Ժամանակակից հայերենի հոլովմանը վերաբերող տերմինները և տերմինային անվանումները, բնականաբար, հիմնականում գալիս են հին հայերենից, թեև կան նաև նոր կազմվածները: Դրանց ըմբռնումը, առավել ևս ուսուցումն ու յուրացումը կարևոր են հոլովման համակարգի լիարժեք իմացության համար: Ժամանակակից հայերենի հոլովումը մի այնպիսի համակարգ է, որ տարբերվում է ոչ միայն հին հայերենի և միջին հայերենի նույնպիսի համակարգերից, այլև տիպաբանական ընդհանրություններ, ակնհայտ տարբերություններ ունի այլ լեզուների նմանատիպ համակարգերից:

Ինչպես լեզվական յուրաքանչյուր միավոր, այնպես էլ առարկա կամ առարկայի հատկանիշ ցույց տվող բառերը խոսքի մեջ հանդես են գալիս այս կամ այն կարգի ձևերով:

Առարկա կամ առարկայի հատկանիշ ցույց տվող բառերը անվանողական դեր ունեն, անվանում են առարկան կամ նրա որևէ հատկանիշը: Այդ հատկանիշները լինում են երկու կարգի՝ որակական և թվային, առաջինը ածականներն են, երկրորդը՝ թվականները: Օրինակ՝

1) տուն, ծառ, փողոց, մարդ, դպրոց,

2) մեծ տուն, բարձր ծառ, լայն փողոց, գիտուն մարդ, միջնակարգ դպրոց,

3) մեկ տուն, երկու ծառ, երեք փողոց, հինգ մարդ, ութերորդ դպրոց:

Իսկ անունների փոխարեն (և ոչ թե նրանց դերը կատարող) բառերը կոչվում են դերանուններ՝ այս (տունը) կամ այս,

այդ (ծառը) կամ *այդ, այն* (մարդը) կան *նա, մեր* (փողոցը) կամ *մեր(ը), ձեր* (դասարանը) կամ *ձեր(ը)*:

Այնուհետև, հայտնի է, որ գոյականը, ածականը, թվականը (և սրանց հակադիր՝ դերանունը), այսպես կոչված, լիիմաստ միավորներ (խոսքի մասեր) են: Հին կամ ավանդական քերականություններում դրանք «ածականներ» էին (կամ «թվականներ»), որովհետև առնչվում էին բային՝ իբրև վերջինիս լրացումներ (ատրիբուցիաներ): Ռվ ընդհանուր տերմինով կոչվում էին անուն միավորներ՝ գոյական անուն, ածական անուն և թվական անուն, ի տարբերություն բայերի: Խոսքի սերումը կատարվում է անուն և բայ միավորներով: Սրանք խոսքի հիմնական միավորներն են՝ ի տարբերություն մյուսների՝ ոչ հիմնական միավորների:

Տվյալ դեպքում մեր ուշադրության առարկան են անունները և նրանց կարգային միասնական բնութագրիչը՝ հոլովումը հայերենում: Հայտնի է նաև այդ հատկանիշով դասակարգումը, այսինքն՝ խոսքի մասեր և խոսքի մասնիկներ, այլ կերպ ասած՝ «լիիմաստ» և «ոչ լիիմաստ» խոսքի մասեր:

Լիիմաստ խոսքի մասերն են *անուն և բայ* միավորները, ոչ լիիմաստ են *մակբայը, կապը շաղկապը, ձայնարկություն* և այլն: Նման դասակարգումը մասնավոր քերականական դասակարգում է, որ համապատասխանում է ընդհանուր իմացաբանական (տրամաբանական) դասակարգմանը. այդ երկու դասակարգումները իրենց հիմքում նույնն են, իսկ նման առանձնացումը երկուսի՝ պայմանական է, դրանք լրացնում են միմյանց և պայմանավորված են միմյանցով:

Դրանք բնորոշվում են երեք հիմնարար հատկանիշով՝ քերականական ձև (արտահայտության պլան), քերականական իմաստ (բովանդակության պլան) և քերականական պաշտոն (գործառույթ կամ ֆունկցիա):

Քերականական ձև անվանումը ավանդական է, որ իր հասկացական ծավալով ավելի նեղ է, քան *արտահայտության պլան* անվանումը: Այսպես, օրինակ, տեղի պարագան ժամա-

նակակից հայերենում արտահայտվում է ներգոյական հլովով, որ կազմված է լինում կա՛մ *-ու՛մ* վերջավորությամբ, կա՛մ *մեջ* կապով (հմմտ. *գետում*՝ և *գետի մեջ*), առաջինի դեպքում ունենք ձևաբանորեն, իսկ երկրորդ դեպքում՝ շարահյուսորեն ձևավորված միավոր: Դրանք ձևով (ձևավորմամբ) տարբեր են, իսկ արտահայտության պլանով՝ նույնական:

Այնուհետև, օրինակ, տրական հոլովի հիմնական քերականական իմաստն է հանգման անուղղակի խնդիրը, իսկ ներգոյական հոլովինը՝ տեղի պարագան (հմմտ. մոտեցավ *գետին* և լողում են *գետում*): Դրանք բովանդակության պլանով նույնական են, ցույց են տալիս (լայն իմաստով) տեղ: Նման տարբերակումը քերականորեն մասնական է, իսկ իմացաբանորեն՝ ընդհանրական:

Բառի հոլովումը այլ բան չէ, քան արտահայտության և բովանդակության պլանների այս կամ այն կարգի դրսևորում: Ըստ այսմ էլ նորագույն լեզվաբանական գրականության մեջ տարբերում են ոչ միայն պլան, այլև գործառույթ (ֆունկցիա) հասկացությունները:

Հոլովական միավորի պաշտոնը խոսքում նրա գործառույթն է. օրինակ, *մեքենան մոտեցավ գետին* կամ *բաղերը լողում են գետում*՝ նախադասություններ են, որոնք հաղորդակցական միավորներ են և ունեն որոշակի գործառույթ, այսինքն՝ սերում են ասելիքը:

Ըստ այսմ, սահմանվում է, որ հոլովի քերականական կարգը անուն խոսքի մասի մեջ մտնող միավորների երկպլան հարաբերակցություն է, որ հանդես է գալիս որևէ գործառույթով՝ հաղորդակցման կամ խոսքի կազմության նպատակով:

Այսպիսով, հոլովական միավորները, իբրև բառաձև (հոլովական ձև՝ տվյալ դեպքում) կամ իբրև բառ (խոսքային միավոր՝ առհասարակ) խոսքի բաղադրիչներ են, որոնք երեք կարգի հատկանիշների կրող են, իրականության արտացոլում ապահովող միավորներ:

Բառը ձևի և իմաստի այնպիսի ամբողջություն է, որ միտված է արտահայտելու իրականությունը:


Հոլովական միավորները բաժանվում են երկուսի՝ ուղղական և ոչ-ուղղական հոլովների: Ուղղականը, իբրև անվան ուղիղ ձև, հակադրվում է մյուսներին՝ ոչ ուղիղ կամ թեք հոլովներին, ըստ որում ունենում ենք, այսպես կոչված, *անձև* (զրո ձև ունեցող կամ չձևավորված) և *ձևավոր* (որոշակի ձև ունեցող կամ ձևավորված) հոլովներ: Ժամանակակից գրական հայերենում ուղղական հոլովը հակադրվում է մյուս՝ սեռական, տրական, հայցական և այլն հոլովներին՝ վերը նշված հատկանիշով. իմացական առումով ուղղականը անփոփոխակալին (ինվարիանտ), իսկ մյուսները փոփոխակալին (վարիանտ կամ վարիատիվ) միավորներ են: Ձևաբանության մեջ ուղղական հոլովը կազմվում է *զրո* (բացակա) ձևությամբ, իսկ մյուս հոլովները՝ *այս կամ այն* հոլովիչ-հոլովական (առկա) վերջավորությամբ:

Քերականությունը դրանց հարացուցային շարքերի (ձևաբանորեն), ինչպես նաև շարակարգային ընտրյալի (շարահյուստորն) կարգաբերված ամբողջությունը է, որն ունի հաղորդակցական ընկալունակություն. այլ կերպ ասած՝ լեզուն ոչ այլ ինչ է, եթե ոչ քերականություն:

Ժամանակակից գրական հայերենի հոլովական հարաբերությունները ևս, ի վերջո, նշանագիտական-իմացաբանական առումով կարող ենք բնութագրել (ձևակերպել) իբրև. *ինքնակա* և *առկա* հարաբերակցություն (հարաբերակից), իսկ վերջինս՝ *անջատում* (սերում, բխում, հեռացում և այլն), *մտնեցում* (հանգում, վերաբերում, տեղայնացում և այլն) և *ներառում* (իր միջով, իրենով). ինքնակա հոլովը ուղղական է, առկա հոլովներն են, մի կողմից՝ սեռական և բացառական, մյուս կողմից՝ տրական և ներգոյական հոլովները, ներառականը՝ գործիական հոլովը:


Հայցականը ուղղականի հետ կազմում է ենթակա-ուղիղ խնդիր (կամ սուբյեկտ-օբյեկտային) հարաբերակցություն՝ բայի (ստորոգյալի) առնչությամբ:

Hambardzumyan Vazgen – Declension: Case and the Case Relation (Grammatical and Categorial Distribution of a Case in Armenian). – Declension is defined, and the case relation is specified according to the following scheme:



The cognitive and informative signs of this grammatical phenomenon based on a possibility of distribution of categories are given.

Амбарцумян Вазген - Склонение: падеж и падежное отношение (Грамматико-категориальное распределение падежа в армянском языке). - Склонение определяется, и падежное отношение уточняется по следующей схеме:



Даны когнитивно-познавательные признаки этого грамматического явления, основанные на возможности распределения категорий.

Հմայակյան Հասմիկ (Հայաստան,
ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ)

«ԳՈՒՌԳՈՒՌԱ» ԶՐԱՆՈՒՆԸ
ԱՌԱՍՊԵԼԱԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հայ առասպելաբանության ամենահայտնի նմուշներից է Աստղիկ դիցուհու լոգանքի մասին պատմող առասպելը, որը տեղայնացվում է Գրգուռ լեռան ստորոտին գտնվող Գուռգուռա գետակի ավազանում: Մենք երկու՝ անգլերեն¹ և հայերեն² լեզվով հոդվածներ ենք նվիրել այս առասպելին, որոնցում բացահայտել ենք վերջինիս ծիսաառասպելաբանական կապերը և զուգահեռները հունական Արտեմիս դիցուհուն նվիրված պատանի Ակտեոնի մահվան մասին պատմող ավանդազրույցի հետ՝ վերականգնելով տարածաշրջանային արքետիպային այն սյուժեն, որից հավանաբար ծագել են այս երկու առասպելները: Այս հոդվածում մենք կանդրադառնանք երկու առասպելներում առկա տեղանունների լեզվաբանական վերլուծությանը և որոշ ընդհանրությունների բացահայտմանը, որը չենք դիտարկել նախորդ ուսումնասիրություններում:

Եթե սխեմատիկորեն քննարկենք Աստղիկ և Արտեմիս աստվածուհիներին նվիրված վերոնշյալ առասպելները, ապա կարելի է կատարել հետևյալ հակիրճ զուգադրումները.

1. Արտեմիսի և պատանի Ակտեոնի մասին պատմող առասպելում Արտեմիսի լոգանքը խանգարում է պատանի Ակտեոնը, (ըստ առասպելի մի տարբերակի) որը հետևում էր Արտեմիսին

¹ **H. Hmayakyan**, The Goddesses of Artamet, Armenian Journal of Near Eastern Studies, Vol. VIII, Issues 1-2, Y., 2014, p. 191-197.

² **Հ. Հմայակյան**, Հունական Արտեմիս և հայկական Աստղիկ դիցուհիների մի շարք ընդհանրությունների շուրջ, Մերձավոր Արևելք, VIII, հոդվածների ժողովածու, Ե., 2012, էջ 88-101:

ժայռի վրայից, որի ներքևում աստվածուհին լողանում էր³: (Ըստ մեկ այլ տարբերակի Ակտեոնը որս անելիս Կիթերոնի անտառներում պատահաբար է հայտնվում այդ վայրում)⁴:

Աստղիկի մասին պատմող առասպելում նրա լոզանքին հետևում են Դադոնյաց սարի վրա հավաքված տարփավոր երիտասարդները կամ կտրիճները, որոնք խանգարում են աստվածուհու անդորրը և լոզանքը⁵:

2. Արտեմիսը, որպես պատիժ, անձանաչելի է դարձնում Ակտեոնին՝ վերածելով նրան եղջերուի, և վերջինս հոշոտվում է սեփական շների կողմից⁶:

Աստղիկն իրեն թաքցնելու համար կամ որպես պատիժ՝ իրեն հետևող երիտասարդներին, շրջակայքը պատում է մշուշով, որը, ըստ հնագույն պատկերացումների, հավասարազոր է մահվան:

3. Աստղիկ դիցուհու լոզանքի վայրը գտնվում էր Գրգուռ լեռան ստորոտում գտնվող Գուռգուռա գետի ավազանում:

Արտեմիս դիցուհու հանգստավայրը և լոզանքի վայրը գտնվում էր թեք ժայռի կամ Կիթերոն լեռան լանջին՝ Գարգափիա (Γαρφαφία, Γαρφαφίη) հովտում, որտեղից բխում է Գարգափիա (Γαρφαφία) աղբյուրը:

Ակնհայտ է ոչ միայն այս երկու աստվածուհիներին վերաբերող առասպելաբանական պյուժեների նմանությունը, այլև նրանց հանգստավայրի և լոզանքի վայրերի տեղադրության նմանությունը, ինչպես նաև դրանց անվանումների լեզվական արտաքին նմանությունը՝ Գարգափիա և Գուռգուռա:

Նշենք, որ թե՛ հայկական, թե՛ հունական առասպելներում վկայված տեղանքները իրականում գոյություն ունեն. Գարգա-

³ Павсаний, Описание Эллады или путешествие по Греции во II-ом веке по Р.Х., перевод с греческого Г. Янчевского, СПб., 1887-1889, с.684.

⁴ Ovid, Metamorphoses, book III, The Loeb Classical Library, edited by T. E. Page, C. H. Litt et al. 1916, Harvard University Press, p. 138-242.

⁵ Ք. Սրվանձաթյանց, Երկեր, հ I, Ե., 1978, էջ 71:

⁶ Р. Грейвс, Мифы Древней Греции, Книга 1, Москва, 1999, с.99.

փիա հովիտը դաշտավայր է Պլատեա տեղանքից մեկ ու կես մղոն հեռավորության վրա՝ Կիթերոն լեռան ստորոտին, որից հոսում է նույնանուն՝ Գարգափիա աղբյուրը⁷, իսկ հայկական առասպելում վկայված Գուռգուռան գտնվում է Արածանիի վրա և հոսում է Գրգուռ լեռան ստորոտին⁸: Գրգուռ լեռը Վանա լճի հարավ-արևմտյան ափին էր՝ Բիթլիս-Մուշ ճանապարհից աջ⁹: Գուռգուռա անվանումով ջրվեժ է առկա նույն Արածանիի վրա, Ողական բերդից ոչ հեռու, ուն ունի 8-10 մ բարձրություն¹⁰, այս Ողական բերդի մոտ հիշատակվում է նաև Գուռ-Գուռ աղբյուր: Գուրրգուրա և Գուրգափան¹¹ գյուղերի հիշատակություններ կան Բայազեթ գավառում, որը հեռու է գտնվում այս բնակավայրերից: Վերոնշյալ հայկական առասպելին առնչվող տեղանունները տեղադրվում են Տարոն գավառում՝ Մուշ, Ողական: Կարելի է փաստել, որ այս արմատով տեղանունների ու ջրանունների հիշատակությունը հիմնականապես վերաբերում է այս բնակավայրերին: Ընդհանրապես «գռալ» բայը որոշ արևմտահայ բարբառներով նշանակում է «խոխոջել»¹², ինչը, հավանական է, բնաձայնական ծագում ունի և պատահական չէ, որ աղբյուրներ և ջրվեժներ են կոչվել այդ անվամբ, ինչպես նաև Աստղիկի լոգանքի վայրը հանդիսացող Գուռգուռան:

Հարկ է նշել, որ թե՛ հայկական, թե՛ հունական տեղանունները՝ Գարգափիա և Գուռգուռա, հստակ կամ վերջնական ստուգաբանություն չունեն: Հայկական Գուռգուռա գետակի և Գրգուռ լեռնանվան ստուգաբանությունները ստեղծվել են բնաձայնական հիմքով կամ ժողովրդական ստուգաբանություններ են:

⁷ **Herodotus**, The Histories, Ed. By A. D. God, in Four Volumes IV, Books VIII-IX, London, New York, 1930, 9.25,47.

⁸ **Գ. Սրվանձոյանց**, նույն տեղում:

⁹ **Թ.Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Ե., 1986, էջ 961:

¹⁰ Նույն տեղում, էջ 979:

¹¹ Նույն տեղում, էջ 981:

¹² **Հայոց լեզվի բարբառային բարբառան**, հ. Ա, Ե., 2001, էջ 285:

Գրգուռ լեռան անվանման մասին ասվում է, որ այն ծագել է Նոյան տապանի՝ Գրգուռ լեռան վրայով անցնելու ժամանակ գագաթին դիպչելու ձայնից¹³, իսկ Գուռգուռա գետակը՝ նեղ կիրճերով անցնելիս առաջացող «գուռ-գուռ» ձայնից¹⁴, որոնք երկուսն էլ հանգում են բնաձայնական «գոգոալ» բային: Հունական Գարգափիա (Γαργαφία) տեղանվան հիմքում ենթադրում են, որ ընկած է γαργα (հուն. գարգա) բառը, որ նշանակում է «սև բարդի»¹⁵, որից էլ հավանաբար ծագում է Գարգափիա տեղանվան հետևյալ ստուգաբանությունը՝ «աղբյուր կամ ջրհոր, որ շրջապատված է բարդիների շարքով» մեկնաբանությունը¹⁶: Սա, հավանաբար, ծագում է նաև տեղանքի առասպելաբանական նկարագրությունից, որում խոսվում է թավ բուսականությամբ բացատի, այնտեղ հոսող գետակի մասին: Մենք, վերլուծելով առասպելները, եկել ենք այն եզրահանգման, որ հնարավոր է հայկական Գուռգուռա ջրանվան բնաձայնական հիմքով ստուգաբանությունները, որոնք ծագում են «գրոգրոալ» բայից, զուգորդվել են «գրգոել» բազմիմաստ բառից առաջացած հնարավոր ստուգաբանության հետ, որի մասին առավել մանրամասն կխոսվի ստորև: Ընդհանրապես առասպելաբանական տեքստերում կամ հիմներում հաճախ են հանդիպում նույնահունչ և տարիմաստ բառերի իմաստային միախառնումներ, որոնք վկայում են տվյալ առասպելական սյուժեի տարածամանակյա իմաստաբանական փոփոխությունների և վերաշերտավորումների մասին: Վերևում մենք անդրադարձանք հայկական և հունական առասպելների սխեմային, որում առանցքայինը աղբյուրում կամ գետակում դիցուհու լոգանքի և այն խանգարելու ու նրան

¹³ Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Ե., 1969, էջ 26:

¹⁴ Գ. Մրվանձտյանց, նշվ. աշխ., էջ 71:

¹⁵ **Etymological Dictionary of Greek**, by Robert Beeks, Vol. One, Brill, Leiden, Boston, 2010, p. 260.

¹⁶ **Herodotus: The Seventh, Eight and Ninth Books, with Introduction, Text, Apparatus, Commentary, Appendices, Indices, Maps, Volume 1**, Edited by Reginald Walter Macan, Cambridge University Press, 2013, p. 640.

բարկացնելու կամ զայրույթը գրգռելու համար պատժման թեման էր: Ինչպես նշվեց, հայերենում «գրգռալ» բայը կիրառվում է ընդհանրապես ջրի ձայնը կամ ջրվեժների ձայնը արտացոլելու համար, հատկապես բարբառներում, իսկ «գրգռել» բայը նշանակում է «բարկացնել, հրահրել, զայրացնել», որը, ըստ Հր. Աճառյանի, վկայված է դեռևս հինգերորդ դարի պատմագրության մեջ, ծագած է համարում *գիռ հնդեվրոպական անձանոթ արմատից¹⁷: Գ. Ջահուկյանը «գրգռեն» բայը՝ «դրդեմ, սադրեմ» իմաստներով, դիտարկում է հնդեվրոպական ծագման բարբառային տարբերակների մեջ¹⁸: Նոր բառգիրք հայկազեանում «գրգռեն» ևս նշանակում է «կռիւ սադրել, դրդել ի բարկույթիւն» և այլն¹⁹: Մենք ունենք գրեթե նույնահունչ, սակայն տարիմաստ երկու առանձին բայեր, որոնք իրենց իմաստներով՝ առաջինը՝ «հոսող ջրի ձայն», երկրորդը՝ «զայրույթ առաջացնել», միանգամայն արտացոլում են պահպանված ավանդազրույցի առանցքային բովանդակությունը:

Մեզ հետաքրքրեց այն հանգամանքը, թե արդյո՞ք հունարենում Գարգափիա տեղանվան հետ ինչ որ նմանություն կամ կապ կարող են հանդես բերել հունարեն «գրգռել, զայրացնել» կամ աղբյուրի, ջրի ձայն արտահայտող բառերը: Եվ ուշագրավ է, որ հունարենում «գրգռել, զայրացնել» բառիմաստները որոնելիս մենք հանդիպեցինք *γαργαλιζω* (հուն. գարգալիզո) բառին, որը ունի տարբեր նշանակություններ՝ 1.խուտուտ տալ, խուտուտ զգալ, 2.նյարդայնացնել, գրգռել, բարկացնել²⁰. վերջինս իմաստաբանորեն շատ մոտ է հայերեն «գրգռել» բային և նման է հնչում Գարգափիա տեղանվանը: Հետո փորձեցինք գտնել հունարենում ջրի ձայնը արտացոլող բայեր և հանդիպեցինք

¹⁷ **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. I, Ե., 1926, էջ 604-605:

¹⁸ **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 395:

¹⁹ **Նոր բառգիրք հայկազեան լեզուի**, Հայր Գ. Աւետիքեան, Հայր Խ. Սիւրմելեան, Հայր Ս. Աւգերեան, հ. I, Վենետիկ, 1836, էջ 586:

²⁰ **Древнегреческо-русский словарь**, составил Н. X. Дворецкий, т.I, А-Л, с. 314.

γαργαρίζω (հուն. գարգարիզո) բառին, որը նշանակում է «հոսող ջրի ձայն»²¹, որը շատ մոտ է հայերեն բարբառային վերոնշյալ խոխոջալ իմաստով «գրգռալ» բառիմաստին և դարձյալ նման է Գարգափիա տեղանվանը և գետանվանը: Իհարկե, չենք կարող և միտք չունենք պնդել, թե հունարեն առասպելի Գարգափիա տեղանվան և նույնանուն գետանվան հիմքում հունարեն այս տարիմաստ բառերն են ընկած, նման զուգադրումներ կամ ստուգաբանություններ չեն արվել ոչ Գարգափիա հովտի և ոչ էլ Գարգափիա գետակի անվանումը բացատրելու համար, սակայն, էլնելով առասպելաբանական նյութից, ինչպես նաև հայերեն լեզվական նյութի հետ համադրումից, թույլ ենք տալիս մասնագետների ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ երկու լեզուներում էլ նմանատիպ հնչեղություն ունեն առասպելի հիմնական բովանդակությունը բացահայտող «բարկացնել, զայրացնել» և «ջրի ձայն հանել» բառիմաստները, երկու լեզուներում էլ դրանք կազմված են տարբեր արմատներից և տարիմաստ են, երկու առասպելներում էլ մենք ունենք տեղանքների ժողովրդական ստուգաբանություններ կամ առասպելական սյուժեներից բխող ստուգաբանություններ: Եվ միայն կարող ենք ենթադրել, որ երկու առասպելներից յուրաքանչյուրի դեպքում էլ մենք գործ ունենք այս տարիմաստ բառերի ու տեղանունների իմաստային տարածամանակյա միախառնման հետ:

Ինչևէ, մեր հիմնական խնդիրներից մեկն էր ցույց տալ այն, որ հայերեն տարբերակում այս առասպելին առնչվող տարիմաստ «գրգռել» և «գրգռալ» բառերը միանգամայն արտացոլում են քննարկվող առասպելական սյուժեի առանցքային բովանդակությունը՝ աստվածուհու զայրույթը գրգռելու և ջրի, լոզան-

²¹ **Modern Greek Dictionary (Meanings and Etymology in Greek)**, 1988, http://www.greek-language.gr/greekLang/modern_greek/tools/lexica/triantafyllides/search.html?lq=%CE%B3%CE%B1%CF%81%CE%B3%CE%B1%CF%81%CE%AF%CE%B6%CF%89&dq=

քի թեման, ինչպես նաև, հավանաբար, ընկած են առասպելական գործողությունների կատարման վայրի՝ Գուռգուռա ջրանվան հիմքում:

Հաջորդ եզրահանգումը, որ կարող ենք անել վերոնշյալ համադրումների արդյունքում, այն է, որ մենք, հավանաբար, գործ ունենք ոչ միայն հայկական և հունական առասպելների այուժետային ընդհանրության հետ, ինչը, ինչպես նշեցինք վերևում, առավել մանրամասնորեն քննարկել ենք մեր երկու հոդվածներում, այլև դրանց հետ կապված տեղանունների, հնարավոր է, ոչ միայն արտաքին, այլև որոշակի լեզվախմաստաբանական նմանությունների կամ փոխներթափանցումների հետ, որը, թվում է, ենթադրում է ավելի շուտ պատկերացումային կամ ծագումնաբանական ընդհանրություն:

Այստեղ հարց է առաջանում. որտեղ և որ ժամանակաշրջանում կարող էին ծագել այս ընդհանուր պատկերացումները: Ընդհանրապես, հայ հունական պատմալեզվական առնչությունների ամենավաղ փուլը կարելի է համարել Ք.ա. VI-IV դդ՝ կապված Փոքրասիական գաղութների հետ կատարվող առևտրով և այլ գործոններով, հաջորդը՝ հունական քաղաքական և մշակութային փուլն է՝ մթա III-I դդ, հելլենիստական շրջանը, հաջորդը՝ Հռոմի քաղաքական ազդեցության փուլը և, իհարկե, բյուզանդական ազդեցության փուլը: Մակայն, այդ ազդեցությունները կարող էին և ավելի վաղ փուլերում լինել, օրինակ, Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը խոսում են հունահայկական արիական ընդհանրության մասին, որից նախապես անջատվել են հնդիրանական լեզուները, իսկ հայերենը և հունարենը ավելի երկար ժամանակ կազմելով ընդհանրություն՝ այնուհետև վերջնականորեն բաժանվել են²²: Առավել հետաքրքրական է այս առումով Օ. Շիրոկովի տեսակետը, ով հիմնվելով հնդեվրոպական արեալային լեզվաբանության տրվ-

²² **Т. Гамкредидзе, В. Иванов**, Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тбилиси, 1984, с. 898-900.

յալների վրա, առաջ է քաշում տեսակետ, որ հայերենը կենտրոնական տեղ է գրավել հին հնդեվրոպական բարբառի կոնտինիումում՝ հանդես գալով որպես կապող օղակ հունարենի և իտալակելտական, ալբանական ու գերմանական, արիական և բալթոսլավոնական լեզուների միջև և եզրակացնում, որ հայերենում ու հունարենում առկա բաղաձայնական համակարգի կառուցվածքային իր դիտարկած նմանությունը կարելի է բացատրել միայն ծագումնաբանական լեզվական առնչություններով, որն իր հերթին ենթադրել է տալիս, որ հույների նախահայրենիքը եղել է Փոքր Ասիան և կասկածի տակ է առնում հայերի՝ արևմտյան նախահայրենիքի մասին գոյություն ունեցող վարկածը²³: Կարծում ենք, մեր քննարկած նյութը շատ խոսուն է դառնում այս վերջին տեսակետի համատեքստում: Հարկ է նշել, որ հնարավոր է այս առասպելները ծագել են մեկ վայրում, այնուհետև տեղափոխվել ու տեղայնացվել են այլ վայրերում՝ պահպանելով սյուժետային, տեղագրական և անվանական համընկումներ, և այդ վայրը, շատ հավանական է, որ լինի վերոնշյալ Փոքր Ասիան:

Այս տեսակետի հիմնավորման համար կարևոր է Արտեմիս դիցուհու պաշտամունքի ծագման վերաբերյալ գիտության մեջ արտահայտված այն տեսակետները, որ վերջինիս պաշտամունքը իր ծագմամբ կապվում է փոքրասիական տարածքների հետ²⁴, իսկ ըստ որոշ ուսումնասիրողների՝ Հայկական լեռնաշխարհի հե²⁵: Այսպիսով, լեզվական նյութի զուգադրումը ավելի վաղ արված առասպելաբանական բնույթի վերլուծությունների հետ, թույլ է տալիս վերականգնել տարածաշրջանային արքե-

²³ **О. Широков**, Армяно-греческие этногенетические контакты по данным сравнительно-исторической фонологии, Историко-филологический журнал, 1977, 1, с. 85-100.

²⁴ **W. Burket**, Greek Religion, Oxford, 1985, p. 149. **Мифы народов мира**, Энциклопедия, т. I, М., 1980, с. 89-90.

²⁵ **V. Ivanov**, Comparative Notes on Hurro-Urartian, Northern Caucasian and Indo-European, UCLA Indo-European Studies, Vol. I, Los Angeles, p. 147-264. **Ա. Պետրոսյան**, Արամազդ, Ե., 2006, էջ 49-59:

տիպային մի առասպել, որը կարծում ենք, ամենայն հավանականությամբ, ձևավորվելով Փոքր ասիական տարածքներում, այնուհետև անցել է Պատմական Հայաստան և Հունաստան՝ պահպանելով հնարավոր միասնության ժամանակաշրջանից եկող ընդհանրություններ:

Hmayakyan Hasmik – Hydronym Gurgura in the Context of Linguistic-Mythological Materials. – The paper discusses toponyms and hydronyms relating to legends of the Greek goddess Artemis and young Acteon, the scene of bathing by the Armenian goddess Astlik in a spring and youths watching her.

The author comes to the conclusion that these legends reveal not only the thematic (that have been discussed in author's other papers), but also linguistic and semantic similarities between the Greek and Armenian toponyms and hydronyms which can be traced back to genesiatic commonness. These parallels probably had been formed in the territory of Asia Minor, then they penetrated into historical Armenia and Greece.

Амаякян Асмик – Гидроним «Гургура» в контексте лингвистическо-мифологического материалов. – В статье рассматриваются топонимы и гидронимы, относящиеся к легендам, рассказывающим о греческой богине Артемиде и юном Актеоне, а также сцене купания армянской богини Астхик в ручье и юношей, подсматривающих за ней.

Автор приходит к выводу, что эти легенды обнаруживают не только сюжетную схожесть, что автор обсуждала в других статьях, но и схожесть греческой и армянской топонимики с лингвистическо-семантической точек зрения, что, возможно, восходит к генетической общности. Данные параллели вероятно сформировались на территории Малой Азии, после проникнув в историческую Армению и Грецию.

ՄԻ ՔԱՆԻ ԲՈՒՍԱՆՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Հայերեն բառարաններում արձանագրված են բազմաթիվ բուսանուններ՝ բառիմաստների ճշգրիտ ու մանրամասն ներկայացմամբ, սակայն մի քանի բառերի մեկնության հարցում նկատելի է որոշ անհստակություն, ստուգաբանություններում տարակարծություններ:

Մեր դիտարկումները վերաբերում են հետևյալ բառերին.

I. Գետնախնձոր

Նոր հայկազյան բառարանում նշված է երկու իմաստ. «Բերք երկրի ընդ հողով՝ խորտաբորտ» և «է անուն խոտոյ, որ և երիցուկ»¹: Ստ. Մալխասյանի բառարանում՝ «Գետնախնձոր. քարթոյ», «գետնախնձորը Ամերիկայից բերված բույս է»², Է. Աղայանի բառարանում՝ 1. «Բարդաձաղկավորների ընտանիքին պատկանող պալարապտղավոր բույս», 2. «Այդ բույսի պալարապտուղը», 3. «տե՛ս կարտոֆիլ»³: Հանրագիտարանում նույնպես շեշտվում է, որ գետնախնձորի հայրենիքը Հյուսիսային Ամերիկան է⁴:

ՆՀԲ-ում բնագրային օրինակներ չկան, և հղված են միջինհայերենյան շրջանում գրված բժշկարանները:

Միջին հայերենի բառարանում *գետնի խնձոր* հղված է տե՛ս երիցուկ: Վկայությունը Ամիրդովլաթ Ամասիացուց է.«Բա-

¹ Նոր բարգիրք հայկազեան լեզուի, հ. I, Ե., 1979, էջ 540 (այսուհետև՝ ՆՀԲ):

² Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ. I, Ե., 2010, էջ 425:

³ Է.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, էջ 229:

⁴ Հայկական Սովետական հանրագիտարան, հ. Գ, Ե., 1997, էջ 24 (այսուհետև՝ ՀՍՀ):

րունաճ, որ է պապունաճն, որ է իրիցուկն, որ է գետնի խըն-
ծորն»⁵:

Բառի «երիցուկ» իմաստն է արձանագրված և լատինե-
րենի բառարանում՝ *chamaemelon* բառացի «գետնի խնձոր»: Լա-
տիներենը փոխառված է հունարենից:

Առարկելի է գետնախնձոր-կարտոֆիլ հասկացություն-
ների նույնացումը: Վերջինիս հայրենիքը Ամերիկան է. «Եվրո-
պայում այն սկսել են մշակել XVI դ. վերջին, իսկ Ռուսաս-
տանում՝ Պետրոս I-ի օրոք: Հայաստան է բերվել գրեթե նույն
ժամանակաշրջանում»:

Բառարանային վկայությունները շատ ավելի վաղ են,
քան այդ բույսի՝ կարտոֆիլի Հայաստան մուտք գործելու ժա-
մանակաշրջանը:

Ուրեմն՝ գետնախնձորը մշակովի կարտոֆիլ չէ, այլ ձևով
դրա նման մի վայրի բույս, որն այժմ էլ անվանում են *գետնա-
խնձոր*, որոշ բարբառներում *տոմալան* կամ *տոմբալան*, որի
հին անվանումն է *գերերի* «հողի տակ բուսնող մի տեսակ
սունկ»: Այս բառի հունարեն համապատասխանակն է *ἄρνον*-ը
«գետնասունկ»: *Գերերի*-ն վկայված է V դարից: (ՀԱԲ, I, էջ 543)⁶:
ՆՀԲ-ն *գերերի*-ն մեկնում է. «պտուղ ինչ կամ ծառ»: ՀԱԲ-ի բա-
ցատրությունն ավելի ճիշտ է: Ինչ վերաբերում է *գետնախնձորի*
«երիցուկ» իմաստին, կարծում ենք՝ համոզիչ է Նորայր Բյու-
զանդացու հետևյալ բացատրությունը. «Յոյնք գետնի խնձոր
անուանած են երիցուկը՝ իր ծաղկանց խնձորի հոտ ունենալուն
պատճառաւ»⁷:

⁵ Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 138:

⁶ Հուն. բառի համար ենթադրվում է «գետնասունկ» (трюфель) իմաստը (Sté u
И. Дворецкий, Древнегреческо-русский словарь, т. II, М., 1958, стр. 1661):

⁷ Ն. Բիւզանդացի, *Հայկական բառաքննութիւն*, Վոստանդուպոլիս, 1880,
էջ 112:

II. Խնձոր

Ստուգաբանական բառարաններում ենթադրվում են այլ լեզուներից հնարավոր գուգահեռներ՝ բացառելով բառի հ.-ե. ծագումը:

Բառի կապը ասորերեն *hazzūrā*-ի հետ իրավացիորեն մերժում է Հ. Հյուբշմանը. «Քանի որ սեմական լեզուները «խընձոր»-ը այլ կերպ են անվանում, ասորական բառը կարող է հայերենից փոխառություն լինել»: Հյուբշմանը ենթադրում է նաև, որ հավանաբար *χndzor* կամ *xndzor* է արտասանվել»⁸:

Գ. Ղափանցյանը նշում է խուրիտական *hinzur* գուգահեռը, որը, ըստ էության ընդունում է Գ. Ջահուկյանը՝ միաժամանակ մերժելով կապը հայերեն *խինձ*-արմատի հետ⁹:

Խինձ և *խինդ*-ը հ.-ե. **khendh*-արմատի տարբերակներն են: Այդ տարբերակներով հայերենում կազմված են մի շարք բուսանուններ, *խինձ* (ՀԱԲ). Ղարաբաղի բարբառում *խընձաղա* «ձնձաղիկ», այդ նույն արմատն է և խընջըլոզ «փոքրիկ սոխանման քաղցրահամ արմատով վայրի բանջար»¹⁰:

Խինդ արմատով՝ *խնդակոթ*, *մոլախինդ*, Ղարաբաղի բարբառում՝ *խինդէղնը* «ողկուզաձև մանր հատիկներով թուփ», *խընդողնը* «կլորաձև հատիկներով խաղողի տեսակ» (հմմտ. նաև *փոխինդ-փոխինձ* գուգահեռը):

Կարծում ենք՝ հայ. *Խնձոր*-ի արմատի կապը *խինձ/խինդ*-ի հետ մերժելու հարկ չկա: Բառի *-որ*- հնչյունախումբն էլ շեշտում է բույսի, պտղի կլորությունը. հմմտ. *սալոր*, *սխտոր*, նաև մի շարք այլ բառեր՝ *զլոր*, *կլոր*, *բոլոր*, *բոլորակ* «գունդ, շրջանակ», բարբառային՝ պոլոր «կլոր» և այլն:

⁸ Հ. Հյուբշման, *Հայագիտական հետազոտություններ*, Ե., 2004, էջ 278:

⁹ Գ. Ղափանցյան, *Հայոց լեզվի պատմություն, հին շրջան*, Ե., 1961, էջ 112-113:

Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 336:

¹⁰ Բառի համար ենթադրում ենք նախնական **խինձաղոջ* ձևը:

III. Ծիրան, ծիրանի (ենի)

Ըստ օտար աղբյուրների և հանրագիտարանների՝ այս միրգը, բնականաբար և ծառատեսակը հնագույն շրջանից տարածված է եղել Հայաստանում: Ջարմանալիորեն հայ հին մատենագրության մեջ բառը վկայված չէ: Գրաբարում, ինչպես նաև միջին հայերենում վկայված չէ *ծիրանի/ ծիրանենի* ծանանունը*:

Ահա *ծիրանը, ծիրանենին* վաղնջական շրջանում տարածված լինելու մի քանի վկայություններ ևս. «Ծիրան (*Prunus Armeniaca*) Եվրոպա է տարվել Ալեքսանդր Մեծի կողմից և հռոմեացիների կողմից տարածվել է Հարավային Եվրոպայում, ծիրանը անվանվել է նաև դեղնասալոր»¹¹:

«Յատուկ հայկական պտուղ... յայտ է ի պատմութենէ, որ Հռովմեացիք երբ մտան ի Հայաստան՝ Արշակունի Տիգրանաց և յաջորդաց հետ կռուելու, իրենց լաւագոյն աւար այս պտուղը մտուցին յԵվրոպա, ոչ միայն համովն, այլև հոտովն զմայլուած: Արաբացիք ալ իրենց ծանօթ պտղոյ անուամբ (ինչպէս լատինք՝ սալորոյ) հայկականք խնձոր կոչեցին... ինչպէս հիմայ Նապոլի կողմերում ոսկի խնձոր կոչեն»¹²:

«Մսալի և չոր կորիզապտուղ, հիմնականում դեղին կամ դեղնակարմրավուն: Կուլտուրական սորտերի մեծ մասն առաջացել է սովորական վայրի տեսակից, ծագումով՝ Չինաստանից, Փոքր Ասիայից: Ալաքսանդր Մակեդոնացին ծիրանենին Հայաստանից տեղափոխել է Հունաստան և անվանել ար-

* Բարսեղ կեսարացու գրքի բառացանկում նշված է *ծիրան* բառը, այնինչ համատեքստում այն *ծիրան* պտուղը չէ, այլ՝ *ծիրանի* «ծիրանագոյն» բառը. հմմտ. «Տեսանես ի միում ծաղկի գոյն գլխաւոր ծիրանոյ, ի միւսումն զգոյն կարմրութեան...» (Տե՛ս **Բարսեղ Կեսարացի**, *Յաղագս վեցարեայ արարչութեան*. աշխատասիրությամբ Կիմ Մուրադյանի, Ե., 1984, էջ 159):

¹¹ **Ф. Брокгауз, И. Эфрон**, *Энциклопедический словарь*, С.Петербург, 1830, стр. 41.

¹² **Ղևոնդ Ալիշան**, *Հայրուսակ կամ հայկական բուսաբառություն*, Վենետիկ, 1895, էջ 273:

մենիկա, այստեղից էլ տարածվել է Եվրոպայում»: (ՀՄՀ, հ. I, Ե., 1979, էջ 12):

Անդրադառնանք *ծիրան* բառի ստուգաբանությանը:

ՀԱԲ-ում բառը ստուգաբանված չէ. «Թէն *ծիրան* բառի գործածությունը շատ նոր է, բայց անշուշտ ամենահին ժամանակն էլ կար, որովհետև ունինք նրանից *ծիրանի* «ծիրանեզոյն կարմիր, 2. Ծիրանի ներկ տվող մի խեցեւորթ. 3. Ծիրանեզոյն ընտիր զգեստ... Եթէ այս պտուղը Հայաստանի բնիկ արտադրությունն է, ուրեմն բառը փոխառյալ պետք լինի խալդերենից» (ՀԱԲ, II, 459):

Չստուգաբանված բառերը ուրարտերենից փոխառություն համարելու Աճառյանի դիտարկումը, մասամբ ընդունում է նաև Գ. Ջահուկյանը¹³:

Համոզիչ է Գ. Ղափանցյանի այն դիտարկումը, որ «Հայերեն *ծիրան* (որպես պտղի անվանում) ոչ մի կապ չունի *ծիրան*-ի զանազան գույներ նշանակող բառերի հետ»: Վերջինս հեղինակը առնչում է խուռիտական *tiranna* «ծիածան» բառի հետ¹⁴:

Եթէ Գ. Ջահուկյանը, ինչպես նշեցինք, իր «Հայոց լեզվի պատմության» մեջ նույնպես *ծիրանը* ներառում է ուրարտական փոխառությունների շարքում, ապա ավելի ուշ գրված աշխատության մեջ բառը համարում է բնիկ հայերեն՝ տեսնելով հ.ե. ծագում՝ **ger-* «հասունանալ, ծերանալ» արմատը: «Ծիրանի արմատը կապված է հասունանալու գաղափարի հետ, այն համարվել է վաղահաս պտուղ»¹⁵:

«*Ծիրան*-ի «հասած, ոչ պինդ» իմաստային կապը ակնառու է և Ղարաբաղի բարբառում: Բարբառում *ծերան-ծերան* ունի «ոչ շատ պնդացած, կիսաթույլ» (խաշած ձվի մասին), իսկ *հրսած* «ոչ խակ, հասուն» ունի նաև «ծերացած» իմաստը¹⁶:

¹³ Տե՛ս Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, Ե., 1940, էջ 182: Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն, նախագրային շրջան*, Ե., 1987, էջ 436:

¹⁴ Գ. Ղափանցյան, *Հայոց լեզվի պատմություն*, Ե., 1961, էջ 145-146:

¹⁵ Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 363:

¹⁶ Ա. Մարգարյան, *Ղարաբաղի բարբառի բառարան*, Ե., 2013, էջ 299, 431:

Բացառելի չէ, որ մի շարք բարբառներում, այդ թվում և Ղարաբաղի *Օկրան* բառաձևը կարող է հ.-ե. *ger- «ծեր»-ի անմիջական արտացոլումը լինի:

Այս մրգի «վաղահասության» գաղափարը առկա է նաև միջինհայերենյան շրջանից վկայված ոչ հաճախական *պարկուկ* «ծիրան» բառում: ՀԱԲ-ում վերջինս համարվում է արաբերենից կատարված փոխառություն, որի նախնական ձևն է լատիներենում praecoqua «վաղահաս, մի տեսակ վաղահաս ծիրան»: Բառը կազմված է prae «առաջ, առջև», coquo «եփել, հասնել» (ՀԱԲ, IV, 64):

Եթե անժխտելի է վաղնջական շրջանում *ծիրան*, *ծիրանենի* հասկացության առկայությունը և ընդունելի է *ծիրան*-ի ստուգաբանությունը, ապա դարձյալ անբացատրելի է մնում *ծիրան*, *ծիրանենի* բառերի գրաբարում վկայված չլինելը: Հնարավոր ենք համարում, որ *ծիրան* միրգը գրաբարում ունեցել է այլ անվանում՝ պայմանավորված այլ մրգի հետ ունեցած համի, հոտի, չափսի հետ կապված ընդհանրություններով: Նշված հատկանիշներով *ծիրանը* ընդհանրություններ ունի *դեղձ*-ի հետ: *Դեղձ*-ի արմատն է *դեղ*-ը, իսկ *ձ*-ն աճական է, այդ նույն արմատն է և *դեղին* բառում: Իսկ այդ գույնը բնորոշ է և դեղձին և ծիրանին: ՆՀԲ-ում դեղձը բացատրվում է «պտուղ միջակ ընդ խնձոր և ընդ ծիրան՝ անուշահոտ և գեղեցիկ գունով ընդ դեղին և ընդ կարմիր»: *Օիրան*-ը՝ «պտուղ դեղին կարմրորակ...» (ՆՀԲ, I, 609, 1016): Ղ. Ալիշանը, հղելով մեկ այլ հեղինակի, գրում է «ծիրան շատ ցեղ լինի, լավն այն է որ խոշոր և դեղին լինի» (Հայբուսակ, 273):

Ի դեպ, այլ լեզուներում էլ օրինակներ կան, երբ նույն արմատով կազմված են տարբեր մրգանուններ, որոնք ունեն որոշակի ընդհանրություններ. օրինակ՝ պարսկերենում *ālu* «սալոր», նույն արմատով *holu* «դեղձ», *zardālu* «ծիրան» (բառացի՝ «դեղին սալոր»):

Համահոտային ընդհանրության պատճառով նույնացված են, ավելի ճիշտ՝ տարբերակված չեն *բալ* և *կեռաս*-ը:

Կեռաս-ը փոխառյալ է հունարենից κεράσος «բալենի»: Բալ և կեռաս հայերենում վկայված է միջինհայերենյան շրջանից: Միջին հայերենի բառարանում բալ-ը բացատրված է «կեռասենու պտուղը, կեռաս»: 2. «Բալենու պտուղը, բալ»: Բնագրային օրինակը՝ «Եւ բալ, որ է կերաս», «բալի պտուղ... որ է կերասն» (էջ 105):

IV. Վարունգ / Վարնգենի

Վարունգի հայրենիքը համարվում է Հնդկաստանը, որտեղ այն մշակվում էր մ.թ.ա. երեք հազար տարի առաջ (ՀՄՀ, հ. 11, Ե., 1985, 350): ՆՀԲ վարունգ-ը մեկնում է այսպես. «Բերք գետնատարած ... ի ձև գլանի կամ գլանաձև դոմի. անեփ, ուտելի՝ զովարար» (ՆՀԲ, II, 797): ՆՀԲ-ում նշված է նաև վարունգ-ի «կիտրոն» իմաստը: Մեր մատենագրության մեջ վարունգ վկայել է Փավստոս Բուզանդը՝ «Պատմության» այն դրվագում, երբ Դրաստամատը այցելում է բանտարկված Արշակ թագավորին և թագավորին վայել հյուրասիրում. «Եւ ագոյց նմա պատմուճան ազնիւ... և եղ առաջի նորա ընթրիս ըստ օրինաց թագաւորաց, և եղ առաջի նորա գինի... և ի ժամ աղանդեր մատուցանելոյ՝ եղին առաջի նորա միրգ, խնձոր և վարունգ և ամիճ, զի կերիցէ...»: Աշխարհաբար թարգմանության մեջ նույնպես վարունգ է (319)¹⁷: Այս հատվածում, ինչպես տեսանք վարունգ-ը թվարկված է մրգերի շարքում: Ուրեմն՝ համատեքստում վարունգ-ը «կիտրոն»-ն է և ոչ թե «բերք գետնատարածը՝ խըլյար»-ը:

Թվարկված մրգանունների շարքում կասկածելի է թվում ամիճ-ը:

Եղիշեի գրքում, ամիճ-ը բույս չէ, այլ մսից պատրաստված ճաշ. «Տիկնայք փափկասունք... որ ի մանկութենէ իւրեանց սնեալ էին ուղղովք զուարակաց և ամճովք էրեոց, խոտաբուս

¹⁷ Փաւստոսի Բիւզանդացոյ պատմութիւն, բնագիրը Ք.Պատկանյանի թարգմանությունը և ծանոթագրությունները Մտ.Մալխասյանցի, Ե., 1987, էջ 318, 319:

կենօք իբրև զվայրենիս ընդունեին զկերակուրն մեծաւ խնդու-
թեամբ...»¹⁸:

Ղևոնդ Ալիշանը, տարբեր աղբյուրներից բերելով օրի-
նակներ, *ամիճ*-ը փորձում է նույնացնել *ամլաճ*-ի հետ, որը հա-
մարվում է դառնահամ, բայց օգտակար պտուղ¹⁹:

Վարունգ բառի ծագումը կասկած չի հարուցում. այն
միջին իրանական լեզուներից կատարված փոխառություն է,
իսկ ք. Պատկանյանը իրանական մի շարք լեզուների և բար-
բառների տվյալներով հաստատում է, որ բառը այդ լեզու-
ներում էլ ունի «կիտրոն, նարինջ» իմաստը²⁰:

Գրաբարում կա և *վարնգենի/վարնկենի* բառը: Առաջին
վկայությունը «Աշխարհացոյց»-ից է (V կամ VII դդ.). «Ուտի
առանձնակ՝ յորում Պարտաւ քաղաք: Լինի ի նմա ձեթենի,
վարնկենի, եւ ի հաւուց կատակ»²¹:

ՆՀԲ-ում կա նաև մեկ այլ վկայություն՝ ուշ շրջանից.
«Վարդենիք, նոնենիք, արմաւենիք, վարնգենիք» (ՆՀԲ, II, 707):

Բառարանը *վարնգենի*-ն մեկնում է «բոյս՝ որ բերէ զվա-
րունկ. խիյարի բոյսը»: Այդպես է և Առձեռն բառարանում. «վա-
րնգենի կամ վարնկենի, վարունկի բոյսը. խիյարլըք»²²:

Ինչպես նկատելի է, բերված օրինակներում *վարնգենի*-ն
ծառատեսակների շարքում է: Հայերենում ծառանունները
կազմված են գոյ. + *-ի* կամ *-ենի* ածանցներով:

Վարունգ-ի «կիտրոն» իմաստը գրաբարի բառարանա-
գիրները արձանագրել են, սակայն զարմանալիորեն *վարնգենի*
բառի դեպքում չեն նշում «կիտրոնի ծառ»:

¹⁸ Եղիշէի Վան Վարդանայ եւ Հայոց պատմութեան. Ի լոյս ածեալ բաղդատու-
թեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Ե., 1957, էջ 201:

¹⁹ Ղևոնդ Ալիշան, *Հայրուսակ կամ հայկական բուսաբառություն*, Վենետիկ,
1895, էջ 33:

²⁰ К. Патканов, *Армянская география VII в. С. Петербург, 1877, стр. 51-52.*

²¹ *Մատենագիրք հայոց*, Բ հատոր, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 153,
2172:

²² *Առձեռն բառարան հայկազգեան լեզուի*, Վենետիկ, 1865, էջ 754:

Hovhannisyan Lavrenti - On Some Plant Names. - The article states:
– that the linguistic explanations of the words **chamaemalum** (poma terrae), “**cucumber**” (cucumis) in the dictionaries are not clear;
– the reason of non-existence of the word “**apricot**” (malum Armenicum) in Grabar (Old Armenian);
– that “**apple**” is viewed as an Armenian word.

Оганесян Лаврентий- О названиях некоторых растений.- В статье отмечаются:

– нечеткое словарное объяснение следующих слов: *գեղնաշխնձոր* (poma terrae) *շիրնիզ* (cucumis),
– Причины незасвидетельствования слово *ծիրնի* (абрикос) в древнеармянском языке,
– Исконно армянское происхождение *խնձոր* (яблоко).

ԲԱՅԱՍԵՆԻ ԿԱՐԳԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Հայերենի խոնարհման համակարգում բայական սեռի քերականական կարգը արտահայտում է գործողության մեջ ներգրավված առարկաների սուբյեկտ-օբյեկտային հարաբերությունները:

Դասական¹ գրաբարի շրջանում լեզվի զարգացումը գտնվում էր այնպիսի փուլում, երբ խախտվել էին սեռի կարգի ձևախմբման հակադրությունների նախկին ավելի որոշակի դրսևորումները, որոնք ըստ հետազոտողների կապվում էին բայական լծորդությունների հետ: Վ. Առաքելյանը նշում է, որ «ե, ա, ի, ու, ո խոնարհիչ ձայնավորների հիմնական նշանակությունը բայասեռի արտահայտությունն է եղել²: Մակայն ուսումնասիրվող շրջանում լծորդ ձայնավորները հիմնականում կորցրել էին իրենց ունեցած սեռանշտության վաղեմի գործառնությունը՝ խոնարհման տիպերի միջև տարբեր կարգի փոխանցումների, զուգաձևությունների առաջացման, ինչպես նաև ընդհանրապես ներգործակերպ ու կրավորակերպ խոնարհումների նախկին իմաստային պայմանավորվածության խախտման հետևանքով: Բացի այդ, խախտվել էր նաև երբեմնի հարաբերակցությունը սեռի կարգի և բայական բառային բառակազմական (պարզ կամ ածանցավոր) կառուցվածքի միջև:

Սեռի կարգի դրսևորումները տարբեր են բայական հարացույցի՝ ներկայի և կատարյալի հիմքերից կազմված ձևերում,

¹ «Դասական գրաբար» տերմինը պայմանականորեն վերագրվում է V դարի լեզվանյութին՝ որպես մեկ ամբողջության (հմմտ. մեր «Գրաբարի բառակազմությունը» աշխատության Ներածության «Նյութի ընտրության ու նկարագրության սկզբունքները» բաժինը [նշվ. աշխ. Ե., 1987, էջ 34]:


² Վ. Առաքելյան, *Գրաբարի քերականություն*, Ե., 2010, էջ 111:

բացի այդ, եղանակաժամանակային ոչ բոլոր կառույցներն ունեն ձևական հակադրություններ ըստ սեռի:

Գրաբարի բայական սեռի կարգում կարելի է առանձնացնել մի քանի իմաստային և ձևաիմաստային հակադրություններ: Ըստ սեռային իմաստի՝ բայերը կարող են լինել ներգործական, կրավորական, չեզոք և հասարակ (ընդհանուր)³: Վերջինները միևնույն ձևով արտահայտում են թե՛ ներգործական, թե՛ կրավորական իմաստ: Սեռի կարգի դրսևորումներից է նաև պատճառականությունը, որը կարելի է ներկայացնել որպես օբյեկտի վրա ենթակայի միջնորդված ներգործության կամ անցողականության արտահայտություններից մեկը: Հետևաբար պատճառականությունը սեռի կարգի սուբյեկտ-օբյեկտային հարաբերությունների ավելի ընդհանրական դասակարգման մեջ ներգործական սեռի հետ միասին կազմում է անցողականության դասը, իսկ չեզոք և կրավորական սեռերը՝ անանցողականության դասը: Ընդ որում, անցողականությունը առանձին ձևաբանական արտահայտություն չունի և բացահայտվում է շարահյուսական հատկանիշների, ինչպես նաև ներգործական ու կրավորական սեռերի հետ ունեցած իմաստային հարաբերակցության հիման վրա:

Սեռի կարգի՝ վերը նշված բոլոր ձևաիմաստային դրսևորումները և փոխհարաբերությունները՝ ներառյալ անցողականությունն ու անանցողականությունը, և նրանց փոխակերպումների ուղղությունն ու արդյունքները կարելի է արտահայտել հետևյալ գծապատկերով.

³Չայ քերականագիտության մեջ կոչվել են նաև երկսեռ [Վ.Առաքելյան նշվ. աշխ.] կամ կրկնասեռ [Գ.Խաչատրյան, *Գրաբար*, Ե., 2014, Ն. Չաքրյան, *Հին հայերենի կրկնասեռ բայերը. Տարժամանակյա քննություն*, Գյումրի, 2015]:



Ի տարբերություն բայական մյուս քերականական կարգերի՝ սեռի կարգը դասական գրաբարի շրջանում չունի իմաստային հակադրությունների հստակ արտահայտված միասնական ձևաբանական դրսևորումներ և որոշվում է մասամբ լծորդությունների փոփոխությամբ (Ե – Ի), մասամբ ներգործակերպ և կրավորակերպ խոնարհումների հերթագայությամբ: Բայց այս միջոցները նույնպես ընդհանրական բնույթ չունեն, և որոշ դեպքերում սեռային հակադրությունները չեզոքանում են, ավելի ճիշտ, ներգործական և կրավորական սեռերը ձևով նույնանում են: Հետևաբար բայասեռի որոշման հիմքում ընկած է գլխավորապես իմաստային չափանիշը և նախադասության շարահյուսական կառուցվածքը:

Բայական բառույթի սահմաններում հիմնական իմաստային հակադրությունը գոյություն ունի ներգործական և չեզոք սեռերի բայերի միջև, որոնք ձևաբանորեն նշույթավորված չեն: Այս հակադրությունը մյուսներից տարբերվում է նրանով, որ

այստեղ հակադրության եզրերը տարբեր բայեր են (*բերեմ* – ներգ., *ելանեմ* – չեզ.), իսկ մյուսների դեպքում (ներգործական և կրավորական՝ *սիրեմ* – *սիրիմ*, ներգործական և պատճառական՝ *յիշեմ* – *յիշեցուցանեմ*, չեզոք և պատճառական՝ *բազմանամ* – *բազմացուցանեմ*) միևնույն բայի տարբեր ձևերն են՝ հակադրությունների չեզոքացման մասնակի դրսևորումներով (օր. անցյալ անկատարի ձևերում): Այլ կերպ ասած, եթե վերջին երեք դեպքերում սեռային հակադրությունները «անհատական» բնույթ ունեն (բայական մեկ բառույթի սահմաններում), ապա առաջին դեպքում հակադրությունն առկա է ներգործական և չեզոք սեռերի բայերի ամբողջական դասերի (խմբերի) միջև:

Ներգործական և կրավորական սեռերը տարբերակվում են գործողության ուղղվածության իմաստային չափանիշով: Ներգործական կառուցվածքի նախադասություններում գործողության ելակետը ենթական է, իսկ հանգակետը (կրող օբյեկտը)՝ ուղիղ խնդիրը: Կրավորական կառուցվածքի նախադասություններում գործողության ելակետը ենթական չէ, այլ ներգործող խնդիրը (այսպես կոչված տրամաբանական ենթական): Պատճառական կառուցվածքներում, ինչպես նշվեց, ենթակայի ներգործությունը օբյեկտի վրա կատարվում է մեկ այլ ազենսի (գործող առարկայի) միջնորդմամբ, և եթե խոնարհվող բայը ներգործական սեռի է, կարելի է ասել՝ գոյություն ունի կրկնակի ներգործականություն:

Ի տարբերություն ժամանակակից հայերենի՝ որն ունի կրավորական սեռի առանձին ցուցիչ՝ *-վ*՝ կրավորակերտ միջաձանց⁴, դասական գրաբարում հատուկ սեռանիշ ձևույթ չկա,

⁴Ուետք է նաև նշել, որ ժամանակակից հայերենի *-վ*՝ ածանցը բազմիմաստ է և բացի կրավորականությունից կարող է արտահայտել նաև սեռի այլ դրսևորումներ՝ անդրադարձություն (*լվանալ-լվացվել*), փոխադարձություն (*համբուրել-համբուրվել*), ինչպես նաև ձևավորել բայական բառույթը առանց լրացուցիչ սեռային իմաստի, ինչպես՝ *բնակվել*, *զբաղվել*, *համաձայնվել*, *համարձակվել*, *հարձակվել*, *հաշտվել*, *հնազանդվել*, *սխալվել*, *վախճանվել*, *վերաբերվել* և նման, այսպես կոչված, կրավորակերպ չեզոք բայերում, որոնք չեն

սեռի կարգը դրսևորվում է դիմաթվային վերջավորությունների հատուկ խմբերով, որոնք ունեն ընտրության բավական բարդ պատկեր: Բուն ներգործական սեռի բայերը կարող են ունենալ կրավորական սեռի փոխարկման միջոցներ՝ հիմնականում, ինչպես նշվեց, լծորդության փոփոխություն՝ Ե – Ի, և ներգործակերպ ու կրավորակերպ խոնարհումների հերթագայություն: Մրան հակառակ՝ պատճառականությունն արտահայտվում է հատուկ ձևաբանական միջոցով՝ *-ուցան-* (<ոյց+ան) // *-ուզան-* // *-ուսան-* ածանցով, որը կցվում է կատարյալի հիմքին, ընդ որում, ի հակադրություն ընդհանրական *-ուցան-* ածանցի՝ *-ուզան-* և *-ուսան-* տարբերակները վկայված են եզակի օրինակներով (տե՛ս աղյուսակը):

Պատճառական բայերի կազմության մեջ կատարյալի հիմքի ձևավորումը մնում է նույնը, բացի *ի* թույլ բաղադրիչ ունեցող բայերից, որոնց մեջ *-ուցան-* ածանցից առաջ այդ բաղադրիչն ընկնում է: Բոլոր պատճառական բայերը անցնում են Ե խոնարհման՝ անկախ սերող բայի լծորդությունից: Կա նաև պատճառականության արտահայտման վերլուծական միջոց՝ *տալ* բայի և իմաստակիր բայի անորոշ դերբայի հարադրությամբ:

Պատճառականության իմաստի ձևաբանական դրսևորումները համադրական և վերլուծական կառույցներով կարելի է ներկայացնել ստորև տրվող աղյուսակով (տե՛ս հաջորդ էջում):

Բայասեռի ձևաբանական արտահայտությունները բայական հարացույցի տարբեր հատվածներում միակերպ չեն:

կարող հանդես գալ առանց *-ի-* ածանցի: Այստեղ *-ի-* ածանցը փաստորեն բառակազմական գործառույթ ունի: Ժամանակակից հայերենում այս տիպի բայերի առաջացումը գրաբարյան կրավորակերպ Ի խոնարհման բայերի զարգացման յուրատեսակ արձագանք է, այսինքն՝ գրաբարյան Ի խոնարհման բայերը, որոնք անկախ բայասեռից ունեին կրավորակերպ խոնարհում, ժամանակակից արևելահայերենում պահպանում են իրենց «կրավորակերպությունը» այս անգամ արդեն *-ի-* կրավորական ածանցի տեսքով:

Դրանք տարբեր են ներկայի և կատարյալի հիմքերից կազմված ձևերում⁵:

Համադրական			Վերլուծական
Պատճառական ածանցներով			<i>Տալ</i> (հզվդ. <i>առնել</i>) բայի և անորոշ դերբայի հարադրմամբ
<i>-ուցան-</i>	<i>-ուզան-</i>	<i>-ուսան-</i>	
Ա խոնարհում <i>խաղամ-</i> <i>խաղաց+ուցանեն</i> Ե խոնարհում <i>հատանեն-</i> <i>հատ+ուցանեն</i> Ի խոնարհում <i>ուսանիմ-</i> <i>ուս+ուցանեն</i> Ու խոնարհում <i>ջեռնում-</i> <i>ջեռ+ուցանեն</i>	Ե խոնարհում <i>ելանեն-</i> <i>ել+ուզանեն*</i> Ի խոնարհում <i>փլչիմ-</i> <i>փլ+ուզանեն</i> <i>//փլուցանեն</i> Ու խոնարհում <i>ընկնում-</i> <i>ընկլ+ուզանեն</i>	Ի խոնարհում <i>կորնչիմ-</i> <i>կոր+ուսանեն</i>	Տամ սպանանել**

*Պահպանված է միայն *ընդելուզանեն* ձևում՝ իմաստային անցումով:

**Վկայված են և կրկնակի պատճառականության օրինակներ՝ *տամ խաղացուցանել, ետ կորուսանել*⁶:

Ներկայի հիմքից կազմված ձևերում ներգործական-կրավորական սեռերի հակադրությունը դրսևորվում է Ե խոնարհ-

⁵Հմմտ.՝ *Э.Г.Туманян, Древнеармянский язык*, М., 1971, с. 324.

⁶**Ա. Ա. Արբախյան**, *Գրարարի ձեռնարկ*, Եր., 1958, էջ 200-201, **Գ. Խաչատրյան**, *Գրարար*, Ե. 2014, էջ 175:

ման ներգործական բայերի մեջ լծորդ ձայնավորի հերթագայությամբ (ե =>ի)՝ ներգործական սեռի բայերը կրավորականի փոխակերպելիս. այսպես՝ ներկա՝ *սիրեմ – սիրիմ*, առաջին ապառնի՝ *սիրիցեմ – սիրիցիմ*, արգելական հրամայական՝ *մի սիրեր – մի սիրիր*, նույնպիսի հակադրություն դրսևորվում է նաև պատճառական բայերի մեջ, քանի որ դրանք, ինչպես նշվեց, անկախ իրենց սերող բայերի լծորդությունից՝ անցնում են Ե խոնարհման՝ *նստիմ* (Ի խոնարհում) – *նստուցանեմ – նստուցանիմ, գողանամ* (Ա խոնարհում) – *գողանայցեմ – գողանայցիմ*:

Ա խոնարհման բայերի մեջ ներգործական-կրավորական հակադրությունը ներկայի հիմքից կազմված ժամանակներից ձևաբանորեն առկա է միայն առաջին ապառնիում՝ *ստանայցեմ – ստանայցիմ*:

Կատարյալի հիմքից կազմված ձևերում ներգործական և կրավորական սեռերը տարբերակվում են դիմաթվային վերջավորությունների միջոցով: Այստեղ ևս դրսևորվում են որոշակի յուրահատկություններ: Ա, Ե, Ու խոնարհման ներգործական և պատճառական բայերից կրավորական կազմելիս կատարյալի հիմքին կցվում են այսպես կոչված կրավորակերպ *-այ, -ար, -աւ, -աք, -այք/արուք, -ան* վերջավորությունները: Իսկ Ի խոնարհման դեպքում, որին այդ նույն վերջավորությունները հատուկ են «ի բնե», դրանցով արտահայտվում են թե՛ ներգործական, թե՛ կրավորական իմաստները, այլ կերպ ասած՝ այդ բայերը երկսեռ կամ հասարակ սեռի բայեր են, որոնք ներգործական սեռի հատուկ վերջավորություններ չունեն:

Բայի սեռի և խոնարհման տիպերի (լծորդությունների), ինչպես նաև բայերի պարզ կամ ածանցավոր կազմության միջև գոյություն ունեն հետևյալ հարաբերությունները:

Ներգործական և չեզոք սեռերի բայերը կազմությամբ կարող են լինել թե՛ պարզ, թե՛ ածանցավոր և պատկանել բոլոր չորս լծորդություններին (Ա_{ներգ.} – *աղամ, մոռանամ*, Ա_{չեզ.} – *խաղամ, զարմանամ*, Ե_{ներգ.} – *գրեմ, արկանեմ*, Ե_{չեզ.} – *սպրեմ, անցա-*

նեմ, Ի_{ներգ.} – խորհիմ, ծնանիմ⁷, Ի_{չեզ.} – նստիմ, կարկամիմ, Ու_{ներգ.} – կիզում, ընկենում, Ու_{չեզ.} – գարթնում, ցասնում):

Քանակական առումով ներգործական սեռի բայերը հիմնականում պատկանում են Ե և Ու խոնարհման⁸, իսկ Ա խոնարհման են պատկանում առավելապես չեզոք սեռի բայերը, և նույնիսկ հին հայերենի պատմական զարգացման ընթացքում այլ խոնարհումներից մի շարք չեզոք սեռի բայեր անցել են Ա խոնարհման:

Կրավորական սեռի սկզբնաձև բայեր չկան⁹: Կրավորական բայերը առաջանում են ներգործականների փոխակերպման հետևանքով՝ Ե>Ի լծորդության փոփոխությամբ՝ *գրեմ-գրիմ*: Այսինքն՝ Ե խոնարհման բայերը ստանում են Ի խոնարհման վերջավորությունները: Սա միակ դեպքն է, երբ դիմաթվային վերջավորությունների փոփոխությունը ոչ թե ձևական, այլ բովանդակային, այսինքն՝ քերականական արժեք ունի (ներգործական սեռի փոխակերպում կրավորականի): Մնացած բոլոր դեպքերում միևնույն բայերի տարբեր լծորդություններով կիրառությունները բայասեռի փոփոխություն չեն առաջացնում, քանի որ ի հայտ են եկել պատմականորեն, խոնարհումների փոխանցման և լծորդությունների սեռանշտության նախկին գործառույթի կորստի հետևանքով՝ առաջացնելով խոնարհման զուգաձևություններ, թեև խոնարհիչ ձայնավորները սկզբնապես եղել են սեռացուցիչներ¹⁰: Վ. Առաքելյանը քանակական հաշվումներով ներկայացրել է բայասեռերի բաշխումը ըստ առանձին խոնարհումների՝ «Ե խոնարհման բայերը մեկուկես անգամ ավելի են, քան մյուս խոնարհումների բայերը միասնա-

⁷Մանիմ բայը իրականում եռասեռ բայ է, կարող է նշանակել և՛ «ծնում եմ», և՛ «ծնվում եմ», և՛ «ինձ ծնում եմ» [տե՛ս Վ. Առաքելյան, *Գրաբարի քերականություն*, էջ 141]:

⁸Տե՛ս Զ. Զաքյան, *Հին հայերենի կրկնասեռ բայերը*, էջ 53: Գ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 189 և հաջ.:

⁹Հմմտ. Ա. Ա. Աբրահամյան, *Գրաբարի ձեռնարկ*, էջք 106-108:

¹⁰Հմմտ. Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջք 111, 117:

բար»¹¹, հետագայում սակայն ներգործական նշանակությունն աղոտանում է, և դրանք անցնում են չեզոք սեռին. ներգործականության արտահայտման համար առաջանում են պատճառական բայերը, որով փոխհատուցվում է Ե խոնարհման բայերի ներգործականության իմաստի կորուստը¹²: Ի խոնարհման չեզոք սեռի բայերից անցողական (ներգործական) կազմելիս ստացվում են պատճառական բայեր՝ *շիջանիմ – շիջուցանեն, բազմիմ – բազմեցուցանեն*:

Միաժամանակ, որոշ դեպքերում խոնարհման միևնույն վերջավորություններով արտահայտվում է ինչպես ներգործական, այնպես էլ կրավորական սեռի իմաստը:

Հարաբերակցությունը բայի սեռի, լծորդության և կազմության (բայաձանցների) միջև ընդհանուր դրսևորումներով կարելի է ներկայացնել հետևյալ կետերում.

✓ Դասական գրաբարում բայասեռի արտահայտման հատուկ սեռանիշ մասնիկներ չկան (ինչպես ժամանակակից հայերենի-ւ/- կրավորակերտ ածանցն է):

✓ Հին հայերենում սկզբնապես բայասեռի արտահայտությանը ծառայել են խոնարհիչ ձայնավորները, սակայն գրավոր ավանդված շրջանում այդ օրինաչափությունը խախտվել է:

✓ Նախապես ներգործական սեռին են պատկանել հիմնականում Ե խոնարհման բայերը, իսկ Ա խոնարհման բայերը գերազանցապես պատկանել են չեզոք սեռին:

✓ Բայի սեռի արտահայտության հետ է կապվել նաև բայի կազմությունը. Ա և Ու խոնարհման ածանցավոր բայերը գերազանցապես չեզոք սեռի են:

✓ Ե խոնարհման ներգործական սեռի բայերը կրավորականի փոխակերպվելիս ստանում են Ի խոնարհման բայերի դիմաթվային վերջավորությունները: Այստեղ գործ ունենք ոչ միայն ձևի, այլև բովանդակության փոփոխության հետ:

¹¹Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 110:

¹²Ն. տ., էջ 113:

✓ Ներգործական և կրավորական սեռերի հստակ հակադրություն տեսնում ենք միայն անցյալ կատարյալ ժամանակում: Մյուս ժամանակաձևերում հակադրությունը չեզոքանում է:

Որպես ընդհանուր եզրակացություն՝ կարող ենք ասել, որ ուսումնասիրվող շրջանի գրաբարում խախտվել էին բայասեռի դրսևորման նախկին՝ ավելի հստակ օրինաչափությունները: Այս վիճակը հետագայում պետք է հանգեցնե՞ր այդ քերականական կարգի արտահայտման նոր միջոցի՝ *-ւ/-* կրավորակերտ ածանցի առաջացմանը:

Hovsepyan Liana – The Category of Voice in Old Armenian.–The definition of the category of voice in Old Armenian is a complicated problem in Armenian grammar because of the loss of former morphological means for its expression dependent on conjugation types and morphological structure of the verbal lexeme (simple or with present stem affixes). For the period of the written fixation of Old Armenian at the beginning of the V c. a. D. four types of verbal voices are distinguished: active, passive, neutral and common, the morphological differentiation among them being often neutralized. Such situation creates preconditions for a new means for expressing the passive voice in Modern Armenian by the affix *v* (<*ou).

Овсепян Лиана – Категория залога в древнеармянском языке. – Характеристика категории залога является одной из сложных проблем теории древнеармянского языка, т. к. в период его письменной фиксации (V в. н. э.) была утрачена бывшая, более четкая корреляция между планом выражения и планом содержания этой категории, обусловленная типами спряжения (спрягающими гласными) и морфологической структурой глагольной лексемы (простой либо с презентными суффиксами). Для указанного периода исследователи обычно выделяют четыре залога: действительный, страдательный, средний и общий, причем морфологическое противопоставление между ними зачастую нейтрализуется. Такое положение создает предпосылки для образования нового способа выражения этой категории – с помощью страдательного суффикса *v* (<*ou) в новоармянском языке.

Ղուկասյան Սևակ
(Հայաստան, ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

**ԱՅՈՒՈՉ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ ՂՈՒԿԱՍԻ
ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆ
ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

Ղուկասի Ավետարանը Նոր Կտակարանում երրորդն է և հաջորդում է Մատթեոսի ու Մարկոսի Ավետարաններին՝ բաղկացած է 24 գլուխներից: Ղուկասի Ավետարանի խորհրդանիշն է ցուլը, գույնը՝ կարմիրը:

Ղուկասի արևելահայերեն Ավետարանում կա 143 հարցական նախադասություն, իսկ արևմտահայերենում՝ 176: Այս տարբերությունը բացատրվում է նրանով, որ արևելահայերեն զգալի պատմողական նախադասություններ արևմտահայերենում արտահայտված են հարցականով:

Ղուկասի Ավետարանում հարցեր են տալիս Հիսուս, Մարիամ աստվածածինը, Հովհաննես Մկրտիչը, Հիսուսի աշակերտները, ժողովուրդը, փարիսեցիները, Պիղատոսը և այլք:

Այստեղ էլ, մյուս երկու Ավետարանների պես, սկզբից բերվում է ավետարանչի խոսքը, որից հետո կետ է դրվում, և նոր չակերտների մեջ տրվում է համապատասխան հարցումը: Այս Ավետարանում նույնպես ավետարանչի խոսքը լինում է կարճ՝ բաղկացած երկու, երեք կամ չորս բառերից և երկար՝ բաղկացած մեկ և ավելի նախադասություններից: Կարճ են հետևյալ օրինակները՝ «Պետրոսն ասաց-Պետրոս ըսաւ անոր» (12,41), «Այգեգործին ասաց -Ուստի ըսաւ այգեպանին» (13, 7), «Եվ Յիսուս ասաց - և Յիսուս ըսաւ» (8, 45), «Յիսուս նրան ասաց-Յիսուս ըսաւ անոր» (18, 19) և այլն: Իսկ ավելի երկար են հետևյալները՝ «և Յովհաննէսն իր աշակերտներից մի երկուսին իր մօտ կանչեց ու նրանց ուղարկեց Տիրոջ մօտ ասելու-Յովհաննէսն ալ իր աշակերտներեն երկուքը իրեն կանչեց և զանոնք Յիսուսին դրկեց ըսելով» (7,19), «Երբ նրա աշակերտները՝

Յակոբոսը և Յովհաննէսը, այդ տեսան, ասացին – Երբ իր աշակերտները, Յակոբոս ու Յովհաննէս, իմացան, ըսին անոր» (9, 54) և այլն:

Ինչպէս մյուս երկու՝ Մահթէոսի և Մարկոսի Ավետարաններում, այնպէս էլ Ղուկասինում գործածված են տարբեր տեսակի հարցական նախադասություններ: Այստեղ նույնպէս ինչու-որ հարցումները բոլորից շատ են՝ ընդհանուր առմամբ՝ 113 հատ, հետո՝ այո-ոչ-երն են՝ ընդհանուր առմամբ՝ 28 հատ, հետո՝ եղանականիշները՝ ընդհանուր առմամբ՝ 17 հատ և վերջում՝ ընտրանքայինները՝ ընդհանուր առմամբ՝ 9 հատ:

Այո-ոչ հարցումներից 18-ը մենաբնէտ են, որոնք ունեն պարզ և բարդ կառուցվածքներ՝ համադասական ու ստորադասական հարաբերություններով, իսկ մյուսները՝ 10 հատը հանդէս են գալիս բազմաբնէտների կազմում՝ երկու այո-ոչ և ինչու-որ ու այո-ոչ հարցումների տեսքով:

Մենաբնէտ այո-ոչ հարցումներ

Ինչպէս արդէն ասել ենք, Ղուկասի Ավետարանում մենաբնէտ այո-ոչ հարցական նախադասությունները 18 հատ են, որոնք ունեն պարզ և բարդ կառուցվածքներ՝ համադասական և ստորադասական հարաբերությամբ:

Բերենք այդ նախադասությունները.

ա) Պարզ կառուցվածքի հարցումներ.

1. Եվ բոլորը վկայում էին ու զարմանում նրա բերանից ելած շնորհալի խօսքերի վրայ ու ասում. «Սա Յովսէփի որդին չէ՞» - Ամէնքը անոր համար կը վկայէին ու կը զարմանային անոր բերնէն ելած շնորհալի խօսքերուն վրայ ու կ'ըսէին. «Ասիկա Յովսէփին որդին չէ՞» (4, 22):

2. Յիսուս նրան ասաց. «Յուդա՛, համբուրելո՞վ ես մատնում մարդու որդուն» - բայց Յիսուս ըսաւ անոր. «Յո՛ւդա, համբուրելո՞վ կը մատնես Որդին մարդոյ» (22, 48):

3. Երբ նրա շուրջը զոնտուղները տեսան եղածը, նրան ասացին. «Տէր, որով նրանց հարուածե՞նք» - Երբ անոր բոլոր-

տիքը տեսան ինչ-որ պիտի ըլլար, ըսին անոր. «Տէր, թուրով զարնէ՞նք» (22, 49):

4. Եվ ամէնքը միասին ասացին. «Ուրեմն դու Աստծու Որդի՞ն ես» - Ամէնքը ըսին. «Ուրեմն դու Աստուծոյ Որդի՞ն ես» (22, 70):

5. Եվ Պիղատոսը հարցրեց նրան և ասաց. «Հրեաների թագաւորը դո՞ւ ես» - Պիղատոս հարցուց անոր ու ըսաւ. «Հրէից թագաւորը դո՞ւն ես» (23, 3):

6. Եվ մինչ դեռևս ուրախութիւնից չէին հաւատում և զարմանում էին, ասաց նրանց. «Այստեղ ուտելու բան ունէ՞ք» - Երբ տակաւին իրենց ուրախութենէն չէին հաւատար և զարմանքի մէջ էին, ըսաւ անոնց. «Ուտելիք մը ունէ՞ք հոս» (24, 41):

բ) Համադասական հարաբերությամբ հարցումներ.

1. Եվ դառնալով կնոջ կողմը՝ Սիմոնին ասաց. «Տեսնո՞ւմ ես այս կնոջը. մտայ քո տունը, ոտքերիս համար ջուր չտուիր, իսկ սա իր արտասուքներով թրջեց իմ ոտքերը և իր մազերով սրբեց...» - ու դառնալով դէպի այնն ինը՝ ըսաւ Սիմոնին. «Կը տեսնէ՞ս այս կինը: Ես քու տունդ մտայ, դուն ոտքերուս ջուր չտուիր, բայց ասիկա իր արցունքովը ոտքերս թրջեց և իր մազերով սրբեց:...» (7, 44):

2. Իսկ կախուած չարագործներից մէկը հայտնում էր նրան և ասում. «Դու չե՞ս Քրիստոսը. փրկի՛ր ինքդ քեզ և մեզ» - Այն կախուած չարագործներէն մէկը հայտնութիւն կ'ներ անոր ու կ'ըսէր. «Եթէ դուն Քրիստոսն ես, ազատէ քու անձդ ու մեզ ալ» (23, 39):

3. Եվ իր վրայ եկած քահանայապետներին, տաճարի իշխանավորներին և ծերերին ասաց. «Ինչպէս ակազակի՞ վրայ էք գալիս սրերով ու մահակներով. միշտ ձեզ հետ էի տաճարում, և դուք ինձ վրայ ձեռք չըրկարեցիք. սակայն այս է ձեր ժամը և խաւարի իշխանութեան զօրութիւնը» - Յիսուս իր վրայ եկող քահանայապետներուն ու տաճարի իշխաններուն ու ծերերուն ըսաւ. «Իբր թէ ակազակի՞ վրայ ելաք սուրերով ու բիրերով:

Ամէն օր ձեզի հետ էի տաճարին մէջ և ինծի ձեռք չզարկիք, բայց այս է ձեր ժամանակը ու խաւարին իշխանութիւնը» (22, 52-53):

գ) Մէկ և երկու ստորադաբական հարաբերությամբ հարցումներ.

1. Երբ ճանապարհ էր ընկել դէպի Երուսաղէմ, մէկը նրան ասաց. «Տէ՛ր, սակաւաթի՛ւ են նրանք, որ փրկուելու են» - Մէկը ըսաւ անոր. «Տէ՛ր, քիչուո՞ր են անոնք որ պիտի փրկւին (13, 22, 23):

2. Նրա ընկերը նրան աստելով՝ պատասխան տուեց և ասաց. «Աստուծոց չէ՞ս վախենում, դու, որ նոյն պատժին ես կրում...» - Իսկ միւսը զանիկա յանդիմանալով՝ ըսաւ. «Ռուն Աստուծմէ չէ՞ս վախնար, որովհետև նոյն դատապարտութեան մէջ ես...» (23, 40):

3. Իսկ Պիղատոսը, երբ Գալիլիայի մասին լսեց, հարցրեց, թէ այդ մարդը Գալիլիացի՞ է - Պիղատոս երբ լսեց Գալիլիայի համար, հարցուց թէ այդ մարդը Գալիլիացի՞ է...» (23, 6):

4. Նա պատասխանեց նրանց և ասաց. «Կարծո՞ւմ էք, թէ այն գալիլիացիները, որոնք այդպիսի պատահարների ենթարկուեցին, աւելի մեղաւոր էին քան բոլոր գալիլիացիները..» - Յիսուս ըսաւ անոնց. «Կը կարծէ՞ք թէ այն Գալիլիացիները բոլոր Գալիլիացիներ են աւելի մեղաւոր էին, որոնք այսպիսի բաներ քաշեցին..» (13,2):

5. Նա պատասխանեց նրանց և ասաց. «... Կամ նրանք՝ այն տասնութ մարդիկ, որոնց վրայ Սիլովամում աշտարակը փուլ եկաւ և սպանեց նրանց, կարծո՞ւմ էք, թէ աւելի մեղապարտ էին, քան Եղուսաղէմում բնակուող բոլոր մարդիկ...» - Յիսուս ըսաւ անոնց. «... Կամ թէ տասնութը հոգին, որոնց վրայ Սելովամի աշտարակը ինկաւ և զանոնք մեռցոց կը կարծէ՞ք թէ անոնք Երուսաղէմի մէջ բնակած բոլոր մարդոցմէ աւելի պարտաւոր էին...» (13, 2, 4):

6. Եվ Տէրն ասաց. «...Կարծում էք, թէ երկրին խաղաղութի՞ն տալու եկայ. ոչ, ասում եմ ձեզ, այլ բաժանում. որովհետև մէկ տան մէջ այսուհետև հինգ հոգի իրարից բաժանուած

պիտի լինեն. երեքը երկուսի դեմ, և երկուսը՝ երեքի...» - Տէրը ըսաւ. «...Կը կարծէք թէ ես երկրի վրայ խաղաղութի՞նն ընելու եկայ. ձեզի կ'ըսեմ. Ոչ. հապա բաժանում: Վասն զի ասկէ ետք մէկ տան մէջ հինգը իրարմէ բանուած պիտի ըլլան, երեքը՝ երկուքէն ու երկուքը՝ երեքէն...» (12, 42, 51-52):

Վերջին օրինակում «Կարծում էք, թէ երկրին խաղաղութի՞նն տալու եկայ» հարցումը նախադասության մյուս մասից անջատված է կետով, այնինչ մենք կարծում ենք, որ այն շատ ինքնուրույն միավոր է և պետք էր նրանից հետո վերջակետ դրվէր: Այս է պատճառը, որ այս հարցումը այստեղ դիտարկեցինք:

դ) Ստորադասական և համադասական հարաբերությամբ հարցումներ.

1. Երբ նրա աշակերտները՝ Յակոբոսը և Յովհանէսը, այդ տեսան, ասացին. «Տէ՛ր, կամենո՞ւմ ես, որ ասենք, և երկընքից կրակ իջնի ու բնաջինջ անի նրանց» - Երբ իր աշակերտները, Յակոբոս ու Յովհաննէս, իմացան, ըսին անոր. «Տէ՛ր, կ'ուզե՞ս որ ըսենք ու երկնէն կրակ իջնէ ու սասկացնէ զանոնք...» (9, 54):

2. Իսկ Մարթան, որ զբաղված էր տնային շատ գործերով, եկաւ կանգնեց նրա մօտ և ասաց. «Տէ՛ր, քեզ փոյթ չէ՞, որ քոյրս ինձ մենակ է թողել ծառայութեան մէջ. արդ, ասա՛ դրան, որ օգնի ինձ» - Բայց Մարթա սպասաւորութիւնով շատ զբաղված էր: Եկաւ անոր քով ու ըսաւ. «Տէ՛ր, քու հոգոյ չէ՞, որ իմ քոյրս զիս մինակ թողուց սպասաւորութեան մէջ. ուստի անոր ըսէ, որ ինձի օգնէ» (10, 40):

ե) Տարակառուցվածք հարցում.

1. Յիսուս նրանց պատասխանեց և ասաց. «Դուք չէ՞ք կարդացել, թէ ինչ արեց Դաւիթը, երբ քաղց զգաց ինքը և նրանք, որ նրա հետ էին. թէ ինչպէս նա մտաւ Աստծու տունը, կերաւ առաջաւորութեան հացը և տուեց նրանց, որ հետն էին. մինչդեռ, բացի քահանայապետներից ոչ ոք չէր թույլատրուած ուտել այն» - Յիսուս պատասխան տալով՝ անոնց ըսաւ. «Չե՞ք

կարդացեր դուք Դաւիթին ըրածը, երբ անօթեցան ինք և անոնք որ իրեն հետ էին: Ինչպէս անիկա Աստուծոյ տունը մտաւ և առաջաւորութեան հացերը առաւ ու կերաւ և տուաւ անոնց ալ որ իրեն հետ էին, որոնք ուրիշ մարդո՛ւ օրինաւոր չէր ուտել, բայց միայն քահանաներուն» (6, 3-4):

Բազմաբնէռ այո-ոչ հարցումներ

Այս բաժնում քննարկվելիք հարցումները երկբնէռ են, որովհետև սրանք բաղկացած են երկու հարցական նախադասություններից, երկուսը՝ երկու այո-ոչ հարցումներից, իսկ վեցը՝ ինչու-որ և այո-ոչ հարցումներից: Այս նախադասությունների կազմում կան 10 այո-ոչ հարցումներ:

Ահա դրանք.

ա) Երկու այո-ոչ-ից բաղկացած հարցումներ.

1. Եվ Տէրն ասաց. «...Իսկ Աստուած արդարութիւն չի՞ անի իր այն ծառաներին, որոնք գիշեր և ցերեկ աղաղակում էին. և նրանց հանդէպ միայն համբերատա՞ր կը լինի...» - Տէրը ըսաւ. «...Հապա Աստուած իր ընտրեալներուն իրաւունք պիտի չընէ՞, որոնք ցորեկ ու գիշեր իրեն կ'աղաղակեն, թէն երկայնամիտ ալ ըլլայ...» (18, 7):

2. Տէրը նրանց պատասխանեց և ասաց. «Կեղծաւորն՛ր, ձեզնից իւրաքանչիւր ոք շաբաթ օրով իր եզը կամ էշը մսուրից չի՞ արձակում և չի՞ տանում ջուր տալու...» - Այն ատեն Տէրը պատասխան տուաւ անոր ու ըսաւ. «Կե՛ղծաւոր, ձեզմէ ամէն մեկը շաբաթ օրը իր եզը կամ էշը մսուրէն չա՞րձակեր, որպէսզի տանի ջուր տայ...» (13, 15):

բ) Ինչու-որ և այո-ոչ հարցումներից կազմված երկբնէռ հարցական նախադասություններ.

1. Եվ նա պատասխանեց նրանց. «Ինչո՞ւ էիք ինձ փնտրում, չգիտէի՞ք, թէ ես Հօրս տանը պէտք է լինեմ» - Յիսուս ըսաւ անոնց. «Ձիս ինչո՞ւ կը փնտրէիք. չէի՞ք գիտեր թէ ինձի պէտք է որ իմ Հօրս տունը ըլլամ» (2, 49):

2. Յիսուս պատասխանեց և ասաց. «Սրանք տասն էլ չմաքրուեցի՞ն. իսկ այդ, իննը ո՞ւր են, որ չվերադրձան՝ փառք

տալու համար Աստծուն, բացի միայն այս օտարազգի մարդուց» - Յիսուս ըսաւ. «Չէ՞ որ տասն ալ մաքրուեցան, իսկ այն ինը ո՞ր են: Այս օտարազգիէն զատ ուրիշներ չգնուեցա՞ն» (17, 17-18):

3. Եվ նրա հետ շատ ժողովուրդ էր գնում. նա դարձաւ և ասաց նրանց. «Կամ ո՞ր թագաւորը, եթէ գնայ պատերազմելու մի այլ թագաւորի դէմ, նախ չի նստի և խօրհի, թէ տասը հազարով կը կարողանա՞յ դիմադրել նրան, որ իր վրայ քսան հազարով է գալիս...» - Իրեն հետ շատ ժողովուրդ կ'երթային և դառնալով անոնց ըսաւ. «Կամ թէ ո՞ր թագաւորը ուրիշ թագաւորի մը հետ պատերազմելու երթալէ առաջ չի նստիր ու խորհիր, թէ արդեօք տասը հազարով կրնա՞յ դէմ կենալ անոր՝ որ քսան հազարով իր վրայ կու գայ...» (14, 25, 31):

4. Եվ ժողովարանում մի մարդ կար, որին բռնել էր մի պիղծ դևի շար ոգին. սա բարձր աղաղակեց և ասաց. «Թո՛ղ տուր մեզ, Յիսուս նագովրեցի, ի՞նչ ես ուզում մեզնից. մեզ կորստեան մատնելո՞ւ եկար. գիտենք, թէ ով ես, Աստծո Սուրբն ես դու» - ժողովարանին մեջ մարդ մը կար, որ պիղծ դևի ոգի ունէր, որը մեծ ձայնով մը աղաղակեց, ըսելով. «Թո՛ղ տուր, դուն մեզի հետ ի՞նչ բան ունիս, Յիսուս Նագովրեցի, միթէ մեզ կորսնցնելո՞ւ եկար, գիտեմ ո՛վ ես, Աստուծոյ Սուրբը» (4, 33-34):

5. Եվ նրա հետ շատ ժողովուրդ էր գնում. նա դարձաւ և ասաց նրանց. ...Ձեզնից ո՞վ, եթէ կամենայ աշտարակ շինել, նախ նստելով չի հաշուի իր ծախսերը, թէ աւարտելու համար բաւական դրամ ունի՞, որպէսզի, գուցէ երբը հիմնը դնի և չկարողանայ աւարտել, բոլոր նրանք, որ տեսնեն, չսկսեն նրան ծաղրել և ասել, թէ՛ այս մարդը սկսեց կառուցել և չկարողացաւ աւարտել...» - իրեն հետ շատ ժողովուրդ կ'երթային և դառնալով՝ անոնց ըսաւ. «...Վասն զի ձեզմէ ո՞վ եթէ աշտարակ մը շինել ուզէ, առաջ չի նստիր ու հաշիվ ըներ ծախքը, ճշտելու համար թէ զանիկա լմնցնելու կարողութիւն ունի՞. որ չըլլայ թէ երբ հիմը ձգէ ու չկրնայ լմնցնել, բոլոր տեսնողները սկսին զինք

ծաղրել և ըսէ թէ այս մարդը սկսաւ շինել ու չկրցաւ լմնցնել...» (14, 25, 28-30):

6. Եվ Տէրն ասաց. «...Իսկ ձեզնից ո՞վ է, որ հողագործ կամ հովիւ ծառայ ունի, երբ սա ագարակից տուն մտնի, նրան կ'ասի, իսկոյն՝ անցիր սեղան նստիր. այլ նրան չի՞ ասի՝ պատրաստի՞ր, ինչ ընթրելու եմ, և գօտի կապած՝ ծառայի՞ր ինձ, մինչև որ ուտեմ և խմեմ, և ապա կ'ուտես և կը խմես դու...» - Տէրը ըսաւ. «Բայց ձեզմէ ո՞վ է այն մարդը, որ ունենայ երկրագործ կամ հովիւ ծառայ մը, որ անիկա երբ ագարակէն տուն մտնէ, շուտով ըսէ անոր թէ՛ Անցիր սեղան նստէ: Հապա չը՞սեր անոր թէ՛ պատրաստէ իմ ընթրիքս ու գօտիդ կապած ինձի սպասարութիւն ըրէ, մինչև ոտեմ ու խմեմ ու ետքը դուն ալ կեր ու խմէ...» (17,6, 7):

Гhukasyan Sevak - *Yes-no* questions in Eastern & Western Armenian Gospels of Luk - Gospels by Luk in Eastern Armenian translation contains 143 interrogative sentences, while in Western Armenian those count 176. Applied in this Gospel are different interrogative sentences. The most numerous are how-why questions, in all 113 pieces, then yes-no, in all 28 pieces, then go others. Of yes-no questions 18 are single-pole having simple and complex structures with coordinate and subordinate relations, while the other 10 show multiple structures with questions having two yes-no and how-why and yes-no chains.

Гукасян Севак - *Да-нет* вопросы в восточноармянской и западноармянской вариантах Евангелии от Луки. - В Евангелии от Луки в восточноармянском есть 143 вопросительных предложений, а в Западноармянском - 176. В этой Евангелии использовались различные типы вопросительных предложений, больше всего местоименные вопросы, в общем числе – 113 штук, потом идут да-нет, в общем числе – 28 штук, потом идут другие. Из вопросов да-нет 18 однополюсные, которые имеют простые и сложные конструкции, сочиненные и подчиненные отношениями, а другие 10 выступают в составе двухполюсных, в виде двух да-нет и да-нет и местоименными вопросов.

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՕՐՈՐՈՑԱՑԻՆ ԵՐԳԻ ՈՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Օրորոցայինը՝ որպես քնարական բանահյուսության ինքնատիպ տեսակ, տեղ է գտել ինչպես *գեզզկական*, այնպես էլ *քաղաքային* ֆոլկլորում: Ժամանակի հոլովություն լեզվական տարբեր իրողություններում վերոնշյալ եզրույթների իմաստաձավալային ընդգրկունություն է նկատվում, որը, անտարակույս, իր ազդեցությունն է թողնում օրորոցային երգի վրա: Ահավասիկ՝ հայ իրականության մեջ սիրողական /ռաբիգ/ երաժշտությունը ինչ-որ առումով քաղաքային ֆոլկլորի մաս է կազմում: Չի բացառվում, որ սիրողական նշյալ երգատեսակում տեղ գտած օրորոցայինները հնչեն մայր օրորասացների շուրթերից:

Ավելին, մեր կատարած բանագիտական աշխատանքը ցույց է տալիս, որ շատ ընտանիքներում որպես օրորոցային ծառայել են տարատեսակ այլալեզու երգային տեքստեր նույնիսկ կինոֆիլմերից, օրինակ՝ *Պարոն 420* հնդկական կինոնկարը կամ մեր օրերում հայկական կինոմշակույթ թափանցած հնդկական կինոնկարներից այլ մեղեդային և տեքստային պատառիկներ: Սրան նպաստում է նաև օրորի ժամանակը և կինոնկարի դիտման ժամանակը: Այս իրողությունը փաստում է այն, որ քաղաքային կենցաղում հնչող օրորոցայինը բազմաժանր, բազմաբովանդակ երգատեսակ է, որն ունի ոճական նշանակալի առանձնահատկություններ:

Ըստ էության, քաղաքային ֆոլկլորն իր բազմազանությամբ նպաստում է նրան, որ որպես օրոր ծառայում են նաև տարբեր ոլորտներում սիրված երգերը:

Ըստ բանասաց Արեգնազան Մխիթարյանի¹՝ երեխաներին պետք է քննեցնել թե՛ գեղջկական, թե՛ քաղաքային օրորոցային երգային տեքստերով.

Ես ծնվել ու մեծացել եմ Գյումրի քաղաքում, ժառանգել եմ քաղաքային մշակույթ, իմ առօրյան պարուրել են ն՛ ժողովրդական, ազգագրական, գուսանական երգերը և՛ քաղաքային ֆոլկլորի երգերը՝ Մթնշաղ է իջել, Օփում է Սևանը և այլն:

Այս երգերը, ըստ բանասացի, մտերիմ, հարազատ, անմիջական երգեր են:

Քաղաքային ֆոլկլորի լավագույն նմուշ է Ռ. Պատկանյանի *Արի՛, իմ սոխակ* օրորոցայինը.

Արի՛, իմ սոխակ, թո՛ղ պարտեզ մերին,

Տաղերով քուն բեր տղիս աչերին.

Բազեն որ եկավ՝ որդիս լռեցավ,

Ռազմի երգերի ձայնով քնեցավ:

Հետաքրքրական է այն, որ այս օրորոցային տեքստում չկա բանաձևային մտածողության դրոշմ, որը արտահայտվում է օրորոցայինին բնորոշ կրկնականերով /նանիկ, նանիկ և այլն/: Երգեցիկ թռչունները հանդես են եկել թե՛ իրական, թե՛ վերիբրական գործառույթներով: Այն հանգամանքը, որ սոխակը ունի երգեցիկ ձայն, աներկբա է: Այսինքն՝ սա իրական է, իսկ այն, որ *տաղերով* պետք է քուն բերի, սա արդեն վերիբրական է և ինչ-որ չափով աղերսներ ունի չափազանցում բանադարձումի հետ: Ոճական այս կամ այն հրնարի ընտրությունը տեքստում պայմանավորված է հեղինակի նպատակաուղղվածությունից. ինչու՞ բազե, որովհետև օրորի հիմնական թեմատիկան հայրենասիրական է: Լեզվական մակարդակում վերջինս արտահայտվում է նաև մակդրավոր կապացության/քաջասիրտ բազե/: Դարձվածքային մտածողության մեջ սուր տեսողություն

¹ **Արեգնազան Մխիթարյան:** *Ծնվել է 1952 թ. Գյումրիում: Ունի բարձրագույն կրթություն: Նախնիները գաղթել են Պարսկահայաստանից (Հ. Մատիկյանի գրառումներից):*

ունենալը բնորոշվում է *բազեի աչք* դարձվածքային կապակցությամբ: Սա ևս մեկ անգամ փաստում է այն, որ երեխան դեռ օրորոցից պետք է սրամիտ լինի, միտքը՝ միշտ արթուն:

Օրորոցայինը՝ իբրև բանահյուսական տեքստի առանձին տեսակ, օժտված է ուրույն հատկանիշներով, որոնց շնորհիվ էլ առանձնանում է մի կողմից՝ քաղաքային, մյուս կողմից՝ գեղջկական օրորոցայիններից: Օրորոցայինը՝ որպես ժողովրդական բանավոր ստեղծագործության տեսակ, հատկորոշվում է **անանունությամբ** և չի կրում հեղինակային անհատականության դրոշմ: Այն անհեղինակ տեքստ է: Սակայն միշտ չէ, որ բանահյուսական և հեղինակային տեքստերը հեշտ է տարրորոշել:

Թե՛ քաղաքային, թե՛ գեղջկական ֆոլկլորը հավաքական է: Օրորոցային տեքստը պարբերաբար վերամշակվում է, հրղկվում՝ անցում կատարելով

● *քաղաքային հեղինակային օրոր* - *քաղաքային ժողովրդական օրոր*

● *գեղջկական հեղինակային օրոր* - *գեղջկական ժողովրդական օրոր*

Հատկանշական է, որ ցանկացած օրորոցային երգ ծնվում է, արարվում նախևառաջ անհատ կատարողի կողմից և բերնեբերան, շուրթեշուրթ փոխանցվելով դառնում է ժողովրդական:

Ժամանակի հոլովություն կարող է տեղի ունենալ վերոնշյալ տարատեսակների միաձուլում կամ խաչաձևում: Ընդգծենք այն կարևոր գործոնները, որոնք նպաստում են վերոնշյալ տեսակների միավորմանը.

● *ժամանակի գործոն*

● *աշխարհագրական՝ տեղի գործոն*

● *սոցիալ-մշակութային գործոն*

Նշյալ գործոնները, անտարակույս, իրենց անբեկանելի կնիքն են թողնում օրորոցային տեքստի ոճական *անձնագրի* վրա:

Քաղաքային հեղինակային որոշ օրորոցայիններ կարող են ստանալ ժողովրդական կարգավիճակ և համարվել բանավոր ստեղծագործություններ: Վերոնշյալի վառ ապացույցն է Ռաֆայել Պատկանյանի (Արի՛, իմ սոխակ) օրորոցայինը:

Հեղինակային տեքստի ստեղծման հոգեբանությունը այլ է, այն ունի ընդգծված սուբյեկտիվ՝ ենթակայական բնույթ: Բանահյուսական և հեղինակային տեքստերի որոշակի նմանության հետևանքով հաճախ խախտվում է տեքստերի տիրույթը: Հաճախ քաղաքային հեղինակային օրորոցայինը ունի բանահյուսական ակունք. երգային տեքստն ունի ժողովրդական մտածողության բաղադրիչներ: Երբեմն դժվար է պարզել, թե հեղինակային օրորը ժողովրդականի հետ ինչ աղերսներ ունի և որն է նրա նախատիպը: Չի բացառվում, որ քաղաքային միջավայրում լսված, կիրարկված օրորը հանդես գա գեղջկական միջավայրում և հակառակը:

Ըստ էության, քաղաքային հեղինակային օրորոցայինը այս կամ այն չափով բովանդակում է բանահյուսական բաղադրիչներ: Ռ. Պատկանյանի *Քուն եղիր պալաս* օրորը ենթադրաբար բանահյուսահենք տեքստ է, քանի որ օրորի որոշ տողեր առկա են նաև Նոր Նախիջևանի բանահյուսական օրորոցայինում.

Դուն ալ քուն՝ն եղիր, ինձի ալ քուն տուր,
Սուրբ Աստուածամայր, պալիկիս քուն տուր,
Իմ պալաս, օրոր, օրոր ու նան,
Իմ անուշիկիս քունը կը տանի (Ռ. Պատկանյան)²:

Քուն եղիր, բալաս,
Ինձի յա քուն դուր.
Բոյ քաշե, մեձցիր,
Մեզի խնդացուր:

² Կարապետ Հաննեսեան, *Շիրակ երգարան*, Պեյրուֆ, 2010, էջ 416:

Նմանատիպ օրորոցայինները կարելի է համարել տեղեկատվական գործառույթ ունեցող օրորներ, քանի որ օրորասացը դեռևս օրորոցից սերմանում է հայրենասիրություն, արիություն, պայքարելու կարողություն: Հայրենասիրական գործառույթ ունեցող օրորոցային տեքստերը կարծես փոխում են իրենց նպատակը, քնեցնելու փոխարեն *արթնացնող, ոտքի հանող* տեքստեր են:

Ժողովրդական արթնացնող օրորոցային է *Չարթիր լառ*-ն, որն ունի տարբերակ՝ Մշեցու մօր երգը: Տեքստի հասցեատերը լառն է՝ օրորոցում գտնվող երեխան.

*Ինչ անիծեմ թուրք ասկերին,
Որ սպանեց ջոջ Աբոյին,
Մըր յոյս թողեց օրորոցին,
Չարթի՛ր լառ, մըռնիմ քրզի:*

Քաղաքային ֆոլկլորի լավագույն դրևորումներն ամփոփված են նաև Կոմիտասի Ակնա ժողովրդական օրորների մեջ: Մեջբերենք ինքնատիպ օրոր՝ կոմիտասյան գրառումներից, որը ոճական ուրույն բնութագիր ունի.

*Աղվոր ես, չունիս խալատ,
Երթամ ո՞վ բերիմ պեխալատ, է՛:
Քու ամեն տեղդ է պեխալատ, է՛:
Երթամ լուսնկան բերիմ,
Դուն ալ խալատ բան մունիս,
Լուսուն աստղերը պեխալատ, է՛:
Քուն չունիս, արթուն կուկենաս, է՛:*

Նշյալ տեքստը կարելի է համարել գովերգ օրորոցային տեքստի բացառիկ նրմուշ. սկսվածքային մակարդակում այս իրողությունը նկատելի է, որն արտահայտվում է *աղվոր ես, չունիս խալատ* (չունես թերություն) արտահայտչամիջոցներով: Հետաքրքրական է այն, որ տեքստի գրեթե ողջ հյուսվածքում *բեխալատ* (անթերի) բառային միավորը կարծես ձեռք է բերում բանաձևային նշանակություն:

Վերոնշյալ օրոքը առանձնանում է նաև մեղեդային կառուցվածքով. *Ակնա օրորի մեղեդին իր թե՛ ձևային կառուցվածքով և թե՛ հուզական բովանդակությամբ ունի նաև մի անսովոր առանձնահատկություն. բարձրակետ չունի: Այդ մեղեդին, որ բանաստեղծական տեքստից անկախ էլի ինքնուրույն գեղարվեստական միավոր է, այնուամենայնիվ, խիստ հարագատ է իր ժանրային նշանակմանը՝ որպես օրոր:*³

Սեղմ անդրադառնանք օրորոցային տեքստում նշված է՝ առանցքային բաղադրիչին, որը քնամուտի միջավայր է ստեղծում: Ըստ բառարանային աղբյուրների՝ է՛-ն ունի իմաստավալային լայն ընդգրկունություն: Ահավասիկ՝ է՛-ն արտահայտում է եզրափակում, ավարտ... *Է՛, աստված հաջողի...բարի գիշեր (ԴԴ), հիացմունք, թեթև բողոք, մասամբ ցանկություն* (նախադասության վերջում)⁴:

Է՛-ն երկար բացականչություն է օրորի ամեն տան վերջում, որից փոխաբերությամբ՝ քուն, նանա, նանիկ: Ժողովրդական մտածողության մեջ ունենք է՛ *անել (նանիկ անել, քնել), է՛ ասել (օրոր ասել)* արտահայտություններ⁵:

Նշված օրորոցայինում շեշտվում է երեխային կատարյալ, անթերի վիճակում տեսնելու իրողությունը:

Քաղաքային և գեղջկական օրորոցայինները կարող են ունենալ թեմատիկ, կառուցվածքային ընդհանրություններ: Ըստ երաժշտագետ Ռ. Աթայանի՝ միշտ չէ, որ օրորը քիչ թե շատ ընդարձակ երգ է լինում: Երբեմն այն մեքենայաբար կրկնվող կարճառոտ մի հատված է միայն, որ թեն կիրառական նպատակին համապատասխանող հուզական որոշակի լիցք է կրում, բայց ավարտուն երգ չի կարող համարվել:⁶

³ Ռ. Աթայան, *Կոմիտաս. Երկերի ժողովածու, Հայ ժողովրդական երգեր*, հ. 9 Գիրք Ա, 1999, էջ 171:

⁴ *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, հ. 2, Ե., 1972, էջ 65:

⁵ Էդ. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, էջ 387:

⁶ Ռ. Աթայան, նշվ. վշխ., էջ 165-166:

Ահա ևս մեկ օրինակ, որտեղ երեխան բնութագրվում է *աղվոր, ատլասու ու խաս* բառային միավորներով.

Օրո ր, իմ *ատլասու ու խաս*,
Աղվորին սափաթն է դրած,
Սափաթն է օսկուն շինած,
Ու գատկին ի դուրս է հանած⁷:

Թե՛ քաղաքային, թե՛ գեղջկական օրորոցային տեքստերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, թե մանկանը գովերգող մայրն ինչպիսի չափագանցություններ է օգտագործում երեխային նկարագրելու, նրան հասցեագրված իր հույզերն ու ապրումներն արտահայտելու համար.

Քո գինդ է հազար ոսկի,
Հազար ալ կուտամ էլըլի,
Հազար ալ անոր կուտամ,
Լոս երեսդ էրկու պենկ(ունի):

Երբեմն օրորոցային տեքստի տարրերը փոխվում են, սակայն պահպանում են ավանդական մտածողության արիւտիպային կաղապարները: Ժամանակի հոլովություն կախված աշխարհագրական տեղանքից, սոցիալ-տնտեսական վիճակից, օրորասացը կարող է տարբեր բառային միավորներով հյուսել երգային տեքստը:

Այսպիսով, օրորոցայինը կենցաղավարում է թե՛ գեղջկական, թե՛ քաղաքային երգարվեստում և իր հարատև տեղն ու դերն ունի ժողովրդի սովորութամշակութային կենցաղում:

Matikyan Hasmik - Stylistic Features of a Lullaby Song in Urban Folklore.- Lullaby as a unique type of lyrical folklore resides in peasant and urban folklore. Over time, in different linguistic realities there are semantic- volumetric various manifestations of these terms, which certainly leaves its influence on the lullaby. In its diversity, urban folklore has contributed to the fact that as a lullaby songs began to function and favorite songs of different spheres.

It is symptomatic that any lullaby song is born, is created first of all individually-the author and then passed from mouth to mouth, becomes a national treasure. Over time, there may be unification or crossing of the above-mentioned varieties of folklore. Some author's city lullabies can acquire the status of a folk song.

The urban folk song is rich in stylistic characteristics.

Матикян Асмик – Стилистические особенности городской народной колыбельной песни.- Колыбельная – как особый вид лирического фольклора имело место и в *крестьянском*, и в *городском* фольклоре.

На протяжении времени в разных языковых реалиях наблюдаются смысловые-объемные разнообразные проявления указанных терминов, что, безусловно оставляет свое влияние на колыбельную песню. В своем разнообразии городской фольклор способствовала тому, что в качестве колыбельной песни стали функционировать и любимые песни разных сфер.

Симптоматично, что любая колыбельная песня рождается, творится прежде всего индивидуально-авторски и потом передаваясь из уст в уста, становится народным достоянием. Со временем может происходить объединение или скрещивание вышеназванных разновидностей фольклора. Некоторые авторские городские колыбельные могут обрести статус народной песни.

Городская народная колыбельная песня отличается богатой стилистической характеристикой.

Միքայելյան Ժաննա (Հայաստան,
ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՁ, ԱԿՈՒՆՔ, ԳԵՂԱՇԵՆ,
ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԵՐԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ
ՀԼՁՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Ներկայացվող բարբառային նյութերը հավաքել են ԳԱ լեզվի իստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակիցները՝ պերցեպտիվ՝ ընկալողական, մեթոդով անցյալ դարի 80-ական թթ., երբ ներքոհիշյալ գյուղերը Արոլյանի շրջանի մեջ էին մտնում: Այսօր դրանք Կոտայքի մարզի վարչական միավորներ են:

Ընդհանրապես, բարբառների գրի առնման ժամանակ շատ կարևորվում են տեղեկությունները տվյալ համայնքի բնակչության կազմի՝ ներգաղթյալ, թե բնիկ լինելու մասին:

Առինջի խոսվածքը գրանցող բարբառագետի վկայությամբ գյուղի բնակիչները տեղացիներ են, այսինքն՝ որևէ փաստ չկա այլ բնակավայրեից նրանց ներգաղթած լինելու մասին: Մեր նպատակն է համաժամանակյա քննությամբ վեր հանել այս գյուղի խոսակցական լեզվի հնչյունական համակարգի առանձնահատկությունները:

Սովորաբար ուսումնասիրողները, բառակիզբը նկատի ունենալով որպես հնչյունահնչությային ուժեղ դիրք, բնորոշում են այս կամ այն խոսակցական լեզվի բաղաձայնները, որովհետև այդ դիրքում դրանք դեռևս որևէ փոխազդեցական հնչյունափոխության ենթարկված չեն լինում: Այս մոտեցմամբ Առինջի խոսվածքի բաղաձայնական ենթահամակարգը, ըստ հպական ու կիսաշփական բաղաձայնների որակի, եռաստիճան է. պարզ ձայնեղներ, պարզ խուլեր, շնչեղ խուլեր: Այսպես՝ ձայնեղներով սկսվող բառեր - *բուլանա «դար», բարդի, բիձա, բրլուլ, դոլջա*

¹ ՀԲԱ ծրագրով լրացված տետր հ. 236:

«ջուր խմելու գավաթ», դանդուռ, դրմբուզ, դոշաբ, գինձ, գուլբա, գանք, ջեջիմ, ջիգար, վրոթալ, վանք, վախ, վօնց, գատիկ, զրրից, զարմանալ, զիբիլ, ժամ, ժրժանվել «խճճվել»: Բառասկզբում՝ պարզ խուլեր - պագուկ, պարուր, պանացնել, պացել, պուռ, տրթում, տարման, տանակ, տուռ, տէխց, կաթա, կինի, կրնաց, կօմէշ, ճուր, ճախարակ, ճրրաք, ճառթըվել, ճրդէլ, ծին «ձյուն», ծաք «ձագ», ծամօն, ծործորակ, ծու, իրնօցի, խարփուխ, սօված, սէրմ, սէվ, սիրուն, ֆօդ, ֆօտ, ֆօր, ֆօռթ, ֆայմ, ֆրլանքաս, ֆրնդրիս, շիթիլ, շատ, շըշկըռվել, շուն: Եվ շնչեղ խուլերով սկսվող բառեր – փըսլինք, փէսա, փիփերթ, թէրթէվանունք, թափէլ, քար, քավօր, քիչ, քնու «մոխիր», քըթօց, քասիբ, ցավալ, ցէց, ցօրէն, ցօգօլ, թըխէլ, թափէլ, չօլախ, չօփուռ, չըվան: Բավական լայն գործառույթուն ունի բառասկզբում խուլ *h* բաղաձայնը. *հըմար, հօվ, հօլ, հաց, հադ, հէր, հարէվան, հառս, հըվաքէլ, հունձ, հըմի, հէրթ, հէռի, հէբռալ* «հեալ»:

Դատելով վերը բերված օրինակներից՝ պարզ ձայնեղներով և *ֆ*-ով սկսվող բառերը մեծամասամբ օտար փոխառություններ են: Հիմնականում փոխառյալ են նաև ձայնեղ հպական *դ* բաղաձայնով սկսվողները, ինչպես՝ *դօնդախ, դօնախ, դուշ, դըդի, դըսմաթ, դօշ, դափադ, դարիբ, դըռճիկ, դ/կում* (սա բացառություն է) և այլն:

Բառասկիզբը ձայնորդների համար ևս բացառված դիրք չէ. *լալ, լիզու, լինքը, լըդօզէլ, նամ, նըստէլ, մինուճար, մօռթէլ, մըռսէլ, մըխէլ, յէտօ, յէզ, յանի, յարա, յէդ, լըվացալ, լացացրէց, ռադ, ռանգ, ռէհան*: Կիսաշփական պարզ ձայնեղ *ձ*-ով և *ր* ձայնորդով սկսվող բառեր Առինջի խոսվածքում չեն հանդիպում:

Հնչարտաբերական առանձնահատկություններով խոսվածքի բոլոր բաղաձայնները, բացառությամբ քմայնացածների, որոնցով սկսվում են որոշ փոխառյալ բառեր, նման են արևելահայ գրական լեզվի համապատասխան հնչյուններին: Առինջի լեզվում դրանք հնչութային արժեք ունեն:

Վերոհիշյալ բաղաձայնների, ինչպես և *ձ*-ի ու *ը*-ի *հա-
մար*, գործառնման ուղորսներ են նաև բառամեջն ու բառավերջը:
Օրինակ՝ *մատթ, թանգ, սիպտակ, վախլուգ, թէժ, կըռընձէլ* «կըծ-
ղել», *ձէռ, մէնձանալ, փըսագվէլ, ընդէդ, աղօթք, թէբոէլ* և այլն:

Ինչ վերաբերում է քմային բաղաձայններին, դրանք հան-
դիպում են միայն փոխառյալ բառերում:

Առինջի խոսվածքում՝ բառասկզբում, քիչ դեպքերում է
հանդիպում հավելյական (^Ե) շփական հազագը, որը, մեր կարծի-
քով, այստեղ հնչույթային արժեք ունի այն հիմնավորմամբ, որ
դրանով սկսվող բառերը գիտակցվում են հենց որպես
բարբառային. *Վալիվօր, Վարփէլ, ընգէրք* «ընկերք», *Վէթ* «երդիք»:

Խոսվածքիս ձայնավորները իրենց արտաբերման տե-
ղով և որակով չեն տարբերվում գրական հայերենի նույն հընչ-
յուններից: Դրանք թվով հինգն են և գործառում են բառի բոլոր
դիրքերում: Խոսվածքը չունի երկբարբառներ և եռաբարբառներ:
Բառային շեշտը ընկնում է վերջընթեր վանկի վրա:

Առինջի լեզվում բառի աճման ժամանակ առաջին վան-
կի ձայնավորը հաճախ է սղվում՝ տեղը զիջելով միջին շարքի
միջին բարձրացման *ը* ձայնավորին կամ էլ պարզապես հիշյալ
ձայնավորն արտասանվում է բառասկզբի բաղաձայնից առաջ.
*ըսօր, ըդուդ, ըրօրէլ, ըլօրվէլ, ըստէդ, ըսկըսէլ, ըստանալ, ըսա,
ըռաստ*: Գաղտնավանկերում նույնպես գործառում է *ը* ձայ-
նավորը, որի շնորհիվ տեղի չի ունենում բաղաձայների կու-
տակում և դյուրին է դառնում դրանց արտասանությունը. *քաղ-
ցըր, տընէմ, խընօցի, կընաց, նըման* և այլն: Մյուս ձայնավոր-
ների համար ևս բառասկիզբը գործառնման ուղորս է. բացառված
չեն նաև բառամեջն ու բառավերջը: Այսպես՝ *անէր, անձվէր, ա-
լօձ, առչ, էրանէկ, էքուց, էրէլ, էփէլ, իրիգուն, իրար, իգուր, ու-
րիշ, ուր, ուռց, օվ, օվջի, օխտ, օխնէլ օժէլ* և այլն:

Առինջի խոսվածքի բոլոր հինգ ձայնավորները միմյանց
նկատմամբ նույն հնչույթային հակադրության մեջ են և ունեն
վանկարար գործառույթներ, ինչպես դա գրական արևելահա-
յերենին է հատուկ:

Բարբառային այս միավորը չնայած չի հիշատակվում ակադեմիկոս Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման աղյուսակի մեջ, սակայն, ըստ ամենայնի ուսումնասիրելով խոսվածքի գրիառնված նյութերը, կարծում ենք՝ այն պատկանում է Արարատյան բարբառին:

Կոտայքի մարզի հաջորդ՝ Ակունք գյուղի բնակիչների վկայությամբ իրենց նախնիները եկել են Պարսկաստանից, հատկապես Խոյից: Բարբառային նյութերը հավաքվել են, ինչպես վերը նշեցինք, անցյալ դարի 80-ականներին: Գյուղում խոսում են ընդհանուր մի համասեռ լեզվով²:

Խոսվածքի հնչյունական համակարգում բառասկիզբը մտնում է ձայնորդների (*ւ, ն, յ, ւ, ո*), շնչեղ ձայնեղների (*ք, գ, դ, ճ, ջ*), պարզ խուլերի (*պ, կ, տ, ծ, ճ, ս, շ, ֆ, խ*), շնչեղ խուլերի (*փ, ք, թ, ց, չ*) հպական, կիսաշփական ու շփական բաղաձայնների գործառնման ոլորտի մեջ: Իսկ ըստ հպական ու կիսաշփական բաղաձայնների որակի՝ գյուղի լեզվի բաղաձայնական ենթահամակարգը եռաստիճան է. շնչեղ ձայնեղներ, խուլեր, շնչեղ խուլեր:

Ի տարբերություն գրական արևելահայերենի հայերենի հնչյունական համակարգի՝ բառասկզբում գործառում են շնչեղ ձայնեղներ: Այսպես. *բ՛ագուկ, բ՛էրին, բ՛արց, բ՛էյնըկալ* «խցան», *բ՛նրֆիկ, բ՛ողագ, բ՛իբար, բ՛էղ* «մեծ», *բ՛ըլօճ, բ՛ըրախ* ^իէլ, *գ՛ըլօխ, գ՛ացին, գ՛օռըլ ա, գ՛օղիկ, գ՛օզլիկ, գ՛րռէխ, գ՛էտին, գ՛էլ, դ՛նոր, դ՛րտում, դ՛ընըւ, դ՛օշար* (բայց՝ *դ՛ննի*), *ճ՛ու, ճ՛ի, ճ՛ընծաղիկ, ճ՛ըծում, ճ՛ուկ, ջ՛աղաչ, ջ՛ուր, ջ՛ուվար* «ջրաբաշխ», *ջ՛ըրփուչիկ* և այլն: Օրինակներից պարզ է դառնում, որ ոչ միայն բնիկ հայերեն, այլ նաև օտար բառերի սկզբում են հանդես գալիս շնչեղ ձայնեղներ: Դրանից պետք է ենթադրել, որ ձայնեղ բաղաձայններից շնչեղ ձայնեղների անցման օրենքը սույն բարբառային միա-

² ՀԲԱ ծրագրով լրացված տետր հ. 273:

վորում գործում էր փոխառությունների ներթափանցման տվյալ ժամանակահատվածում:

Բառաբարդման ժամանակ բառամիջում նույնպես կարող է շնչեղ ձայնեղ հանդիպել, ինչպես օրինակ՝ *անէրճաք, պարգաջըր^հէլ*:

Ակունքի խոսվածքում որոշ օտար փոխառյալ բառեր սկսվում են կատկային, ըմպանային հնչումն ունեցող *կ* բաղաձայնով. *կափաղ, կօջ, կագ, կալմակալ, կօնախ, կուրթի, կըամնթ, կըրախ, կուշ, կագար կավուրմա, կահիմ* «ամուր» և այլն:

Ուշագրավ մի փաստ. երբ այս կամ այն բառը վերջանում է քմայնացած *զ, կ, ք* բաղաձայններից որևէ մեկով, հատկապես խոսքի շղթայում, դրանք երբեմն կարող են հերթագայվել / հնչյունով: Այս երևույթը հիշյալ բաղաձայնների քմայնացման հաջորդ աստիճանն է համարվում: Այսպես. *թուրթազ, օխնիք, ալափըստրակի՛ և պըստիկ՛ պըստի, խասնէնք՝ խասնէ, ախչիկ՛ - ախչիյն^հէր*:

Խոսվածքում բառասկզբում հաճախ է հանդիպում հավելական (՞) հընչյուն. *՞առավ^{ու}օտ, ՞էլան, ՞էրկէն, ՞էրէվան, ՞էրթիս, ՞էքուց, ՞էրէս, ՞էվէլի, ՞իմանամ, ՞ըլնըմ ա, ՞ընգէրք, ՞ընչուր* «մինչև», *՞ուշկ, ՞ւնէչ, ՞իչավ, ՞ուր*. նույնիսկ՝ փոխառյալ բառերում՝ *՞ըռաստ, ՞ըռանգ* և այլն:

Ակունքի լեզվի ձայնավորական ենթահամակարգը, գրական արևելահայերենում գործառող բոլոր ձայնավորներից բացի, լրացնում են հետին շարքի ձայնավորների առաջնալեզվային տարբերակները և *ւ* շրթնայնացած հնչյունը: Այսպես, քմային՝ առաջնալեզվային ձայնավոր հնչյուններով օրինակներ. *վննրմ ա, վնիլըկօտ, վնստակ, գնրկըմ ա, գնրթըր^հէլ, ծննգնրթնր, գնմբիլ, գնն^հէլ, լնլըմ ա, լնր^հէլ, խնլիլ^{ու}օր, ննֆթ, ճրրնք, ՞ննիք, ՞ննէչ, խնննլ, քնլ, մննննչօ* «ծնեբեկ», *գ՞օզիկ*,

դսնսն, դնուգոն, թսնսրսն, ճիլսնգ: Բերված բառերից պարզ է դառնում, որ այստեղ առկա են ոչ միայն քմային *սի*-ով, այլ նաև *օ*-ով և *ու*-ով օրինակներ: Սակայն վերջին երկու քմային հնչյունները միայն օտար փոխառություններում են հանդիպում: Ի դեպ, նկատենք, որ *ծսնգսնրթսն* բառում գործել է ձայնավորների հետընթաց ներդաշնակության օրենքն այն դեպքում, երբ այս խոսվածքի քմային ձայնավորով հայերեն բառերում այդ օրենքը գրեթե չի գործում:

Բերենք շրթնայնացած *սի*-ի օրինակներ. *խսնց, սնկ, մսնտ*: Օրինակները քիչ են: Հավանաբար պատճառն այն է, որ տվյալ ժամանակահատվածում այս ձայնավորը գրական արևելահայերենի՝ իր լծորդ *ա*-ին նմանվելու միտում ուներ արդեն:

Ի տարբերություն Առինջի լեզվի հնչյունական համակարգի՝ Ակունքում լայն գործառություն ունեն երկբարբառները: Դրանք երկուսն են՝ *իէ, ուօ*, երկուսն էլ բարձրացող են. *դըրիէ, անձրիէվ, նըստիէ, սիէր, ժիէխ, յիէրթիս, բըրիէր ա, գիէղ, կապրիէնք, փիէրիէր, տէհիէ* «տեսել», *սիէրմ, ցորիէն, կըծիէց, տըվիէց, ունիէն, մագիէր, ճըվածիէղ, խալիվիւօր, լուօր, լուօտ, իուօր, հալուօղ, լուօրթ, պուօչ, թուօք, դըրրուօց, ջուօչ, գուօլ* (բայց՝ *վախկըլօտ, ցըմփօր*): Օրինակներից դատելով՝ *իէ*-ն գործառում է և՛ բաց, և՛ փակ վանկերում, իսկ *ուօ*-ն՝ միայն փակ վանկում: Խոսքին բարբառային երանգ հաղորդող այս երկբարբառները, անշուշտ, հնչութային արժեք ունեն:

Մեր ուսումնասիրած մյուս խոսվածքի կրողները՝ Գեղաշեն գյուղի բնակիչները, գաղթել են 19-րդ դարում Դիաղինի Ջուջան գյուղից, Մպահանից և Խոյից: Գյուղի լեզուն գրանցողի վկայությամբ՝ վերջին մի քանի տասնամյակների ընթացքում ձևավորվել է գյուղամիջյան մի ընդհանուր լեզու, որի հիմքում

ընկած է Սպահանի (Արարատյան բարբառ) խոսվածքը՝ իր մեջ ներառելով Դիադինի և Խոյի որոշ առանձնահատկություններ³:

Ըստ հայկական ու կիսաշփական բաղաձայնների որակի՝ Գեղաշենի խոսվածքի բառապաշարում բառասկիզբն ունի քառաստիճան՝ շնչեղ ձայնեղ, պարզ ձայնեղ, պարզ խուլ, շնչեղ խուլ բաղաձայնական ենթահամակարգ: Այսպես՝ շնչեղ ձայնեղներ. *գ՛/գըլօխ, գ՛էլ, գ՛/գէտին, գ՛/կըննաց, գ՛էրէզման, ք՛/պագուկ, դ՛/տըտում, դ՛/տաննակ, դանն, ճ՛ըծում, ճ՛ու, ջ՛ուր*, պարզ ձայնեղներ - *բար, բիրբար, բողագ, բուդ, բըլօճ, դանդուռ, դ/ տանրման, դ/տընձէլ, ջըննաղ, գուրցձէլ, վ՞օնց, վանվ*. պարզ խուլեր – *պօպօք, կըճձէպ, կարմիր, կըտուր, տանձ, տուր, տալըմ ա, ծամըմ ա, ճանջ, ճութ*: Օրինակներից երևում է, որ որոշ շնչեղ ձայնեղներ, ինչպես՝ *բ՛-ն, գ՛-ն, դ՛-ն*, խոսքի շղթայում պարզեցման միտում ունեն՝ վերածվում են պարզ ձայնեղի կամ պարզ խուլի: Նաև պատահում է, որ նույն բառի մեջ ձայնեղն է վերածվում խուլի, ինչպես՝ *դ>տ*: Գեղաշենի խոսվածքում բառի տարբեր դիրքերում գործառում են ժամանակակից արևելահայերենի բոլոր բաղաձայնները: Օրինակ՝ *մօրքուր, տէքըր, թիակ, մըռճէմ, հափատ, փըշատ, տէր, խօքի, ֆօրթ* և այլն: Իսկ խոսվածք թափանցած փոխառյալ բառերում առկա են քմայնացած բաղաձայններ՝ *քանն, քունուր, քուլ, գօզուկ*: Հիշեցնենք, որ, ընդհանրապես, քմային բաղաձայնների հարևանությամբ գտնվող ձայնավորները նույնպես քմայնացման երանգ են ստանում այն դեպքում, եթե տվյալ բարբառային միավորում գործառում են առաջնալեզվային, ձայնավորներ: Փոխառությունների մեկ այլ խումբ բառասկզբում ունի արաբական խուլ, ըմպանային *կ* հնչյունը. *կանվուրմա, կուջաղ* «գիրկ», *կըր* «խոնավ», *կանլանա* «բարդի», *կանիշ, կոթուր* «թևատակ», *կօնդախ* «բարուր» և այլն:

³ ՀԲԱ ծրագրով լրացված տետր հ. 275:

քում բառի մեջ հաճախ չհանդիպող և նաև բարդ արտասանվող հնչյուն է, ապա այն կանվանենք նշույթավորված ⁴:

Գեղաշենի խոսվածքի բառապաշարը հարուստ է էէ, ոօ բարձրացող երկբարբառներով. *ծառնի՛ է/էր, թըրփի՛ էր/էր, քըշի՛ էց, ամբի՛ էր, անձվի՛ էր, իր՞ուօղ, իր՞ուօտ, շի՛ էմ, ւ՞ուօր, գի՛/կի՛ էղ, ցի՛ էխ, փ՞ուօ, խընձ՞ուօր, կըրի՛ էպ, կի՞ուձ, ի՛ի էտ, տընկում՝ ի՛ էնք, խավի՞ուօղ, սըր՞ուօց, խըմ՞ուօր, ջի՛/ճարթվի՛ է, բի՛/պի՛ է՝ «բե՛ր», էկի՛ է, կարպի՛ էտ, ւ՞ուօտաշ՞ուօր, քավ՞ուօր, քի՛ էռի, պ՞ուօջ, որոնք գործառուս են բառի թե՛ բաց, թե՛ փակ վանկերում:*

Հարկ է նշել, որ տվյալ խոսվածքային միավորն ունի բավական հարուստ հնչյունական համապատկեր, որը, անշուշտ, պայմանավորված է հայերենի տարբեր խոսվածքային միավորների միաձուլումից:

Ուսումնասիրված հաջորդ խոսվածքի՝ Կոտայքի մարզի Բալառուվիտ⁵ (նախկինում՝ Միուբ) գյուղի բնակիչների նախնիները, ինչպես վկայում է բարբառագետ Անահիտ Հանեյանը, գաղթել են Խոյից, Սալմաստից, Ալաշկերտից, Մուշից 19-րդ դարի տարբեր ժամանակաշրջաններում:

Հնչյունական համակարգի մասին խոսելիս նախ ներկայացնենք խոսվածքիս բաղաձայնական ենթահամակարգը: Ըստ բառասկզբի դիրքի՝ հպական բաղաձայնները խոսվածքում քառանդամ են՝ շնչեղ ձայնեղներ. *ձ՞ուն, բ՛ագուկ, բ՛ըննէլ, գ՛արուն կամ գ/կարուն), գ՛էշ, դ՛անակ, դ՛էղ, դ՛ընէլ, գ՛/կընաց, գ՛օղիկ, գ՛ինի, ձ՛ըզանգաջ* «խխունջ», *ձ՛աք, ջ՛ուր, բ՛օվէլ, բ՛ըլէլ, գ՛ըզէլ, գ՛ալ*: Հարկ է նշել, որ բառամիջում հազվադեպ է հանդիպում շնչեղ ձայնեղ՝ *պարգաջ՛ըրէլ, սապնաջ՛ուր*: Շարունակելով բառասկզբի դիրքի բաղաձայն հնչյունների ուսումնասիրու-

⁴ Ա. Հ. Խաչատրյան, *Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն*, Ե., 1988, էջ 41:

թյունը՝ փաստենք՝ պարզ ձայնեղների առկայություն. *գըլօխ, գընացինք, գ/կէտին, դ/տուռ, ք/պա՛ց, գ/կէրէզման, գս՛գսր, դընէլ, ք/պան, գ/կաթա, ք/պէրէք, դ/տընըմ էնք, ք/պարուր, ք/պաժին, բըլօճ, ք/պարց գ/կօլ, զարմանալ, ժանգ, ժս՛շկ, ձու, ձ/ճընծաղիկ, վախկօտ, վօտ վըռագ, վէրցըիմ, ջ/ճուր, ջահէլ*: Ինչպես տեսնում ենք՝ *բ, գ, դ* հպական ձայնեղները կարող են հերթագայվել խուլերի հետ: Պարզ խուլերով սկսվող բառեր. *պատ, պօկէլ, կիսրար, կըձղէլ, կըլէպ, տուն, տասը, ճըմըռէլ, ճըրաք, ծառ, ծակէլ, սըլալ, ֆօրթ, ֆայտօն, ֆէրմա, շընօրք, շուն, հագ, հաց, հինգ, հսյլի, խալիվօր, խօսալ, խըմավ* և այլն:

Բառասկզբում գործառող շնչեղ խուլեր. *փագէլ, փօր, քօթ «բութ», քըցիպ, քացախ, թանգ, թօփալ, ցան, ցէխ, չըլուտ, չիմ «ցէխ»* և այլն:

Նույն դիրքում՝ ձայնորդներ. *լսկօտ, լու, մանօց, մէնձընալ, նսֆտ, նէքսէվ, ռաստ*:

Բառասկիզբը, ինչպես և հայերենի այլ տարբերակներում է, բացառված է շփական *ր* ձայնորդի համար:

Ի մի բերելով Բալահովիտի լեզվի բաղաձայնական ենթահամակարգը՝ կարող ենք գրանցել, որ հնչարտաբերական յուրահատկություններով դրանք նման են գրական արևելահայերենի համապատասխան ձայնորդներին ու բաղաձայններին:

Խոսվածքումս բառասկզբի հավելական (՞) հագազը լայն կիրառություն ունի: Այն հանդիպում է ոչ միայն ձայնավորներից՝ *՞անսչի, ՞ընգավ, ՞ախպուր, ՞ուրիշ, ՞իմանալ*, այլ նաև *ռ* ձայնորդից առաջ դիրքերում. *՞ըռադ, ՞ըռանգ ՞ըռիմա, ՞ըռաֆիկ*:

Բալահովիտի լեզվում գործառում են գրական արևելահայերենի բոլոր ձայնավորները, ինչպես նաև քմային՝ ուժեղ կամ թույլ երանգով՝ *սի/սի. դսրման, դանսկ, գսրգէլ, գսլըս, գսրգէլ, գստիկ, թսփի՛, լսլ, խսլիվօր, ճսվսր, չանչ,*

սիպտանկ, վննգնէլ, վննգնէլ, վննրէլ: Իսկ փոխառյալ բառերում՝ նաև քմային *ni*: Ինչպես՝ *գօզլուկ, քնուլ*:

Փակ վանկում սահմանափակ բառերում հանդիպում են երկբարբառներ. *ուզ^hէց, ճ^hէռ, քավ^mօր, ցրմփօ^mօր*:

Ամփոփելով՝ նկատենք, որ եթե գյուղերի բնակիչները ներգաղթյալ են, ապա նրանց խոսվածքների վրա զգացվում է իրենց նախկին բնակավայրերի լեզուների ազդեցությունները: Եվ, նայած բնակչության քանակին, տվյալ խոսվածքի տարբեր շերտերում կարող է դրանցից մեկը գերակշռող լինել:

Zhanna Mikayelyan - Sound Systems Description of Arinj, Akunk, Geghashen and Balahovit Villages in the Region of Kotayk.- The phonetic systems of the four villages in Kotayk Region were simultaneously examined.

When making records of a dialect, the information on the composition of the population, whether being immigrants or local inhabitants, is of great importance.

If the villagers are immigrants, their speech is affected by the influence of the languages spoken in their previous communities. And, depending on the population size, one of those influences can be dominant in different layers of the given speech.

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՆՑՈՂԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ
ԱՐԺՈՒՅԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բայի արժույթը քննելու համար որոշիչ դեր ունեն ինչպես գերադաս, այնպես էլ ստորադաս անդամների իմաստաբերականական հատկանիշները: Դրանցից բացի՝ պետք է հաշվի առնել նաև բայի կազմությունը և լրացումների շարահյուսական ձևավորվածությունը:

Առանձնացրել ենք այն գործոնները, որոնք կարող են արժույթի փոփոխության պատճառ դառնալ՝ ըստ գերադաս և ստորադաս բաղադրիչների իմաստային, քերականական, շարահյուսական և բառակազմական¹ առանձնահատկությունների:

Այսպես՝ անցողական բայերը կարող են փոխել իրենց արժույթը՝ պայմանավորված հետևյալ հիմունքներով՝ բառաբարդմամբ, ածանցմամբ, լրացման քերականական առանձնահատկություններով:

1. *Բառաբարդում*: Անդրադառնալով բարդ բայերի կառավարմանը՝ Հ. Հարությունյանը նշում է, որ տարբերակված մոտեցում պետք է ունենալ բարդ բայերի նկատմամբ (*ոսկեզօծել, աղեզերծել*), որոնք զրկվում են իրենց ներսի խնդրի իմաստով լրացում առնելու հատկությունից, բայց պահպանում են այլ խնդիրներ առնելու հատկությունը²:

¹ Տե՛ս Ս. Մուրադյան, *Կազմությամբ բարդ բայերի արժույթը՝ ըստ ներքերականական արտահայտության*, Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Պրակ Ա, Ե., 2017, էջ 47-56: Ս. Մուրադյան, *Կազմությամբ ածանցավոր բայերի արժույթը՝ ըստ ներքերականական արտահայտության*, Միջազգային գիտաժողով «Լեզու, խոսք, իրականություն», Ե., 2017, էջ 210-221:

² Տե՛ս Հ. Հարությունյան, *Կառավարումը ժամանակակից հայերենում*, Ե. 1983, էջ 113:

Բարդ բայերի արժույթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խնդրատությամբ միարժույթ, երկարժույթ և եռարժույթ մի շարք բայեր, բարդ կազմություններում իրենց արժույթայնությունը պահպանելուց բացի, կարող են նաև փոփոխել այն:

Սկզբնատիպ անցողական բայերի և նրանցով կազմված բայական բարդությունների համեմատությունը ի հայտ է բերում մի շարք տարբերություններ խնդրատական արժույթի տեսանկյունից:

1.1. Խնդրատությամբ միարժույթ մի շարք անցողական բայեր բարդվելիս մնում են միարժույթ: Սկզբնատիպ բայը ձևավորված բարդության մեջ չի կորցնում իր անցողականության քերականական իմաստը և պահանջում է սեռի խնդիր՝ մնալով միարժույթ: Այս բայերից են՝ *թափել - լիցքաթափել* «լիցքը թափել»³, *կատարել - մենակատարել* «մենակ կատարել», *կիզել - ողջակիզել* «ողջակեզ անել, գոհաբերել», *շարժել - գրաշարժել* «գութ շարժել» և այլն: Հմնտ. -Ո՞վ *հող թափեց* բուխարիկից... (ՀԹ)⁴ և Մատուցողի հայտնությունը *լիցքաթափեց* էլեկտրականացած *մթնոլորտը*... (ՎՊ):

1.2. Ի տարբերություն վերը նշված բայերի՝ միարժույթ որոշ անցողական բայեր բարդվելիս դառնում են արժութագուրկ՝ ձևավորելով նոր անանցողական բայեր: Բարդ բայերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նրանք սովորաբար պահպանում են սկզբնատիպ բայի սեռի քերականական հատկանիշը: Սակայն բացառիկ դեպքերում բայական բաղադրիչը

³ Բայերի սեռի, իմաստային և ներշարահյուսական հարաբերությունների քննությունը կատարել ենք՝ հիմնվելով հետևյալ բառարանների բացատրությունների վրա՝ «*Մամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*», Ե., հ. 1-4, 1969-1980, Բ. Աղայան, «*Արդի հայերենի բացատրական բառարան*», Ե., 1976, Ստ. Մալխասեանց, «*Հայերենի բացատրական բառարան*», հ. 1-4, Ե. 1944-1945:

⁴ Օրինակները քաղել ենք ԱՐԵՎԱԿ կայքից http://www.eanc.net/EANC/search/?interface_language=am):

կապակցվում է այնպիսի իմաստով բաղադրիչի հետ, որով բարդության նոր նշանակությունը չեզոքացնում է բայի անցողական իմաստը, և բարդությունը սեռի խնդիր առնելու տեսանկյունից դառնում է արժուրթագուրկ, ինչպես՝ *բնակավորիել* «բանկության տեղը փոխել», *թնաբախել* «թևերը շարժել, թափահարել», *վշտակրել* «վիշտ կրել», *խոստումնադրժել* «խոստումը դրժել, չպահել», *ծխարձակել* «ծուխ արձակել», *ծլարձակել* «ծիլ արձակել» և այլն: Օրինակ՝ Թպրտում է նա, խոլ *թնաբախում* իմ ձեռքերի մեջ... (ՄԿ): Եվ ահա ձյունասառույցների միջից առաջինը նա *ծլարձակեց*... (ՄԿ):

1.3. Խնդրառությամբ միարժույթ մի շարք անցողական բայեր բարդվելիս ձևավորում են խնդրառությամբ երկարժույթ նոր անցողական բայեր: Կապակցվելով բայի հետ՝ անվանական բաղադրիչը նպաստում է նոր բայական բարդության՝ արժույթի այլ արտահայտություն ձեռք բերելուն, ինչպես՝ *բեկել* - *վարկաբեկել* «անունը՝ հեղինակությունը գցել», *որոշել* - *կողմնորոշել* «դիքորոշել» և այլն: Այսպես՝ դառնալով երկարժույթ՝ այս բայերը, ուղիղ խնդրից բացի, կարող են պահանջել նաև մի բնության խնդիր, որը, պայմանավորված անվանական բաղադրիչի նրբիմաստով, կարող է լինել՝

ա) *հանգսան անուղղակի խնդիր*: Հմմտ. Ոչ ոք չի կարող *որոշել* գոյության *սկիզբն* ու վախճանը (ՄԽ) և Շահումյանը կուսակցական *կազմակերպություններին կողմնորոշեց* վճռական *գործողություններին*⁵:

բ) *Միջոցի անուղղակի խնդիր*: Հմմտ. -1988-ը *բեկեց* շատ շատերիս *ճակատագիրը* (ՀՄ) և Դու նրա *ցուցմունքներով վարկաբեկում* ու վնասում ես քո *բարեբարին*... (ԴԴ):

1.4. Խնդրառությամբ երկարժույթ մի շարք անցողական բայեր բարդվելիս դառնում են միարժույթ: Այս բայերի և նրանց բնության խնդրի սերտ կապից առաջանում են մեկ բա-

⁵ Հայկական սովետական հանրագիտարան (այսուհետև՝ ՀՍՀ), հ. 10, Ե., 1984, էջ 82:

ռային արժեք ունեցող բարդություններ: Երկարժույթ այս ներգործականները, համադրական բարդության բաղադրիչ կազմելով, խնդրառությանը դառնում են միարժույթ: Նրանք կորցնում են իրենց բնության խնդիրը, որը տվյալ դեպքում վերածվում է կախյալ բաղադրիչի, բայց պահանում են ներգործական սեռի բայերի բուն՝ սեռի խնդիր պահանջելու հատկանիշը: Այդ բայերից են՝ *արձակել – լծարձակել* «լծից արձակել», *գրկել – գահագրկել* «գահից գրկել», *պատել – պարսպապատել* «պարսպով պատել» և այլն: Հմտ. Աստված այդ *մխիթարությունից* էլ է *գրկում իրեն* (ԶԴ) և Նրանք Վռամից պահանջել են *գահագրկել Արտաշես Գ-ին*⁶:

1.5. Խնդրառությամբ երկարժույթ մի շարք անցողական բայեր բարդվելիս մնում են երկարժույթ: Ի տարբերություն 1.3. կետում նշված բայերի՝ այս բայերը պահանջում են ևս մեկ բնության խնդիր, ինչը կարելի է պատճառաբանել մի քանի տեսանկյուններից. մի դեպքում՝ այս բայերի լրացում բաղադրիչն արտահայտված է հատկանիշ ցույց տվող խոսքի մասերով՝ *ածականով (գեղազարդել)*, *մակբայով (բռնագանձել, շրջափակել)*, *կամ բայարմատով (կապակցել, պճնազարդել)*, ուստի բնական է, որ սրանք չեն գրկվում բնության խնդիր պահանջելու գործությունից, մյուս դեպքում՝ այս բայերը իրենց անվանական խնդիրներին զուգահեռ պահպանում են այլ իմաստով բնության խնդիր առնելու հատկանիշը (*սահմանազատել, որակագրկել*): Այս բայերից են՝ *զարդարել – գեղազարդել* «գեղեցիկ զարդարել», *զատել – սահմանազատել* «սահմանով զատել՝ անջատել», *կցել – կապակցել* «իրար կապել, կապելով կցել», *կառուցապատել* «կառույցներով պատել» և այլն: Այսպես՝ բայական այս բարդությունները իրենց բաղադրիչ կազմող տարբեր խնդիրներին զուգահեռ պահպանում են այլ իմաստով բնության խնդիր առնելու հատկանիշը, մասնավորապես՝

⁶ ՀՄՀ, հ. 2, Ե., 1976, էջ 140:

ա) *հանգման անուղղակի խնդիր*: Հմմտ. Վեց նահանգ սրա օրով եւ *կցեցի* իմ իշխանության *կալվածներին* (ԴԴ) և Նա կարողանում էր իր *նյութը կապակցել* կյանքի ընթացիկ *հարցերին* (ԹԴ):

բ) *Միջոցի անուղղակի խնդիր*: Հմմտ. Նա իր *կուրծքը զարդարեց* երկաթե *զրահով* (Բ) և Սպասուհին երկնագույն *ժանյակով* էր *գեղազարդել* Ասպրամի *մահճակալը* (Մ):

գ) *Անջատման անուղղակի խնդիր*: Հմմտ. Հին ժամանակներում այդ դարբնի կռած թրով *գատում էին չարը բարուց* (ՀՄ) և Պայքարելով բնության երևույթների ոչ գիտական ու կրոնական բացատրությունների դեմ՝ *գիտությունը սահմանազատել է կրոնից*⁷:

Ենթադրելի էր, որ բառաբարդման հետևանքով երկարժույթ բայերը կարող են դառնալ եռարժույթ: Սակայն այս բայերը իրենց ներսի խնդրին զուգահեռ առնում են ևս երկու խնդիր լրացում, ուստի և բայը իր արժութայնությունը այլևս չի ծավալում:

1.6. Խնդրառությամբ եռարժույթ մի շարք անցողական բայեր բարդվելիս դառնում են երկարժույթ: Թեև Գ. Ջահուկյանը գտնում է, որ ժամանակակից հայերենում խնդրառությամբ եռարժույթ բայեր չկան⁸, այնուամենայնիվ այդպիսի բայեր կարելի է առանձնացնել, ինչպես՝ *ավանդել*, *ապահովել*, *մատուցել*, *պաշտպանել*, *տարբերել* և այլն: Բացի այն, որ այս բայերի քանակը քիչ է, նրանք նաև հազվադեպ են մասնակցում համադրական բարդությունների ձևավորմանը: Թերևս դա պայմանավորված է նրանց մեջ արդեն իսկ արտահայտված արժութային հնարավորություններով: Եռարժույթ բայի բառաբարդման մեկ օրինակի ենք հանդիպել՝ *ավանդել* բայով ձևավորված *դասավանդել* բարդությունը, որը դարձել է

⁷ ՀՄՀ, հ. 4, Ե., 1978, էջ 657:

⁸ Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974, էջ 466-487:

երկարժույթ: Հմմտ. *սովորույթները պապերից ավանդել սերունդներին* և *դասավանդել մաթեմատիկա երեխաներին*:

2. *Ածանցում*: Հ. Հարությունյանն իրավացիորեն նըշում է, որ կառավարումը քննելիս առանձին դեպքերում պետք է նկատի ունենալ նախաձանցավոր և այդ աձանցից զուրկ բայերի համեմատության առանձնահատկությունները⁹:

Կատարելով սկզբնատիպ բայերի և նրանցով բաղադրված կազմությամբ աձանցավոր բայերի բնագրային օրինակների համեմատություն՝ ներկայացնենք, թե ինչ փոփոխություններ կարող են առաջացնել նախաձանցները բայի արժույթի մեջ:

2.1. Որոշ դեպքերում ավելանալով խնդրառությամբ միարժույթ անցողական բայերի՝ նախաձանցները ձևավորում են խնդրառությամբ միարժույթ նոր անցողական բայեր: Հմմտ. Արտաշիրը ևս *խմբեց* իր շուրջը մի տասնյակ *զինվոր...* (ԴԴ) և Հայ բնակչությունը *համախմբեց* իր ուժերը¹⁰:

2.2. Որոշ դեպքերում ավելանալով խնդրառությամբ միարժույթ անցողական բայերի՝ նախաձանցները ձևավորում են խնդրառությամբ երկարժույթ նոր անցողական բայեր, որոնք, պայմանավորված նախաձանցի հաղորդած նոր իմաստով, առնում են տարբեր բնության խնդիրներ: Այսպես՝ սկզբնատիպ ներգործական սեռի որոշ բայեր, որոնք խնդրառությամբ միարժույթ են, նախաձանցավոր կազմություններում դառնում են խնդրառությամբ երկարժույթ՝ ուղիղ խնդրից բացի պահանջելով նաև մի բնության խնդիր, մասնավորապես՝

ա) *հանգման անուղղակի խնդիր*: Հմմտ. *Դրեց ընկալուչը*, գլուխն առավ ափերի մեջ (ՎՊ) և Խորտակված մի *փառքին* դու *հակադրում ես* ելնող *փառքը* (ՕԲ):

բ) *Բաղդատության անուղղակի խնդիր*: Հմմտ. Իսկ ես մարդկանց մեջ ամենից առաջ *գնահատում եմ բարությունը*

⁹Տե՛ս Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 83:

¹⁰ ՀՄՀ, հ. 13, Ե., 1987, էջ 160:

(ԵԶ) և Հայ ժողովրդին *ուրիշներից* առանձնապես չեմ *գերա-
գնահատում...* (ՎՄ):

2.3. Որոշ դեպքերում ավելանալով խնդրառությամբ երկարժույթ անցողական բայերի՝ նախաձանցները ձևավորում են խնդրառությամբ երկարժույթ նոր անցողական բայեր՝ հիմնականում պահպանելով նախկին խնդրառությունը, մասնավորապես՝

ա) *հանգման անուղղակի խնդիր*: Հմմտ. Տիրայրը *նրան մարտակառք տրամադրեց* (ՄԽ) և Քունը *նախատրամադրել էր ինձ սիրո* (ԱՖ):

բ) *Միջոցի անուղղակի խնդիր*: Հմմտ. Նրա սենյակի դուռը *փակեցին* մի մեծ *կողպեքով* (ՎՊ) և ...Չէի հոժարվի *պարփակել* անտուն և ազատ *կյանքըս* Որևէ *եզրով* կամ *շրջապատով...* (ՎՇ):

գ) *Անջատման անուղղակի խնդիր*: Հմմտ. V դ. առաջին կեսին Մասանյան Իրանը *Շակաշենը* ևս *անջատեց Մեծ Հայքից*¹¹ և Չեմ ցանկանում *տարանջատել* մեր պատմության հին և միջնադարյան շրջանի *մտավորականին կղերականից* (ՀՄ):

Հազվադեպ են այն օրինակները, երբ երկարժույթ բայը նախաձանցավոր դառնալիս փոփոխում է իր ուժեղ և պարտադիր կառավարմամբ պայմանավորված խնդրառությունը՝ առնելով այլ բնության խնդիր: Այսպես *ապակողմնորոշել* և *նախընտրել* բայերը, նախաձանցի իմաստով պայմանավորված, փոխում են իրենց սկզբնատիպ երկարժույթ բայի խնդրառությունը: *Կողմնորոշել* երկարժույթ բայը պահանջում է հանգման անուղղակի խնդիր, իսկ *ապակողմնորոշել* բայը (–*այ* ժխտական նախաձանցի նշանակությամբ)՝ անջատման: Հմմտ. Թատրոնի շուրջը ծավալված բանավեճը *Ադամյանին կողմնորոշել է դեպի ռեալիզմ*¹² և «Հանդերձյալ աշխարհի»–ի պատկերացումը սկսել է *մարդկանց ապակողմնորոշել* կյանքի իրական *խնդիր*–

¹¹ ՀՄՀ, հ. 8, Ե., 1982, էջ 416:

¹² ՀՄՀ, հ. 1, Ե., 1974, էջ 64:

*ներից*¹³: *Ընտրել* երկարժույթ բայը առնում է անջատման անուղղակի խնդիր, իսկ *նախընտրել* բայը՝ բաղդատության: Հմնտ. Բոլոր հնարավոր *ուղղություններից* ես *ընտրեցի մեկը* (ԼՏ)* և *Վտարանդիությունը նախընտրեց մարտիրոսություն-նից...* (ՖՍ):

Նախաձանցավոր կազմություններում երկարժույթ բայերի արժույթի նվազեցման դեպքերի չենք հանդիպել: Նախաձանցավոր բայական կազմությունները դրսևորում են ներշարահյուսական զանազան արտահայտություններ՝ պարագայական տարբեր նրբիմաստներով, ուստի ավելանալով բային՝ նախաձանցը չի խոչընդոտում նոր ձևավորված բայի խնդրառական արժույթի արտահայտմանը:

Սկզբնատիպ բայերի և նրանցով ձևավորված բարդ և նախաձանցավոր կազմությունների համեմատությունից պարզվում է, որ մի շարք անցողական միարժույթ և երկարժույթ բայեր այդ կազմությունների մեջ ևս պահպանում են սկզբնատիպ բայի արժույթի արտահայտությունը և բարդության բաղադրիչ կազմող խնդրին զուգահեռ առնում են լրացում՝ այլ իմաստային դրսևորում ունեցող ստորադաս բաղադրիչով: Սակայն բաղադրյալ կազմություններում, առաջնաբաղադրիչի իմաստով պայմանավորված, որոշ միարժույթ բայեր էլ փոփոխում են իրենց արժույթը:

3. *Լրացման քերականական առանձնահատկություններ*: Գ. Ջահուկյանը նախադասության գլխավոր (տվյալ դեպքում ստորոգյալի) և լրացական անդամների կապը իրականացնող եղանակներից մեկի՝ կառավարության մասին գրում է. «Կառավարությունը քերականական կախման այն եղանակն է, որ իրականացվում է առաջին հերթին լրացումների հոլովական և կապային ձևավորմամբ...»¹⁴: Հայտնի է, որ ուժեղ և պարտադիր կառավարման դեպքում ստորադաս անդամի առ-

¹³ ՀՄՀ, հ. 6, Ե., 1980, էջ 220:

¹⁴ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 423:

կայությունը պայմանավորված է գերադաս անդամի իմաստաքերականական առանձնահատկություններով: Ուսումնասիրության ընթացքում ուշադրություն դարձրինք այն հանգամանքին, որ կան կառույցներ, որոնցում ստորադաս անդամի ձևավորվածությամբ է պայմանավորված բայի արժույթը՝ ըստ բայի հետ կապակցվող միավորների քանակի: Բայի արժույթի որոշման հարցում երբեմն լրացումների քերականական առանձնահատկություններն են որոշիչ դեր խաղում: Այս դեպքում կփորձենք արժույթը քննել լրացումների ձևաբանական և շարահյուսական հարաբերության մեջ: Այսպես՝ մի շարք երկարժույթ անցողական բայեր կարող են դառնալ միարժույթ այն կառույցներում, որոնցում լրացումները բազմակի են: Բազմակի անդամներով կառույցները կարելի է փոխակերպել տարբեր խնդիրներով արտահայտված կառույցների: Հմմտ. Դժվարությամբ եմ *կապակցում մարդուն ու շրջապատը* (ԱԲ) և Հայ ժողովրդի *պատմությունը* Լեոն սերտորեն *կապակցել է* հարևան երկրների *պատմության հետ...*¹⁵ :

Բազմակիության իմաստը կարելի է արտահայտել նաև հոգնակի թվով դրված բազմակիություն կամ հոգնակիություն ենթադրող որոշիչներ ունեցող որոշյալի միջոցով: Այսպես՝ մի շարք երկարժույթ անցողական բայեր կարող են դառնալ միարժույթ այն կառույցներում, որոնցում լրացումներն արտահայտված են հոգնակի թվով: Հմմտ. Ագաթանգեղոսին նվիրված ուսումնասիրության մեջ *համեմատել է* Ագաթանգեղոսի հայերեն և հունարեն *օրինակները...*¹⁶ և Ակամա *համեմատեց* իր *անցյալն այդ շավիղի հետ* (ԱՇ): Հիշյալ օրինակներում առկա է «փոխկառավարում»¹⁷, որտեղ կառավարումը ոչ թե միակողմանի է, այլ երկկողմանի: Նախադասության բայ գերադաս ան-

¹⁵ ՀՄՀ, հ. 4, Ե., 1978, էջ 566:

¹⁶ ՀՄՀ, հ. 3, Ե., 1977, էջ 255:

¹⁷ Տե՛ս Գ. Խաչատրյան, *Գրաբարի վերլուծական բայերի արժույթը*, Ե., 2000, էջ 14-15:

դամին լրացնող, տարբեր շարահյուսական գործառույթ ունեցող ուղիղ և անուղղակի խնդիրները, փոխակերպվելով նախադասության միևնույն գործառույթն ունեցող բազմակի անդամների, կարող են երկարժույթ բայը վերածել միարժույթի:

Ասվածից կարելի է գալ հետևյալ եզրակացությունների.

1. բառաբարդման ժամանակ ա) միարժույթ բայը կարող է և՛ պահպանել իր արժութայնությունը, և՛ փոփոխել այն՝ դառնալով արժութագուրկ կամ երկաժույթ, բ) երկարժույթ բայը կարող է և՛ պահպանել երկարժույթ բնույթը, և՛ վերածվել միարժույթ բայի, գ) եռարժույթը բայը կարող է միայն վերածվել երկարժույթ բայի:

2. Նախածանցավոր կազմություններում՝ ա) միարժույթ բայը կարող է պահպանել միարժույթ բնույթը, վերածվել երկարժույթ բայի, բ) երկարժույթ բայը կարող է պահպանել երկարժույթ բնույթը:

Արժույթի փոփոխության վրա կարող է ազդել նաև ստորոդաս անդամը: Նախադասության բայ գերադաս անդամին լրացնող, տարբեր շարահյուսական գործառույթ ունեցող ուղիղ և անուղղակի խնդիրները, փոխակերպվելով նախադասության միևնույն գործառույթն ունեցող բազմակի անդամների, կարող են երկարժույթ բայը վերածել միարժույթի:

S. A. Muradyan – Observations on Changes in the Valency of Transitive Verbs.- Transitive verbs can change their valency according to the following factors – word compounding, derivation and grammatical features of the supplement. As a result of our investigation, we came to the conclusion that.

1. as a result of compounding to verbs a) a monovalent verb can preserve its valency and can change it, becoming a valent or divalent verb, b) a divalent verb can preserve its divalent character and can change it, becoming monovalent verb, c) a trivalent verb turns into divalent verb.

2. a) Prefixed monovalent verb can preserve its verbal valency and can turn into divalent verb, b) prefixed divalent verb can preserve its verbal valency.

Besides grammatical, structural peculiarities and the meaning of the principal member, the syntactic features of the subordinate member are also essential in the realization of verb valency.

С. А. Мурадян- Рассмотрения изменения валентности переходных глаголов.–Переходные глаголы могут менять валентность в зависимости от следующих принципов: словосложения, аффиксации, грамматической особенности дополнения. Можно сделать следующие выводы:

1. во время модификации слова а) одновалентный глагол может и сохранить и менять валентность, становясь безвалентным или двухвалентным, б) двухвалентный глагол может и сохранить и менять валентность, становясь одновалентным, в) трехвалентный глагол становится двухвалентным.

2. а) Одновалентный глагол при присоединении приставки может и сохранить и менять валентность, становясь двухвалентным, б) двухвалентный глагол при присоединении приставки сохраняет валентность.

В вопросе определения валентности глагола важную роль играют как образование глагола, дифференциация словарного значения, а также синтаксические особенности второстепенного члена.

ՀԱՎԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳՆԱԿԻՈՒԹՅՈՒՆ
ԱՐՏԱՀԱՅՏՈՂ -ԵՆՔ, -ԱՆՔ, -ՈՆՔ, -ՈՒՆՔ ՁԵՎՈՒՅԹՆԵՐԻ
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ժամանակակից հայերենի քերականական աշխատություններում նշվում է, որ **-ենք**, **-անք**, **-ոնք**, **-ունք** ածանցները կազմում են բառեր, որոնք իմաստային տարբեր դրսևորումներ ունեն¹: Դրանցում յուրահատուկ տեղ ունեն հավաքականություն կամ ստացականություն, միաժամանակ հոգնակիություն արտահայտող գոյականներն ու դերանունները, ինչպես՝ **Պողոսենք**, **Վարդանանք**, **մերոնք**, **պապոնք**, **Բաղունք** և այլն, որոնք ցույց են տալիս ընտանիք, գերդաստան, տոհմ կամ խմբակցություն: Ժամանակակից հայերենում վերոնշյալ ձևություններն ունեն երկակի արժեք. դրանք հանդես են գալիս ինչպես ածանցի, այնպես էլ հոգնակերտ վերջավորության արժեքով: Այդ երկարժեքությունը դժվարություններ է առաջացնում ուսումնական գործընթացներում՝ թույլ չտալով հստակորեն որոշել նշված ձևությունների արժեքը: Խնդիրը դժվարանում է հատկապես **-ոնք** ձևային հետ կապված, որը հանդես է գալիս ոչ միայն հավաքական գոյականների (**տատոնք**, **պապոնք**), այլ նաև անձնական դերանունների սեռականի ձևերից բաղադրված ստացականներում (**իմոնք**, **քոնոնք**, **մերոնք**, **ձերոնք**), որոնք նույնպես տարբեր կերպ են ներկայացվում քերականական

¹ Հմմտ . Գ. Զահուկյան, *Հին հայերենի վերջածանցների ծագումը*, «Պատմա-բանասիրական հանդես», հ. 1-2, Ե., 1994, էջ 59, հ. 1, 1995, էջ 141: Ա. Սուքիասյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1989, էջ 315: Ս. Գալստյան, *Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում*, Ե., 1978, էջ 95, 128, 153 : Ֆ. Խլղաթյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Բ պրակ, Ե., 2008, էջ 145-146:

աշխատություններում, թեև քերականները դրանք հաճախ չեն առանձնացնում և ներկայացնում են հավաքական գոյականների հետ միասնաբար: Թերևս այդ դժվարություններով է պայմանավորված նշված ձևայինները հաճախ պարզապես «մասնիկ» եզրույթով նեկայացնելը՝ առանց նշելու՝ ածանց է դա, թե՛ վերջավորություն: Ի դեպ, պետք է նկատել, որ **-ոնք** ձևությամբ է կազմվում նաև *np* հարցահարաբերական դերանվան հոգնակին, որի դեպքում այն դիտարկվում է որպես հոգնակերտ վերջավորություն: Արևմտահայերենում նշված վերջավորությունը հանդես է գալիս նաև **աս (ասոնք)**, **ատ (ատոնք)**, **ան (անոնք)** դերանունների հոգնակիի ձևերում:

Մեր նպատակն է՝ ուսումնասիրել հարցի վերաբերյալ եղած տեսակետներն ու մոտեցումները, ցույց տալ դրանց տեղը հայերենի քերականական աշխատություններում:

Այսպես՝ Մ. Աբեղյանն իր «Հայոց լեզվի տեսություն» աշխատության «Անվանական վերջածանցներ» բաժնում այսպես է ներկայացնում նշված մասնիկները. «**Ենք, անք, ոնք, ունք** –անուններից և դերանուններից կազմում է անեզական գոյականներ՝ ստացական նշանակությամբ, ինչպես՝ **Խաչոյենք- Խաչոյի ընտանիքը, մարդիկ, Տիգրանենք, Մելիքենք, Վարդանանք, խնամոնք, Խունոնք** կամ **Խունունք, քեռոնք, իմոնք, քոնոնք, մերոնք, ձերոնք**: —Ծագած է հին լեզվի «եանք», «անք», հոգնականից, ինչպես՝ Ատումեանք—**Ատումենք, Ղևոնդեանք— Ղևոնդենք, Վարդանանք, Մարիամանք (Մարեմանք)**»²:

Հր. Աճառյանի դիտարկմամբ՝ «Հատուկ անունների հոգնակին անգործածական է, բայց գրաբարում կան սակավաթիվ օրինակներ, ինչպես՝ Յուդայք, Սիմոնից և այլն (Չալխյան, էջ 25 ծան.), ավելի սովորական է *անք, եանք* վերջավորությամբ. ինչ *Ներսիսեանք, -եանք, Վարդանանք, -նանք, նամքք* և այլն:

Աշխարհաբարում կարելի է հարկ եղած դեպքում հատուկ անունը հոգնակի դարձնել, օր.՝ *Սահակներ, Մեսրոպներ*,

²Մ. Աբեղյան, *Երկեր*, հ. 2, Ե., 1974, էջ 207:

Ներսեսներ ենք ունեցել. և այս դեպքում հոգնակին ունի «*նմաններ*» նշանակությունը»³:

Մ. Ասատրյանը նշված ձևայինները ներկայացնում է որպես ածանցներ՝ գրելով. «**Ենք, Անք, Ոնք, Ունք**» Կազմում են հավաքական գոյականներ, որոնք ցույց են տալիս մի ընտանիքի, գերդաստանի, տոհմի, խմբակցության պատկանող անձանց, օրինակ՝ **Գրիգորենք, Արամենք, Վարդանանք, Վասականք, Գոգոնք, տատոնք, պապոնք, քեռոնք, Վանդունք, Մայունք** և այլն»⁴:

Ա. Մուրիապյանը ևս դրանք ներկայացնում է որպես ածանցներ՝ **-անք**-ի դիմաց գրելով, որ գոյական հիմքերից սակավաթիվ հավաքական գոյականներ է կազմում, որոնց մեծ մասը գործածվում է ժողովրդախոսակցական լեզվում և բարբառներում, և բերում է հետևյալ օրինակները. **Վարդանանք, հանդերձանք, աներանք, ջոջանք, մեծունանք, աղբերանք** և այլն⁵: Այնուհետև **-ենք, -անք, -ոնք** ածանցները ներկայացնում է միասնաբար՝ հետևյալ մեկնաբանությամբ. «ա) կազմում է հավաքական հոգնակիի անեզական ձևեր. **Տիգրանենք, Ղևոնդենք, Գրիգորենք, Պողոսյանենք, խնամոնք, քեռոնք**, որոնց մեծ մասը կամ հնացած է, կամ էլ գործածվում է ժողովրդախոսակցական լեզվում. բ) **-ոնք** վերջածանցը կցվում է նաև դերանուններին, ինչպես՝ **մերոնք, ձերոնք, իմոնք, քոնոնք**»⁶: **-Ունք** ածանցի դիմաց այս կարգի օրինակներ չի բերում⁷:

Խոսելով դերանվան ձևաբանական առանձնահատկությունների մասին՝ Հ. Հարությունյանն իր «Ածական անուն. դերանուն» աշխատության մեջ գրում է. «**Մերոնք** և **ձերոնք** դերանունները հոգնակի են, որոնք կազմված են անվանական -

³Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 3, Ե., 1957, էջ 425:

⁴Մ. Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 2002, էջ 113:

⁵Տե՛ս Ա. Մուրիապյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1989, էջ 315:

⁶Նշվ. աշխ., էջ 319:

⁷Տե՛ս նշվ. աշխ., էջ 328:

ոնք հոգնակերտով, որը դրվել է սեռականի ձևի վրա, և նշանակում են առաջին կամ երկրորդ դեմքերին վերաբերող, մոտ անձ, առարկա, **-ոնք**-ը փաստորեն նաև գոյականի հոգնակի հավաքականությունն է ցույց տալիս»⁸:

Ժամանակակից հայոց լեզվի ակադեմիական հրատարակության մեջ դերանունների հոլովումը ներկայացնող բաժնում նշվում է. «Տ հոլովման են պատկանում նաև մի շարք դերանունների հոգնակիներ՝ **խոնք-խոնց, քոնոնք-քոնոնց, մերոնք-մերոնց, ձերոնք-ձերոնց, իրենք-իրենց, սրանք-սրանց, նրանք-նրանց, որոնք-որոնց, ումանք-ումանց**, ինչպես և որոշ յուրահատկությամբ՝ **կին** գոյականի հոգնակին՝ **կանայք-կանանց**»⁹: Ընդ որում այս աշխատության մեջ խնդրո առարկա ձևայինները ներկայացվում են **մասնիկ** բնորոշմամբ, ինչպես «Ժամանակակից գրական հայերենում **ենք, անք, ոնք, ունք** մասնիկներից **ց** հոլովման պատկանող բառեր ավելի շատ կազմվում են **ենք**-ով, այն էլ հատկապես հատուկ անուններից»¹⁰, «Ոնք մասնիկով մեծ մասամբ կազմվում են այս հոլովման պատկանող հասարակ անձնանուններ»¹¹: Ի դեպ, հիշյալ աշխատության մեջ գոյականակերտ ածանցների մեջ դրանք նշված չեն :

Ալ. Մարգարյանն էլ այսպես է ներկայացնում. «**Ք** հոգնակերտը հանդես է գալիս նաև **-անք, -ենք, -ոնք** բաղադրյալ մասնիկներում, որոնք անձի անվան վրա դրվելով՝ անեզական կամ հավաքական գոյականներ են կազմում, հմմտ. **Աշոտ—Աշոտենք, Մուրեն—Մուրենենք, Վարդիթեր—Վարդիթերենք, Տիգրան—Տիգրանենք, Վարդան—Վարդանանք, Վեդի—Վեդունք, Ադո- Ադոնք** և այլն:

⁸ Ջ.Ա. Հարությունյան, *Ածական անուն. դերանուն*, Ե., 1976, էջ 76:

⁹ Ս. Աբրահամյան, Ն. Պառնապյան, Հ. Օհանյան, *Ժամանակակից հայոց լեզու* («Դերանուն» բաժինը՝ Ս. Աբրահամյանի), հ. 2, Ե., 1974, էջ 101:

¹⁰ Նշվ. աշխ., էջ 102:

¹¹ Նույն տեղում:

Հավաքական նշանակությունն արտահայտելով՝ այդպիսի ձևերը անմիջականորեն չեն հակադրվում իրենց համապատասխան եզակի ձևերին և իմաստապես խստորեն տարբերվելով նրանցից՝ յուրատեսակ բառաքերականական ածանցներ են ներկայացնում լեզվի ձևաբանական համակարգում¹²:

Յու. Ավետիսյանի գնահատմամբ՝ «**Անք, ենք, ունք, ոնք** մասնիկներով բառաձևերը, որոնք երկու գրականներում էլ հոգնակիության յուրահատուկ իմաստ ունեն, ցույց են տալիս ոչ թե միևնույն տեսակի մեկից ավելի առարկաներ, այլ անձը իր յուրայիններով (**Արամենք, Վահանենք, Վարդանանք, պապոնք, Բաղունք, մերոնք**), մնացուկային երևույթներ են»¹³:

Գոյականի թվի կարգը ներկայացնելիս Ֆ.Խլղաթյանը նշված ձևայինները որպես վերջավորություն չի ընդունում. «Հոգնակիացնող ձևայինների շարքում երբեմն դասվում են -**անք, -ունք, -ոնք** ածանցները (Գ.Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, Եր., 1967, էջ 46-47): Ճիշտ է, որ դրանց մեջ կա առարկաների բազմակիության իմաստ, սակայն դրանք քարացած ձևեր են և նշված ձևերը, ածանցները հոգնակերտ մասնիկներ համարելը ճիշտ չէ: Գոյականի թվի կարգը ենթադրում է համապատասխան բառերի եզակիի գոյությունը և նշանակում է այդ եզակի գոյականների շատությունը: Օրինակ՝ **քարեր** նշանակում է **շատ քար, աշակերտներ, բանվորներ՝ շատ աշակերտ, շատ բանվոր**: Մինչդեռ **պապոնք, քեռոնք, Սաթոնք** և նման ձևերը չեն նշանակում **շատ պապ, շատ քեռիներ, շատ Սաթո** և այլն»¹⁴:

Խ. Բաղիկյանը դրանք ներկայացնում է և՛ որպես ածանց¹⁵, և՛ որպես վերջավորություն¹⁶:

¹²Ալ. Մարգարյան, *Հայոց լեզվի քերականություն*, Ե., 2004, էջ 88:

¹³Յու. Ավետիսյան, *Արևելահայերենի և արևմտահայերենի գուգադրական քերականություն*, Ե., 2007, էջ 42:

¹⁴Ֆ. Խլղաթյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Գ պրակ, Ե., 2007, էջ 21:

¹⁵Տե՛ս Խ. Բաղիկյան, *Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն*, Ե., 2010, էջ 37:

Հարցին առավել հանգամանորեն թերևս անդրադարձել է Էդ. Ադայանը. հոգնակիի կազմությունը ներկայացնելիս նա գրում է. «[ք].-հոգնակերտ ուղղականի այս բազմիմաստ վերջավորություններն ունեն. ա)ազգակցություն կամ խմբակցություն (կողմնակցություն են) ցույց տվող հավաքական գոյականները, որոնք անեզական են (**մերոնք, ձերոնք, Վարդանանք, Հակոբենք, պապոնք** են. . . »¹⁷:

Ց հոլովմանը վերաբերող հատվածում վերոհիշյալ գոյականների մասին գրում է. «Սրանց բառակազմական առանձնահատկությունը ոչ միայն այն է, որ նրանք կազմվում են յուրահատուկ ածանցներով (**-ան-ք, -ուն-ք, -են-ք, -ոն-ք**), այլև այն, որ իբրև բառ էլ նշույթավորված են որպես հոգնակի ուղղական հոլով: Այլ կերպ ասած, նրանք ունեն ուղղականի նշույթավոր վերջավորություն, առանց որի իբրև բառ էլ չեն կարող գոյություն ունենալ, ինչպես **-ի** վերջավորությամբ բառերը»¹⁸: Այնուհետև գրում է. «Ուրիշ լեզուներում, օրինակ՝ ռուսերենում, անեզական բառերը ձևով հոգնակի են, բայց իմաստով եզակի (օր.՝ **НОЖНИЦЫ, ПИТАНЬИ** են), ըստ որում ցույց են տալիս մեկ առարկա, մինչդեռ մեր այդ անեզական բառերը իմաստով էլ հոգնակի են»¹⁹:

Հետաքրքիր է, որ անեզական գոյականների օտար լեզուներից թարգմանված մյուս խումբը, որ ձևավորվում է **-եր, -ներ** մասնիկներով և դարձյալ չունի համապատասխան եզակին, տարակարծությունների առիթ չի տալիս, ինչպես՝ **Ալպեր, Կարպատներ, Ապալաչներ** և այլն:

Պետք է նկատել, որ երևույթների այս երկարժեքությունը երբեմն պատճառ է դառնում ժամանակակից հայոց լեզվի բառակազմության, բառակազմական կաղապարների ոչ լիարժեք ներկայացմանը: Այդ առիթով Լ. Խաչատրյանը գրում է, որ ժա-

¹⁶ Տե՛ս նշվ. աշխ., էջ 58:

¹⁷ **Է. Ադայան**, *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը*, Ե., 1967, էջ 37:

¹⁸ Նշվ. աշխ., էջ 252-253:

¹⁹ Նշվ. աշխ., նույն տեղում:

մանակակից հայոց լեզվի թվակազմական կադապարները ներկայացնելիս իր կողմից անտեսվել է նրանց «պատմական զարգացման ընթացքի նկարագրությունը, որով էլ մի շարք հարցեր կարիք են զգում լրացուցիչ բացատրությունների, ինչպիսին են, օր. ., **-իկ** և **-այք** հոգնակերտների գործառական սահմանափակությունը, **-անք** և **-այք** հոգնակերտների երկարժեք գործառույթները (թվանիշ և հոլովանիշ իմաստներով), դրանց հերթագայության դրսևորումները հոլովական իմաստներ արտահայտելու տեսանկյունից (**այք>անց**, **անք>անց**) և այլն»²⁰:

Մինչդեռ Գ. Ջահուկյանը նշված ձևայինների մասին խոսելիս գործածում է **վերջավորություն** եզրույթը. «... դերանվանական հոգնակին ոչ միայն ձևով, այլև իմաստով հիշեցնում է **անք**, **ենք**, **ոնք** վերջավորություններով կազմությունները, այսինքն՝ վերջիններիս նման լրացական բնույթ ունի՝ **մենք** = **ես** + **այլ անձինք** (**դու**, **դա**, **դուք**, **նրանք**), **դուք** = **դու** + **այլ անձինք** (**նրա**, **նրանք**), **իրենք** = **ինքը** + **այլ անձինք**»²¹:

Խոսելով դերանվանական թվակազմության մասին՝ Ջահուկյանը գրում է, որ այն բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով. 1) եզակիի և հոգնակիի ձևերի տարարմատությամբ և տարահիմքությամբ. 2) ուղիղ և թեք հոլովների համար թվային հակադրության տարբեր արտահայտությամբ. 3) հոգնակիի տարածված տիպերից տարբեր ձևավորմամբ. այս բառերի հոգնակին ուղղական հոլովում սովորաբար **ք** է պարունակում և մեծ մասամբ ձևով (ու իմաստով) հիշեցնում է **Վարդան-Վարդանանք**, **Գրիգոր-Գրիգորենք**, **պապ-պապոնք** լրացական-հավաքական հոգնակին: Այդ բառերն են՝ **ես-մենք** (թեք հոլովների դեպքում՝ **ինձ-մեզ**), **դու-դուք** (թեք հոլովների դեպքում՝ **քեզ-ձեզ**) . . . և այլն²²:

²⁰Լ. Խաչատրյան, *Բառակազմական և ձևաբանական կադապարները ժամանակակից հայերենում*, Ե., 2011, էջ 162:

²¹Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974, էջ 215:

²²Տե՛ս նշվ. աշխ., էջ 213:

Թվակազմության այս տարբերությունները Չահուկյանը բացատրում է նրանով, որ անձնական, ցուցական և հարցական բառերի համար բնորոշ է առարկայական իրադրականությունը, հաղորդակցման իրադրության հետ կապված լինելը²³:

Թվի կարգը քննելիս Չահուկյանը ներկայացնում է թվաձևային հետևյալ 8 վերջավորությունները՝ **եր, ներ, իկ, այք, ք, անք (և յանք), ենք, ոնք**՝ իբրև ծանոթություն նշելով, որ այստեղ և այլուր **անք**-ի հետ հասկանում ենք **յանք**-ը, որ նույն գործածությունն ունի²⁴:

Նշելով, որ «իրականում և՛ հիմքակազմ տարրերը, և՛ վերջավորությունները դիրքային սահմանափակություն (պայմանավորվածություն ունեն), և կարող են հանդիպել միայն որոշ տիպեր», այնուհետև տալիս է վերջավորությունների գործածության (ընտրության պայմանները), որտեղ մեզ հետաքրքրող մասնիկների դիմաց հետևյալ պայմաններն է ներկայացնում՝ **անք**-հատուկ անուններով արտահայտված հիմքերի դեպքում (արխաիկ և խոսակցական – բարբառային ոճերում), **ենք**- հատուկ անուններով արտահայտված հիմքերի դեպքում (խոսակցական ոճում, **ոնք**-միավանկ ազգակցական անունների (պապ, տատ), այլև ստացական դերանունների դեպքում²⁵: Այնուհետև տալիս է թվաձևերի բոլոր հնարավոր տիպերի կազմիչները՝ վերջավորություններով տարբերվող ձևերը դիտելով որպես տիպեր, իսկ ձևավոր հիմքերի կազմիչներով տարբերվող ձևերը՝ որպես ենթատիպեր. արդյունքում ստացվում է 15 թվաձև²⁶:

Այնուհետև Գ. Չահուկյանը գրում է. «**Վարդան-անք, Հակոբ-ենք, պապ-ոնք** ձևերը՝ **Վարդան-ներ, Հակոբ-ներ, պապ-եր** ձևերի կողքին կապված են իմաստային լրացուցիչ տարբե-

²³Տե՛ս նշվ. աշխ., էջ 214:

²⁴Տե՛ս նշվ. աշխ., էջ 176:

²⁵Տե՛ս նույն տեղում:

²⁶Տե՛ս նշվ. աշխ., էջ 177:

րությունների հետ, որոնք կարելի է որակել որպես դասային տարբերություններ, այլն ոճական բնույթ ունեն (հանդիպում են միայն որոշ ոճերում): Ի՞նչ իմաստային տարբերություններ են դրանք. **անք**-ը, **ենք**-ը և **ոնք**-ը հանդես են գալիս որպես համանուններ՝ ներառելով երկու կարգի իմաստ՝ **անք** = «կողմնակից, հետևորդ» + (ն)եր (Վարդանանք = Վարդան + կողմնակիցներ, Վարդանականներ), **ենք** = «ազգակից» + (ն)եր (Հակոբենք = Հակոբ + ազգակիցներ, «Հակոբյաններ»), **ոնք** = «մերձավոր, յուրաքանչյուր» + (ն)եր (պապոնք = պապ + մերձավորներ)²⁷:

Այնուհետև տարբերակում է եզակի և հոգնակի ձևերի հակադրությունների հետևյալ իմաստային արժեքները՝ միաթվություն և անմիաթվություն (եզակիություն և հոգնակիություն՝ **տուն-տներ**), միասնականություն և անմիասնականություն (անընդհատականություն և ընդհատականություն, անհաշվականություն և հաշվականություն՝ **ջուր-ջրեր**, **խնձոր-խնձորներ**) և այլն, լիահատկանշայնություն և անլիահատկանշայնություն (մենահատկանշայնություն), որը մեկնաբանում է հետևյալ կերպ. «տվյալ անվամբ նշանակվող առարկան որպես հատկանիշների մեկ ամբողջություն (որակ). թե որպես մեկ հատկանիշի կրող (այդ թվում՝ նաև որպես տվյալ անունը կրող) առնելը՝ **Գրիգոր-Գրիգորներ** (Գրիգորի մեկ կամ մի քանի հատկանիշներն ունեցողներ կամ Գրիգոր անունը կրողներ)», **Գրիգոր-Գրիգորենք** (մարդիկ, որոնց համար ընդհանուր է Գրիգորի հետ կապված լինելու հատկանիշը) և այլն²⁸:

Թվում է, թե Ջահուկյանի կողմից տրված թվակազմական վերոհիշյալ դասակարգումը տալիս է մեզ հետաքրքրող հարցի պատասխանը, և վերոհիշյալ ձևույթները, այնուամենայնիվ, պետք է համարել վերջավորություն, սակայն ավելի ուշ հրատարակված «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն» գրքում Ջահուկյանը վերջածանց-

²⁷Տե՛ս նշվ. աշխ., էջ 179:

²⁸Տե՛ս նշվ. աշխ., էջ 182-183:

ների մեջ է ներառել **-անք**, **-ենք**, **-ունք** ածանցները՝ խնդրո առարկա բառերի կազմության տեսանկյունից ամենից կենսունակ **-ենք**-ի դիմաց նշելով **Գրիգորենք**, **Հակոբենք** և այլն²⁹, իսկ **-անք** և **-ունք** ածանցների դիմաց այս կարգի բառերից օրինակներ չի բերում, այլ միայն՝ ա)աշխատանք, ընտրանք, հալածանք, չարչարանք և այլն. բ) կապանք, փշրանք և այլն³⁰, ակունք, թիկունք, շրթունք, սկզբունք և այլն³¹ :

Ամփոփելով մեր դիտարկումները՝ կարող ենք ասել, որ **-անք**, **-ենք**, **-ոնք**, **-ունք** ձևույթները, որոնք հանդես են գալիս ընտանիք, խմբակցություն ևն նշանակող բառերի կազմում, հայերենի քերականական աշխատություններում ներկայացված են երկակի արժեքով ոչ միայն դրանց իմաստային յուրահատուկ դրսևորումներով պայմանավորված, որոնք տարբերություններ են ներկայացնում ինչպես հոգնակիի սովորական ձևերի, այնպես էլ հավաքական մնացած գոյականների համեմատությամբ, այլև անձնական և ստացական դերանունների հետ դրանց ունեցած սերտ առնչակցությամբ: Քերականները հաճախ այս կարգի գոյականները ևս, ինչպես **իմոնք**, **մերոնք**, **քոնոնք**, **ձերոնք** դերանունները, ներկայացնում են **ստացական** բնորոշմամբ: Թերևս հարցի լուծումը պետք է փնտրել հենց այս հարթության վրա, որը, սակայն, առանձին ուսումնասիրության առարկա է, և որին կփորձենք անդրադառնալ հետագայում:

Nersisyan Varsik-The value of the morphemes *-ենք*, *-անք*, *-ոնք*, *-ունք* denoting collectiveness and plurality in the works on the Armenian grammar.- The morphemes **-ենք**, **-անք**, **-ոնք**, **-ունք** form the words, which have different meanings in the modern Armenian language. Of special importance among these words are the nouns and pronouns, which denote collectiveness and possessiveness as well as

²⁹Տե՛ս **Գ.Բ.Զահուկյան**, *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*, Ե., 1989, էջ 307:

³⁰Տե՛ս նշվ. աշխ, էջ 305:

³¹Տե՛ս նշվ. աշխ., էջ 311:

plurality such as **Պողոսենք, Վարդանանք, մերոնք, պապոնք, Բաղունք**, meaning the family, group, etc.

The given paper is devoted to the study of morphemes in such words which have double value in the Modern Armenian language (suffix and plural forming ending).

Нерсиян Варсик-Оценка морфем **-ենք, -անք, -ոնք, -ունք**, выражающих значения собирательности и множественности в трудах по грамматике армянского языка.- В армянском языке морфемы **-ենք, -անք, -ոնք, -ունք** образуют слова, которые передают разные значения. Среди таких слов особое место занимают существительные и местоимения, выражающие значения собирательности, притяжательности и множественности и обозначающие семью, род, группировку и т.д. (**Պողոսենք, Վարդանանք, մերոնք, պապոնք, Բաղունք**).

Данная статья посвящена морфемам, имеющим в подобных словах и выражающим двойственное значение (суффикса и окончания множественного числа).

**ԴԵՐԱՆՈՒՆԸ ԵՎ ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՄԸ
ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Հայոց լեզվի պատմության բոլոր շրջաններում դերանունները ունեն ինքնատիպ կազմություններ և հոլովման հարացույցեր: Դրանք ծագում են հնդեվրոպական մայր լեզվից, բայց ժամանակի ընթացքում այնքան են հեռացել նրանից, որ հայոց լեզվի գրաբար, հետագայում միջին հայերեն ու աշխարհաբար շրջաններում կարելի է համարել ինքնատիպ համակարգ: Փոփոխվել են ոչ միայն բառերի պատկերները, այլ նաև հոլովման յուրահատկությունները, կազմությունները: Գրաբարյան դերանունների մի մասը վերացել է, նորերը հանդես են գալիս նոր կազմությամբ ու գերազանցապես՝ անվանական հոլովմամբ: Միջին հայերենի ուսումնասիրման համար հիմք են ծառայել ոչ միայն միջնադարյան գրավոր աղբյուրները, այլ նաև միջին հայերենի բառարանը, որում ներառվել են և՛ էլակետային ձևերը, և՛ թեք հոլովաձևերը՝ իբրև բառայիններ. դա մեզ հանգեցրեց այն համոզման, որ միջին հայերենի դերանունների բոլոր գործածությունները (ուղիղ, թե թեք ձևերով) պետք է որ ընդգրկված լինեն հիշյալ բառարանում: Ըստ մեր ուսումնասիրության՝ միջին հայերենի դերանվանական լեզվանյութը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

Անձնական դերանունները և նրանց հոլովված ձևերը միջին հայերենում ունեն հետևյալ պատկերը *Հ*ւ-ես, (*Է*ս աղուր կանկնեցի զխաչս)¹, ի *մէնէ* (Ի՞նչ կուզեն այս խալիսս *ք* մէնէ), *յիսնէ*//*յիսնէն* (Ով որ զքեզ *յիսնէ* զատէ, երբ դու որ *յիսնէն* յեւար), *յիսնէ*//*յիսնէ* (Մանկան սիրտն *յիսնէ* կու մնայ), *ինծի*

¹ Տեղի սահմանափակության պատճառով բերվում են միայն այն օրինակները, որոնք կան Միջին հայերենի երկհատորանոց բառարանում: Տե՛ս **Ռ.Ս. Ղազարյան, Հ.Մ. Ավետիսյան**, Միջին հայերենի բառարան, հատոր Ա, Ե., 1987թ., հատոր Բ, Ե., 1992թ. և համապատասխան բառահոլովածը:

(Եկո՛ւ փորե՛ր ինծի թուրպայ), *ինձի* (Հաստատեցեք զձեզ հետ ինձի...), *ինձիկ* (Չքեզ բժիշկ ինձիկ գտայ), *դուն* (Դուն ալ մէկ վարձկունք արա...), *քու* (Քու տեսովդ ես դու լուսին...), *ի քենէ* (...որ ի քենէ են ձեռնադրեալ), *ձենէ* (Ձենէ չառաք զեմ ձի թամպով), *ձենով* (...թող ձենով նաւ զուգէ որ յեզր ելանի), *քե/քէ* (Վաղիւն արե՛կ, ես քէ գերի), հարսնո՛ւկ, քէ խրատ մի տամ), *քեզի/քեզիկ* (Քեզ պարտ է մեծ յուսով ի սիրոյն ինդրել քեզիկ բաժին), *նարա* (... և նարա պացիսնին գոր լսեն): *Նացան* (Տվի Թանաստի վանից Սուրբ Ստեփանոսի զՁատինայվարին հողն նացան հայրենիք), *նացայ* հոգնակի *նացմէ*, *ի նացմէ* (...հասկնայ զինչ նա ընդ նացայ դեհաց ասէ և ընդ նացմէ համարի), *նացմով*, *նացամով*, *նրանցմով* (...նացմով զմեղքն քաւեցեք), *նրայ* (Նրայ բաժին մի՛ տեք), *ինք* (Եւ այլ որ չունի ինք կարիք), *իրենցմով* (Իսկ այդ է անդամքդ, որ կան մարդոյն ներքսն և իրենցմովդ է կենդանութիւն մարդոյն), *իրմէնցմէ* (Կամ իրմէնցմէ աւելի հարկ կամ իրաւունք պահանջել), *իրան* (Շաքարն իւր լեղի թուի և լեղին իրան խմելի), *իրենք/իվրէնք* (Եւ իրենքն են, որ քաշեն զգիշուրիւնսն և թափեն ի բերանն):

Ինչպես երևում է բերված օրինակներից, միջին հայերէնում պահպանվել են անձնական բոլոր դերանունները՝ եզակի և հոգնակի թվերով, սակայն ինչպես ուղիղ, այնպես էլ թեք ձևերում ենթարկվել են զանազան հնչյունափոխությունների: Այսպես՝ *ես*-ը հանդես է գալիս նաև *էս* տարբերակով: Թեք հոլովաձևերում երբեմն պահպանվել են գրաբարյան ձևերը, սակայն աղավաղված ձևով: Օրինակ՝ գրաբարյան *յինէն*-ը դարձել է *յիսնէ/յիսնէն*, տրականը դարձել է *ինծի-ինձի*, *ինձի-ինձ*, *ինձիկ-ինձի*, բացառականի *ի մէնջ*-ը միջին հայերէնում դարձել է *ի մէնէ*: Բացառական հոլովը եզակի թվում գրաբարյան եզակի հայցականի հիմքով է կազմվում՝ *յիս*, որին ավելանում է *նէ*, *են*, *մէ* մասնիկները, որոնց մեջ *է-ն* (*ե*) գրաբարյան անավական հոլովման բացառականի *է* հոլովակազմիչն է: *Ինծի* ձևի *ծ-ն* կարծում ենք գալիս է *կ* ճյուղի բարբառներից: Գործիականի ձևեր մատենագրության մեջ չեն հանդիպում, ուստի դժվարա-

նում ենք մեկնաբանել, թե դրանք ո՞ր հիմքով կարող են կազմվել՝ տրականի՞, թե՞ հայցականի: Լ. Հովսեփյանը այդ ձևերը վերականգնել էր տրականի հիմքով՝ *խնով, խմով*²: Դու դերանվան թեք ձևերը բազմազան են: Նախ այն հանդես է գալիս *դուն* տարբերակով: Թեք ձևերը բազմազան են՝ սեռականը՝ *քու* (քոյչենք հանդիպել), տրականը՝ *քե//քե-քեզի, քեզի//քեզիկ*, մի դեպքում ունենք *ն*-ի անկում, մի այլ դեպքում հավելում՝ *իկ*: Հայցականը նման է տրականին՝ *քեզ*, բացառականը ևս խայտաբղետ է, գրաբարին մոտ է՝ *ի քենէ* տարբերակը, սակայն գրաբարում *ի քէն*-է, որտեղ *է*-ն հոլովակազմիչն է, միջին հայերենում այդ դերը կարծեք թե կատարում է վերջին *է*-ն, ուստի պետք է ենթադրել, որ *ի քենէ* ձևում դու-ի տրականի հիմքն է (*քեզ*) բացառականի մյուս տարբերակները կազմվում են տրականի հիմքից՝ *մէ, անէ, է* մասնիկների միջոցով ի քեզմէ-ի ի քեզանէ (*ի քեզէ*): Գործիականում ևս տարբեր կազմություններ ունի՝ *քենով, քեզնով, քէնով*: Մենք-ը միջին հայերենում արդեն *ւ*-ի հավելմամբ է հանդես գալիս թեք ձևերում, մյուս դերանունների նման է կազմվում, միայն բացառականում հանդիպում ենք *ի մէնէ* ձևին, որտեղ անհասկանալի է *է*-ի կրկնակի հանդես գալը: Եթե առաջինը արմատից է հանդես գալիս, ուստի պետք է լինի *մէնէ*, եթե գրաբարյան հոլովակազմիչ է, ուստի վերջին *է*-ն ավելորդ է: Դուք-ը ոչ մի առանձնահատկությամբ աչքի չի ընկնում: Բացառական և գործիական հոլովաձևերը կազմվում են նախորդների օրինաչափություններով: Որպես երրորդ դեմքի անձնական դերանուններ գործածվել են *ինք, իրենք* դերանունները: Մրանց թեք հոլովաձևերում երբեմն հանդես են գալիս գրաբարյան *ինքն* դերանվան հիմքով նորակազմություններ՝ *ինք, իր*՝ սեռական, *իրեն*՝ տրական, *իրմէ, ինքմէ, յինքենէ*՝ բացառական, *իրմով*՝ գործիական, երբեմն *իր* դերանվան թեք ձևերով կազմություններ. այսպես, *իրմէ, իրիմէ, յիրմէն*՝ բացառական, *իրմով*՝ գործիական կազմություն-

² Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, Ե., 1975, էջ 84:

ներ: Հոգնակի թվում հանդես են գալիս *իրենք* և *իրեանք*, ինչպես նաև *իրեանք* և *ինքեանք* գրաբարյան տարբերակները: Սրանց թեք ձևերում գուգահեռաբար հանդես են գալիս երբեմն գրաբարյան, երբեմն միջին հայերենյան տարբերակներ. այսպես, *իրանց*, *իրեանց*, սեռական, *իրենց*, *իրեանց*, *իրենց*, տրական, *գ-իրենք*, *գ-իրեանք*, հայցական, *յ-իրենցմե*, *իրմնցե*, *իրմնցնե*, *իրմնցե*, *իրմենցմե*, *իրեանցմե*, բացառական, *իրենցմով*, *իրմենցնով*՝ գործիական³:

Ցուցական դերանունները ուղիղ և թեք ձևերով հանդես են գալիս հետևյալ կերպ. *այլպիսի* (Պատրուսելն լաւ է քան այլպիսի տունկ), *այնկի* (Պատուէր տւի, թէ մի՛ ուտեք, այնկի կերաք՝ դրախտէն ելեք), *այնման*(Լինի ի նիւթական նեղոյ, կամ ի մասն այնման անդամոցն բաժանումն ի միմենց), *այնոր* (Այնոր պատճառքն բորբոս մաղձերն են), *այնորք* (Այնոր որ զկռիւն արին), *այնչաք* (Ապա մնայ այն ջերմն ի յար մինչև վճարի այնչաք), (Մազն, որ այնտեղ լինի բուսեալ), *այնցեղ* (Վասըն ջաղցնոյ և այլ այնցեղ իրաց, երբ գնէ որ վկայօք և հաստատէ թղթով), *այսեր* (Եւ այսեր ամէնս ի յառաջն քան զնօրաքն լինի: Երբ գայտ ամենայն նշաններտ տեսանես, *այսոնք* (Եւ թէ այսոնք չօգտէ՝ զկէսն վերո՛ւր), *այտոր* (Թէ այտոր որձն՝ որ չոր լինի, կէս դրամ տրորեն), *այտորք* (Այտորք են, գոր ճանաչենք բժիշկքն), *այտ* (գր. այդ) *այտոր*, *այտով*, *այտորք*, *այտոց*-այդ (Երբ այտ ճանփնիդ բըռնըւի, ընծայի ի մարդն ցաւ մի), *ան*- անոր, յանորմէ, անով, անոնք, անոնց՝ այն (Վասն անորք (գր. այն) անուանեցին զայս ջերմս կրկնակ, ցանէ ի վրայ ան խթին), *անպէս* (Անպէս ողբոյն ո՛վ կարէ պատմել), *անպիսի* (Բայց պարտ է իշխանաւորաց գանպիսին յերես յերես յանդիմանել և նախատել), *անտէն*-/գրբ. անդէն (Ճանապարհ չեմ շինել անտէն գնալու), *աս* ասոր, ասոնց կամ ասոց, հոգնակի ուղղականը՝ ասոնք (Ձապ Վարդան գիրքս գնեցի, տիեզերայլոյս վարդապետի), *ասոնք* (Յորժամ ասոնք անցանի՛ և երակն այլ ի տեղն գայ), *ատ*-*ատոր*,

³ Տե՛ս *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, հ. Բ, էջ 92-93:

ատոնց (Բժիշկըդ ասացին, թե ատոնց աղուետու երիկամունք պիտի), *դարա* (*յ*) (Շարա հայրն ինձի պարտական է...), *գիսայ* (...ասել ես ու այրել ես գիսայ ու գիսայ), *էդ-այդ* (Թուխ աշվին ծարուր քաշեր, էդ քաֆրիկդ էլեր յօրինաց), *էն-էնոր*՝ այն (...էն օրհնեալ փաշէն ու զամէն ազատ արար: *էննցմէն* (Միմուրք էննցմէն չի վախենար), *էնոր* (էնոր իրաւունքն և դատաստանն ի մեր դարպասն լնի), *էնպէս* (...էլի էնպէս, ի՞նչ արիր, որ էնպէս եղայ), *ընցզուն* (ընցզուն վայելուչ և աղտոր են...), *ինա//ինայ* (Որն ինա հաստ վիզն բարակի, ինայ մարդն սպաննել է զիմ ոք), *ի նարմէ* (Չի գայ ի նարմէ վնաս...), *ի նացմէ* (...նա ու ի նացմէ կու քակտինք), *նացմով- նացամով, նրանցմով* (Ողորմեցէք աղքատաց ու նացմով զմեղքն քաւեցէք), *ինչվայն/ինչվան* (Ինչվայն եփե ցուր որ ի վերայ ըղընզանդ դադրէ...), *իսա, իսայ* (Պարոննայ յք, իսայ գրաստս իմ ...հիմայ գտայ զիքնս հետ իսա մարդոյս), *յայնորէ//յայնորմէ* (Զատ ի յայնորէ որ զնիւթն ի գատ վարես), *յայնկից*, (Բսկ երրորդ ցեղ հալումաշն լինի յայնկից), *նուն-նույն* (Եւ ի նուն ժամայն եթող զնա...): *Նա* դերանունը միջին հայերենում գերազանցապէս գործածվում է անձնական դերանվան գործառույթով: Իբրև երրորդ դեմք մատնանշող ցուցական դերանուններ գերազանցապէս հանդէս են գալիս *էն-էնոր*, *ընցզուն*-այնպիսի, *ինա//ինայ*-այն, *ի նարմէ*-նա-ի եզակի բացառականը, *ինչվայն/ինչվան*-այնքան, այնչափ, *նուն-նույն* բառերը:

Փոխադարձ դերանուններ՝ *գիրար*-իրար (Պլպուլն ի վարդն կարօտնայր, զինչ որ սիրեն երկուք գիրար), *ի մէկ ի մէկ, ի միմենց* (...բայց բաժանելն ի միմենց այս է), *իրար* (Եւ ամրցնեն զվկայությունն նշանովն որ տան իրար), *իրրաց*-իրաց (...պահք և աղօթքն ընկերք են իրրաց), *իրուր*-իրար (...կոպքն ի յիրուր չհասնին...), *մէկմէկի, մէկզմէկ* (Եթէ Երեք և չորս հետ մէկմէկի, ուրախութիւն բերէ սրտի), *մէկզմէկի* (Մէկզմէկի ուտեն ու անսունքն գերնան...), *մէկ ի մէկ//մէկ ի մէկի* (...ն մէկ ի մէկ չնմանին ի գոյն և ցան), (Գունն իսպիտակ լինայ, և շատն ի վիզն մէկ ի մէկի քով), *մէկն մէկի*՝ մէկմէկի (Եւ այս ցան

հակառակ է մէկն մէկի), *միմենց* (Բաժանեցան թիկանց զօթու-
ածքն ի միմենց):

Ինչպէս երևում է օրինակներից, միջին հայերենում հան-
դես են գալիս ոչ միայն գրաբարյան *իրար*, *միմեանց* դերանուն-
ները, այլև նոր կազմությամբ *ի մէկ ի մէկ*, *իրրաց-իրաց*, *իրուր-
իրար*, *մէկմէկի*, տե՛ս *մէկ մէկի*, *մէկզմէկ* (*մէկմէկու*), *մէկն մէկի*
(*մէկմէկի*) նորակազմությունները:

Հարցահարաբերական դերանունները գրաբարում
ունեն սահմանափակ քանակ: Իբրև հարաբերական՝ հանդես է
գալիս *որ* դերանունը: Հարցականները ևս սակավաթիվ են՝ *ո՞,
ո՞վ, ո՞ք, զի՞, զի՞նչ, քանի՞*: Սրանց թիվը բազմապատկվել է՝
որ ո՞ր (*Էն ք որ աղբիւր մի կայ...*), *է՞ք* (*Եք մեծնայ...*), *է՞քի* (*Եքի
մէկ արն ելաւ...*), *ընչու՞* (...օրէնք ընչու ընկալար), *ինչպէ՞ս*
(*Ինչպէս հաճէ աստուած...*), *ինտո՞ր* (*Օով գիշերն ինտո ք տի
մնամ*), *հինչու՞/յինչու՞* (...հինչու զբարբառտ լսեցի...), *հու՞* (*Էդ
հու՞ օտար ձուն, որ կասեն կու շինե...*), *յէ՞ք* (*զք է՞ք*) (Եւ ասա-
ցին, թէ յէ՞ք յուշացար), *յի՞նչ* (*Ժամս հասաւ յի՞նչ կու նայիս*),
յինչի՞ (...անսիրտ յինչի՞ եղար), *յոյորժա՞մ//յորժա՞մ* (*Յոյորժա՞մ
զմասն ի վեր կալնուք...*), (*Յորժա՞մ որ դիւան դնեն*), *յո՞նց*
(*Առանց քեզ յո՞նց ելնում ի հուն*), *յորտե՞ղ* (... *Յորտե՞ղ լինի
մարդն*), *յորտե՞ղ որ*, *յու՞ք* (*Յու՞ք հրամայես ի հոն կենամ*), *նի՞չ*
(*Եհարց Հուլաւունն զխալիֆայն թէ՛ նի՞չ ցեղ կաս*), *որչա՞ք*
(*Որչա՞ք ի մսէն ջուր ելանե...*), *ուսկի՞, ուսկի՞ց* (...*ուսկի՞ց
ելանե*), *ու՞ստ* (Եւ կամ գիտենալ կարես թէ ու՞ստ եկիր...),
ուստի՞ց (...քո ցօղն ուստի՞ց կու լինի), *ու՞ք- ինչպէ՞ս*, (*Ձիմ
ապրիլս ինձ կամեցար, քո աղէկդ ու՞ք մոռանամ*), *օ՞վ-ո՞վ*
(...*օ՞վ կարէ ընդ գրով արկանել*): Սրանց մեծ մասը միջին
հայերենում հանդես են գալիս անվանական հոլովմամբ:

Ստացական դերանունները գրաբարում կազմվում են
անձնական և ցուցական դերանունների սեռական հոլովածնե-
րից: Միջին հայերենում ևս կան նման գործածություններ,
սակայն դրանք ավելի շուտ հիշեցնում են փոխանվանական
կիրառություններ՝ *քոն-դու-ի* փոխանուն սեռականը՝ *քոնը* (Իմ

սիրտս կու սիրե գրեգ, քուն, ա՜մ, ի՞նչ պատճառ կու ձգե), քուկղ-քունը (Ասե գալն, թե իմ գրուցս ու քուկղ զիրար չե առին), քուկն-քու (Ոչ քուկն եմ ի վար գալու, ոչ օտար ծաղիկ գնալու):

Որոշյալ դերանունները գրաբարում սրանք են՝ ամենեքին//ամենեքեան բոլորեքին//բոլորեքեան, ամենայն: Հետագայում ավելացել են նորերը՝ մի մասն էլ գրաբարյան որոշյալների մասնակի փոփոխությամբ՝ ամենքն// ամեքն, ըմեն//ըմենն, (Ամենը ի վրայ եկեք, ...ըմենուն երդիքն ի վար...), ընդամեն//ընդամենն (...ընդամեն անդամս մեր սփռեալ է), հարականցիւր ոք- (Ձի հարականցիւր ոք ազգ քրիստոնէից կամի հակառակութեամբ գՔրիստոս առ ինքն քարշել), յիրք- (գր. իրք) բան, որևէ բան (Որ պիղծ յիրք ի յինք չի խառնի):

Ժխտական դերանուններ գրաբարը չի զանազանում: Միջին հայերենում ոչ ժխտական մասնիկի համադրմամբ անորոշ դերանուններից առաջանում են ժխտականները՝ յոչումէ ոչուվ-ի բացառականը՝ ոչ ոքից (Անդէն պարզերես լինի, յոչումէ իսկի չամաչի), ոչ ով (Քեզ ընկեր և նման ոչ ով չի լին ի), ոչ ոք (Հանցեղ սիասաթ ուներ, որ չուներ ոչ ոք թագաւոր): -Ոչ ժխտական մասնիկը գրաբարում կարող է հանդես գալ տարբեր դիրքերում, այն երբեմն գտնվում է բայից առաջ, երբեմն՝ այլ բառերի մոտ: Աշխարհաբարում կլինի՝ Ոչինչ չի գտնում: Ոչ ոք չի գտնում: Արևմտահայերենում բայը ժխտական մասնիկ չի ստանում՝ Ոչ ոք ըսավ հեգ տղա...:

Անորոշ դերանունները գրաբարում ևս սահմանափակ են՝ ոմն ոք, ոմանք, իմն, ինչ, այլ, միւս: Հետագայում՝ միջին հայերենում, ավելացան նորերը՝ այլպիսի (Պատրուսելն լաւ է քան զայլպիսի տունկ), ընչիկ (Եւ հաւերքն որ պարոնն զճորտն հրաւիրե ընչիկ բան...), իրքս//իրքմը (Եւ նա ասաց, թե ոչ իրքս նշան չունի), մէկ մի (Մէկ մի չի թափե գրե...), մէկն (Որ մէկն ապրի տասն տարի...), մին մին (Ի յայս նեղերոյս մին մին ի դոցանէ յղեղին պատահի), միուս (գրբ. միւս, մեւս) (Մի քան զմիուսն պայծառ շնորհիւ քաջ...): մի քանի (գր. քանի մի) (Մի քանի մաղձ ի մարմնոյն իջուցանէ), մն -մի, (Եւ չկար գիրք

մն...), *ոքիկ* (Մեղացս իմ չարեաց պարտուց չէ բնաւ *ոքիկ* գիտակայ), *քանի մն* (Տո՛ւր *քանի* մն հեղ):

Դերանվանական հոլովման մեջ իբրև հայերենի հոլովման զարգացման ընդհանուր միտում, նկատելի է դերանվանական հոլովման անցումը անվանականի: Կան հոլովածների նույնացումներ: Բացառականի, գործիականի ձևերը գոյականի պես ստանում է կայուն *է* և *ու/վ* վերջավորությունները: Ահա թե ինչու միջին հայերենում այլևս միասնական կատարյալ դերանվանական հոլովում չկա: Գրաբարում՝ *ես-իմ-ինձ-գիտ-յինէն, ինեւ*, միջին հայերենում մինչև հայցականը նույն է, բացառականը՝ *իսմէ* (հայցականի հիմքի վրա ավելանում է *մէ* վերջավորությունը, գործիականը՝ *իսմով*: Սրան զուգահեռ միջին հայերենում գործում են նաև տրականից կազմված ձևեր՝ *ինձմէ, ինձնէ*, (բացառական) և *ինձմով, ինձնով* գործիականի ձևեր: Նմանօրինակ փոփոխություններ կան նաև մյուս դերանուններում: Այսպես՝ *դուք, ձեր, ձեզ, զձեզ, ի ձենջ, ձեւք*, գրաբարյան ձևերի մինչև հայցականը պահպանվում է բացառականը միջին հայերենում դառնում է *ի ձեզմէ, ի ձեզնէ*, գործիականը՝ *ձեզմով, ձեզնով*: Գրաբարի և հիմք լեզվի այս դերանունների *տո, դո, նո*, հիմքերը միջին հայերենում դառնում է *սարա, դարա, նարա*, գրաբարի տրականի *սմա, դմա, նմա* ձևերը ջնջվում են, և տրականը նմանվում է սեռականին: Հայցականը գրաբարատիպ է՝ *գսա, գդա, գնա*: Մնացած հոլովները միջին հայերենում գործածական չեն: Հոգնակիի ձևերը գրաբարատիպ են՝ *տքա, դքա, նքա*: *Այս, այդ, այն* դերանունները հոլովվում են գրաբարի այդ դերանունների ածանցված ձևերի նմանողությամբ: Հայցականը նույնն է՝ *գայս*, բացառականը գրաբարում՝ *յայսմ, յայսմանէ*, միջին հայերենում՝ *յայտրմէ*, գործիականը գրաբարում՝ *այտու, այտուրիկ*, միջին հայերենում՝ *այտրմով*: Այս դերանունները միջին հայերենում, բարբառներում հնչյունափոխությամբ առաջացրել են զանազան տարբերակներ՝ *այտոր, էտոր, իտոր, իդոր, ինոր, ըստորա, ըդրա, ընդրա*: Այս դերանունների հոգնակին մի-

ջին հայերենում ունենում են նոր ձևեր՝ *այսոնք, այդոնք, այնոնք*։

Անորոշ փոխադարձ, հարցական դերանունները միջին հայերենում հանդես են գալիս մասնակի փոփոխություններով։

T. S. Shahverdyan - Pronouns and Pronominal Declension in Middle Armenian .- In all the periods of the Armenian history pronouns have had unique formation and declension paradigms. These features appeared from Endo-European mother language , but in time-period the features have become so different from it, that the systems of grabar, middle Armenian, modern Armenian are considered quite independent ones. Not only the images of words have changed, but also the peculiarities of their formation and declension. Some of grabar declensions have disappeared, the new ones appear with new formations in major cases with nominal declension. A pure pronominal declension have not been preserved in Middle Armenian. It functions up to Accusative Case, in Dative, Ablative, Instrumental cases the pronouns appear in different variations. There are no original records on declined pronouns in Middle Armenian.

Т. С. Шахвердян - Местоимения и местоименческое склонение в среднеармянском языке.- Во всех исторических периодах армянского языка местоимения имели особое формирование и парадигмы склонения. Они сформировались из основного индоевропейского языка, но со временем настолько отделились друг от друга , что грабар, среднеармянский язык и современный армянский можно считать своеобразными системами. Поменялись не только структуры слов, но и особенности их склонения и формирования. Одна часть местоимений в грабаре исчезло, новые появились новыми формированиями – в большинстве случаев номинального склонения. Как базис послужили не только письменные источники, но и словарь среднеармянского языка, где были включены как номинативные, а также склоняемые формы как лексимы. Склонение местоимения в среднеармянском языке не сохранилось. Оно функционирует до винительного падежа. В дательном, аблативном, творительном падежах они функционируют несколькими способами. Склоняемые формы некоторых отсутствуют.

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ ՊԱՀՊԱՆՎԱԾ
ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՅԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՎԵՐԻ ԱՐԺՈՒԹՄՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայերենի բարբառներում պահպանված հնդեվրոպական բայական նախաձևերի լեզվական քննությունը հայ լեզվաբանության մեջ կատարել է Գ. Ջահուկյանը «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության երկրորդ՝ «Տարժամանակյա բարբառագիտություն»¹ մասում: Քննելով հնդեվրոպական բառաշերտի արտահայտությունները հայերենի բարբառներում՝ մեզ համար ուշագրավ դարձան այդ բառերի իմաստավորության հիմունքներն ու դրանց հետ կապված բառերի կապակցական հնարավորությունները, որոնցից սույն ուսումնասիրության մեջ անդրադարձել ենք հնդեվրոպական նախալեզվից միայն բարբառներում պահպանված բայական միավորների առարկայանիշ բառերի հետ ունեցած կապակցական՝ արժույթային առանձնահատկություններին²:

Ըստ բարբառային բայական հնաբանությունների հետ կապվող միավորների բնույթի՝ արժույթը հանդես է գալիս ենթակառույթամբ³ և խնդրառությամբ: Ստորոգառու բարբառային բայական հնաբանություններ չկան, իսկ պարագառությունը նշված բայերի համար պարտադիր չէ: Առնչվելով բայի ենթակառու-

¹ Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 157:

² Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974, էջ 461-462:

³ «Ենթակառույթուն» և «պարագառություն» տերմինները Գ. Ջահուկյանի նորակազմություններից են, որոնք Դ. Գյուլզադյանի հորդորով կիրառում ենք մեկ *ա*-ի ուղղագրությամբ՝ առաջնորդվելով ամփոփման հնչյունավորական օրենքով: Երկու [աա] հնչյունները հայերենի հնչյունական օրենքով պիտի կապակցվեն [յ] ձայնակապով: Այս արտասանությունը, սակայն, նույնքան անախորժ է, որքան երկու [աա]-ի արտասանությունը, որ հորանջ է առաջացնում, և որից խուսափում է հայերենը:

թյանը և խնդրատությանը՝ արժույթային դասակարգումը ենթադրում է բայաստեոի և կապվող բառի դասանիշի հարաբերություն: Ըստ այդմ էլ բարբառային հնաբանությունները դասարակվել ենք հետևյալ խմբերով.

1. Անձնանիշ ենթակառույթյամբ ներգործական սեռի բայեր՝ անձնանիշ խնդրատույթյամբ:

«*Ճանկել, կորզել, խլել*» իմաստով **ǵōl-gh-* բայահիմքից է ծագում *գլփել* բայը Նոր Բայազետի բարբառում՝ կիրառվելով «կորզել, շորթել» իմաստներով. օրինակ՝ *Սմենքը օգտվում են, գլփում են ու գջլում սպառողին* (Խաթ.)⁴:

«*Ծեծել, հրել*» իմաստով **dhen-gh* բայահիմքից են ծագում բարբառներում տարածված *դնզզել* (Շմխ.)⁵, *դնգստել* (Եր., ԹՖ.), *դնքսել* (Լոռ.) բայական տարբերակները, որոնց գեղարվեստական վկայությունը հանդիպում է Գ. Սունդուկյանի երկերում՝ կիրառված իբրև անձնանիշ կրավորական սեռի բայ, օրինակ՝ *Հայ թե կու դնքսվեի, հա* (ԳՍ):

«*Հրելով* կամ *խփելով շարժել, քշել*» իմաստով անձնանիշ **pel-* բայահիմքից ծագած *հլոտել* բայը կիրառվում է Մուշի, Սասունի բարբառներում: Օրինակ՝ *Քեռի Թորոս բունեց գ՛հավիթ պատկեն ու հլոտեց, որ ընցնա թրի տակով* (ՍԾ):

2. Անձնանիշ ենթակառույթյամբ ներգործական սեռի բայեր՝ իրանիշ խնդրատույթյամբ:

«Կտրել» իմաստով *(s)-*kel-* բայահիմքից են ծագում *քեղել* «պոկել, քաղել» (Արբ.), *քեղրդել* «քերել» (Եվդ), *քեղրթել* «պոկել» (Ադ., Մուշ) բարբառային տարբերակները, ինչպես՝ *Ծառին քլէֆը (կեղև) քեղրթեցին*:

«Հատկապես մութ գույների կեղտ, կեղտոտել» իմաստով հնդեվրոպական **mel-* բայահիմքից է ծագում Պուլսի, Պար-

⁴ Օրինակները ներկայացվում են ըստ Հայոց լեզվի բարբառային բառարանի՝ հրատարակված ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կողմից:

⁵ Բարբառների անվանումների համառոտագրությունները ներկայացնում ենք ըստ Գ. Ջահուկյանի:

տիզակի, Եվդոկիայի, Մեբաստիայի բարբառներում տարածված անձնանիշ *մալակոնեղ* բայը՝ «շաղախել, ապականել, կեղտոտել» իմաստներով, որ պահանջում է իրանիշ սեռի և բնության խնդիրներ, օրինակ՝ *Ձեռքերդ ցեխով մալակոնեցիր*: Նույն բայի՝ *վ* ածանցով փոխակերպման ժամանակ կատարվում է ներգործական – չեզոք սեռային փոխանցում, այս դեքում արդեն իրանիշ ենթակայի վերագրումով, օրինակ՝ *Տանձը ձեռքես ինկավ հողով մալակոնվեցավ* (ԱՃ.):

3. Ներգործական սեռի բայերից առանձնանում է «Տրորել, շփել» իմաստով հնդեվրոպական *mer-d- բայահիմքից ծագած Ղարաբաղի բարբառում գործածական *մորտել* բայը՝ «կրծել» նշանակությամբ, որը եզակի ենթակառությամբ վերագրվում է *մուկ* կենդանուն, օրինակ՝ *Մուկը շաքար է մորտում* (ԱՃ.):

4. Անձնանիշ ենթակառությամբ չեզոք սեռի բայեր

«Թույլ լինել, թուլանորթ» իմաստով *(s)lēg-: (s)ləg- բայահիմքից են ծագում *լակվոթել* (Ախլց.), *լկտովել* (Եր.), *լկտուել* (Վան), *լկստովել* (Ար.), *լկգտովել* (Ղրբ.), *լկրտովել* (Կար.), բայերը՝ «շփանալ, լրբանալ, երես առնել» իմաստներով, որոնք, որպես կանոն, վերագրվում են կանանց և աղջիկներին: օրինակ՝ *Ատ հարիֆը գուզե օր աղջիկները ասոր հետ լկրտվեն, հետև պսակվեն* (Խաթ.): Արևմտահայ բարբառներում գործածական է բայի հարակատար դերբայը՝ որոշյի շարահյուսական պաշտոնով, որն ըստ էության անդիմասահմանափակ և արտաժամյա ստորոգում է ենթադրում, ինչպես՝ *Հպարտ ման եկա ...բռռորովին անտարբեր լկրդած կանանց կատարած բռռր փորձերին* (ՎՓ):

«Հապաղել, տարակուսել» իմաստով հնդեվրոպական *mel- բայահիմքից է ծագում Նոր Բայազետի բարբառում *մալամշել* բայը՝ «տխուր-տրտում նստել» իմաստով: Ղարաբաղի, Քնդակի, Կարինի բարբառներում գործածական են նույն բայահիմքով *մալամիշ եղնել* // *գալ* հարադրությունները՝ «դառնազին ողբալ, մղկտալ» իմաստով, օրինակ՝ *Կարօ, գնա, թէզ արի, Յարդ մալամիշ կըլլի* (Ահ): Վերլուծական բայերը իրենց զուգահեռ համադրականների հետ գտնվում են ձևաիմաստային փոխհա-

րաբերությունների մեջ⁶ նույնիսկ տարբեր բարբառներում պատկանելու դեպքում:

5. Կենդանանիշ ենթակառուցյամբ չեզոք սեռի բայեր,
որոնք օժտված են եզակի ենթակառուցյամբ:

«Գնդ(վ)ել, սեղմել» իմաստով *gləb- բայահիմքից է ծագում *կլապտիլ* Չարսանճակի բարբառում գործածական եզակի ենթակառուցյամբ բայը՝ «կծկվել, կլոր ծալվելով նստել (օձի մասին)»: Օրինակ՝ *Օձը կլապտում է*⁷:

«Մանրել, խփել, աղալ» իմաստով հնդեվրոպական *mel- բայահիմքից է ծագում Խարբերդի գավառում *մաղտովի* բայը՝ «ցրվել» նշանակությամբ, օրինակ՝ *Նախիրը մաղտվեցավ*:

«Այծի ձայն հանելը» Երևանի, Ղարաբաղի, Վանի բարբառներում անվանվում է *մկկալ*, որը ծագում է հնդեվրոպական *mek՝ «մկկալ» իմաստով, բնաձայն արմատից, օրինակ՝ *Մեկ իծի պես էլ չես կարող մկրկալ* (ԽԱ):

«Կանչել, գոռալ» իմաստով *gal-, *gleng(h) բայահիմքից է ծագում Ղարաբաղի բարբառում տարածված *կալանչել*, Լոռվա խոսվածքում *կլանչել* բայերը՝ «ոռնալ, լալով գոռալ» իմաստով, որը վերագրվում է հատկապես շուն կենդանուն, օրինակ՝ *Շնե-րը կալանչելով ետ փախան* (Աղ.): Արարատի բարբառում բառը փոխաբերական իմաստով վերագրվում է նաև անձանց՝ «լալագին մղկտալ» իմաստով, օրինակ՝ *Ստամի ցավից կալանչում էր* (Մլխ.):

Կենդանանիշ-անձանանիշ իմաստափոխությունը հատուկ է բարբառներին համեմատության հիմքով: Այսպես է նաև հնդեվրոպական *sul- «ոռնալ, ճչալ, աղաղակել» բայահիմքից կազմված *ուլուլալ* բայը Ախլցխայի խոսվածքում՝ «լալ, գոռալ, կանչել» իմաստներով, վերջինս բացի կենդանանիշներից հաճախ վերագրվում է կանանց հենց համեմատությունների մեջ, օրինակ՝ *Գեշ գայլի նման ուլուլալ* (Ջվիս):

⁶ Գ. Խաչատրյան, *Գրաբարի վերլուծական բայերի արժույթը*, Ե., 2000, էջ 270:

⁷ Շայոց լեզվի բարբառային բառարան, հ. Գ, Ե., 2001, էջ 98:

6. Իրանիչ ենթակառուցյալ չեզոք սեռի բայեր

«Դանդաղ և ծխալով վառվել, ծխալ, մլմլալ» իմաստով հնդեվրոպական *smel բայահիմքից է ծագում *մլալ* բայը Ղազախի բարբառում՝ «ծխալ, մխալ» իմաստով: Նույն բայահիմքի կրկնությամբ *մլմլալ* բայը Ղարաբաղի բարբառում նշանակում է «ծխի՝ հանդարտ բարձրանալը», իսկ Մանիսայի և Սվեդիայի բարբառներում՝ «պլպլալ, առկայծել»:

«Սառչել, մրսել» իմաստով բազմադաս *gel(ə)- չեզոք սեռի բայահիմքից է ծագում Չարսանձակի բարբառին բնորոշ *կաղվել* բայը՝ «սառչել» նշանակությամբ, որը եզակի խնդրառությամբ վերագրվում է *մատնեղ* գոյականին:

Լեզվի պատմական զարգացման ընթացքում բառերը, ենթարկվելով իմաստափոխությունների, դառնում են բազմիմաստ և գործածվում են արժույթային տարբեր արտահայտություններով՝ կապակցվելով տարբեր դասանշություններով օժտված ենթակաների և խնդիրների հետ: Բազմիմաստության դրսևորումները հանդես են գալիս հետևյալ գուգահեռներով:

Ա. Անձնանիչ ենթակառուցյալ կրկնասեռ (ներգործական և չեզոք) բայեր

«Քերել, կաշին հանել, պատռել, ճեղքել» իմաստով *derd- բայահիմքից են ծագում *տարտղնել* (Ասլ., Արբ., Եվդ., Մուշ., Մրգ., Չրս., Պոլ.), *տարտկնել* (Պոլ.) բայերը՝ այլևս «ցրել, ցիրուցան անել, բաժանել, բաշխել, մասնատել» իմաստներով, որոնց իմաստափոխության հիմքում ընկած է կենդանանիչ խնդրառությունից իրանիչ խնդրառության անցման իմաստը: Օրինակ՝ *Հոր կարողութենը Վաչոն սաղ տարտղնեց* (Զ): Խարբերդի բարբառում բայը գործածվում է նաև իրանիչ վերացական խնդրառությամբ՝ «հրապարակել, հայտարարել» իմաստով, ինչպես՝ *Երեք օր իրարու վրա մուներտիկ կանչել կուտա, հրավեր տարտղնելով, որ բոլոր աղջիկները մեկտեղ գան* (Թլկ.): Իրանիչ խնդրառության իմաստափոխության ճանապարհին Սվեդիայի բարբառում ձայնեղների խլացմամբ *տարտոցել* բայը կիրառվում է եզակի խնդրառությամբ՝ նշանակելով «խմորի գանգված-

ները ձևել»: Արաբկիրի, Պոլսի, Ասլանբեկի, Եվդոկիայի, Կարինի, Խարբերդի բարբառներում *տարտղնել* բայը, շարունակելով կապակցվել անձնանիշ ենթակային, գործածվում է նաև չեզոք սեռի իմաստով՝ նշանակելով «ցրվել, ցիրուցան լիել»: Օրինակ՝ *Բնակիչները քիչ-քիչ տարտղնեցան* (Երուխան):

«Հրել, բոթել՝ արթնանալու համար» իմաստով *dhen-th բայահիմքից է ծագում Լոռվա խոսվածքում և Վանի բարբառում *ղնթել* բայը՝ «հրահրել, հրմշտել, փոքր հարվածներ տալ» իմաստով: Որից թերևս առաջացած է համարվում նաև նույն խոսվածքում և Արաբկիրի բարբառում կիրառվող *ղնթոնել* «սպուշ կտրել, շշմել» բայը, որտեղ առկա է բայասեռի փոխանցում՝ ներգործականից չեզոք: Օրինակ՝ *Ղընթոնած գաղ էր, հըմի էլ ջիլիզ դընթոնել էր* (Ջ)

Բ. Իրանիշ ենթակառությանը կրկնասեռ բայեր

«Գետնին սողալ, ցածր» իմաստով հնդեվրոպական *legh- բայահիմքից է ծագում Ալաշկերտի բարբառում կիրառվող *լեզել* բայը՝ «թանձրանալ» իմաստով, օրինակ՝ *Արյունը գետնի վրա լեզեց* (Մլխ): Նույն բայը Կարինի բարբառում եզակի խնդրառությանը նշանակում է «տափակեցնել, հարթել վեզի երկու կողմերը»:

Գ. Անձնանիշ և իրանիշ ենթակառությանը կրկնասեռ բայեր

«Առկայծել, աղոտ փայլել» իմաստով հնդեվրոպական *mer- բայահիմքից է ծագում Պոլսի, Խարբերդի, Կարինի և Նոր-Նախիջևանի բարբառներում անձնանիշ ենթակառությանը *մարել* ներգործական սեռի բայը՝ «հանգցնել» իմաստով, որը կապակցվում է *կրակ* գոյականի հետ կապված առարկաներին: Օրինակ՝ *Ճրագը մարեցին պատկան քնելու* (Ջ): Սեբաստիայի բարբառում այն «դադարեցնել» նշանակությանը կապակցվում է *վեճ, կոփվ* գոյականներին: Սվեդիայի, Ակնի բարբառներում «հալեցնել» նշանակությանը բայը կապակցվում է լուծվող հատկանիշով բնութագրվող գոյականներին, օրինակ՝ *Շաքարը մարել*: Ղարաբաղի բարբառում բայը գործածվում է կենդանանիշ խնդրառությանը՝ «Ազատ արձակել (կաթ ուտելու համար)» իմաստով, ինչպես *Գառ-*

ները մարեցին: Նույն բայը՝ չեզոք սեռի իմաստով նշանակում է նաև «նվաղել, թուլանալ», օրինակ՝ *Նարդիկը խնդալեն կը մարեր* (ԳԶ): Չեզոք սեռի իմաստափոխությամբ բայը վերագրվում է նաև իրանիշ **ձայն** գոյականին: Փոխաբերական նշանակության հիմքով Թիֆլիսի, Կարինի բարբառներում *մարել* բայը գործածվում է «դադարել, ընդհատվել» նշանակությամբ վերագրվելով *կյանք* գոյականին:

Դ. Իրանիշ և անձնանիշ ենթակառությամբ չեզոք սեռի բայեր

«Ուռչել» իմաստով *phamph- բայահիմքից է ծագում Ղարաբաղի բարբառում տարածված *փմփխել* եզակի ենթակառությամբ չեզոք սեռի բայը՝ «խմորի բարձրանալը» իմաստով, օրինակ՝ *Ծնորը թթվել փմփխել է, սկսիր թխել (Մլխ.)*: Նույն բայահիմքի *փմփռնել* տարբերակը փոխաբերական իմաստով վերագրվում է նաև անձնանիշ գոյականներին՝ «գիրանալ» իմաստով:

Ե. Կենդանիշ և անձնանիշ ենթակառությամբ ներգործական սեռի բայեր

Հնդեվրոպական «ցատկել, շուրջը ուտոստալ, պտտվել» իմաստով *(s)ker-, -d- չեզոք սեռի բայահիմքը, պահպանվելով հայերենի տարբեր բարբառներում, ենթարկվել է հնչյունական և իմաստային փոփոխությունների: Վանի բարբառում *ցոթկել*, Արաբկիրի, Նոր Բայազետի, Կարինի, Մուշի, Սոկսի բարբառներում *ցոթել* կամ *ցոտել* բայերը կենդանանիշ են և նշանակում են «ցնկնել», օրինակ՝ *էլըմ տեսա, զարմանալի գելըմ տեսա, ինքը ցոթեց, ինքը կերավ, գլոխն առավ ու կորավ* (Հժհ.): Կենդանանիշ երթակառության դեպքում բայը ենթադրում է նաև կենդանանիշ խնդրառություն: Անձնանիշ ենթակառության դեպքում՝ հիմանականում իրանիշ խնդրառություն և միայն Համշենի բարբառում՝ նաև անձնանիշ խնդրառություն: Համշենի, Պուլսի, Նոր Նախիջևանի, Եվդոկիայի բարբառներում *ցրթել* բայը նշանակում է «թափել, ցրել, ցիրուցան անել» օրինակ՝ *Ցրած ճուրը դեղը չի լըլուլ* (ասացվածք): *Ելլիմ լեռը, ցրթիմ սիսեռը* (Հժհ.): Տիգրանակերտի բարբառում բայը եզակի խնդրառությամբ կապակցվում է ջուր գոյականի՝ «ջուր ցանել, սրսկել» նշանակությամբ:

Նույն բայի բազմապատկական ածանցով տարբերակներն են *ցրքսեղ* (ՆՆ, Հմշ.), *ցրքստեղ* (Հմշ.) *ցրքսել* (Կր. (Ջվխ.) բայերը՝ «կաթիլ-կաթիլ թափել, կաթկթեցնել, թափիթփել» իմաստներով, օրինակ՝ *Ճուրը ցրքստից* (Ջ): *Ալուրը դարարին վրըն ցրքստից* Կարինի բարբառներում բայը կիրառվում է փոխաբերական իմաստներով, մի դեպքում՝ Ախլցխայի խոսվածքում, իրանիշ խնդրառությամբ իբրև անարգական բառ կիրառվում է «խմել, կոնծել» իմաստով. մյուս դեպքում՝ Ջավախքի խոսվածքում, նաև անձնանիշ խնդրառությամբ՝ «ապօրինի զավակ ծնել» իմաստով:

Հնդեվրոպական բայական նախաձևերը պահպանվել են հայերենի բոլոր բարբառներում, դրանց մի մասը ընդհանրական են, մյուս մասը՝ եզակի: Հնդեվրոպական նախաձևերի արժութային առանձնահատկությունների քննությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու բարբառներին հասուն կելզվամտածողության առանձնահատկությունների մասին:

Petrosyan Lilit - Verbal Peculiarities of Indo-European Verbal Proto-forms Preserved in Armenian Dialects. - The authors of the study have touched upon the verbality peculiarities of verbal units preserved in dialects from Pre-Indo-European in relation to subject denoting words. According to the nature of the units associated with dialectal archeology, verbality presupposes either a subject or an object. Thus, the authors of the study have classified dialectal archaic words in term of class and verbality.

Throughout the historical development of language, the meanings of words are subject to changes. They obtain different meanings, are used in different verbality expressions, and are combined with subjects and objects belonging to different categories.

Indo-European verbal proto-forms are preserved in all dialects of the Armenian language. Some of them are general, while others are sporadic. The examination of the currency peculiarities of Indo-European proto-forms gives an idea of the specifics of language and thought typical of dialects.

Петросян Лилит - Особенности вербальности индоевропейских вербальных протоформ, сохраняемых в армянских диалектах. - Я данном исследовании изучаются особенности вербальных единиц, сохранившихся от праиндоевропейского языка только в диалектах, в отношении к предметным словам. По характеру единиц, связанных с диалектической археологией, вербальность предполагает либо предмет, либо объект. Таким образом, диалектические архаические слова классифицированы по классу и вербальности.

На протяжении исторического развития языка значения слов меняются, слова приобретают различные значения, используются в различных вербальных выражениях в сочетании с подлежащим и дополнением, принадлежащим к разным классам.

Индоевропейские вербальные протоформы сохраняются во всех диалектах армянского языка. Некоторые из них являются общими, а другие - спорадическими. Изучение особенностей вербальности индоевропейских прото-форм дает представление о конкретных особенностях языкомышления, характерного для диалектов.

**ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՈՐՈՇ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ
ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ**

Նախիջևանի տարածքը, պատմականորեն ընդգրկելով Մեծ Հայքի երեք կենտրոնական նահանգների խաչմերուկը՝ Վասպուրական աշխարհի Գողթն և Նախճավան, Սյունիք աշխարհի Ճահուկ-Շահապունիք և Երնջակ, Այրարատ աշխարհի Շարուր գավառները, հազարամյակներ շարունակ բնակեցված լինելով տեղաբնիկ հայ բնակչությամբ, վաղնջական ժամանակներից ներառել է հայաշունչ անվանումներով բնակավայրեր, ամրոցներ, լեռներ, գետեր և աշխարհագրական այլ օբյեկտներ:

Անգամ այսօր, երբ Ադրբեջանի կողմից հետևողականորեն իրականացվող հայաստյաց քաղաքականության հետևանքով ոչնչացվում և խեղաթյուրվում են հայկական մշակույթն ու պատմությունը, այնուամենայնիվ որոշ տեղանուններ իրենց մեջ դեռևս պահպանում և թաքցնում են հայկական ավանդական անունները:

Նախիջևան քաղաքի անվան ստուգաբանությանը անդրադարձել ենք առանձին հոդվածով¹: Սույն հոդվածի շրջանակներում հնարավորինս կանդրադառնանք տարածքի մյուս տեղանունների ստուգաբանությանը:

ԱԲՐԱԿՈՒՆԻՍ – Ըստ ավանդության՝ հայոց Արբակ նահապետն է հիմնադրել պատմական նշանավոր այս ավանը, և այս հիմքով ստուգաբանության համաձայն՝ բնակավայրի անվանումը բխում է նահապետի անձնանունից²: Նախապես ունենա-

¹ Ա. Վարդանյան, «Նախիջևան» տեղանվան ստուգաբանության շուրջ - Գ. Ղափանցյանի 130-ամյակին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2017, էջ 367-374:

² Ա. Այվազյան, Նախիջևանի պատմաճարտարապետական հուշարձանները, Ե., 1978, էջ 42-43:

լով **Արբակունիք** ձևը և հետագայում կիրառվելով հայցականաձև՝ դարձել է **Արբակունիս**, այնուհետև բաղաձայնների դրափոխությամբ՝ **Արբակունիս**:

ԱԳՈՒԼԼԻՍ – Գողթնի հռչակավոր ոստան Ագուլիսի անվան վերաբերյալ զոկերեն չափածո մի ավանդազրույց կա³, ըստ որի՝ հին ժամանակներում, երբ չի եղել գիր ու դպրություն, զոկերն աստվածացրել են լույսը: Եվ Ագուլիսը եզերող լեռների վրա մի օր լույս է հայտնվել, որ չանսալով բնակիչների ոգևորված բացականչություններին, պտտվել է ողջ աշխարհով, ապա եկել, կանգ առել Գինդար լեռան կատարին՝

Ալանգյյզ սարից մույն լուս ւն ակած,

Գինձակու գըլիով ակած, հունց կահած,

Յէտօվ Գինդարու գիլիին ւն կայնամ,

Կանչամ ըն. «Ի՛կ, լու՛ս», – սայմիշ չի նարամ:

Լուսը Գինդարուց նելիս ւն, նելիս,

Արար-աշխարքը պըտուտ ւն գելիս,

Նուր քօռ ու փէշման ալ հիտ ա դառնամ,

Գելիս Գինդարու կըտարին կայնամ:

Բերկրանքից «յոթ գազ եղած» ագուլիսցիները կանչել են. «Ե՛կ, լու՛յս»: Եվ քաղաքակրթության խորհրդանիշ լույսը եկել, մտել է Ագուլիս՝

Չոկարը տիսնամ, շօտ ըն ըրխալիս,

Յուրաց ըշխարքին ըրայնակ տալիս,

Էխտը գօզ նիլնամ, կանչամ ըն. «Ի՛կ, լու՛ս»,

Լուսը գելիս ւն, մըտում Ըգուլիս:

Մեկ այլ ավանդության համաձայն՝ Ադամն ու Եվան դրախտից երկիր արտաքսվելուց հետո այստեղ են դիմավորել առաջին այգաբացը, և այս վայրը կոչվել է «Ակնի լուս» («այքի

³ Ս. Մըղըմբնաց, *Ըգուլսց անուլը*, *Զօկի ճրօյրը*, թիվ 1, Թիֆլիս, 1919:

լույս»)⁴: Այլ վարկածի համաձայն՝ բնականունն առաջացել է «Այգեռք լի» («այգիներով լի») ձևից⁵: Մտուգաբանության մեկ այլ տարբերակում Ագուլիսի նախնական ձև է համարվում **Արգուլիքը**: Վերջինս, ինչպես նաև **Արգիշտի** անձնանունը կրում են **արգաստ** («խաղողենու էտած ճյուղ») բառի **արգ** արմատը⁶:

Թուրք-աղբբեջանցիները կիրառում են **Ագուլիսի** հնչյունափոխված **Ծylis ձևը** (Վերին Ագուլիս՝ Aşağı Ծylis, Ներքին Ագուլիս՝ Yuxarı Ծylis):

ԱԶՆԱԲԵՆԴ – Գյուղանունը անցյալի պատմաաշխարհագրական, ազգագրական, տեղագրական բնության ուսումնասիրություններում⁷, հանրագիտարաններում⁸ հիմնականում հիշատակվում է **Ագնաբերդ** ձևով, որը միանշանակ կարելի է ստուգաբանել գրաբարի **ագն** («սերունդ, ցեղ, տոհմ») և **բերդ** արմատներով: Մակայն ավելի ուշ շրջանառության մեջ է դրվել նաև **Զնաբերդ** սխալ ձևը (ըստ երևույթին, լսելով բարբառային **Ըգնապեռթ** արտասանությունը, գրաբարի **զ** նախդիրով ձևերի գրության և արտասանության համաբանությամբ, գրավոր տեքստերում **Զնաբերդ** է գրվել **Ըգնաբերդ** կարդալու միտումով (ինչպես՝ գգինի-ըգգինի, զհաց-ըզհաց և այլն), սակայն բնականաբար կարդացվել է **Զընաբերդ** (ինչպես գմուռս-գըմուռս, զնդան-գընդան, զնգալ-գընգալ և այլն): Այնինչ Ագնաբերդի խոսվածքում (Վայոց ձորի միջբարբառ)⁹ անշեշտ **ա** ձայնավորը վերածվում է **ը**-ի (ինչպես առավոտ > **ըռավոտ**, արածել > **ըրածիլ**, արիշտա > **ըռըշտսն**, Արիստակես > **Ըռըստակես**, Աղավնաձոր > **Ըղնաձոր** և այլն): Ագ-

⁴ Ա. Այվազյան, *Ագուլիս*, Ե., 1984, էջ 10-12:

⁵ Ղ. Ալիշան, *Միսական*, Վենետիկ, Ս. Ղազար, 1893, էջ 324:

⁶ Լ. Հովհաննիսյան, *Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն* (3-րդ մաս), Ե., 2018, էջ 15:

⁷ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 505:

⁸ *Հայկական սովետական հանրագիտարան, հ.1*, Ե., 1974, էջ 119-120: Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Հ. 1*, Ե., 1986, էջ 48:

⁹ Ա. Վարդանյան, *Վայոց ձորի միջբարբառը*, Ե., 2004:

նաբերդն էլ դարձել է **Ըզնապետթ**, որից բխում է վերոհիշյալ **Չնաբերդ** ձևը:

Խորհրդային շրջանում ադրբեջանցիները, միտումնավոր խեղաթյուրելով գյուղի անունը, պաշտոնապես ներկայացնում էին **Յznəbyurd** ձևով և «ստուգաբանում» որպես **Յziz Nəbinun yurdu**՝ «Ազիզ Նաբիի ամառանոց»: Սակայն հետագայում, իրենք էլ չհավատալով սեփական հորինվածքին, գյուղը վերանվանեցին **Calxanqala**: Զավեշտալին այն է, որ սա էլ իրականում ոչ այլ ինչ է, քան գյուղի տարածքում գտնվող **Ճահուկ բերդի** (Ճահկաբերդի) պարսկերեն **جاده خانقاه** (Չալխանդալե) անվանումը:

ԱՊԱՐԱՆՔ կամ ԱՊԱՐԱՆՆԵՐ – Պատմահայր Մովսես Խորենացու վկայությամբ՝ հայոց Տիգրան Երվանդյան արքան, հավատալով մարաց թագավոր Ածդահակի բարեկամության խոստումներին, իր քույր Տիգրանուհուն կնության է տալիս նրան: Սակայն, Ածդահակի նենգամիտ նպատակներն ի հայտ գալուց հետո, Տիգրանը, դաշնակցած պարսից Կյուրոս Մեծ թագավորի (Աքեմենյան արքայատոհմի հիմնադիրը) հետ, կռվում սպանում է Ածդահակին, ապա Տիգրանուհուն իր գերդաստանով և սպասավորներով բերում բնակեցնում է հատուկ նրա համար կառուցված Տիգրանակերտ ավանում¹⁰:

Այս **Տիգրանակերտը**, որ Արտաշեսյան Տիգրան Մեծի կողմից Ադձնիքում հիմնադրված համանուն հռչակավոր մայրաքաղաքից հին է հինգ դարով, հայ պատմագրության մեջ հիշատակվել է նաև **Տիգրանավան**, ավելի ուշ՝ **Ապարանք**, **Ապարաններ** ձևերով: Վերջինից էլ ակնհայտորեն բխում է պատմական ավանի տեղում գտնվող՝ ներկայիս ադրբեջանաբնակ գյուղի **Թոնոնիար** աղավաղված անունը:

ԱՌԻՆՁ – Հին հայերենի **առիճ** («գյուղ») բառանունն է¹¹, որտեղ տեղի է ունեցել **և** հնչյունի հավելման և խուլի ձայնեղացման հնչյունափոխական երևույթներ: Այս հիմքից ածանցված

¹⁰ Մ. Խորենացի, *Պատմութիւն Հայոց*, Ե., 1981, էջ 98:

¹¹ Հ. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան*, հ. 1, Ե., 1926, էջ 258:

բազմաթիվ տեղանուններ են գոյություն ունեցել պատմական Հայաստանի ողջ տարածքում (**Հառիճ**, **Ձիթառիճ**, **Մկնառիճ** և այլն): Այս գյուղանունը հասարակ անվան հատկանվանացման օրինակ է, ինչպես **աւան** հասարակ անունից են բխում Երևանի թաղամասը դարձած՝ նախկինում քաղաքին մեծակա **Ավան** գյուղը, այսօրվա Արագածոտնի մարզի, ինչպես նաև պատմական Վասպուրականի համանուն գյուղերը: Ի դեպ, համանման ծագում ունեն նաև տարածքի **Գյաղ** (**գյուղ** բառի բարբառային **գնղ** ձևն է) և **Քաղաքիկ** (արմատը **քաղաք** բառն է) գյուղանունները:

ԱՍՏԱՊԱՏ – Նշանավոր այս գյուղի անունը, ըստ ավանդության, կապվում է Վարդան Մամիկոնյանի՝ Ավարայրի դաշտում զոհվելու, նրա մարմինը գյուղի եկեղեցիներից մեկում պատանելու և մի գիշեր այնտեղ պահելու հետ¹² (հետագայում Մուրբ Վարդան անունն է կրել այդ եկեղեցին): Ըստ այս վարկածի՝ **Աստապատ** տեղանունը կապվում է գրաբարի **աստ է պատեալ** («այստեղ է պատանվել») բառակապակցության հետ: Միանգամայն չմերժելով դասականացած այս ստուգաբանությունը՝ հնարավոր ենք համարում, սակայն, բնականվան **Աստվածապատ** ձևից բխած լինելը, մանավանդ որ բարբառում առկա է Աստուած > **Աստած** հնչյունափոխությունը¹³, իսկ **Աստածապատը** հեշտությամբ կարող էր ամփոփվել և դառնալ **Աստապատ**: Ի դեպ, զարմանալիորեն այս նույն համաբանությամբ իրանական آباد یزدان **Յազդանաբադ** («Աստվածաշեն, Աստվածապատ») տեղանունը պարսկերենում է կրճատվել, դարձել آباد یزدان **Յազդաբադ**:

ԲԻՍ – Ստեփանոս Օրբելյանի հայտնի ցուցակում հանդիպում է **Բուստ** ձևով¹⁴: Դատելով գյուղի գեղատեսիլ դիրքից,

¹² Ե. Լալայեան, *Նախճատան կամ Նախիջեւանի ոստիկանական շրջան*, 1901, Թիֆլիս, էջ 48: Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., Հ. 1, Ե., 1986, էջ 342-343:

¹³ Պ. Պողոսյան, *Աստապատ. արաքսամերձ հայաշխարհ*, Ե., 2005, էջ 9:

¹⁴ Ս. Օրբելյան, *Մյունիքի պատմություն*, Ե., 1986, էջ 259, 403:

գյուղանվան նախնական ձև կարելի է ընդունել հենց **Բուստը**, որը գրաբարում ունի «մարջան» իմաստը:

ԳԻՆԴԱՐ – Ագուլիսը շրջապատող լեռներից է: Ականջօղի տեսք ունեցող այս լեռան անունը հայերեն գինդ բառի հոգնակին է (բարբառով՝ **գինդնիր** («գնդեր»):

ԳՈՂԹՆ – Հնագույն այս գավառանունը Գրիգոր Ղափան-ցյանը համարում է **գողթ** ցեղանունից բխող տեղանուն¹⁵: Մարտիրոս Գավուրքյանը ծագումնաբանական կապ է տեսնում **Գողթըն** գավառանվան և շոտլանդական **Wales**, գալլիական **Gaule** երկրանունների, հայկական **գողթ** և կելտերի **celt**, գալլերի **geltic** (**gaulois**) ցեղանունների միջև¹⁶: Այս գավառանունն է հավանաբար թաքնված ժամանակին կաթոլիկություն ընդունած, ապա մահմեդականացած՝ երբեմնի հայաբնակ **Kilit** գյուղի անվան մեջ:

ԽՐԱՄ – Պատմական նշանավոր այս քաղաքի անվանումը նույնպես ակնհայտորեն ստուգաբանվում է գրաբարի **խրամ** («ճեղքվածք, խանդակ») բառով, որը հաստատում է նաև քաղաքատեղիի աշխարհագրական դիրքը: Պարսիկները, հետագայում նաև ադրբեջանցիները, բնակավայրն անվանել են **Նեիրամ**, քանի որ 7-8-րդ դարերի արաբական արշավանքների հետևանքով լիովին ավերվել և հավանաբար այդ շրջանում էլ ստացել է ܡܚܘܘܢ (Նա Խրամ, պարսկերեն՝ բառացի «ոչ Խրամ») անունը:

ԽՈՒՐՄ, ԽՈՒՐՄՍ կամ ԽՈՒՐՑ – Գողթնի՝ Ագուլիսի բարբառով խոսող ութերորդ՝ ամենասակավաթիվ բնակչությամբ գյուղն է եղել¹⁷, որ, ի դեպ, տեղադրված է եղել խոր ձորերում: Կարծում ենք, որ գյուղանունը բխում է հայերեն **խորք** բառի հայցական հոլովի **խորս** ձևից, որը ենթարկվել է Ագուլիսի բարբառի

¹⁵ Գ. Կապանյան, *Историко-лингвистическое значение топонимии Древней Армении*, Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ, 1940, հ. ԺԴ, էջ 382-385:

¹⁶ Մ. Գալուզճեան, *Արմենիա, Սուրբարտու եւ Սումեր. Հնդեւրոպական հայրենիքը եւ Միջագետքը*, Պեյրուֆ, 1988, էջ 133-151:

¹⁷ Հ. Աճառեան, *Քննություն Ագուլիսի բարբառի*, Ե., 1935, էջ 8: Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., Հ. 2, Ե., 1988, էջ 827:

o > **ou** հնչյունափոխությանը (ինչպես խոտ > **խուտ**, ծոց > **ծուց**, գործ > **գուռծ**, փոթ > **փունթ** և այլն): Բնականվան երկրորդ տարբերակում բառավերջում հավելվել է **տ** աճականը (ինչպես Մալմաս-**Մալմաստ**, Մուքիաս-**Միքիաստ** և այլն), իսկ երրորդ տարբերակում առկա է հնչյունի բարդացման հնչյունափոխական երևույթ (u > g):

ԿԶՆՈՒՏ կամ ԿԶՆՈՒԹ – Կարծում ենք՝ բաղկացած է հայերեն **կեզն** («թեք, գառիվայր»)՝¹⁸ արմատից և **ուտ** վերջածանցից (բառացի՝ «թեքուտ»): Համանուն բնակավայր է եղել նաև Գեղարքունիքում: Բնականվան երկրորդ տարբերակում բառավերջի խուլը ձայնավորից հետո վերածվել է շնչեղ խուլի (տ > **թ**), ինչպես Մմբատ > **Մմբաթ**, Արարատ > **Արարաթ** և այլն:

ՃԱՀՈՒԿ – Նշանավոր այս ավանի, ինչպես նաև համանուն լեռան, բերդի և գետի անունները կարելի է ստուգաբանել կա՛մ հայերեն **ճահուկ** («խումբ, ջուկ»)՝¹⁹ բառով, կա՛մ գրաբարի **ճահ** («վայելչական, պատշաճ, հարմար»)՝²⁰ արմատով և **ուկ** ածանցով: Պարսիկներն ու ադրբեջանցիները գյուղն անվանում են **Ջահրի**:

ՄԵԾՈՓ – Նշանավոր այս գյուղի անվանումը ակնհայտորեն բաղկացած է **մեծ** և հինհայերենյան **ոփ** («փոս, վիհ») արմատներից: Այս վարկածն է հիմնավորում նաև գյուղի աշխարհագրական դիրքը: Գյուղանունը գրավոր աղբյուրներում հիշատակվել է նաև **Օծուփ**, **Ածուփ**, **Ածափ**՝²¹ ձևերով: Առաջինը հավանաբար ժողովրդական ստուգաբանությամբ **Աւձուփ** («օձի փոս») դարձած տարբերակի հնչյունափոխված (ձ > **ծ**) ձևն է, երկրորդը գրավոր աղբյուրներում **ւ**-ի բացթողման, երրորդը՝ ձայնավորների ներդաշնակության արդյունք:

¹⁸ **Հ. Աճառեան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. 2, Ե., 1926, էջ 581:

¹⁹ **Հ. Աճառեան**, նշվ. աշխ. հ. 3, Ե., 1926, էջ 178: *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ. 2, Վենետիկ, Ս. Ղազար, էջ 167:

²⁰ *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ. 2, Վենետիկ, Ս. Ղազար, էջ 167:

²¹ **Ս. Օրբելյան**, *Մյունիքի պատմություն*, Ե., 1986, էջ 290:

ՄԵՍՐՈՊԱՎԱՆ – Գյուղը հայտնի է նաև օտար **Նասրվազ** և աղավաղված **Մարվանիս** անուններով: Պատմական **Մեսրոպավան** գյուղն է, որի մերձակա քարայրներում ճգնել է Մեսրոպ Մաշտոցը՝ հայոց գրերի ստեղծմանը նախորդող տարիներին²²:

ՅԱՐՄՁԱ – Երվանդ Լալայանը այս գյուղանունը ստուգաբանում է որպես թուրքերեն **Yarım can** (Յարըմ ջան՝ «Կես մարմին») բառակապակցությունից բխող անվանում²³: Այս ստուգաբանության հիմքում մի վարկած կա, ըստ որի՝ այնքան շատ հարկեր ու տուրքեր են վճարել գյուղի աշխատասեր բնակիչները, որ նրանք «կես մարմին» են դարձել: Հնարավոր ենք համարում, սակայն, գյուղանվան կապը մերձակա **Երնջակ** գավառի անվան հետ:

ՆՈՐՄ – Հայերեն **նոր** բառի հոգնակի հայցականն է (նորք-**նորս**): Տեղեկություններ կան, որ այս գյուղից են ժամանակին Երևանի մերձակայքում գտնվող **Չոլմակչի** գյուղ տեղափոխվել մեծաթիվ հայեր և գյուղը **Նորք** վերանվանել²⁴, որն այսօր Երևանի համանուն թաղամասն է:

ՇԱՀԱՊՈՆՔ – Համանուն գավառի, բերդաքաղաքի և գետի անունը բխում է բերդի հիմնադիր Շահապ իշխանի և Շահապունի իշխանական տոհմի անունից²⁵, իսկ բնականվան հայցական հոլովի **Շահապոնս** ձևից բխում է աղբբեջաներեն **Şahbuz** անվանումը:

ՇՈՌՈԹ, ՇՈՌՈՏ, ՇՈՌՈՒՏ կամ ՇՈՒՌՈՒԹ – Գյուղանունը բխում է կա՛մ հայերեն **շոռ** («մաճնից պատրաստվող պանրանման ուտեստ») արմատից և **ուտ** կամ **ոտ** ածանցից, կա՛մ

²² Ե. Լալայեան, *Գողթն. Օրորութադի կամ Վերին Ագուլիսի ոստիկանական շրջան*, Թիֆլիս, 1897, էջ 86:

²³ Ե. Լալայեան, *Նախճատան կամ Նախիջեւանի ոստիկանական շրջան*, 1901, Թիֆլիս, էջ 58:

²⁴ Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., Ն. 4, Ե., 1998, էջ 33:

²⁵ Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., Ն. 4, Ե., 1998, էջ 51:

պարսկերենից փոխառյալ **շուռ** (شور «աղի») բառից և նշված ածանցներից մեկից:

ՋՈՒՂԱ – Ղազար Ա Ջահկեցին հիշատակում է, որ Անիի կործանումից հետո նրա բնակիչների մի մասը Ջուղա է տեղափոխվել, և քաղաքն իր անունն այդ պատճառով է ստացել՝ որպես Անիի «ճյուղ ա»²⁶: Մակայն պատմահայր Մովսես Խորենացին դեռևս 5-րդ դարում է վկայել նշանավոր այս ավանի անունը²⁷, ուստի բնականունը ստուգաբանված համարելու հիմքեր չկան: Պարսկերենում այս տեղանունն ունի جلفا **Ջոլֆա** ձևը, թուրքերենում՝ **Culfa**:

ՌԱՄԻՍ – Գորթնի հյուսիսային մասում տեղադրված այս գյուղի բնակիչների մասին Ագուլիսում և շրջակա գյուղերում բազմաթիվ զվարճախոսություններ էին տարածված, որոնցում ռամիսցիներին կատակով համարում էին լեռնական գեղջուկներ: Ուստի, գյուղանվան նախնական ձև կարելի է համարել **Ռամիկ-քը**, որտեղ տեղի ունեցած **կք > ք** միաձուլումից և հայցականաձև կիրառումից առաջացել է **Ռամիս** ձևը:

ՎԻՇԱՊԱՍԱՐ, ՕՉԱՍԱՐ կամ ԱԺԴԱՆԱԿԱՆ – Բնության հրաշալիք համարվող այս լեռը նաև Նախիջևանի հայության խորհրդանիշն է, որի շուրջ ամենահեռավոր ժամանակներից ի վեր հյուսվել են բազում ավանդազրույցներ և առասպելներ, որոնց մի մասը մեր օրերն է հասել²⁸: Հայկական սկզբնաղբյուրներում լեռնանունը հիշատակվել է **Վիշապասար, Օձասար, Աժդանական, Բոլու, Հարս ու փեսա** և այլ ձևերով²⁹, պարսիկներն անվանել են کوه دك **Քուհե Դնիակ**, کوه زک **Քուհե Զնիակ**,

²⁶ **Ղ. Ջահկեցի**, *Գիրք Սստուածարանական, որ կոչի Դրախտ ցանկալի*, Կ. Պոլիս, 1735, էջ 633:

²⁷ **Մ. Խորենացի**, *Հայոց պատմություն*, Ե., 1961, էջ 132-133:

²⁸ **Ա. Ղանալանյան**, *Սվանդապատում*, Ե., 1969, էջ 11-12: **Ա. Վարդանյան**, «Նախիջևան» տեղանվան ստուգաբանության շուրջ, էջ 370-371: **А. Варданян**, *Зов Вишапасара. статьи, эссе, рассказы*, Е., 2010, стр. 11-19.

²⁹ **Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան**, նշվ. աշխ., Հ. 2, Ե., 1988, էջ 510-511:

արաբները՝ اجدن اكان Աջդանական, թուրքերը՝ **Planlu, Plandağ, Yilandag, Plandağ, Haçadağ** և այլն: Լեռնանվան գրեթե բոլոր տարբերակները բխում են **վիշապ** կամ **օձ** արմատից: Թուրքական տարբերակներում արմատը **yilan** կամ **ilan** («օձ») բառն է: **Աժդանականը** մարաց (պարսկերեն՝ اژدها մար («օձ») թագավոր Աժդահակի (պարսկերեն՝ اژدها ایلی) («վիշապ») անունից է բխում: Կասկած էին հարուցում միայն **Բոլու** ձևը և ամենայն հավանականությամբ նրանից ածանցյալ **Փլանդաղի** առաջին բաղադրիչը: Սակայն սեպագրագետ Հովհաննես Կարազյոզյանը, հիմնվելով ուրարտագետ Սիմոն Հմայակյանի դիտարկումների վրա, պատմական Երնջակ գավառի Խոշակունիք բնակավայրի տարածքում երկրաբան Վալերի Իգումնովի կողմից 1988 թ. հայտնաբերված՝ Իշպուինեի և Մինուայի Ք. ա. 9-րդ դարի ժայռավոր արձանագրություններում հանդիպող **Բուլուա** լեռնանունը նույնացնում է Վիշապասարի **Բոլու** անվան հետ, որի հիմքում հայերեն **պալ** («քարաժայռ») արմատն է³⁰: Վերջինս Հ. Աճառյանը բխեցնում է հնդեվրոպական նախալեզվի ***bal** («մեծ, ուժեղ») արմատից³¹: Ուշագրավ է, սակայն, որ **պալ** արմատով կազմված տեղանունները զարմանալիորեն առնչվում են վիշապի պաշտամունքի հետ. Օրինակ՝ և՛ Վասպուրական աշխարհի, և՛ Տարոն աշխարհի համանուն Պալունիք գավառները վիշապակերպ աստվածությունների պաշտամունքի հայտնի կենտրոններ են եղել³²:

SUՊԱՆԱՄԱՐ կամ ՆԱՎԱՄԱՐ – Գողթն գավառի հյուսիսում տեղադրված այս լեռան անունը կապվում է համաշխարհային ջրհեղեղի և Նոյ նահապետի հետ: Ըստ ավանդության՝ այս լեռանն է դիպել տապանը՝ մինչև Մասիսին հասնելը:

³⁰ Վ. Իգումնով, Հ. Կարազյոզյան, Ս. Հմայակյան, *Օձասարի սեպագիր արձանագրությունը, Պատմաբանասիրական հանդես, թիվ 1*, Ե., 1997, էջ 196-197:

³¹ Հ. Աճառեան, *Հայերեն արմատական բառարան, հ. 4*, Ե., 1926, էջ 4:

³² Վ. Իգումնով, Հ. Կարազյոզյան, Ս. Հմայակյան, *նշվ. աշխ.*, էջ 197:

ՅՂՆԱ – Գողթնի նշանավոր այս գյուղի անունը նույնպես ավանդաբար կապվում է քաղաքամայր Անիի հետ: Ամենայն հավանականությամբ ժողովրդական այս ստուգաբանության հիմքում **Ցեղն Անիի** բառակապակցությունն է, որը հետագայում ստացել է ամփոփված **Ցղնա** ձևը: Սակայն, դատելով հենց միայն տեղական բարբառի խիստ առանձնահատկություններից, բնականվան ստուգաբանության այս վարկածը հիմնավոր համարել չենք կարող:

ՓԱՌԱԿԱ – Անշուշտ, գյուղանվան նախնական ձևը **Փառականն** է («փառավոր» նշանակությամբ), հետագայում բառավերջի **ն** հնչյունի անկմամբ առաջացել է **Փառակա** ձևը: Ի դեպ, **Փառական** անվանումով դաշտ, քաղաք և այլ աշխարհագրական անուններ են հայտնի պատմական Հայաստանի տարածքում³³:

ՓՈՐԱԴԱՇՏ կամ ՓԱՐԱԴԱՇՏ – Աշխարհագրական դիրքով պայմանավորված այն բազմաթիվ տեղանուններից է, որոնց հիմքը հայերեն **փոր** արմատն է (**Փոր, Փորակ, Փորակուտ** և այլն), տվյալ դեպքում՝ **ա** հոդակապով միացած **դաշտ** արմատի հետ: Երկրորդ տարբերակն առաջացել է ձայնավորների հետընթաց ներդաշնակության հնչյունափոխությամբ:

Տարածքում որոշակի թիվ են կազմում նաև ակնհայտ օտար ծագումով, օտարահունչ տեղանունները (**Հաջիվար, Կարաբաբա, Դաշարի, Ալաքլու** և այլն), որոնց ստուգաբանությանը հարկ չհամարեցինք անդրադառնալ սույն հոդվածում:

Բնականաբար, տարածքի որոշ տեղանուններ էլ առայժմ մնում են չստուգաբանված կամ ոչ լիարժեք ստուգաբանված (**Ագա, Դիգա, Ողոհի, Տամբատ** և այլն):

Այսպիսով, Նախիջևանի տարածքի տեղանունները, ինչպես բնորոշ է գրեթե բոլոր աշխարհագրական անուններին, ըստ ծագման կարելի է բաժանել հետևյալ հիմնական խմբերի՝ **ա)** աշխարհագրական դիրքից բխող անուններ (**Խուրստ, Խրամ, Մեծով**

³³ Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., չ. 5, Ե., 2001, էջ 236-237:

և այլն), բ) ավանդություններից և հավատալիքներից բխող անուններ (**Ազուլիս**, **Աստապատ**, **Վիշապասար** և այլն), գ) անձնանուններից, տոհմանուններից կամ ցեղանուններից բխող անուններ (**Աբրակունիս**, **Շահապոնք**, **Գողթն** և այլն), դ) բնակավայրը բնորոշող բառերից բխող անուններ (**Նորք**, **Բիստ**, **Ազնաբերդ**, **Փառակա** և այլն):

Vardanyan Artak – About Etymology of Some Toponyms of Nakhijevan.– The territory of Nakhichevan historically included three central provinces of the Greater Armenia. For thousands of years it was inhabited by indigenous Armenians and that’s the reason why the names of many geographical objects were of Armenian origin.

Toponyms of Nakhijevan, like all other geographical names, according to their etymology can be mainly subdivided into: names originating from geographical location (Խուրստ **Khurst** (“depth”), Մեծովի **Metsop** (“large hollow”), etc.); from old beliefs and legends (Ազուլիս **Agulis** (“come, light”, “full of gardens”), Աստապատ **Astapat** (“wrapped here”, “built by God”), Տապանասար **Tapanasar** (“mountain of ark”), etc.); from personal, family and tribal names (Աբրակունիս **Abrakunis** (“tribe of Arbak”), Գողթն **Goghtn** (“settlement of the tribe Goght”), etc.); as well as from the names, characterizing given settlements (Բիստ **Bist** (“coral”), Ազնաբերդ **Aznaberd** (“fortress of family”), Փառակա **Paraka** (“glorious”), etc.).

Варданын Артак – Вокруг этимологии некоторых топонимов Нахиджевана.– Территория Нахиджевана, исторически включавшая в себя перекресток трех центральных губерний Великой Армении, тысячами включала в себя географические объекты с исконно армянскими названиями.

Нахиджеванские топонимы, что характерно для всех географических названий, можно в основном подразделить на группы: топонимы, происходящие от географического расположения (Խուրստ **Хурст** (“глуби”), Մեծովի **Мецоп** (“большая яма”) и др.); от древних преданий и верований (Ազուլիս **Агулис** (“приходи, свет”, “полная садами”), Աստապատ **Астапат** (“обернутый здесь”,

“построенный богом”) Տառապանաբեր **Тапанасар** (“гора ковчега”) и др.); от личных, родовых и племенных имен (Արաքունիս **Абракунис** (“род Арбака”), Գոքտի **Гохтн** (“местожительство племени гохт”) и др.); а также от названий, характеризующих данные поселения (Բիստ **Бист** (“коралл”), Ազնաբերդ **Азнаберд** (“крепость рода”), Փարակ **Парака** (“славный”) и др.).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ*

Ամիրխանյան Անժելա - Վայրի մրգերով ու հատապտուղներով կերակուրների անվանումները հայերենում.....5

Ավագիմյան Արինե - Ժամանակակից հայերենի թվականների և դերանունների դասանշային կապակցելիությունը.....16

Ավագյան Ինգա - Խորհրդյան տարեգրությունը
Էրիախի երկրի մասին.....24

Գյուրջիյան Դավիթ - *Հայ* առաջնաբաղադրիչով հատվածական բաղադրությունների բառարանային մշակումը.....35

Գրիգորյան Գայանե - Խոսակցական լեզվում վաղակատար դերբայի չ-ի անկումը շրջուն շարադասության ժամանակ.....46

Գրիգորյան Սուսաննա, Պարոնյան Նաիրա - Նորակազմությունները Թեոդորոս Քոթենավորի ճառերում.....53

Գրիգորյան Սուսաննա - Հոմանիշների ոճական կիրառությունները Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզութեան» ձևեռան հատորում.....61

Դալայան Տորք - *Երկինք* և *երկիր* բառերի ստուգաբանության շուրջ.....69

Դիլբարյան Նարինե - Նորահայտ գրաբարյան բառերը Գրիգոր Նյուսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» երկի հայերեն թարգմանության լեզվում.....79

Զաքարյան Հովհաննես - Թարգմանություն և թարգմանական քաղաքականություն.....90

Խաչատրյան Ալվարդ - Բարսեղ Կեսարացու «Գիրք պահոց»-ի հայերեն թարգմանության նորաբանությունները.....102

Խաչատրյան Հասմիկ - Իրականության յուրահատուկ ընկալման բառային դրսևորումներ Համշենի բարբառում.....113

Կատվայան Վիկտոր - Երևանի խոսվածքի մասին.....124

* Խմբագրական խորհուրդը պատասխանատու չէ հոդվածներում առկա ոճական և իմաստային վիճելի ձևակերպումների համար:

Հակոբյան Ֆրիդա - Նոր բառերի մեքենական որոնման խնդիրները.....	136
Համբարձումյան Վազգեն - Հայերենի նախագրային ձևերի նշանակման մեթոդիկային վերաբերող մի քանի հարցի շուրջ.....	144
Համբարձումյան Վազգեն - Հոլովում. հոլով և հոլովական հարաբերություն	153
Հմայակյան Հասմիկ - «Գուռգուռա» ջրանունը առասպելալեզվաբանական նյութերի համատեքստում.....	163
Հովհաննիսյան Լավրենտի - Մի քանի բուսանունների շուրջ.....	172
Հովսեփյան Լիանա - Բայասեռի կարգը գրաբարում.....	181
Ղուկասյան Մեսկ - Այո-ոչ հարցումները Ղուկասի արևելահայերեն և արևմտահայերեն ավետարաններում.....	191
Մատիկյան Հասմիկ - Քաղաքային ժողովրդական օրորոցային երգի ոճական առանձնահատկությունների մասին.....	199
Միքայելյան Ժաննա - Կոտայքի մարզի Առինջ, Ակունք, Գեղաշեն, Բալահովիտ գյուղերի խոսվածքների հնչյունական համակարգերի նկարագիրը.....	207
Մուրադյան Միլվա -Դիտարկումներ անցողական բայերի արժույթի փոփոխության մասին.....	218
Ներսիսյան Վարսիկ - Հավաքականություն և հոգնակիություն արտահայտող -ենք, -անք, -ոնք, -ունք ձևույթների գնահատումը հայերենի քերականական աշխատություններում.....	229
Շահվերդյան Թերեզա - Դերանունը և դերանվանական հոլովումը միջին հայերենում.....	240
Պետրոսյան Լիլիթ - Հայերենի բարբառներում պահպանված հնդեվրոպական բայական նախաձևերի արժույթային առանձնահատկությունները	249
Վարդանյան Արտակ – Նախիջևանի որոշ տեղանունների ստուգաբանության շուրջ.....	258

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
INSTITUTE OF LINGUISTICS OF NAS OF RA AFTER H.ACHARYAN
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА НАН РА

**ՋԱՆՈՒԿՅԱՆԱԿԱՆ
ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**
Գիտական հոդվածների ժողովածու

JAHUKYAN READINGS

Collection of scientific papers

ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ

Сборник научных статей



Տպագրված է «ԱՍՈԴԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Գավիթ Մայրան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am